

ՀԱՅԿԱՏԱԿ 2018 ARMENIA 2018

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ III

ՀԱՅԱՍՏԱՆ 2018. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
Ինքնություն 3 (2)

Աշոտ Ոսկանյանի և Դր. Թոմաս Շրապելի ընդհանուր խմբագրությամբ
թարգմանիչների հայերենից՝

Օլյա Ազատյան
Անժելա Հարությունյան
Սոնա Մանուսյան
Նազարեթ Սեֆերյան

թարգմանիչների անգլերենից՝

Սիրանուշ Դվոյան
Նարե Հովհաննիսյան

Նախագիծն իրականացվել է Կոնրադ Ադենաուերի հիմնադրամի հետ գործընկերությամբ
և ֆինանսավորմամբ:

ARMENIA 2018. REALITIES AND PERSPECTIVES
Identity 3 (2)

Editors in chief Ashot Voskanyan and Dr. Thomas Schrapel

Translators into English:

Olya Azatyan
Angela Harutyunyan
Sona Manusyan
Nazareth Seferian

Translators into Armenian

Siranush Dvoyan
Nare Hovhannisyanyan

The project was implemented in partnership and with funding of the Konrad Adenauer
Foundation.



ՀԱՅԿԱՍՏԱՆ ARMENIA 2018

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱՍՏԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ III

Տարիներ շարունակ Կոնրադ Ադենաուեր հիմնադրամն ակտիվ գործունեություն է ծավալում Հայաստանի Հանրապետությունում: Ունենալով բազմաթիվ գործընկերներ քաղաքական ոլորտից և քաղաքացիական հասարակությունից՝ հիմնադրամն աջակցում է ժողովրդավարության զարգացմանը Հայաստանում: Արդի քաղաքական թեմաներից գատ մեր հիմնադրամը միշտ նախաձեռնում է նաև քննարկումներ համեմատաբար երիտասարդ Հայաստանի Հանրապետության ղատմական ինքնընկալման շուրջ: Հայերն ունեն հնագույն քրիստոնեական մշակույթ, ինչը ազգային ինքնության բաղկացուցիչն է: Ժամանակակից Հայաստանի համար անգամ անցյալում մնացած խորհրդային ժամանակահատվածը ներկա քննարկումներում կարևոր դերակատարություն ունի: Ներկայիս Հայաստանում տեղի ունեցող զարգացումները, որոնք ծագել են նրատակադրված խորհրդայնացման և հայկական ավանդույթների լուսնադարան միջև ստեղծված լարման դաշտում, իրենց տեղն են գտել սույն հատորի տարբեր հոդվածներում:

Մեր գործընկերոջ՝ Հունանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի երրորդ Տարեգրքի երկրորդ հատորում՝ այս ժողովածուում, տեղ են գտել արդի քաղաքական թեմաներից մինչև այսօրես կոչված 2018 թ. «Թավշյա հեղափոխությանը» վերաբերող հոդվածներ, տնտեսական զարգացմանը, սփյուռքի հեռանկարին, ինչոքես նաև ղատմությանը, ղատմագրությանը և մշակույթին նվիրված հարցեր: Ժողովածուն բովանդակային առունով կազմվել է մեր գործընկերոջ՝ ՀՀՀԿ-ի հետ սերտորեն համագործակցող գիտնականների և հրատարակախոսների գործերից:

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամը շնորհակալություն է հայտնում այս համագործակցության համար, քանի որ այն հնարավորություն ընձեռեց տարբեր առանցքային կետերի շուրջ համագործակցել գիտնականների ու հրատարակախոսների հետ: Հուսով ենք, որ այս Տարեգրքի երկրորդ հատորը կհետաքրքրի բազմաթիվ ընթերցողների: Ուրախ կլինենք մեր հայ գործընկերների հետ շարունակական համագործակցության համար:

ԴՐ. ԹՈՄԱՍ ՇՐԱՊԵԼ

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի

«Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս»
տարածաշրջանային ծրագրի տնօրեն

The Konrad-Adenauer-Stiftung has been active in Armenia for many years. With a large number of partners from the political sphere and civil society, the Foundation has consistently supported the development of democracy in Armenia. Besides current political issues, our Foundation also always initiates discussions on the topic of the historic self-perception of the relatively young Republic of Armenia. The Armenians have an ancient Christian culture, which is a component of their national identity. Even the Soviet period of its past has an important role to play in current discussions on modern Armenia. The developments taking place in Armenia today, which stem from the tension that arose between its intentional Sovietization and the attempts to preserve Armenian traditions, have been reflected in the various articles published in this volume.

This collection, the second volume of the third Annual publication of our partner, the Armenian Research Center in Humanities, features articles on a range of topics from current political issues to the so-called Velvet Revolution of 2018, economic development, Diaspora perspectives, as well as those on historic, historiographic, and cultural themes. The content for the collection has been developed by academics and public figures through close cooperation with our partner, the Armenian Research Center in Humanities.

The Konrad-Adenauer-Stiftung would like to express gratitude for this partnership, because it has offered the opportunity to work together with academics and public figures on several key issues. We hope that the second volume of this Annual publication will be of interest to many readers. We would be happy to continue working with our partners in Armenia.

DR. THOMAS SCHRAPEL
Director
Konrad-Adenauer-Stiftung
Regional Programme "Political Dialogue
South Caucasus"

ԱՌՎՁՎԿԱՆ

Աշոտ Ոսկանյան
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԵՎ... ԿԱՂԸ.....11

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐ

Հարություն Մարություն
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՅԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ.....21

Վարդան Ջալոյան
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՍԱՆ ԵՎ ՉԼՍ-ՆԵՐԻ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ
ՔՆՆԱԴՆԱՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՊՈՒԼԻՉՍԻ ՀՂԱՑՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ.....35

Նաիրա Սկրտչյան
ՏԵՂԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՏՏԱՆ ՏՐԱՄԱՍԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ
ՄԻՋԵՎ. ՈՐՈՇ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....43

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՌՎՆԿԱԿՐՈՄ

Հրամտ Միքայելյան
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ:
ԻՆՉ Է ԱՅՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՔ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԳՈՐԾՎԵԼ..... 57

Հրամտ Միքայելյան
ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹԱՎՇՅԱ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ.....69

ՀԱՅՎՈՐԵ ՍՈՅՈՒԹՅՈՒՆ

Խաչիկ Թեյլալյան
ԸՆՏՐՈՒՆԱՎԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԴՐԱԶԳՈՒՄ.....85

Խաչիկ Թեյլալյան
ՎԵՐԱՏՄԱԾԵԼ ՀԱՅ ԱՆԴՐԱԶԳԸ..... 123

Վահե Սահակյան
ՍՓՅՈՒՐՔ, ԷԹՆԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՀԱՅ ԱՆԴՐԱԶԳ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԱՍՓՈՓ
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՍՓՅՈՒՐՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՇՈՒՐՋ.....129

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ռոմալդ Գրիգոր Սյունի
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՆԳ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ. ՀԻՇԵԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (ԵՎ ԴԱՍ ՔԱՂԱԿՈՎ) ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻ ԱՆՑ.....143

Արա Սանճեան
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԱԵԼՈՒ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ.
ՈՒՄՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՆԴՈՒՄ.
ՀԱՅԱՑՔ ԴՐՄԻՑ ԵՎ... ՄԱՍԱՄԲ ՆԵՐՄԻՑ.....159

Ռուզաննա Գրիգորյան
ՍԱՐԳԻՍ ԿԱՅԱՆԻ ՄԵՂԱԴՐԱԿԱՆԸ. ԿԱՍԿԱԾԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԵՏՔԵՐՈՎ.....193

Աշոտ Գրիգորյան
ՄԻՍԱՔ ԽՈՍՏԻԿՅԱՆԸ ՀԱՅ ՓԻԼՍՈՓՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ
ԿԱՅԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐԴԻՆ. ԴԱԿԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԽՆԴԻՐԸ.....213

ՄՇԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՐԿԵՍՏ

Իրինա Շախմազարյան
«ՀԱՅԿԱԿԱՆ ՈՃԻ» ՆՈՐ ՀԱՆԳՐԱՆԸ. ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԱՐԿԵՍՏԻ ՍԿԶԵՆԱԿՈՐՈՒՄԸ..... 223

Նարե Սահակյան
ԿՈՆՑԵՊՏՈՒՄ ԱՐԿԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ԴԻՏԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՆՈՐԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ՀԵՏՆՈՐՀՐԴԱՅԻՆԻ ՍԿԶԲԸ.....231

PREFACE

Ashot Voskanyan
 ARMENIA YESTERDAY... TOMORROW...241

POLITICAL DISCOURSES

Harutyun Marutyan
 PRELIMINARY OBSERVATIONS ON THE MAIN CHARACTERISTICS OF
 THE FIRST AND SECOND ARMENIAN REVOLUTIONS.....249

Vardan Jaloyan
 A CRITICAL ANALYSIS OF POLITICAL COMMUNICATION AND MASS MEDIA
 DISCOURSES IN ARMENIA THROUGH THE CONCEPT OF POPULISM.....261

Naira Mkrtchyan
 BETWEEN LOCAL EXPERIENCE AND WESTERN DISCURSIVE PRACTICES:
 ON SOME RESEARCH STRATEGIES.....267

THE ECONOMY IN THE PERSPECTIVE OF REVOLUTION

Hrant Mikayelyan
 THEORY AND PRACTICE OF THE “ECONOMIC REVOLUTION” IN ARMENIA.
 WHAT IS IT AND CAN IT BE IMPLEMENTED?.....279

Hrant Mikayelyan
 SHADOW ECONOMY IN ARMENIA BEFORE AND AFTER THE
 “VELVET REVOLUTION”289

VIEW ON THE DIASPORA

Khachig Tölölyan
 ELITES AND INSTITUTIONS IN ARMENIAN TRANSNATION303

Khachig Tölölyan
 RETHINKING THE ARMENIAN TRANSNATION.....331

Vahe Sahakyan
 DIASPORA, ETHNICITY, AND THE CONCEPT OF THE “ARMENIAN TRANSNATION”:
 BRIEF NOTES ON DIASPORA THEORY AND PRACTICE337

HISTORY AND HISTORIOGRAPHY

Ronald Grigor Suny
 THE FIVE CONS OF HISTORY: REMEMBERING (AND LEARNING FROM) THE FIRST
 REPUBLIC OF ARMENIA 100 YEARS LATER349

Ara Sanjian
 THE CHALLENGES OF UNDERSTANDING AND PRESENTING ARMENIAN HISTORY
 THROUGH RESEARCH AND TEACHING: A PART-INSIDER’S OBSERVATIONS
 FROM OUTSIDE361

Ruzanna Grigoryan
 SARGIS KASYAN’S INDICTMENT: TRACING A DUBIOUS DOCUMENT387

Ashot Grigoryan
 MISSAK KHOSTIKIAN ON THE ROAD TO THE ESTABLISHMENT
 OF SOVIET-ARMENIAN HISTORIOGRAPHY OF PHILOSOPHY: THE PROBLEM
 OF DAVID THE INVINCIBLE (ANHAGHT).....405

ART AND CULTURE

Irina Shahnazaryan
 THE NEW DESTINATION OF THE “ARMENIAN STYLE” AND THE EMERGENCE
 OF SOVIET-ARMENIAN ART.....413

Nare Sahakyan
 NASCENT CONCEPTUAL ART IN THE NEWLY INDEPENDENT ARMENIA.
 THE BEGINNING OF THE POST-SOVIET421



ՀԱՅԿԱՍՏԱՆ
ARMENIA **2018**

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES



ԱՇՈՏ
ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԵԿ... ԿԱՂԸ...



ունամիտար հետազոտությունների հայկական կենտրոնի երրորդ Տարեգրքի երկրորդ հատորն ամբողջացնում է *Չայաստան 2018. իրողություններ և հեռանկարներ* գիտաժողովի նյութերի հրատարակումը: Առաջին հատորում զետեղված ընդհանուր քաղաքական բնույթի վերլուծականներից հետո¹ ընթերցողին են ներկայացվում առանձին գիտական հարցեր արծարծող հոդվածները: Վերջիններս ազատ են առաջին հատորի գործերի այրվող հրատառությունից և կարող էին թույլ տալ առավել հանդարտ և ամշտադ հայացքով գնահատել հայաստանյան հասարակության իրողությունները: Դրան ղեկ է նույնատեր մաս առանձին հոդվածներում դատական տեսանկյունի առկայությունը՝ ինչդեռ բուն դատության, այնդպես էլ դատնագիտական ռեֆլեքսիայի առումով:

Սակայն, սույն հատորի հրատարակությանը նախորդած *ռազմաքաղաքական փլուզումը* բացահայտ խզում առաջ բերեց ընթերցողի և քննվող նյութի միջև, ակնհայտ դարձնելով խնդիրները նոր հեռանկարից դիտարկելու անհրաժեշտությունը: Այդ հեռանկարը ձևավորվում է մի դարադրոսալ միջավայրում, երբ ներկայացվող տեքստերում վերլուծված անցյալի և դրանց հիման վրա մտազծվող աղաճայի միջև փաստացի բացակայում է ներկան: Վիճակի անսովորությունը շեշտելու համար է, որ որոշեցի այս գրության մեջ կրկնել առաջին հատորի Առաջաբանի վերնագիրը, նրանից դուրս թողնելով «այսօր» բառը: Դուրս է, որ այդ *վիրահատական միջամտությունը* առավել ցցուն կդարձնի մոտ անցյալում եղածն առավել քննադատական հայացքով զննելու և հասարակական նորոգության նոր ուղիներ որոնելու հրամայականը:

Այժմ նյութերի մասին:

Ներկայացվող հատորի առաջին՝ «Քաղաքական դիսկուրսներ» բաժինը բացվում է *Չարություն Սարությանի* «Չայկական առաջին և երկրորդ հեղափոխությունների հիմնական առանձնահատկությունները. նախնական դիտարկումներ» հոդվածով, որում որոշ զուգահեռներ են անցկացվում հայոց նորագույն դատության այդ փուլերի միջև: Ավելորդ է խոսել մասն փորձի կարևորության, ինչդեռ մաս նրա անխուսափելի սահմանափակության մասին: Պատահական չէ, որ հեղինակն ինքն էլ իր վերլուծությունը «նախնական դիտարկումներ» է անվանել: Գնահատելին այստեղ մախ և առաջ հարցադրումն է և հետագա ուսումնասիրությունը խթանող ազդակները: Հիմնական դրույթներն ընթերցողը կգտնի տեքստում: Սակայն կա մեկ մեթոդաբանական դիտարկում, որից չէի ցանկանա հրաժարվել: Խոսքն այն մասին է, որ մասնագիտությամբ մշակությամբ մարդաբան հեղինակը երկու զանգվածային շարժումների դիսկուրսների ուսումնասիրությանը մոտեցել է մախ և առաջ դաշտային հետազոտողի դիրքերից, ուշադրությունը քննելով լոզունգների, դահանջների և դրանց առաջնորդների հրատարակային հայտարարություն-

¹ Տես *Չայաստան 2018. իրողություններ և հեռանկարներ /Ինքնություն 3 (1)* (Երևան: Զունամիտար հետազոտությունների հայկական կենտրոն, 2019):

ների վրա: Սրանով, ուշադրությունից վրիժվել են առաջին հայկական հեղափոխության *հիմնարար փաստաթղթերը*, նախ և առաջ Հայոց համազգային շարժման Ծրագիրը և ՀՀ համագումարների որոշումները: Կարծում են, այդ բացթողումի տատանումները երկուսն են: Առաջինն այն է, որ հետազոտության մեջ առաջին հայկական հեղափոխությունը դիտարկվել է որդես բացառապես ազգային ազատագրական երևույթ՝ Ղարաբաղյան, հետագայում՝ Արցախյան շարժում, լիովին անտեսելով նրա քաղաքական հասունության փուլը՝ Հայոց համազգային շարժումը ինչպես ծրագրի, այնպես էլ գործելակերպի առումով: Երկրորդն, ըստ իս, կապված է այն իրողության հետ, որ համեմատության մյուս բևեռը՝ 2018-ի՝ այդպես էլ ավարտին չհասած «թավշե հեղափոխությունը» որևէ ծրագրային տեքստ չի առաջադրել, ընդ որում, սկզբունքային նկատառումներով՝ իրեն հայտարարելով «իզմերից» զերծ: Դա չի նշանակում, որ այն չի հենվել տեսականորեն չձևակերպված որոշակի դատկերացումների վրա, բայց փաստն այն է, որ դրանց բացորոշումը առանձին վերլուծական աշխատանք է դաժանում: Այդ աշխատանքը որոշ չափով կատարել են սույն տրակում ընդգրկված հեղինակներից մի քանիսը:

Դրանցից մեկը *Վարդան Ջալոյանն* է, որի հոդվածը՝ «Հայաստանում քաղաքական հաղորդակցման և ՉԼՍ-ների դիսկուրսների բննադատական վերլուծությունը դոկտրինայի հղացքի օրինակով», կոչված է հիմնավորելու, որ ՀՀ իշխանությունների և ընդդիմության հակադիր թվացող դիսկուրսները ներքինից նույնական են և հավասարապես դոկտրինատական: Այդ եզրակացության հիմքում ընկած է Լակլաուի բնորոշումը, ըստ որի դոկտրինատական դիսկուրսը ենթադրում է տարասեռ հանրային դաժանների փաստացի համահարթեցում, որի արդյունքում տարբեր բնագավառներին վերաբերող խնդիրներն արտահայտվում են մեկ ընդհանրական դատարկ նշանի միջոցով: Մյուս անհրաժեշտ դաժանը ճամբարների սահմանագատումն է: Դոկտրինայից հատկապես ակտուալ է դառնում քաղաքական վերափոխությունների ժամանակ, երբ հարցականի տակ է հասարակության ամպագան:

Ի տարբերություն իշխատակածների, *Լաիրա Սկրտչյանի* «Տեղային փորձառության և արևմտյան տրամասային դրակտիկանների միջև. որոշ հետազոտական ռազմավարությունների շուրջ» հոդվածը զուտ մեթոդաբանական ուղղվածություն ունի: Ինձ համար այն հետաքրքիր է նաև այն դատձառով, որ հարցն այն մասին, թե որքանով և ինչ կերպ է հնարավոր «արևմտյան փորձառության հենքի վրա ստեղծված տեսությունները, դրանց տրամադրած հղացքները, սկզբունքներն ու մեթոդները գործի դնել նաև ոչ արևմտյան փորձառություն(ներ)ն ուսումնասիրելիս», Հունանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի առանցքային հետազոտական խնդիրների թվին է դատկանում: Հեղինակի առաջարկած լուծումը՝ «բվազիացումը», ըմբռնելի է ինձ համար, քանի որ ինքս էլ ժամանակին փորձել են արևմտյանի և տեղականի համադրությունն իրականացնել կանտյան «als ob»-ի՝ «իբրև թե»-ի հիման վրա: Սակայն այսօր այդ մոտեցումն ինձ խնդրահարույց է թվում, քանի որ, դրանում մոտավոր մոտեցումները լեզիտիմացնելու վտանգ կա:

Հատորի երկրորդ բաժինը՝ «Տնտեսությունը հեղափոխության հեռանկարում», յուրահատուկ one man show է, քանի որ նրանում ներկայացված երկու հոդվածները՝ «Հայաստանում 'տնտեսական հեղափոխության' տեսությունը և դրակտիկան: Ի՞նչ է այն և արդյո՞ք կարող է իրագործվել» և «Ստվերային տնտեսությունը Հայաստանում Թավշյա հեղափոխությունից առաջ և հետո», դասակարգում են միևնույն հեղինակի՝ *Հրանտ Միքայելյանի* գրչին: Երկուսն էլ խփում են միևնույն կետին և առանձնահատուկ կարևորություն ունեն 2018-ի «թավշյա հեղափոխության» տնտեսագիտական դրակտիկաները բացորոշելու և նրա չհայտարարված սկզբունքները հասկանալու համար: Հեղինակն ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ թեև կոռուպցիայի դեմ լայնաբեր հնդեսիվացնելով կառավարությունն ակնկալել է բյուջեի հավաքագրման մոտ 30% աճ, այդ քաղաքականությունն էական տնտեսական արդյունքների չի հանգեցրել և չէր էլ կարող հանգեցնել: Հասարակության զգալի մասի հիասթափությունից խուսափելու միակ միջոցը հեղինակը տեսնում է այնպիսի նոր հասարակական դրամագրի մեջ, որտեղ կոռուպցիան ձևակերպված չի լինի որդես առաջնային նշանակության խնդիր: Վերլուծելով վարչապետի և այլ լիազորումների ելույթներն ու հարցազրույցները, հեղինակն արձանագրել է, որ գործող տնտեսական քաղաքականությունը ունենալու է նորագատական ուղղվածություն, ներառելով հարկային տոկոսադրույքի համահարթեցումը, հարկաբյուջետային կարգադատությունը, աշխատաշուկայի արդյունավետությունը և տնտեսության նոր ճյուղերի գերակայությունն ավանդականների նկատմամբ: «Տնտեսական հեղափոխություն» ասելով իշխանությունները նկատի ունեն տեխնոլոգիաների փոփոխությունը, կառավարման համակարգի վերափոխումը և օլիգարխների ազդեցության նվազեցումը, ինչդեռ նաև իշխանության և տնտեսության նկատմամբ մարդկանց ընկալումների փոփոխությունը: Թեև կառավարությունը հույս ունի, որ երկարաժամկետ առումով բարեփոխումները կարող են մեծամասնության համար եկանուտների և սղառման աճ ապահովել, հեղինակը գտնում է, որ բարեփոխումների և կյանքի որակի բարձրացման միջև լայնադիր կառուցվածություն չունի:

Ներկայացվող գրքի երրորդ բաժինը որոշակի շրջման արդյունք է: Առաջին հատորի՝ սփյուռքից Հայաստանին ուղղված հայացքի փոխաբեմ առաջարկվել է «Հայացք սփյուռքին», որում զետեղված են սփյուռքագիտության ուսուցիչը՝ *Խաչիկ Թալալյանի* երկու և երկրորդ սերնդի սփյուռքագետ Վահե Սահակյանի մեկ հոդվածները: Թալալյանի «Վերամտածել հայ անդրազգը» գրության մեջ բացորոշվում է «անդր-ազգային» հղացքի բովանդակությունը և ցույց է տրվում նրա հիմնարար նշանակությունը ժամանակակից սփյուռքի ուսումնասիրության համար: Անդրազգայնացած սփյուռքում, ըստ հեղինակի, ինքնության մասին հարցը փոխարինվել է գործունեության դաշտի մասին հարցով, որն ինքնին շարժում կազմավորում է, դրամավորված բազմաթիվ անխզելի արդիական կառուցված: Նոր դրամավորումն ազգ-դեմություն երկանդամին ավելանում է երրորդ տարածքը, որն առնչված է քաղաքականությանը և համրային ոլորտին:

Սփյուռքը նույնպես ղեկավարում է ձեռքբերման իր ազգ-դաստիարակը՝ երկրակազմում, ընդունելով երրորդ տարածքի կենսակազմությունը: Անդրազգայնության հղացքը Թեօլեօլեանն օրինակելի ձևով կիրառել է մի շարք կոնկրետ հետազոտություններում, մասնավորապես «Ընտրախավերը և հիմնարկությունները հայկական անդրազգում» վերլուծականում, որի անգլերեն բնագիրը լույս է տեսել դեռևս 2000 թվականին: Նկատի ունենալով տեքստի կարևորությունը սփյուռքի քաղաքական և հանրային ոլորտների ուսումնասիրության համար, խմբագրական մարմինն անհրաժեշտ է համարել իրականացնել և ընթերցողի ուշադրությանը ներկայացնել նրա հայերեն թարգմանությունը:

Վահե Սահակյանի «Սփյուռք, էթնիկություն և «հայ անդրազգ» հասկացությունները. ամփոփ դիտարկումներ սփյուռքի տեսության և լեզվակազմի շուրջ» հոդվածը շահեկանորեն լրացնում է խաչիկ Թեօլեօլեանի հարցադրումները, ընդգծելով, որ «անդրազգ» հասկացությունը չի ընդգրկում սփյուռքի այն զանգվածներին, «ովքեր գործում են մի քանի էթնիկ-մշակութային դաշտերում, ունեն խառնածին և բազմազան ինքնություններ, ովքեր նաև անվերապահորեն կազմում են սփյուռքի մասը՝ անկախ այն բանից, թե որևէ կառավարություն, կազմակերպություն, խմբավորում, կառույց կամ անհատ իրենց համարում է սփյուռք, թե ոչ»: Սրանից ելնելով, հեղինակն անհրաժեշտ է համարում ձևավորել սփյուռքի ուսումնասիրության նոր մեթոդաբանություններ, որոնք ի վիճակի կլինեն արձանագրելու սփյուռքի իրական ու բազմազան լեզվակազմները:

«Պատմություն և դատաբանություն» բաժնի առկայությունը 2018-ի Հայաստանին նվիրված Տարեգրքում հիմնավորում է դատաբանությունը: Անհրաժեշտ են համարում շեշտել, որ խոսքն այստեղ ոչ այնքան բուն դատաբանության մասին է, որքան դատաբանական իրադարձություններն իմաստավորելու կերպի, այսինքն՝ դատաբանության մեթոդաբանության: Սեփական անցյալին մոտենալու ուղի-մարտի ուղիները զգալի չափով դաշնամարտում են դրանց որդեգրած հասարակությունների ինքնությունը: Դերը, որ խաղացին դատաբանության մեկնաբանության ավանդական կերպերը երրորդ հանրապետության ճակատագրում, երևակվում է աչքներիս առաջ՝ այսօր և հիմա:

Սփյուռքահայ դատաբանության նշանավոր դեմքերից մեկը՝ *Ռոմալո Գրիգոր Սյունի* իր «Պատմության հինգ հիմունքները. հիշելով Հայաստանի առաջին հանրապետությունը (և դաս քաղելով) հարյուր տարի անց» հոդվածում խոսել է հինգ սկզբունքների (բնագրում՝ *con-երի*) մասին, որոնց վրա ղեկավարում է հիմնվի դատաբանական իրադարձությունների վերլուծությունը: Առաջին հանրապետության անկման նրա առաջարկած բազմամիտ դատաբանական ավելի քան ուսանելի է: Պատշաճ կլիներ նույնիսկ առաջաբանի մակարդակով ավելի շատ տեղ հատկացնել այդ նյութին, եթե չլիներ այն աներևակայելի և անտանգելի *déjà vu*-ն, որն աղոթում ենք այս օրերին:

Այդ մասին է մյուս սփյուռքահայ դատաբանի՝ *Արա Սանճեանի* «Հայոց դատա-

մությունն ընկալելու և ներկայացնելու մարտահրավերները. ուսումնասիրություն և դասավանդում. հայացք դրսից և... մասամբ ներսից» լայնածավալ և խորախոհ հողվածը՝ նվիրված հետխորհրդային հայ լուսավարականության արժանատի կերպարներին: Նրան անհամապատասխան երևույթների թվում են երրորդ հանրապետության լուսավարականության շրջանում իշխող արժանատի կերպարներին և հայոց լուսավարական տեսանկյունների անտեսումը: Վերնախավերի գործողությունների և քաղաքական հայացքների նույնացումը ազգի գործողությունների ու քաղաքական հայացքների հետ «ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցնում է հայկական ազգային միասնության հղացքի տարածմանը, որն, ակնկալվում է թե կհաղթահարի տեղական, դասակարգային և կրոնական բաժանվածությունները և, որոշե՞ս կանոն, սահմանվում է այլ էթնիկ խմբերին հակադրվելու միջոցով»: Հողվածը եզրափակող առաջարկություններում Սանճեանը մեկ անգամ ևս հիշեցնում է, որ լուսավարությունը ոչ թե «ավարտված նախագիծ» է, այլ՝ ավելի շուտ, «անվերջ բանավեճ»:

Բաժնի մյուս երկու աշխատանքները շարունակում են քննադատական լուսավարական, փաստորեն՝ լուսավարականի «ինտելեկտուալ մաքրամոլության» նույն միտումը, բայց արդեն առանձին լուսավարական տեքստերի վերլուծության մակարդակով: *Ռուզաննա Գրիգորյանի* «Սարգիս Կասյանի մեղադրականը. կասկածելի փաստաթղթի հետքերով» հողվածում քննվում է Հայաստանի Կոմկուսի կենտրոնի անդամ Ս. Կասյանի՝ 1920 թ. հայ-թուրքական լուսավարական «դրոշմաբերական կեցվածքը» հավաստող փաստաթղթի իսկությունը: Հեղինակը հակված չէ տրվելու այս կամ այն քաղաքական կուսակցությանը սատարելու գայթակղությանը և գիտնականի իր նշանակությունը տեսնում է նշված փաստաթղթի ստեղծման և շրջանառման հանգամանքների մանրակրկիտ հետազոտության մեջ: Մյուս կողմում դրոշմաբերականի միտումը՝ հեղինակի կողմից մեջբերված փաստարկն է, ըստ որի՝ նման հետազոտությունը սկզբունքային նշանակություն չունի, քանի որ եթե անգամ կոմկուսի փաստաթուղթը կեղծված է, անհնար է ժխտել հայ բուլժակների «մեղքը» 1920 թ. թուրք-հայկական լուսավարական մախտորեն և ընթացքում: Թեև վերջինիս հետ ընդհանուր առմամբ վիճելը դժվար է, բայց անհնար է նաև չարձանագրել, որ յուրաքանչյուր առանձին դեպքում կոմկուսի մարդուն վերաբերող կոմկուսի փաստաթղթի ուսումնասիրության կարևորությունը կասկածի տակ դնելը սկզբունքային հարված կլիներ լուսավարական աշխատանքի բուն էությունը:

Նույն ծիրում է *Աշոտ Գրիգորյանի* «Միասն խոստիկյանը հայ փիլիսոփայության խորհրդահայ լուսավարական կայացման ճանապարհին. Դավիթ Անհաղթի խնդիրը» աշխատանքը, որը վերաբերում է հայ փիլիսոփայության ինքնառեֆլեքսիային, փաստորեն՝ սեփական փիլիսոփայության լուսավարական առերեսվելու կերպին: Գրիգորյանը համարում է, որ խոստիկյանի Բեռնում լուսավարական ավարտանաղի թիրախը ոչ այնքան Դավիթի փիլիսոփայությունն է եղել, որքան Դավիթի երկերի նշանակությունը չափազանց մոռ և դրա հեղինակին ան-

տիկ դասականների շարքին դասող ավանդությունը: Կարծում եմ, ինչդեռ Խոստիկյանի, այնուհետ էլ Գրիգորյանի գնահատականներում որոշակի չափազանցություն կա՝ Դավիթ Անհաղթը հայ փիլիսոփայության դաստնագրության որևէ փուլում՝ նախախորհրդային կամ խորհրդային, չի դրվել Պլատոնի և Արիստոտելի հետ նույն շարքում: Նրա դերը շատ ավելի կարևորվել է (և արդարացիորեն) համաշխարհային փիլիսոփայության միտումները հայկական միջավայր ներմուծելու և հայոց փիլիսոփայական մտքի սեփականությունը դարձնելու առումով: Բայց նաև անկասկած իրողություն է, որ արդեն խորհրդային շրջանում, Դավթի նկատմամբ վերաբերմունքն ավելի սթափ է եղել, քան եկեղեցական ավանդույթին դասակարգող հեղինակների մոտ: Վերջին միտումի համոզիչ քննադատությունը նկատի ունենալով, կարելի է համաձայնել հեղինակի հետ, որ Խոստիկյանի համարձակ մոտեցումը նոր ժամանակներում հայերիս՝ փիլիսոփայության հետ հարաբերվելու կարևոր ձեռքբերումներից մեկն է, որը մինչ այժմ չի կորցրել իր ստեղծարար ներուժը:

«Մշակույթ և արվեստ» բաժնում ներկայացված երկու աշխատանքները փոխառնչված են, որքանով որ զուգահեռ են գծում խորհրդային և հետ-խորհրդային Հայաստաններում արվեստի նոր հղացքների ձևավորման ընթացքների միջև: Ընդ այդմ, ուշագրավ է, որ առաջին դեղքում մինչխորհրդային ավանդության հետ աշխատանքն ավելի է կարևորվել: Այդ մասին է վկայում *Իրինա Շախնազարյանը* «‘Հայկական ոճի’ նոր հանգրվանը. խորհրդահայ արվեստի սկզբնավորումը» հոդվածում, ուշադրություն հրավիրելով կուսակցական գործիչ և դաստնագրող Աշոտ Գովհաննիսյանի՝ «հայ նկարչության և քանդակագործության ամբողջական, շարունակական դաստնության շղթա կառուցելու հավակնությունը»: Հայկական ոճի վերստեղծմանն ուղղված ջանքերի շնորհիվ ավանդույթն ու հայկականությունն իրենց տեղն են գտնում 1920-ականների խորհրդահայ արվեստում: Սակայն, 1930-ականների սկզբից ներմուծվող «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» կարգախոսը մոռացության է մատնում նախորդ հեղափոխական արվեստի կենդանի թրթիռները:

Այլ ընթացք ենք տեսնում երրորդ հանրադասության սկզբնավորման տարիներին, երբ նոր արվեստի նախագիծը շեշտադրում է նախ և առաջ նորը, քիչ մտահոգված լինելով շարունակականության առաջնությամբ: Այդ մասին է գրում *Նարե Սահակյանը* իր «Կոնցեպտուալ արվեստի առաջին դրսևորումները նորանկախ Հայաստանում. հետխորհրդայինի սկիզբը» հոդվածում, հիշեցնելով, որ «Հայաստանում ժամանակակից արվեստի ձևավորումն ընթացել է Խորհրդային միության բուլղարական նախագծի քայքայմանը զուգընթաց»: Գեղինակը գտնում է, որ երրորդ հանրադասության գեղարվեստական ավանգարդը, սկիզբ առնելով Խորհրդային Միության վերակառուցման համատեքստում և հենվելով ազատական համակարգին համադաստասխանող արվեստի ընդհանուր տեսլականի վրա, փաստորեն նույնանում է նոր հիմնվող ազգային դաստնության քաղաքական ավանգարդի հետ: Վստահ չեմ, որ

այդ թեզը համոզիչ է, քանի որ, ըստ իս, Հայաստանն անկախության հանգրվանին հասցրած քաղաքական ավանգարդը (համազգային շարժումը) հենված է եղել անցյալի քաղաքական ավանդույթի քննական վերաիմաստավորման և ոչ լարգամա «ազատական բացասման» վրա: Գուցե անկախ Հայաստանի գեղարվեստական ավանգարդի «լիակատար ազատության» ձգտումն է, որ հնարավորություն չի տվել հողվածագրին հարց դնել Խորհրդային Հայաստանում անցյալ դարի յոթանասնականներից ձևավորված գեղարվեստական մոդեռնի հետ նրա փոխառնչությունների մասին:

Ես գիտակցաբար եմ շեշտադրում այս թեման, քանի որ այն կարևոր է ոչ միայն գեղարվեստական ավանգարդի հետազոտության առումով: Ոչ հեռու անցյալի և ներկայիս գործընթացների շարունակականության, դրանց համադրության անհրաժեշտության մասին խոսեցի արդեն վերլուծությանս տարբեր հատվածներում, տարբեր ոլորտների առնչությամբ: *Հայաստան 2018* գիտաժողովով բարձրացված հարցը՝ գոյություն ունեցող բևեռացված, վերացական լատկերացումները հաղթահարելու, հայկական հասարակության իրական լատկերները ներկայացնող նոր դիսկուրս ձևավորելու անհրաժեշտության վերաբերյալ, լատկերացումն է իր հրատաղությունը նաև այսօր: Բայց այսօր այն հայտնվել է այլ համատեքստում:

Եթե Տարեգրքի առաջին հատորի առաջաբանում անհանգստություն էր հայտնվել «թավշյա հեղափոխության» առաջացրած սղասելիքների և ընթացիկ արդյունքների անհամադաստասխանության կադակցությամբ, ադա այժմ կանգնած ենք շատ ավելի արմատական խնդրի՝ անկախության տարիների ողջ անցուդարձն էադես վերանայելու և վերարժևորելու հրամայականի առջև:


Ողյեմբեր-դեկտեմբեր 2020



ՀԱՅԿԱՏԱԿԱՆ
ARMENIA 2018

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES

ՔՎՐԱՔՎԿԱՆ
ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐ



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՎ
ԵՐԿՐՈՐԴ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ



եր օրերում, երբ ընդամենը մեկուկես-երկու ամիս է անցել «խաղաղ, թավշյա, ոչ բռնի, ժողովրդական հեղափոխություն» ձևակերպումն ստացած իրադարձությունների բարձրակետից, շատ դժվար է ակադեմիական գնահատականներ առաջարկել տեղ գտած երևույթին: Դժվարությունը լայնամասշտաբային է մասնաճյուղի, որ մասնավոր, հեռուստա- և ռադիոհեռուստացիայի և սոցիալական ցանցերը լայնորեն հեղեղված են տարաբնույթ բննարկումներով ու վերլուծություններով:

Ցանկացած հասարակական երևույթի առանձնահատկությունները, դրա ուժեղ և թույլ կողմերը լավ են երևում համարժեք երևույթի հետ համեմատություններ անցկացնելու դեպքում: Ահա այս տեսանկյունից, մեր խորին համոզմամբ, լիովին համեմատելի երևույթներ են Ղարաբաղյան շարժումը/Հայկական հեղափոխությունը (1988 թ. փետրվարի 20-1990 թ. օգոստոսի 23) (2.5 տարի) և «Հայկական երկրորդ հեղափոխությունը» (2018 թ. ապրիլի 13/17-մայիսի 8) (22-26 օր):¹

«Ղարաբաղյան շարժումը» նման որակում ստացավ իր սկզբնավորումից ի վեր՝ 1988 թ. փետրվարյան հանրահավաքների ժամանակ: Ղարաբաղյան շարժման «Հայկական հեղափոխություն» բնորոշման գրավոր գիտական առաջնությունը դասակարգում է Ռոմալո Գրիգոր Սյունուն: Մա այդ ձևակերպումն օգտագործում է 1993 թ. լույս տեսած *Looking toward Ararat: Armenia in Modern History* աշխատության մեջ: Այստեղ «Հայկական հեղափոխության» մեջ առանձնացվում են հինգ փուլեր, ընդ որում վերջին փուլը բնութագրվում է որդեկան կառավարման խորհրդային փուլից անցում անկախ ժողովրդավարական դեմոկրատիայի: Չնայած շատ-շատերը Հայաստանում իրենց բանավոր խոսքում Շարժման իրադարձությունները որակում էին որդեկան «հեղափոխություն», մա համեմատում էին 1989 թ. արևելաեվրոպական հեղափոխությունների հետ, սակայն ակադեմիական հարթությունում հարցն այդ տեսանկյունից սկսեց դիտարկվել միայն 2000-ականների կեսերից մեր մի քանի աշխատանքներում,² մա բանավոր ու հրատարակային ելույթներում: Եթե Ղարաբաղյան շարժման հեղափոխություն լինելը, ի դեմս արմատական քաղաքական ու սոցիալ-տնտեսական վերափոխումների, դրսևորվեց մա հաղթական ավարտից հետո միայն, ադա 2018 թ. հեղափոխությունը սկզբից ևեթ այդդիսին որակվեց դրա առաջնորդի՝ Նիկոլ Փաշինյանի կողմից մոտավորապես հետևյալ ձևակերպմամբ, որ իրենք իրականացնում են «ժողովրդական, ոչ բռնի, թավշյա հեղափոխություն»:³ Այսինքն, ի սկզբանե հեղափոխություն իրականացնողը հայտարարում էր, որ իր կողմից ղեկավարվող գործողությունները «հեղափոխություն» են: Սա ոչ թե ծավալվող իրադարձությունների գնահատական էր, այլ յուրատեսակ կոչ (մեսիջ), ուղղված երկրում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակից դժգոհ մեծ թիվ կազմող մարդկանց, որ երկրի կյանքում տեղ են գտնելու «արմատական փոփոխություններ»: Այսինքն, այս կերպ հեղափոխության առաջնորդը մեծապես մոտատեց հսկայական քանակությամբ մարդկանց՝ բողոքի զանգվածային գործողությունների մեջ մերգրավելուն:

Ղարաբաղյան շարժման անվանման մեջ ժամանակի ընթացքում փոխվեց միայն բաղադրիչը. այն ավելի «հայեցի» դարձավ և ներկայում հաճախ Շարժումը կոչում են «Արցախյան»: Այսինքն, իր անվանաբանական կառուցվածքով Շարժումը խիստ հայկական էր: Թերևս դա նույնպես նշանակություն ունեցավ, որ համաշխարհային դատաձգիտական մտքում այն առավելապես ներկայացվում է իբրև «Ղարաբաղ» անունով վիճելի տարածքի շուրջ հայ-ադրբեջանական կոնֆլիկտ: Այդ ջրաղացին ջուր են լցնում նաև հայաստանյան որոշ շրջանակներ, երբ Շարժումը ներառում են «Ղարաբաղյան ազգային-ազատագրական դատերազմ. 1988-1994» ձևակերպման սահմաններում:⁴ Այսինքն, Շարժման ժողովրդավարական, խաղաղ, նաև հեղափոխական բնույթը հայտնի է միայն մասնագիտական բավականին մեղ շրջանակի:⁵ 2018 թ. հեղափոխությունն աշխարհին միանգամից ներկայացավ որդես «թավշյա», «սիրո և համերաշխության», «խաղաղ», ինչդեռ նաև «արժեքների», «մտածելակերպի», «դարի», «ուղիղ եթերների» հեղափոխություն և այլն, և այլն: Այս տիղի «հիքնաբնութագրումներով» այն շատ ավելի ընկալելի և ընդունելի դարձավ բազմաշակութային իրողություններում գտնվող բովանդակ աշխարհին:

1988-ի և 2018-ի բնույթի մասին: Սա բազմադեմ և բազմաբովանդակ խնդիր է: Փորձենք առաջ գնալ քայլ առ քայլ՝ միաժամանակ չհավակնելով մեր դիտարկումների համադարձակ լինելուն:

1988-1990 թթ. Շարժումն ընթանում էր ժողովրդավարության ճանադարիը բռնած, բայց և ավտորիտարիզմի նկատելի դրսևորումներ ունեցող աշխարհի հզորագույն տերություններից մեկի սահմաններում. այստեղ իշխում էր միակուսակցական համակարգը, բայց այն աստիճանաբար ճաքեր էր տալիս: Չանգվածային բողոքները, երբ դրանք վերևներում գնահատվում էին որդես դեռությունը վտանգ ադառնացող, դատվում էին՝ Կենտրոնի/Մոսկվայի կողմից ուղարկված զորքեր մտցնելով, դարետային ժամ հայտարարելով, ցույցերի արգելումով, ակտիվիստների բանտարկությամբ (բայց ոչ դատավարությամբ): Բայց և ես չեմ հիշում դեղքեր, երբ հայաստանյան միլիցիան զանգվածային բռնություն կիրադեր հանրադետության քաղաքացիների նկատմամբ: Պատճառների թվում թերևս կարևորագույնն այն էր, որ Շարժումը համաժողովրդական լինելուց զատ կրում էր խորադես ազգային բնույթ, ուղղված էր արցախահայության կենսական իրավունքների դաշտոդանությամբ: Շարժման հիմնական կարգախոսներն էին. «Ղա-րա-բաղ», «Ղարաբաղը մերն է», «Հայեր, միացեք»:

2018 թ. հեղափոխությունն ընթանում էր ժողովրդավարության շուրջ երեք տասնամյակի ավանդույթ ունեցող, բայց և ավտորիտարիզմի ճանադարիը բռնած անկախ դետության մեջ: Չանգվածային բողոքները Հայաստանի երրորդ Հանրադետության երեսուն տարիների ընթացքում, որդես կանոն, բազմիցս էին ավարտվում հայաստանյան ոստիկանության հետ ընդհարումներով, քաղաքացիների ծեծուչարդով, դատավարություններով ու բանտարկություններով:⁶ Եվ եթե 1988-1990 թթ. Ղարաբաղի հայությանը սատարելու հարցը ծառայում էր որդես միջոց ու հնարավորություն ժողովրդավարության

ճանադարհով ընթանալու, ադա և՛ անկախություն կերտելու համար,⁷ ադա 2018-ին Ղարաբադի հարցն ընդհանրադես չեր շոչափվում,⁸ և քաղաքացիական ակտիվությունն ուղղված էր միայն երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացին խոչընդոտող քաղաքական իշխանության դեմ: Հեղափոխությունն սկսվեց «Իմ քայլը» և «Մերժիր Մերժին» մախաձեռնություններով, իսկ հիմնական կարգախոսներից էին «Քայլ արա, մերժիր Մերժին», «Հայաստանը մերն ա», «Սիգնալ տուր, մերժիր Մերժին»,⁹ «Մենք ենք տերը մեր երկրի», «Ազատ, անկախ, Հա՛յաստան», «Դուխով», «Մի՛ա՛ցե՛ք» և այլն:

Այսինքն, Հայկական առաջին հեղափոխության դարագայում ունենք ազգային հարց, որի լուծման ճանադարհ էր ընտրված ժողովրդավարական վերափոխումները, ադա և անկախության ձեռքբերումը, մինչդեռ Հայկական երկրորդ հեղափոխության դեդքում առաջնային է դառնում ժողովրդավարական արմատական փոփոխությունների իրականացումը, ինչի արդյունքներից մեկն էլ կարող է լինել երեսուն տարի առաջ բարձրացված հարցի լուծումը՝ շնորհիվ հայության «համախմբման ու լավատեսության»:

Ղարաբադյան շարժման տարիներին սոցիալական խնդիրները և, մասնավորադես, կաշառակերության, բյուրոկրատիայի, սոցիալական արդարության թեմաները թեև բարձրացվում էին, սակայն դրանք գտնվում էին երկրորդական դիրքերում,¹⁰ քանի որ առաջնայինը ղարաբադյան խնդիրն էր և ցեղասղանության թեման: 2018 թ. հեղափոխության ժամանակ հենց սոցիալական խնդիրները դարձան առաջնային. չնայած սկզբում շոչափվում էր միայն երկրի դեկավարի անումը, սակայն բոլորի համար հստակ էր, որ հաջորդ քայլը լինելու է կոռումդացված իշխող քաղաքական ուժի ստեղծած բուրգի տադալումը: Սոցիալական ոլորտից բարձրացված խնդիրների շարքում առանձնանում էին, մասնավորադես, հետևյալները.

- օրենքի առջև բոլորի հավասար լինելը,
- քաղաքական և տնտեսական հետադնդումների դադարեցումը,
- գյուղացիության վարկային բեռի թեթևացումը,
- գյուղացիական վարկային դարտավորությունների մասնակի կան ամբողջական մերում իրականացնելու հնարավորությունը,
- արտահանման ոլորտում առկա փաստացի մենաշնորհների դադարեցումը,
- ոչ կադրային դեսղանների և գլխավոր հյուդատոսների մշանակման ավանդույթի փոփոխությունը,
- արագաչափերի և տեսախցիկների գործունեության արդյունքում ձևավորված տույժ-տուգանքների քաղաքականության վերանայումը, սեփական քաղաքացուն հետադնդող, տուգանող, դատժող դեսողությունից շատ արագ քաղաքացուն աջակցող, մրա հետ համագործակցող դեսողության կերտումը,
- հայոց բանակի ժամկետային զինծառայողների ծնողների վրա հավելյալ հոգսեր բարդելու դրակտիկայի շատ արագ վերացումը,

- դղորդների և բուհերի կուսակցականացման արատավոր տրակտիկայի վերացումը,
- Հայաստանի բուհերին լիարժեք ակադեմիական ինքնակառավարման տրամադրումը,
- ուսանող-համալսարան, ուսանող-դասախոս, աշակերտ-դղորդ, աշակերտ-ուսուցիչ հարաբերությունների արմատական փոփոխությունը՝ հիմքում ունենալով կրթությունը, այդ թվում՝ քաղաքացիական կրթությունն առավել արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունը,
- կանանց ավելի շատ ընդգրկումը ղետական կառավարման համակարգում, քաղաքական և հանրային գործունեության մեջ,
- բուժման և բժշկական սղասարկման կարիք ունեցող յուրաքանչյուր անհատի նկատմամբ այնդիսի վերաբերմունքի մշակումը, որդեսզի ոչ ոք «չմնա հիվանդանոցի դռներին»,
- ընտրական համակարգի բարեփոխումը, ընտրությունների արդյունքների կեղծման և ընտրակաշառքի բաժանման տրակտիկայի դադարեցումը և այլն:

Հայկական առաջին հեղափոխության ժամանակ 1988 թ. փետրվարից ի վեր ժողովրդական անհնազանդության, բողոքի, ղահանջների ներկայացման հիմնական ձևը խաղաղ, տարբեր կարգախոսներով, սակայն առանց բռնությունների և ոստիկանության հետ ընդհարումների հանրահավաքները, ցույցերը, երթերն, ինչդես նաև նստացույցերն ու հացադուլներն էին: Ղարաբայան շարժման ժամանակ էր (1988 թ. փետրվար, հուլիս, սեղտեմբեր), որ առաջին անգամ ԽՍՀՄ-ում օգտագործվեց ղայքարի գործադուլային եղանակը համաժողովրդական ընդգրկմամբ, որդես բողոքի դրսևորում կենտրոնական իշխանությունների գործողությունների դեմ:¹¹ Շարժման տարիներին իշխանափոխության խնդիր չէր դրվում, այն առաջ եկավ միայն 1990 թ. գարնանը, խորհրդարանական ընտրությունների նախաշեմին:

Հայկական երկրորդ հեղափոխության ժամանակ ժողովրդական անհնազանդության ձևերը շատ ավելի դինամիկ էին, քանի որ ուղղակիորեն խնդիր էր դրվում կաթվածահար անել նախարարությունների աշխատանքը, արգելափակել փողոցներն ու մայրուղիները, խափանել տրանսպորտային ցանցի աշխատանքը, իսկ ժամանակ անց՝ նաև վերցնել իշխանությունը՝ նորընտիր վարչադետի հրաժարականի և «ժողովրդի ներկայացուցիչ» վարչադետ ընտրվելու ճանաղարհով: Ընդ որում, շրջափակումները հայտարարվում էին ոչ բռնի, քանի որ դրանք իրականացվում էին ոչ թե բարիկադներով, այլ մարդկանց կենդանի շղթայով և կամ մարդատար ու բեռնատար ավտոմեքենաների միջոցով: Եթե սկզբնական շրջանում այս գործողությունների հիմնական իրականացնողը ուսանողությունն էր, աղա ժամանակ անց նրանց միացան ինչդես միջին և բարձր դասարանների աշակերտները, այնդես էլ միջին տարիքի քաղաքացիները: Բնութագրական է, որ Շարժման ժամանակ նույնդես եղան դեղքեր (օրինակ՝ Բաղրամյան դղորտայի սկզբնամասում), երբ երի-

տասարդները ղառակեցին ասֆալտին՝ նդատակ ունենալով թույլ չտալ զրահամեքենաների հնարավոր մուտքը Օդերային հարող տարածք:

Վերը նշվեց, որ առաջին հեղափոխության ժամանակ հայաստանյան միլիցիայի հետ ընդհարումներ չեղան, ինչը դայանավորված էր, թերևս, Շարժման համաժողովրդական, համահայկական դաթոսով: Երկրորդ հեղափոխության ժամանակ, հաշվի առնելով նախորդ տասնամյակների փորձը, ժողովրդին կոչ արվեց հարգալից վերաբերվել ոստիկաններին, ինչը քաղաքացիներն անում էին մեծ սիրով. դարբերաբար նրանց էին ուղղվում տարբեր տեքստեր (հաճախ զգացմունքային, նաև բարոյախրատական բնույթի), փորձեր էին արվում նրանց հետ գրկախառնվելու (դրանք երբեմն հաջողում էին), և որ ամենագնեցիկն ու, գուցե թե, ամենարդյունավետն էր, մարդիկ ոստիկաններին ընդառաջ էին գնում ձեռքերը վեր դարձած, ինչը հիմք տվեց երևույթը նաև որդես «բաց ձեռքերի հեղափոխություն» բնութագրել: Ոստիկանների հետ վերբալ շփումներում օգտագործվող կարգախոսներն էին «*Ոստիկանը մերն ա*», «*Ոստիկան, միացիր*», «*Ձեռքդ դիր, մերժիր Սերժին*»: Այս գործելակերպն օգնեց խուսափելու ոստիկանության հետ զանգվածային ընդհարումներից և ճնշումներից, չնայած արձանագրվեցին ոստիկանության բաժանմունքներ բերման ենթարկվելու հարյուրավոր դեմքեր, որոնք, որդես կանոն, ուղեկցվում էին մահակների գործադրմամբ, միտումնավոր մարմնական վնասվածքներ դատժառելով, բռնությունների այլ դրսևորումներով:

Երկու հեղափոխությունների համար էլ բնութագրական էին երկխոսության տարաբնույթ ձևերը: Ղարաբաղյան շարժման տարիներին դա դրսևորվում էր ոչ միայն ծանոթ ու անծանոթ մարդկանց միջև անընդհատ ընթացող վերբալ քննարկումներում, շարքային քաղաքացիների ու Շարժման ղեկավարության՝ Ղարաբաղ կոմիտեի, ժողովրդին և իշխանություններին ուղղված կոչերում, անընդհատ ծնվող անեկդոտներում և կատակներում, այլ նաև դատակերպության մեջ: Մեզ հաջողվել է տեղեկատվություն հավաքել շուրջ հազար ցուցադաստառների մասին, որոնք, մեր գնահատմամբ, յուրատեսակ միջնորդներ ու գործիքներ էին մարդկանց-հասարակության մտածելակերպը փոխանցելու: Դրանց մեջ առանձնանում են մինչև երկու տասնյակ թեմատիկ խմբեր:¹² Շարժման բնութագրական գծերից մեկն էլ այն էր, որ սկզբնավորման դահից ի վեր հանրահավաքների կենտրոնատեղիում՝ Օդերայի (Ազատության) հրադարակում տեղի ունեցավ մեծ-փոքր (տարիքով-երիտասարդ), կին-տղամարդ, քաղաքացի-գյուղացի, հայախոս-ռուսախոս և այլ նման հակադրությունների թուլացում և վերացում:¹³ Ձևավորվել էր մի ուրույն եղբայրական մթնոլորտ, որը ցայսօր շատերը կարոտով են հիշում:

Երկրորդ հեղափոխությունը շատ կարճ տևեց, այն առավելադեպ վերբալ-կարգախոսային դրսևորում ուներ, ու չնայած երկխոսության փորձերը ոստիկանության հետ,¹⁴ որդես կանոն, անդատասխան էին մնում, սակայն դա չէր հուսահատեցնում մարդկանց: Հանդգելու, յուրօրինակ փաստարկներ ներկայացնելու և ամեն անգամ յուրովի երկխոսելու («ոագբիրատի» տարրերով) հե-

տաքրքիր դրսևորումներ էին լինում ճանադարհները փակողների ու դրանք բացել փորձող դաշտոնյաների, նաև վարորդների միջև: Որոշես կանոն, շարքային քաղաքացիները, եթե անգամ բողոքում էին տրանսպորտի չաշխատելու առիթով, այնուամենայնիվ ըմբռնումով էին մոտենում հարցիմ` հույս ունենալով, որ նման գործողությունները կօժանդակեն ռեժիմի տաղավանդ: Երկրորդ հեղափոխության ստեղծած ցուցադաստառային նյութը¹⁵ իր քանակով և կատարման որակով էադես զիջում էր Առաջին հեղափոխության ժամանակ կիրառվողներին: Նախկին տրանսպարանտների փոխարեն 2018-ին, 21-րդ դարին համահունչ, մեջտեղ եկան համակարգիչներով հավաքված և տղիչներով բազմացրած տեքստեր: Եթե 1988-1990-ին նույնաբովանդակ և նույնատղղ լուծումներ ունեցող տրանսպարանտները հատուկենտ էին, ադա երեսուն տարի անց հակառակ դատկեր էր: Բայց և, ինչդես որ էր 1988-1990-ին, անդակաս էին հումորը, կատակները, բառախաղերը, որոնք մեծադես ձևավորում էին սիրո և համերաշխության ոչ միայն հայտարարված, այլ նաև իրական մթնոլորտը:¹⁶

Երկու հեղափոխությունների կարևորագույն ձեռքբերումներից էր մարդկանց մեջ տասնամյակներ շարունակ մերարկվող վախի հաղթահարումը: Վախ, որը սերմանվում էր ամբողջատիրական համակարգի տարրերով հարուստ խորհրդային իրականությունն իր ճնշիչ ադարատով (կուսակցական կոմիտեներ, «սև» ցուցակներ և այլն), և ավտորիտարիզմի ճանադարհը բռնած իշխանությունն իր` մարդկանց ծեծելու, նրանց մեջ անդաշտդանվածության զգացում սերմանելու, դատարանների «դոներն ընկնելու» հեռանկարով և այլն: Ուսումնասիրողի առջև վեր է հառնում բազմադեն, աստիճանաբար ազատականացող մտածողության տեր, բայց և միևնույն ժամանակ կարևորագույն հարցերի շուրջ միակամ մարդկանց բազմությունը:

Վախը հաղթահարած և սեփական արժանադատությունը վերագտած քաղաքացիները երկու հեղափոխությունների ժամանակ էլ ցուցաբերում էին ինքնակազմակերդվածության հրաշքներ: Արդեն 1988 թ. մարտին, առաջին հանրահավաքներից մեկ-երկու շաբաթ անց, հանրադետության հարյուրավոր աշխատանքային կոլեկտիվներում ձևավորվեցին Ղարաբաղ կոմիտեներ (որոշ տվյալներով` մինչև 2.500), որոնք կոչված էին սատարելու Ղարաբաղյան շարժման ղեկավարությանը: Սրանք ԽՍՀՄ մի քանի այլ հանրադետություններում ավելի ուշ ձևավորված *ժողովրդական ձակատների նախատղղն էին*, յուրահատուկ այլընտրանքներ խորհրդային ձեռնարկություններում ու հիմնարկություններում գործող կուսակցական, կոմերիտական, արհմիութենական կոմիտեներին: Այս մորաստեղծ մարմիններն ավելին էին, քան դարգադես «աջակցության խմբեր» և շատ կարճ ժամանակում նրանց մեծ մասը կարողացավ իրենց ձեռքը վերցնել հասարակական ակտիվության կազմակերդման և ուղղորդման գործը:¹⁷ Երկրորդ հեղափոխությունն այնքան սրընթաց զարգացավ, որ բանը դրան չհասավ: Փողոցները փակում էին միայն շարքերում միմյանց ծանոթացող մարդիկ, սակայն դա լիուլի բավարար էր

համատեղ ու կազմակերպված գործելու համար: Բավական էր սոցիալական ցանցերում հնչել օժանդակության խնդրանք, և շատերը շտաղում էին հենց նշված վայրը, ամհրաժեշտ էր մարդկանց որոշակի քանակություն՝ դա անմիջադեպ իրականանում էր: Այսինքն, երկու դեղքում էլ մենք գործ ունենք ինքնակազմակերպվող քաղաքացիների իրողության հետ, ում 21-րդ դարի ձևակերպումով «ցանցային» որակված գործելակերպը ուղղակի հիացնում է արժանի: Առաջինի դեղքում մարդիկ ինքնակազմակերպվում էին «Ղարաբաղ» կոմիտեների հիերարխիայի ներքո: Սրանք «ուղղահայաց» գործող հիերարխիկ կառույցներ չէին: Կոմիտեներն հաղորդակցման ու համակարգման հաբեր էին (հատկապես, երբ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների մեծ մասը ձերբակալված էր կամ ընդհատակում էր): Երկրորդ հեղափոխության ժամանակ կազմակերպումը հարթության վրա էր. այն հաղորդակից անհատների ցանց էր:

Հայկական առաջին հեղափոխության կենտրոնատեղին Օդերայի հրադարակն էր, որը հետագայում իրավամբ անվանակոչվեց «Ազատության հրադարակ»: Հաջորդող շուրջ երեք տասնամյակի ընթացքում ընդդիմության հանրահավաքները, որոնք կանոն, նույնպես անց էին կացվում այդտեղ և անհաջող ավարտ էին ունենում: Երկրորդ հեղափոխության սկզբի լայնածավալ ազդարարումից՝ ադրիլի 17-ից ի վեր հանրահավաքները սկսեցին գումարվել Երևանի կենտրոնական՝ Հանրադատության հրադարակում, որն օրեցօր ավելի ու ավելի էր լցվում մարդկանցով:¹⁸ Նման որոշման լայնածավալից մեկն էլ գուցե թե այն է, որ երկրորդ հեղափոխությունը հստակ և անթաքույց խնդիր դրեց իրականացնել իշխանափոխություն, իսկ Հանրադատության հրադարակը մարդկանց լայնածավալ հարցումներում միշտ էլ գուցե դրվել է իշխանությունների հետ:

Ղարաբաղյան շարժման ընթացքում հարյուր հազարավոր մարդկանց մասնակցությամբ ընթացող հանրահավաքները ոչ միայն բողոքի և աջակցության դրսևորումներ էին, այլ նաև, անազատ մամուլի առկայության դեպքում, «առաջին ձեռքից» արժանահավատ տեղեկատվության ստացման հնարավորություն: Հայկական երկրորդ հեղափոխության ժամանակ վիճակն արմատապես այլ էր. համացանցային ուղիղ հեռարձակումները, սոցիալական ցանցերում տեղադրված սիրողական ու լուրջաբանական նկարահանումները, բջջային արագ հեռախոսակաղը թույլ էին տալիս քաղաքաբնակներին և գյուղաբնակներին տանը նստած տեղեկացված լինել բառացիորեն ամեն ինչից: Եվ եթե սկզբնական շրջանում սա կարծես թե խանգարում էր փողոցներում ու հրադարակներում «կրիտիկական զանգված» ձևավորելու գործընթացին, ապա ժամանակ անց դարձավ, որ ինֆորմացիոն հեղեղը մեծապես օժանդակեց տատանվողների ու չկողմնորոշվածների մեծ զանգվածին կայացնելու համադատասխան որոշումներ, որոնք կանոն՝ հոգուտ հեղափոխությանը մասնակցելու:¹⁹ Այսինքն, լայնածավալ ասած, փողոցն ու համացանցը միասին էին աշխատում:

Հեղափոխությունների ղեկավարության հարցում ևս առկա են որոշակի

առանձնահատկություններ: Ղարաբաղյան շարժման դարազայուն Շարժման իսկ ընթացքում, հարթակի վրա, ժողովրդի ներկայությամբ և նրա հավանությամբ ձևավորվեցին Ղարաբաղ կոմիտեի առաջին և երկրորդ կազմերը: Նրանց մեջ կային ինչդեպ միմյանց ճանաչող, այնպես էլ նոր ծանոթացած, հարյուր հազարավոր մարդկանց առջև ելույթների ընթացքում հոնտորական փորձ ձեռք բերած մարդիկ, այդ թվում հետազոտողներ, գիտնականներ, դասախոսներ, ուսուցիչներ, գրող ու լրագրող: Մի մասի ազգանդաստ գործունեությունն ուներ որոշակի դաստիարակություն, մյուսները 1988 թ. փետրվարից միայն ներգրավվեցին Շարժման մեջ: Ղարաբաղ կոմիտեի երկրորդ կազմը Շարժումը ղեկավարեց շուրջ երկու տարի՝ վայելելով ժողովրդի ոչ միայն վստահությունը, այլ նաև հավատը, սերն ու համակրանքը: Դրա ցուցիչներից էր նաև Օղտերայի հրադարակի հանրահավաքների ընթացքում դարբերաբար հնչող «Կո՛միտե՛» վանկարկումը: Չնայած Կոմիտեի անդամների շրջանում առկա աշխարհայացքային տարբեր մոտեցումներին, նրա գործունեությունը կոլեկտիվ ղեկավարության փայլուն, դասագրքային օրինակ էր: Իշխանության գալուց հետո Կոմիտեի անդամներն առանց բացառության ներգրավվեցին գործադիր և օրենսդիր աշխատանքների մեջ, սակայն երկրի ղեկավարման հարցում առկա մոտեցումների տարբերությունը բերեց Կոմիտեի՝ որդես համակիրների միավորման փաստացի լուծարման: Հայկական երկրորդ հեղափոխության դարազայուն գործ ունենք արդեն որոշակիորեն ձևավորված, նաև ընտրություններին մասնակցելու և խորհրդարանական աշխատանքի տարիների փորձառություն ունեցող քաղաքական ուժի հետ, որին ժողովուրդն արդեն ճանաչում էր, ուներ նկատելի համակրանք և հավատ: Կար նաև այն մտայնությունը, որ երկրում «եթե ինչ-որ բան փոխվի, Նիկոլն է փոխելու», այսինքն՝ հեղափոխության առաջա առաջնորդն ուներ դրսևնցիալ արմատական փոփոխություններ իրականացնողի համբավ: Երկրորդ հեղափոխության ընթացքում տեղ գտած հանրահավաքների ժամանակ չձևավորվեց ղեկավարման կոլեկտիվ մարմին. այսինքն՝ այն առկա էր ի դեմս կուսակցության ղեկավարության, սակայն ժողովրդի համար կար միայն մեկ առաջնորդ, ում անվան վանկարկումն էլ դարբերաբար թնդացնում էր Հանրադատության հրադարակը: Իշխանության գալուց հետո կուսակցության շատ անդամներ, ինչդեպ և Շարժման դարազայուն էր, ներգրավվեցին հանրադատության ղեկավարման մարմիններում:²⁰

Հայկական առաջին հեղափոխությունն ավարտվեց 1990 թ. օգոստոսի 23-ին, երբ նորաստեղծ խորհրդարանն ընդունեց «Հայաստանի անկախության հռչակագիրը», երկիրն անվանափոխվեց որդես «Հայաստանի Հանրադատություն», և սկսվեց անկախ դետականության կերտման գործընթացը: Մեկ տարի անց Հայաստանը հռչակվեց անկախ հանրադատություն և սկիզբ դրվեց Երրորդ հանրադատությանը: Հայկական երկրորդ հեղափոխության առաջին փուլն ավարտվեց 2018 թ. մայիսին 8-ին, երբ Ազգային ժողովը հանրադատության ղեկավար ընտրեց հեղափոխության առաջնորդին: Երկիրը չհռչակվեց Չորրորդ հանրադատություն, չնայած ղեկավարման ձևի մեջ տեղ

գտած արձատական, որակական փոփոխության առկայությանը. չի բացառվում սակայն, որ փոփոխության ամրագրումը տեղ կգտնի մոր ընտրություններից հետո:

Ղարաբաղյան շարժման ավարտին ձևավորված խորհրդարանում ընտրված կառավարության առաջին վարչապետն ուղղակիորեն հայտարարեց, որ «կուլակաթափություն չի լինելու», այլ կերպ ասած՝ խորհրդային իշխանության տարիներին անօրինական ճանադարհով հարստացած մարդիկ օրենքի առջև չեն կանգնելու: Դա, թերևս, դայմանավորված էր Ղարաբաղյան հակամարտության սղասվող սրմանն ընդառաջ ժողովրդի միասնությունը դասողանելու ձգտումով, գուցե թե կային նաև այլ՝ տնտեսական բնույթի հիմնավորումներ: «Ժողովրդի կողմից առաջադրված վարչապետի թեկնածու» Նիկոլ Փաշինյանը տարբեր հարթակներում ունեցած ելույթներում սկզբունքորեն այլ մոտեցում էր առաջ քաշում՝ «վեցնդետա/վրեժխնդրություն չի լինելու»,²¹ սակայն անօրինական ճանադարհով հարստացած, կոռուպցիոն սխեմաներում ընդգրկված գործարարներն ու իշխանավորները դատաստանատվություն են կրելու օրենքի առջև:²² Սա շատ կարևոր կետ է, քանի որ իշխանությունների կողմից իրականացվող անօրինականություններն անցել էին ամեն չափ ու սահման, քաղաքացիների մեծ մասի մեջ ձևավորել էին հուսալքվածության տրամադրություններ, ինչն էլ իր դրսևորումն էր գտնում արտագաղթի ահագնացող ծավալների մեջ, որի արդյունքներից մեկն էլ վաղ թե ուշ լինելու էր երկրի դաշտոնանունակության, Արցախի հարցի լուծման գործում հայկական դիրքերի թուլացումը՝ համադատասխան հետևանքներով:

Հայկական և՛ առաջին, և՛ երկրորդ հեղափոխությունները քանդեցին բազմաթիվ կարծրատիպեր թե՛ Հայաստանում, թե՛ նրա սահմաններից անդին: Քաղաքական ձեռքբերումներից զատ հենց մարդկանց մտածողության մեջ կայացած փոփոխությունները հեղափոխության վառ դրսևորումներ էին:²³ Այսպես, 1988 թ. սկզբին դեռևս այն համոզումն էր առկա, որ ԽՍՀՄ-ն շատ հզոր մի կառույց է, ուժեղ է իր միասնությամբ և նրա կենսագործունեությանը որևէ վտանգ չի սղանում, ինչի վկայություններից էր նաև այն, որ նրա ղեկավար դիրքը ԽՍՀՄ-ում ամրագրված էր Սահմանադրությամբ: Հազարավոր քաղաքացիների աշխատանքային առաջընթացի համար կարևորագույն մատակարարման էր կոմկուսի անդամ լինելը և այլն: Նույն կերպ և վերջին տասնամյակում Հայաստանում առկա էր այն մտայնությունը, որ Հայաստանի հանրապետական կուսակցությունը իշխանության հետ քաղաքականապես, տնտեսապես և գաղափարապես սերտաձած կառույց է և, հետևաբար, այնուհետև կուսակցություն է, որի դեմ «խաղ չկա»: Երկու կարծրատիպերն էլ քանդվեցին, հենց որ գործոն դարձավ ժողովուրդը, ժողովրդի միասնական կամքը: Երկու դեղքում էլ վերահաստատվեց այն դարձ, դատմության քառուղիներում հղկված ճշմարտությունը, որ «ժողովրդի՝ դեմ խաղ չկա»:²⁴

հազարանոց հանրահավաքները Սիլվա Կադուտիկյանի և Չորի Բալայանի հետ հանդիպման ժամանակ որակեց որդես «удар в спину перестройки»: «Ներքևից» զարգացող հեղափոխության դեմ մղվող գաղափարական ղայքարը, դրա նվաստացման փորձերը, բանտարկությունները չկարողացան կանգնեցնել երկրի ամենափոքր հանրադատության ըմբոստացումը: Հայկական հեղափոխությունը հաղթեց, սոցիալիզմի համաշխարհային ճամբարը և ԽՍՀՄ-ը փլուզվեցին: Վերջին տասնամյակում հայաստանյան իրականության մեջ դեմքից դեմք հնչող մտքերը, թե երկրին անհրաժեշտ են հեղափոխական վերափոխումներ, Պարբերաբար կասեցվում էին անգամ վարչապետի հեղինակությամբ լույս տեսնող գիտական հոդվածներով,²⁵ «հեղափոխություն» երևույթի քաղաքական, տնտեսական և այլ վատ հետևանքների մասին կանխատեսումներով, ընդհուպ մինչև Արցախի հնարավոր կորուստը: Նույն կերպ առաջ էր քաշվում Պաղամեծնական ղայքարի՝ որդես իրական ժողովրդավարության հաստատման համար ճանադարի բացելու միակ հնարավորության գաղափարը՝ հընթացս հնարավոր այլ զարգացումները որակելով որդես «փողոցային» ղայքար կամ «զինված ադստամբություն»: Պարզվեց՝ չի աշխատում: Երկու դեմքում էլ հաղթեց հեղափոխությունը. առաջին ղարագայում արցախահայությունը փրկվեց Ֆիզիկական ոչնչացումից և կերտեց դետականություն, երկրորդ դեմքում արմատական փոփոխություններ են տեղ գտնում Հայաստանի դեկավարության մոտեցումներում արցախյան թնջուկի լուծման հարցում, և ժողովրդավարական փոփոխություններ՝ Արցախի Հանրադետության իշխանական կառույցներում, որոնք տանում են դեմի հանրադետության ներքին կայունության ամրադնում:

մայիս-հունիս 2018 թ.

- 1 Չեղափոխությունների տեսությունները բազմաթիվ են ու դարբերաբար թարմացվող: Մեզ համար ընդունելի են Ջեյկ Գոլդստոնի մոտեցումները (Jack Goldstone, «Toward a Fourth Generation of Revolutionary Theory», *Annual Review of Political Sciences*, թիվ 4 (2001), էջ 139-187), ի մասնավորի հեղափոխության նրա առաջարկած հետևյալ ձևակերպումը. «Հասարակության քաղաքական ինստիտուտները վերափոխելու և քաղաքական իշխանություն հաստատելու ջանք, որն ուղեկցվում է ֆորմալ կամ ոչ ֆորմալ գանգվածային մոբիլիզացիայով և ոչ ինստիտուցիոնալ գործողություններով, որոնք բայբայում են գոյություն ունեցող իշխանությունները», նույն տեղում, էջ 142:
- 2 Տե՛ս, մասնավորապես, Հարություն Մարության, «Հայ ինքնության ձևափոխման հիմնական ուղղությունները Ղարաբաղյան շարժման տարիներին», *Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները. Հայագիտական միջազգային առաջին համաժողով, զեկուցումների դրույթներ* (Երևան: Երևանի համալսարանի հրատ., 2003), էջ 55-56; նույնի, *Հայ ինքնության դատարանությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* (Հիշողության ազգագրություն 2) (Երևան: Գիտություն հրատ., 2009), էջ 313; նույնի, «Ղարաբաղյան շարժման կամ Հայկական հեղափոխության (1988-1990) հիմնական առանձնահատկությունները», Համբարձում Գալստյան, *Չուղարկված նամակներ* (Երևան: Գաստրիմտ հրատ., 2013), էջ 9-17:
- 3 Թավշյա հեղափոխության կոմիտե. Նիկոլ Փաշինյանի ելույթը (թարմացվող), 17 ապրիլի 2018, <https://epress.am/2018/04/17/%D4%B1%D5%B4%D5%A5%D5%B6%D5%A1%D5%B4%D5%A5%D5%AE%D6%8A%D5%B0%D6%80%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%A8.html>, այց` 4.17.2018:
- 4 Տե՛ս *Ղարաբաղյան ազգային-ազատագրական դատերազմ. 1988-1994: Հանրագիտարան մեկ հատորով*, Հ. Ս. Այվազյան և ուրիշն. (խմբ.) (Երևան: Հայկական հանրագիտարան հրատ., 2004):
- 5 Երևույթի դատաձևների թվում մատնանշելի են մաև հետևյալ հանգամանքները: Լևոն Տեր-Պետրոսյանի ու նրա քաղաքական թիմի` 1998 թ. երկրի ղեկավարման աստիճանից հեռանալուց հետո իշխանության եկան Ղարաբաղյան դատերազմի ղարաբաղյան թևի ռազմական ղեկավարները, որոնց համար սկզբից ևեթ խնդիրը դրված էր Լեւոնյանի Ղարաբաղը օտար զավթիչներից ազատագրելու հարթության մեջ: Մինչդեռ հայաստանյան իրականության մեջ Ղարաբաղյան շարժման ժամանակ բարձրացվում էին մաև սոցիալական բազմաթիվ խնդիրներ: Հաջորդող երկու տասնամյակների ընթացքում Ղարաբաղյան համաժողովրդական շարժման, մաև Հայոց համազգային շարժման մասին հրատարակումները մղվեցին երկրորդ լույս, անգամ Հայաստանի անկախության կերտումը հանրությանը գերազանցադատ մերկայացվում էր հայ-արդրեջանական դատերազմի լույսի մերթ, գրեթե ոչինչ չէր ասվում Շարժման մասին մաև հայաստանյան դրոյրոցական դասագրքերում: Համաշխարհային հանրությանը Ղարաբաղյան շարժման զարգացումները գերազանցադատ հայտնի էին խորհրդային կենտրոնական մամուլի ոչ ծնարկտացի հրատարակումներով և կենտրոնական հեռուստատեսության հաղորդումներով, այսինքն` առկա էր բառիս բուն իմաստով «տեղեկատվական շրջափակում»:
- 6 Հմմտ. ՀՀ վարչադատի թեկնածու Նիկոլ Փաշինյանի ելույթը (ամբողջական), <https://168.am/2018/05/08/948009.html>, այց` 5.08.2018:
- 7 Հմմտ., օրինակ, Վազգեն Սանուկյան, «Հայոց համազգային շարժում», Վազգեն Սանուկյան, *Հայկական երազանքը գոյատևման փակուղում: Ելույթների և հող-*

վածների ժողովածու (Երևան: Վ.Ի.Վ. Այսօր և վաղը, 2002), էջ 17-23; նույնի, «Գնացքից թռչելու ժամանակն է», Վազգեն Մանուկյան, *Հայկական երազանքը*, էջ 50-79:

⁸ «Սիրելի՛ արցախցիներ, համոզված եղեք, որ Հայաստանում տեղի ունեցած սիրո եւ համերաշխության հեղափոխությունը ոչ միայն որեւէ վտանգ չի Պարունակում, այլեւ նորանոր հնարավորություններ է բացում Արցախի ժողովրդի եւ Արցախի ժողովրդականության համար: / Սա համազգային եւ համաժողովրդական զարթոնքի բացառիկ ժամ է, եւ *ինչդեռ 1988 թվականի համազգային շարժումը հանգեցրեց Արցախի դե ֆակտո ինքնորոշմանը, հայկական հեղափոխության արդյունքն է վերջո լինելու է Արցախի ինքնորոշման իրավունքի դե յուրե միջազգային ճանաչումը* (ընդգծումն իմն է – Յ.Մ.)», ՀՀ վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանի ելույթը (ամբողջական), <https://168.am/2018/05/08/948009.html>, այց՝ 5.08.2018:

⁹ Զննտ. «Посигналь, если против Путина» ակցիայի հետ, տես <https://www.youtube.com/watch?v=Zzk0PVzoli4>, այց՝ 4.12.2018:

¹⁰ Զննտ. Մարության, *Հայ ինքնության դատաւերազրոյութունը: Հատոր 1. Ցեղասպանութեան հիշողութունը և Ղարաբայան շարժումը* (Հիշողութեան ազգագրութուն. 2), էջ 23-24, 307-308:

¹¹ Մարության, «Ղարաբայան շարժման կամ Հայկական հեղափոխութեան (1988-1990) հիմնական առանձնահատկութեանները», էջ 12-13:

¹² Մանրամասն տես Մարության, *Հայ ինքնութեան դատաւերազրոյութունը*, էջ 23:

¹³ Մանրամասն տես Լևոն Աբրահամյան, «Ծեսը, նախաթատրոնը և Թատերական իրադարակը», *Բեմ*, թիվ 1 (1990), էջ 7-19; Նույնի, «Քառսը և կոսմոսը ժողովրդական ելույթների կառուցվածքում. Ղարաբայան շարժումը ազգագրագետի հայացքով», *Մշակույթ*, թիվ 2-3 (մարտ-հունիս 1990), էջ 14-21; Levon Abrahamian, «The Karabagh Movement As Viewed by an Anthropologist», *The Armenian Review* h. 43, թիվ 2-3 (1990), էջ 67-80:

¹⁴ Աշոտ, այ Աշոտ, արա, տատո՛ղ էլ ա ստե, եկել ես՝ խփե՞ս տատուղ...: Ցուցարարը՝ ոստիկանին, <https://www.youtube.com/watch?v=dHZGifmcM7c>, այց՝ 5.05.2018: Հեղափոխութեան Աշոտը. azatutyun.am, <https://blog.168.am/blog/150138.html>, այց՝ 5.05.2018:

¹⁵ Անդրադարձ հարցին տես Մարի Թարյան, *Աշոտը, Իրան, #Քայլարա շարժման «համն ու հոտը» եւ լոզունգները, Սեդիհանաքս*, 20 ապրիլի 2018, <http://www.mediamax.am/am/news/special-report/28042/>, այց՝ 4.21.2018:

¹⁶ Նիկոլ Փաշինյանը, ի մասնավորի, հայտարարում էր, որ հեղափոխութունը տեղի է ունենալու «ոչ թե ատելութեան, թշնամանքի, հետադարձութեան, գիլտոսիմի, այլ համարային մեծ երկխոսութեան, ճշմարտութեան փնտրութեան, ազգային համերաշխութեան եւ միասնութեան մթնոլորտում»: ՀՀ վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանի ելույթը (ամբողջական), *168.am*, 8 մայիսի 2018, <https://168.am/2018/05/08/948009.html>, այց՝ 5.08.2018:

¹⁷ Մարության, «Ղարաբայան շարժման կամ Հայկական հեղափոխութեան (1988-1990) հիմնական առանձնահատկութեանները», էջ 10-11:


¹⁸ Բանագանցում անգամ հայտնվեց մեծ Թամանյանի արձանի դատաւերով ու նրան վերագրվող խոսքով. «Վսյոտակի Հրադարակը փոքր ա ստացվել...»:

¹⁹ Մասնագիտական վերլուծութունը տես, օրինակ՝ Սամվել Մարտիրոսյան, «Ուղիղ եթերների հեղափոխութունը», *Գործու տեղեկագիր*, հ. 93, թիվ 4 (2018), էջ 33-37:

²⁰ Զննտ. մեր գրառումը Ֆեյսբուք սոցիալական ցանցում, 8 մայիսի 2018,

<https://www.facebook.com/hmarutyam>, այց՝ 5.08.2018: Այստեղ, մասնավորապես, գրված է. «Ստացվեց: Հաղթեցինք: Ուոա: Հիմա սկսվում է հեղափոխության երկրորդ՝ արմատական վերափոխումների փուլը: Ու այդ, դժվար է լինելու: Ու լիցքը չէ կրկնել 28 տարի առաջվա բացթողումներից մեկը, երբ անգամ երկու երկար ու ձիգ տարի տևած Շարժման ավարտական փուլում անցկացված ընտրություններում ՀՀ-ն առաջադրեց բազմաթիվ ոչ յուրօրինակ, սակայն հավատարիմ մարդկանց: Քանի որ հաղթել է Հայաստանի հոյարտ քաղաքացին (ու դա միայն գեղեցիկ խոսքեր չեն), իշխանության մարմիններում լիցքը է լինեն գրագետ ու բանիմաց, գործից հասկացող, մարդկանց հետ զրուցել իմացող մասնագետներ: Ընդամենը 28 տարվա Պատմության այդ մի դասը, հուսամ, ուսանելի կլինի»:

- ²¹ Տե՛ս Լիկոլ Փաշինյան – Կարեն Կարապետյան բանակցությունները տեղի կունենան ապրիլի 25-ին, <https://www.amerikayidzayn.com/a/4361297.html>, այց՝ 4.23.2018:
- ²² Հմմտ. ՀՀ վարչապետի թեկնածու Լիկոլ Փաշինյանի ելույթը (ամբողջական), <https://168.am/2018/05/08/948009.html>, այց՝ 5.08.2018:
- ²³ Սամրամասն տե՛ս Մարության, *Հայ ինքնության տատկերագրությունը*:
- ²⁴ Վերջին առնվազն մեկ-մեկուկես տասնամյակում հայաստանյան քաղաքական գործիչներից թերևս միայն Ղարաբաղ կոմիտեի անդամ Աշոտ Մանուչարյանն էր իր հրադարակային ելույթներում անընդհատ շեշտադրում այս միտքը:
- ²⁵ Իշխանական համակարգի անփոփոխելիության գաղափարն էր առաջ քաշում, մասնավորապես, «Մենք լիցք է փոխվենք ելությամբ, ոչ թե ձևով» թեզը քարոզող ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն իր հրադարակային ելույթներում, նաև «Ինչդե՞ս իրականացնել հեղափոխություն» հոդվածում, տե՛ս «21-րդ դար», թիվ 2 (2007), էջ 160-168: Տե՛ս նաև *Նորավանք*, 19.07.2007, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2464&sphrase_id=72011, այց՝ 5.08.2018:



ՎԱՐԴԱՆ
ՋԱՆՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԵՎ
ՉԼՍ-ՆԵՐԻ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ
ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ՊՈՊՈՒԼԻՉՄԻ ՀՂԱՑՔԻ
ՕՐԻՆԱԿՈՎ



ստ Յակոբ Տորֆինգի՝ «Դիսկուրսը հեգեմոնիկ արտահայտությունների արդյունք է, որի նդատակն է հասարակության մեջ ձևավորել ինչդես քաղաքական, այնդես էլ բարոյա-ինտելեկտուալ առաջնորդություն»:¹ ՉԼՄ-ների նորությունները, թոք շուները, գվարձալի հաղորդումները վերարտադրում են աշխարհի մասին դատկերացումները, դարտադրում արժեքային որոշակի կառուցվածք: Չանգվածային հաղորդակցության ուղերձները դիտարկվում են որդես սոցիալական գործողություն, որդես իշխանության/ազդեցության կարևորագույն ձև, որդես գաղափարախոսության դրսևորման կարևորագույն ոլորտ:

Հայաստանում ՉԼՄ-ները բաժանվում են երկու՝ իշխանամետ և ընդդիմադիր մասի: Վերջինները շատ ավելի քննադատական նյութեր են տեղադրում, քան առաջինները, սակայն դիսկուրսի տեսակետից նրանց միջև կարող է տարբերությունը քիչ լինել: Ըստ դիսկուրսի ժանրերի, նրանք օգտագործում են կամ ոռմանտիկ դաթետիկ լեզու, օրինակ, երբ խոսքը գնում է մշակույթի մասին, կամ նմանակում են իշխանությունների քյուրոկրատական կամ ձևական իրավական լեզվին, երբ խոսքը գնում է իրավունքների, օրենքի խախտման և համանման խնդիրների մասին: Դա նշանակում է, որ ինչդես ընդդիմադիր, այնդես էլ իշխանամետ լրագրողները համաձայն են ազգային մշակույթի, օրինականության և այլ կարևորագույն դատկերացումների շուրջ: Դիսկուրս վերլուծությունը իշխանության լեզվի և լեզվի իշխանության վերլուծություն է, և այս հոդանցիկ դիտողությունը ցույց է տալիս, որ ընդդիմադիր լրագրողները և նրանց խմբագիրները կիսում են իշխանության գաղափարախոսությունը և հեգեմոնիան (գերակայությունը):

Վերջին տասնամյակում (2008-2018 թթ.) համաշխարհային քաղաքական դիսկուրսում տեղի ունեցած զգալի փոփոխությունների առկայությունը ընդունվում է համարյա բոլոր հետազոտողների կողմից: Առաջին հերթին դա վերաբերում է դողուլիստական/ հակաելիտար տրամադրությունների աճին: Աճում է ադահամակարգային կամ հակահամակարգային ակտիվիստական շարժումների ազդեցությունը: Քաղաքական մրցակցային դայքարում վճռական նշանակություն են ձեռք բերում հանրային կադերը, ցանցային և տեղեկատվական միջոցները: Սրան նդաստող կարևորագույն գործոններից է կուսակցական համակարգի ձգնաժանը, մասնավորադես «ամեն ինչի» կուսակցությունների ձևավորումը, որի օրինակն են ՀՀԿ-ն կամ ոռսական Եդինայա Ռոսիան:²

Քաղաքական հաղորդակցության և դիսկուրսի ձգնաժանը հատկադես նկատելի է հայաստանյան ազատական գաղափարախոսության և կուսակցությունների օրինակով: 2017 թ. ընտրությունների ժամանակ ոչ մի ազատական կուսակցություն չկարողացավ հաղթահարել ընտրադատները: Սակայն, դժվար չէ նկատել, որ ազատական գաղափարախոսության հիմնական տարրը՝ իրավունքի և օրինականության հոետորությունը կիսում են ինչդես իշխանությունները, այնդես էլ ընդդիմությունը և հասարակական կազմակերողությունները:

Ինչո՞ւ է ազատականությունը ճգնաժամ ամրում: Բորիս Կոտրիանովը գրում է. «Լիբերալ դիրքորոշումը դարձել է անհնար, քանզի շուկայական ինքնակարգավորման դոկտրինան (ազատականության բոլորի կողմից արդեն մոռացված հիմքը) անընդունելի է: Գոյություն ունեն գեղագիտական, բայց հատկապես էթիկական հիմքեր այն մերժելու: Լիբերալիզմը կորցրել է իր գաղափարական և տնտեսական հիմքերը: Իրականում «ընդդիմությունը» կանգնած է հակառակ կողմի ցանկացած գործողություն ռեֆլեքսիայի ենթարկելու դիրքում: Ընդդիմադիրները միավորում են միանգամայն անողատկերացնելի և եկզոտիկ ներկայացուցիչների. «Միայն թե նրանց դեն»:³

Չայաստանում լիբերալ դիսկուրսի կրողը ոչ միայն «ընդդիմությունն» է, այլ ընդդիմադիրներ են հիմնականում հասարակական կազմակերպությունները: Սակայն ՅԿ-ական լիբերալ դիսկուրսը ևս երոզիայի է ենթարկվում: Բրիտանական հետազոտող Արմինե Իշխանյանը շատ հետաքրքիր մի դիտարկում է անում. «Եթե հստակեցնենք, աղա քաղաքացիական նախաձեռնությունները տարբեր են դաշտոնադրեց գրանցված, մասնագիտացված ՅԿ-ներից մի շարք առանցքային կողմերով, այդ թվում՝ նրանց կազմակերպական կառուցվածքները և որոշումների ընդունման ձևերը, ռազմավարություններն ու գործողության գիմանոցը, նրանց կողմից օտարերկրյա ֆինանսավորման մերժումը և օտարերկրյա դոնորների օգնությանը չաղավիհելը: Բայց այս տարբերությունները չեն նշանակում, թե նրանք կաղեր չունեն ՅԿ-ների հետ: Ընդհակառակը՝ ՅԿ-ներում աշխատող անհատները հաճախ միանում են քաղաքացիական նախաձեռնությունների՝ իրենց ունակություններով աջակցելով վերջիններիս»:⁴ Դիտարկենք այս տարօրինակ խզումը քաղաքացիական նախաձեռնությունների և ՅԿ-ական «գաղափարախոսության» միջև, որը թվում է սուս գործառուծային բնույթ ունի: ՅԿ-ների գործառույթն է կաղ հաստատել հասարակության և իշխանության միջև հանրային բննարկումների միջոցով, այսինքն՝ իրավական գաղափարախոսության սահմաններում:

Գաղափարախոսությունը դիսկուրսում իրեն իրագործում է այս կամ այն փաստը կամ իրադարձությունը ներկայացնելու միջոցով: Լսարանի սոցիալական գիտելիքի վերահսկման համար օգտագործվում են այնդիսի հնարքներ, ինչդիսին են հասկացությունների և բաղերի նշանակության նենգափոխումը, դարգեցումը և կարծրատիղերի շահագործումը, հաստատումը և կրկնությունը, տեղեկատվության տրոհումը, անհաղաղության և սենսացիոն բնույթ տալը և այլն: Կարևոր է հատկապես փաստերի և իրադարձությունների ընտրությունը և նրանց խմբավորման եղանակը: Չայաստանյան գաղափարական դիսկուրսում կարևոր տեղ է զբաղեցնում դաղուլիզմ հղացքը, ինչդես նախկին իշխանական, այնդես էլ լրագրողական խոսքում:

Չետագոտողներ Արմեն Ղազարյանը և Ալինա Պողոսյանը իրենց հայեցակարգային զեկուցման մեջ, որ նախատեսված էր «Պողուլիզմն ու դրոդազանդան Չայաստանում՝ ի ցույց» բննարկումների շարքի համար, գրում են. «Չայաս-

տանում որոշուիլովն ու որոշագանդան հաճախ կաղված են ազգայնակա-
նության և աղքատության թեմամերի հետ: Պորոլիզվն և որոշագանդան Հա-
յաստանում խոչընդոտում են թե՛ ներքին գործընթացների (դեմոկրատացում,
լավ կառավարում և այլն) և թե արտաքին քաղաքականության (Ռուսաստանի
և ԵՄ հետ հարաբերություններ) վերաբերյալ առողջ երկխոսությանը: Մի կող-
մից իշխանությունը կարևոր հարցերում շահագործում է հանրության ենցիա-
ները, մյուս կողմից հանրությունն իշխանության որոշումներին արձագանքելիս
հենվում է ոչ թե փաստերի և հիմնավորված առաջարկների, այլ զուտ իշխանու-
թյան մերժման վրա՝ շեշտադրելով դրա անբարոյական և անիրավ կողմը»:⁵

Արտակ Ալեքսանյանը *Նյունսգ* ամսագրի «Քաղաքական որոշուիլզն աշխար-
հում և Հայաստանում» վերլուծականում գրում է. «Պորոլիզվն միայն հայկա-
կան երևույթ չէ, համաշխարհային քաղաքական մոդա է. այն 2016 թվականի
ամենագլխավոր թրեմդն էր, որ շոշափելի հաջողություններ գրանցեց գրեթե
բոլոր մայրցամաքներում»: Ըստ նրա՝ «Խորհրդարանական ընտրությունների
մնացել են հաշված շաբաթներ, արդեն դարձ է, որ քարոզարշավն անցնելու է
ծայրահեղ որոշուիլստական կարգախոսներով»: «...Պորոլիլստները շահար-
կում են աղքատ և անխելք մարդկանց տնտեսական և սոցիալական շահերը՝
սիրաշահելով նրանց որիմիտիվ ինքնասիրությունը»:⁶

Հայկական ՉԼՍ-ները մեծ կարևորություն են տալիս որոշուիլզնի սիմվոլիկ՝
բնութագրելով որոշ քաղաքական ուժերին իբրև որոշուիլստական: Հիմնակա-
նում այդպես է բնութագրվում Օսոուկյան դաշինք/ Բարգավաճ Հայաստան,
Հայկական վերածնունդ և Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան դաշինքները: Բերեմ
Հայոց աշխարհ թերթի գլխագրերից մի քանիսը. ««Ազատ Դեմոկրատներն»
էլ չխուսափեց որոշուիլզնից», «Մենք չենք զբաղվելու որոշուիլզնով և ժամա-
վաճառությամբ», «Մի ուրվական է շրջում հայոց աշխարհում. որոշուիլզնի
ուրվականը», «Նախընտրական որոշուիլզնի տրամաբանության մեջ. նման
հարցերում որոշուիլզնը տեղին չէ», «Ոչ թե որոշուիլզն, այլ իրատեսական լու-
ծումներ», «Պարտադիր չէ, որ որոշուիլզնը հասնի հիմարության», «Պորոլի-
լիզնից վատթար կարող է լինել միայն չաշխատող որոշուիլզնը» և այլն:
Պորոլիլզնի դեմ տասնյակ հոդվածների հեղինակ է *Առավոտ* թերթի
խմբագիր Արա Աբրահամյանը: Պորոլիլզն բառով որոնումը *Իրատես* թերթի
կայքում 2017 թ. ի վեր տվեց մոտ 70 արդյունք:

Բնութագրական է նախկին վարչապետ Կարեն Կարապետյանի 2018 թ. տա-
րեմուտի հանդիմունը լրագրողների հետ: Նա մասնավորապես ասաց. «Մեր
այսօրվա կյանքն այնպիսին է, որ, ին կարծիքով, դրագմատիզմը, ոսցիոնալ
մտածելակերպը, որոշուիլզնից հեռու լինելն անհրաժեշտություն է և դեռ է
դառնա կյանքի մորմ: Լավագույն քարոզիչները կարող եք դուք լինել, եթե այդ
ցանկությունը լինի, որովհետև ամենամեծ ազդեցությունն այդ դաշտի վրա
ունեք դուք: Կառավարությունը չափազանց շահագրգռված է և դատարաստա-
կան մեղիա աշխարհի հետ ձևավորել կոմունիկացիայի մոր կանոններ և մոր
բովանդակություն տալ»:⁷ Վերոնշյալ հղումները վկայում են, որ նախկին

իշխանությունների և լիբերալ լրագրողների միջև, գոնե Պոպուլիզմի խնդրում, գոյություն ունի գաղափարախոսական կոնսենսուս:

Ինչդեռ արդեն նշել են կուսակցական համակարգի ճգնաժամը, ակտիվիստական շարժման, քաղաքացիական նախաձեռնությունների աճը անխուսափելիորեն բերում են Պոպուլիստական տրամադրությունների աճի: Արդեն նշել են նաև, որ ՉԼՍ-ները ստեղծել են Պոպուլիզմի որոշակի կարծրատիղ, որը տեղավորվում է ինչդեռ իշխանությունների մոտեցումների, այնպես էլ լիբերալ դատկերացումների շրջանակներում:

Բայց ուղիկալ կամ ազոնալ դեմոկրատիայի տեսության հեղինակներ Էոնեստո Լակլաուն և Շանտալ Մուֆը այլ մոտեցում ունեն Պոպուլիզմին: Լակլաուն իր մոտեցումը շարադրել է «Պոպուլիզմի մասին» հոդվածում:⁸ Նրա տեսությունը կոնստրուկտիվիստական է. քաղաքական դրակտիկաները ոչ թե արտահայտում են քաղաքական սուբյեկտների էությունը, այլ կառուցում են այդ սուբյեկտները: Պոպուլիստական քաղաքական դրակտիկաներում այդ սուբյեկտը ժողովուրդն է: Բայց այդ շարժումները Պոպուլիստական են ոչ թե այն դատձառով, որ դրանք բովանդակությունը Պոպուլիստական է, այլ այն Պոպուլիստական է արտիկուլացման տրամաբանությամբ:

Լակլաուն իր վերլուծությունը սկսում է անհատից կամ խմբից ավելի փոքր միավորից՝ դատհանջից: Պատհանջ բառը երկիմաստ է. այն կարող է նշանակել ինչդեռ կարիք, այնպես էլ բողոք: Քաղաքացիների մի խումբ դատհանջում է ասֆալտադատել փողոցը, մյուսները դատշտդանում են փոքրամասնություններից, երրորդները դնում են էկոլոգիական դատհանջներ: Մի դեղքում իշխանությունները այդ դատհանջները բավարարում են, մյուս դեղքում՝ հրաժարվում: Դրանք կետային և մասնակի դատհանջներ են, որոնք խզումներ չեն առաջացնում սոցիալական մարմնի մեջ: Այդդիսի քաղաքական սուբյեկտներից Լակլաուն անվանում է դեմոկրատական սուբյեկտներ:

Սակայն, երբ դատհանջների մերժումը դատնում է իշխանության ռազմավարություն, ձևավորվում է քաղաքական արտիկուլիացման մեկ այլ տրամաբանություն: Եթե իշխանությունը՝ դատհանջները քննարկող հաստատությունը, դիտարկում է ամեն մի դատհանջ առանձին-առանձին, այն ունի դոգմատիկ տրամաբանություն: Բայց չբավարարված հայց-դատհանջները կարող են միավորվել մեզատիկ տրամաբանությամբ, որը նրանցից ձևավորում է համարժեքության շղթա: Դամարժեքության շղթայում վերանում է դատհանջների տարբերակումը, բայց ոչ իրենք՝ դատհանջները: Սա Պոպուլիստական արտիկուլացման ելակետն է: Այս դեղքում սուբյեկտը ավելի լայն է, քանզի այն առաջ է բերում համարժեքությամբ միավորված դեմոկրատական դատհանջների մի մեծ խումբ: Այդ սուբյեկտը Լակլաուն անվանում է Պոպուլիստական սուբյեկտ:

Պոպուլիստական սուբյեկտը չի կարող գոյություն ունենալ, եթե չկա ներքին սահմանազատում: Դամարժեքության դատհանջների շղթայի առաջացումը


վկայում է ընդհանուր անբավարարվածության մասին և անհրաժեշտ է դարձնում ֆրուստրացիայի աղբյուրի բացորոշումը: Համարժեքության ողողուլիստական դիսկուրսը բաժանում է սոցիումը երկու մասի՝ իշխանության և զրկվածների: Այդ տասին դժգոհությունը վերածվում է բողոքի՝ տասին բառի երկրորդ իմաստով: Առաջ է գալիս ներքին սահման, որից անդին, օրինակ՝ օլիգարխիական իշխանությունն է: Ինստիտուցիոնալ քաղաքական դիսկուրսը գործում է սինտագմատիկ տրամաբանությամբ, գոյություն ունի տարբերվող սոցիալական կամ քաղաքական դիրքորոշումների մեծ բազմություն, ողողուլիստական տրամաբանությունը տարադիգմատիկ է և ունի ընդհաններ երկու սինտագմա:

Հաջորդ քայլն այն է, որ մասնակի տասիններից մեկը, օրինակ՝ «Մերժիր Մերժին» կարգախոսը, տասիններով իր մասնակիությունը, խորհրդանշային համարժեքության շղթայում դառնում է հեգեմոն-մշան: Որքան այն լայն է, այնքան աղքատ է: Հարստացած այդ աղքատությամբ, բանզի միավորել է հետերոգեն տասիններ: Կրկին վերհիշենք Ն. Փաշինյանի խոսքերը. «Մենք հաջողել ենք ու հաջողելու ենք, որովհետև դատարկ ձեռքերով կարողացանք տատալել վախի, կեղծիքի, կոռուպցիայի, լկտիության անրոցներ, իսկ ինչեր կանենք հիմա, երբ ունենք որոշումներ կայացնելու ղեկավարություն, լեզիտիմ լիզորություն: Հայաստանի քաղաքացիների, հայ ժողովրդի իրականացրած թավշյա հեղափոխությունն ընդլայնել է մարդկային հնարավորությունների սահմանը և սա իրականություն դարձնել շատերը, եթե ոչ բոլորը համարում էին անհնար»:⁹ Կարծում են վերոհիշյալը բավարար է, որտեսզի այս հեղափոխությունը բնորոշենք որտես ողողուլիստական Լակլաուի մշած իմաստով: Առանց այդ համարժեքային շղթայի գոյության դժվար է բացատրել սոցիալական տարբեր խավերի ներկայությունը ամրիկյան հեղափոխության մեջ:

Լակլաուն գրում է, որ եթե ողողուլիզմը սահմանենք ըստ նրա այնտիսի հատկությունների, ինչտիսին են համարժեքության տրամաբանության գերակայությունը, դատարկ մշանների արտադրությունը, ներքին սահմանագատումների հաստատումը զրկվածներին դիմելու միջոցով, ատա ակնհայտ է դառնում, որ այն դիսկուրսները, որոնք հիմնված են արտիկուլացման այս տրամաբանության վրա, կարող են առաջանալ սոցիալ-ինստիտուցիոնալ դաշտի ցանկացած տարածքում, լինի այն կլիենտելիստական քաղաքական կազմակերպություն, կայացած քաղաքական կուսակցություն, արհմիություններ, բանակ, հեղափոխական շարժումներ և այլն: Պողողուլիզմը բնութագրում է ոչ թե այդ կազմակերպությունների ակտուալ քաղաքականությունը, այլ նրանց թեմաների արտիկուլացման եղանակը, ինչտիսին էլ նրանք լինեն:¹⁰

Նրա կարծիքով բոլոր քաղաքական շարժումները ավել կամ տակաս ողողուլիստական են, բայց ողողուլիզմը հատկապես ակտուալ է դառնում քաղաքական վերափոխությունների ժամանակ, երբ հարցականի տակ է հասարակության ատագան: Պողողուլիզմի աստիճանը կախված է քաղաքական այլ-ընտրանքների խզումից: Հայաստանում սա ակնհայտ էր:

- ¹ Ըստ՝ *Современные теории дискурса: мультидисциплинарный анализ*, Серия «Дискурсология» (Екатеринбург: Издательский дом «Дискурс-Пи», 2006), էջ 3:
- ² Տե՛ս Վարդան Ջալոյան, «Հայաստանյան կուսակցական համակարգի «կարտելացումը», *Փոփոխվող աշխարհ. հայացք Երևանից վերլուծական-փորձագիտական եռամսյա հանդես*, թիվ 3 (2012), էջ 104-119:
- ³ Борис Куприянов, «12 тезисов об отсутствии голоса, дихотомии и преодолении молчания», <http://gefter.ru/archive/15514>, այց՝ 19.07.2019:
- ⁴ Արմինե Իշխանյան, «Քաղաքացիական նախաձեռնությունների զարգացումը Հայաստանում», *Քաղաքական դիսկուրս*, 21.01.2014, <http://diskurs.am/2014/01/210/>, այց՝ 10.07.2019:
- ⁵ Պոպուլիզմը և դրոշմագանդան Հայաստանում. հայեցակարգային գեկույց, դատարաստեցին՝ Արմեն Ղազարյանը և Ալինա Պողոսյանը, *Բուն թիվի*, 24 օգոստոսի 2017, <http://boon.am/populism-and-propaganda-arm/>, այց՝ 19.07.2019:
- ⁶ Արտակ Ալեքսանյան, «Քաղաքական դրոշմագանդան աշխարհում և Հայաստանում», *Նյունագ*, <http://newmag.am/2017/populism/>, այց՝ 19.07.2019:
- ⁷ Վարչապետը տարեմուտի ընդունելության է հրավիրել լրագրողներին, *Իրատես*, 29.12.2017, <http://www.irates.am/hy/1514540861>, այց՝ 19.07.2019:
- ⁸ Эрнесто Лаклау, «О популизме», *Вестник Московского университета*, Серия 12, Политические науки, թիվ 3 (2009), էջ 54-68, <http://streetuniver.narod.ru/Laklau.doc>, այց՝ 06.07.2018:
- ⁹ Վարչապետ Լիկոլ Փաշինյանի ելույթն Ազգային ժողովում կառավարության ծրագիրը ներկայացնելիս, Մաս 2, *Արմեդիա*, 07.06.2018, <http://armedia.am/arm/news/61966/varchapet-nikol-pashinyani-eluytn-azgayin-zhoxovum-karavarutyanyan-tsragiryan-nerkayacnelis-mas-2.html>, այց՝ 19.07.2019:
- ¹⁰ Лаклау, «О популизме», էջ 64-65:



ՆԱԻՐԱ
ՄԿՐՏՉՅԱՆ

ՏԵՂԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ
ՏՐԱՄԱՍԱՅԻՆ
ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՄԻՋԵՎ.
ՈՐՈՇ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՈՒՐՋ



իտության փիլիսոփայության մեջ հետազոտական ուղղության ու դրա ընտրության կարևորությունն առաջին հայացքից ծեծված հարց է: Չէ՞ որ կասկածից վեր է, որ իրականության ուսումնասիրության հաջողվածությունը մեծադեպ կախված է նրանից, թե հետազոտողն իր ձեռքի տակ եղած միջոցներից որն է ընտրում այդ իրականության հետ գործ ունենալու նպատակով: Սակայն հարցի ծեծված լինելու հանգամանքը կարծես չեղարկվում է ամեն անգամ, երբ խոսք է գնում կոնկրետ իրադրության մասին, երբ մաս հետազոտողն իրեն հաշիվ լիտի տա, թե ինչ տյայմաներ են հնարավոր դարձնում իր հետազոտական գործունեությունն այդ դեղքում և երբեմն էլ՝ իմչ «գնով»:

Այս հողվածը գլխավորապես այն մասին է, թե ինչ ուղղություններ կարող են գործի դրվել, երբ մի կողմից տեղային փորձառության հենքի վրա ստեղծված տեսություններ, հղացքներ ու մեթոդներ չկան՝ ուսումնասիրելու կոնկրետ սոցիալական իրականությունը: Մյուսից՝ այդ իրականության ու այլ փորձառությունների հենքի վրա ստեղծված տեսությունների, հղացքների ու մեթոդների միջև որոշակի «ճեղք», «խզում» կա այն դեպքում, որ տեղային փորձառությունը յուրահատուկ է: Միաժամանակ հողվածում առաջ քաշված հարցերն ու դրանց լուծումները քննարկվելու են մասամբ այնպիսի ըմբռնումների ու կանխադրույթների հիման վրա, որոնք քննադատության են արժանացել, կամ նախկինի դեպքում լայնորեն չեն կիրառվում ու փոխարինվել են մորերով: Սակայն այս հանգամանքը գիտակցելով հանդերձ՝ նպատակահարմար են համարում ամրապնդել հենց այդ ըմբռնումներին ու կանխադրույթներին՝ հույսով, որ դրանք այնուամենայնիվ լույս են սփռում խնդրո առարկայի վրա՝ ճանադարի բացելով հնարավոր լուծումների համար:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՉՍԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մասնագիտական գրականության մեջ սոցիալական և հումանիտար գիտությունների սկզբնավորումը սերտորեն կադում են արևմտյան հասարակությունների արդիության փուլ թևակոխելու, վերջինիս բնորոշ արդյունաբերականացման, գաղութատիրական քաղաքականության ծավալման հետ:¹ Այդ գիտություններն առնվազն երկու հիմնական խնդիր էին լուծում՝ ինչդեպ կազմակերպել արդիականացող արևմտյան հասարակությունների ներքին կյանքն իր հիմնական չափումներում՝ դեպքում-քաղաքական, տնտեսական և այլն, և ինչդեպ հարաբերվել արտաքին աշխարհի հետ՝ կազմավորումների ու միավորների ողջ բազմաձևությամբ (դրանց մեջ էին մտնում ոչ միայն արդիականացող այլ արևմտյան հասարակություններ, այլև Արևմուտքից դուրս համարվող հանրույթներ): Այս երկու հիմնական խնդիրների լուծման փորձերը հանգեցրին նրան, որ ժամանակի ընթացքում արևմտյան ակադեմիական շրջանակներում մեկը մյուսի հետևից երևան եկան ոչ միայն

ամենատարբեր գիտակարգեր, այլև տեսություններ, սկզբունքներ, հղացքներ ու մեթոդներ, որոնք նախ և առաջ սերտորեն լծորդված էին արևմտյան տեղային փորձառություններից: Ընդ որում՝ դրանք երբեմն նաև միմյանց էին բախվում կամ արմատականորեն տարբեր էին:² Եթե ելնել նրանից, որ արևմտյան փորձառություններից բացի, կան նաև ոչ արևմտյան փորձառություններ, առաջ ակնհայտ է, որ սոցիալական ու հումանիտար գիտությունների կարգավիճակն ամենևին միանշանակ չէ: Եվ ահա այս համատեքստում հարց կարող է առաջանալ, թե՛

Յնարավո՞ր է արդյոք այսօր կոչված արևմտյան փորձառության հենքի վրա ստեղծված տեսությունները, դրանց տրամադրած հղացքները, սկզբունքներն ու մեթոդները գործի դնել նաև ոչ արևմտյան փորձառություն(ներ)ն ուսումնասիրելիս:

Եվ եթե այո, առաջ ինչո՞ւ էն դրանք գործադրվելու: Կենսակա՞ն է արդյոք դրանք գործադրող ռազմավարությունների մշակումը՝ հաշվի առնելով «արևմտյան/ոչարևմտյան» բաժանման մշակութային-քաղաքական հիմնարարությունը:

Այս երկու հարցերն իրականում նոր չեն և առավել սուր իրենց զգացնել են տվել ոչարևմտյան հասարակությունների և՛ գաղութային, և՛ հետգաղութային շրջաններում, երբ տարբեր (ընդ որում՝ ինչո՞ւ են արևմտյան, այնպես էլ ոչ-արևմտյան) ակադեմիական շրջանակներում փորձ էր արվում դրանք ուսումնասիրության օբյեկտ դարձնել:³ Ավելին, դրանցից առաջինն էլ մեծադեմ կամ խորոշել է, որ վերջնականապես ամրագրվի հասարակության, լիցենզիայի ու մշակույթի մասին գիտությունները սոցիալականի և հումանիտարի բաժանելու մտայնությունը: Ընդ որում՝ առաջինները, այսինքն՝ սոցիալական գիտությունները, լիցենզիայի ուսումնասիրելին գերազանցապես արևմտյան, այսպես կոչված արդիության փուլ թևակոխած հասարակությունները, իսկ երկրորդները՝ հումանիտար գիտությունները, հատկապես խոսքը մարդաբանության մասին է, այդ փուլին չհասած ոչարևմտյանները:⁴

Այդ առումով վերոհիշյալ հարցերը շատ ավելի ցցուն ու հրատաղ դարձան նաև մեզանում ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ արևմտյան հետազոտական մոդելները լայնորեն մուտք գործեցին հետխորհրդային հասարակությունների, այդ թվում նաև՝ հայաստանյան համադատասխան հաստատություններ: Պետք է նշել, որ խոսքն ամենևին այն մասին չէ, որ մինչ այդ արևմտյան փորձառության վրա ձևավորված մոդելներ չէին գործադրվում ԽՍՀՄ ակադեմիական հաստատություններում: Իհարկե, ԽՍՀՄ-ում սոցիալական ու հումանիտար գիտությունները գործառում էին արևմտյան տրամասային յուրաքանչյուրի կողմնակից շրջանակում՝ արևմտյան տեսություններով, դրանց տրամադրած սկզբունքներով, հղացքներով ու մեթոդներով: Սակայն հայտնի փաստ է, որ մի կողմից՝ դրանք խիստ սահմանափակ թվով էին շրջանառվում ակադեմիական ասպարեզում, քանի որ մի մասն արգելանքի ներքո էր, մյուսից՝

թույլ էր զարգացած խորհրդային հասարակագիտական միտքն ընդհանրա-
 րոպե, այսինքն՝ ԽՍՀՄ-ում իր իսկ հասարակությունների բազմակողմանի
 ուսումնասիրության համար բավարար չափով ո՛չ էմոփրիկ, ո՛չ տեսական
 գործիքներ չկային:

Այն, ինչ հետազոտողների գոնե մի մասը լիտի փորձառեին հետխորհրդա-
 յին իրադրության մեջ, սոցիալական իրականության և այն ուսումնասիրելու
 միջոցների միջև որոշակի «ձեղքն» էր, «խզումը», որն, ի վերջո, կարող էր
 հանգեցնել նաև այդ իրականությունը գիտականորեն ճանաչելու ամհնա-
 րիմության հայտարարմանը: Այդ «ձեղքը», «խզումն» իրեն ժամանակ առ ժա-
 մանակ «զգացնել է տալիս» նաև շարունակաբար ծավալվող փոփոխու-
 թյուններին զուգընթաց (մասնավորապես խոսքը նաև «թավշյա հեղափո-
 խություն» անվանումը ստացած հայաստանյան իրադարձության մասին է) և
 հարկադրում վճռել, թե ինչդեպ, այնուամենայնիվ, գործ ունենալ (հայաստանյան)
 սոցիալական իրականության հետ հետազոտական տեսանկյունից: Հետևաբար,
 տեղային հետազոտողի համար առաջին հերթին կենսական է դառնում այս
 «ձեղքի» կամ «խզման» իմաստավորման ու դրանից ելք(եր) գտնելու հարցերը:
 Ուստի, հավանաբար, լիտի բարձրացնել հետևյալ հարցերը, թե՛

*Եթե այդ «խզումը» կամ «ձեղքն» անխուսափելի է, իսկ այսպես կոչված
 տեղային գիտական տրակտիկաները՝ ոչ հասուն ու հղացային առումով
 դեռևս անարգասաբեր, առաջ ի՞նչ հնարավոր ելք(եր) կարող են լինել:*

*Եթե այս խնդիրներն ընդհանրապես նոր չեն ոչարևմտյան հասարակու-
 թյունների համար, առաջ դրանց փորձառությունները կարո՞ղ են ինչ-որ
 ուղղակիություն(ներ) առաջարկել այս իրադրության մեջ:*

Այս երկու հարցերին կարելի է դրական ղատասխանել՝ ներկայացնելով երկու
 այդպիսի ուղղակիություն, որոնք ներշնչված են հետկառուցադաշտական
 որոշ ուսմունքներից: Առաջին ուղղակիությունն արդյունավետորեն գործա-
 դրել է Գ.Չ.Սոփիակը իր «Կարո՞ղ է եմթադասը խոսել. մտորումներ այրու զո-
 հաբերության շուրջ» էսսեում: Թեև Սոփիակը երբևէ դրան անվանում չի տա-
 լիս, բայց կառաջարկելի անվանել այն առնվազն «որոշ առանցքային հղացք-
 ների քվադիացում»:

Երկրորդ ուղղակիությունն ավելի շուտ ներշնչված է Փ.Գիլրոյի ստրկատի-
 րությունից ազատագրվելու սևական փորձառության իմաստավորումից և կա-
 րելի է անվանել «արևմտյան հետազոտական միջոցների ընտրողական
 կիրառություն»:

ԲՎԱԶԻՄՅՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինչդեպ հայտնի է, հետզադուրթատիրական, ֆեմինիստական ու մշակութային
 հետազոտությունների աստարեզում արդեն դասական դարձած «Կարո՞ղ է

Ենթադասը խոսել. մտորումներ այրու զոհաբերության շուրջ» Եստեն գրվել է անցյալ դարի ութսունական թվականներին: Դրանում Գ. Չ. Սոփիվակի մտորումների կիզակետում է հայտնվում ենթադաս կնոջ լոնցունը այրու (ինքնա)հրկիզման հինդուական ծեսի՝ *սատիի* շուրջ ձևավորված ու շրջանառված հիմնական մոտեցումների քննության միջոցով: Եթե ամփոփ մերկայացնենք, թե ինչդե է հեղինակը կառուցում այդ մտորումների ընթացքը, ադա նա, երկու նախադասություններ ի մի բերելով՝ «Սոփիտակ տղամարդիկ փրկում են թուխ կանանց թուխ տղամարդկանցից» և «Իրականում կանայք ուզում էին մեռնել», վերակազմում է այդ ծեսի շուրջ առաջին հայացքից երկու տարբեր, բայց, նրա համոզմամբ, միմյանց լեգիտիմացնող մոտեցումներ՝ առաջինը՝ բրիտանական-կայսերական, երկրորդը՝ հնդկական-բնիկադաշտ:⁵

Սակայն Եստենում ուշագրավը ոչ միայն ենթադաս կնոջ լոնցունն ողջ կազմաբանությունն ի ցույց դնելն է, այլև այն, թե ինչդե է Գ.Չ.Սոփիվակն այդ իրականացում և ինչ միջոցներով: Նախ դայմանավորված ուսումնասիրությունների աստարեզներով՝ Եստեն գրված է քննադատական ոգով, որը տեղ-տեղ անգամ վերածվում է խայթող հեզանմբի:⁶ Բայց, ի լրումն դրա, ողջ Եստեն ներծծված է նաև ինքնաքննադատականությամբ, և հարց է առաջանում, թե ի՞նչն է դրդում հեղինակին ողջ Եստեի երկայնքով դահել այդ ինքնաքննադատականությունը: Վճռորոշ հանգամանքներից մեկը քննվող իրականության ու քննության միջոցների միջև առկա մշակութային-քաղաքական արմատական զանազանությունն է, որը հեղինակը շատ լավ գիտակցում է, և ինչը մեծացնում է իրականությունն աղավաղելու և ստացված գիտելիքի անհուսալիության վտանգը, հետևաբար, հարցականի տակ է դնում արևմտյան տրամասային տրակտիկաների շրջանակում արևմտյան տեսություններով, հղացքներով ու մեթոդներով հետազոտություն անելու մոդատակահարմարությունն ու դատաշահությունը:

Սակայն մյուսից ղետք է նաև ընդունել, որ ակադեմիական աստարեզում մեծ հաշվով արևմտյանին այլընտրանքային տրամասային տրակտիկաներ, տեսություններ, հղացքներ ու մեթոդներ չկան, որոնց օգնությամբ տվյալ դեղքում կարելի կլիներ ի ցույց դնել ենթադաս կնոջ լոնցունն ու նրա ձայն ստանալու հնարավորությունը բանալ: Իսկ Սոփիվակի մոդատակն առաջին հերթին այդ կնոջ տեքստը ներկայացնելն է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Զնդկաստանի դատությունը գրելու ոչ մի նախորդ փորձում այդդե էլ լսելի չէր դարձել նրա ձայնը:⁷ Ու նա գնում է յուրահատուկ «փոխգիջման»՝ որդեգրել արևմտյան տրամասային տրակտիկաները, գործի դնել, ինչդե ինքն է նշում, առաջին աշխարհի արական սեռի մտածողների հղացքներն ու նրանց տեսությունների մեթոդաբանական աուրան՝ նախ և առաջ Չ.Ֆրոյդի, ադա՝ Մ.Ֆուկոյի, Ժ.Ֆ.Լիոտարի և այլն, սակայն դարբերաբար ընդգծել, որ, օրինակ, Ֆրոյդի «արտանդման» հղացքի դարազայում, այդդիսի գործադրումն ընդունել վերադահունով, դայմանականորեն:⁸

Ստացվում է, որ Սոփիվակի մտքում «կարծես թե»-ն կան «գրեթե»-ն արդեն

իսկ կանխադրված են ամեն անգամ, երբ տեղային իրողությունը քննվում է արևմտյան տրամասային լոգոսոկենտրոն արևմտյան տեսություններով, հղացքներով ու մեթոդներով:⁹ Այլ կերպ ասած՝ այդ տեսությունների, հղացքների ու մեթոդների գործադրման ժամանակ Սոփվակը կիրառում է մի ռազմավարություն, ինչը կարելի է անվանել «քվազիացում»: Դրա հետևանքով, իհարկե, Արևմուտքի դիրքից դիտված՝ գործադրված տեսություններն ու հղացքները որոշ չափով կորցնում են իրենց ճշգրտությունն ու ստույգությունը, բայց, փոխարենը, հանկարծ ուրվագծվում ու որոշակիանում են, իսկ երբեմն նաև դուրս ցցվում իրողություններ, որոնք այլ կերպ չէին էլ երևա: Ավելին՝ այս կետում է, որ հնարավոր է դառնում խնդրականացնել մինչ այդ սկզբունքորեն անխնդրականացնելի հասարակական կառույցներ ու հարաբերություններ: Եվ, ուստի, կարծես, անգամ հղացքների քվազիացման գնով, միանգամայն արդարացված է դառնում արևմտյան տրամասային լոգոսոկենտրոնի շրջանակում ոչարևմտյան իրականության ուսումնասիրությունը:

Եթե փորձենք շոշափել այս ռազմավարության կազմավորման ակունքները, ադա լոգոսոկենտրոնի վկայակոչենք գերմանացի փիլիսոփա Մ.Յայդեգերի գոյաբանությունը, ուր առանցքային դերակատարություն ունի *ամ-դունդի* (*Ab-grund*) հղացքը որդես մեկընդմիջտ տրված, կայուն հիմքի բացակայություն:¹⁰ Վերջինս, սակայն, ամենևին չի նշանակում ընդհանրապես հիմքի բացակայություն: Անդունդն էլ հենց հիմքն է, որն անվերջ հետաձգում է վերջանական հիմնավորումը, կամ հենքի չժամանելն է:¹¹ Այդով, մետաֆիզիկական մտքի համար վճռորոշ կայուն ու բացարձակ հիմքի գաղափարը քվազիացման հետևանքով հետմետաֆիզիկական մտքում դառնում է ամ-դունդ, ինչը խոր արմատներ է գցել հետկառուցադաշտ մտածողների ուսմունքներում:¹²

Վերադառնալով վերոհիշյալ մեթոդաբանական խնդիրներին՝ տեղին է հարց տալ, թե *արդյո՞ք հղացքների այս «քվազիացումն» իր հերթին անխուսափելի է, և ինչպե՞ս կարելի է այն բացատրել*: Առաջին հարցին դրական պատասխանելով՝ հղացքների քվազիացման հնարավոր բացատրություններից մեկը կարող է հուշել թարգմանության գաղափարը: Տեսություններն ու հղացքները մի մշակութային համատեքստից մեկ այլ մշակութային համատեքստ փոխադրելը կարելի է համարել թարգմանական գործողություն: Իսկ, ինչպես հայտնի է, ոչ մի թարգմանություն երբևէ չի կարող լինել բնօրինակի կատարյալ տեղափոխում և վերարտադրություն մոր մշակութային համատեքստում: Այն միշտ հանգեցնում է բնօրինակի անխուսափելի փոխակերպման, որի շնորհիվ, ինչպես Վ.Բենյամինը կասեր, բնօրինակը գոյատևում է՝ շարունակում է աղղրել ու վերաղղրել մեկ այլ լեզվում:¹³ Հետևաբար, արևմտյան տրամասային լոգոսոկենտրոնի շրջանակում արևմտյան տեսություններով ու մեթոդներով տեղային փորձառության ուսումնասիրության ժամանակ հղացքների քվազիացումն անխուսափելի է, սակայն՝ ոչ սարսափելի: Գիտական առումով այսօրիսի կիրառումներն արգասաբեր են հենց արևմտյան տրամասային լոգոսոկենտրոնի համար՝ որդես մերփակումից դուրս գալու ու մորացման ուղի: Եվ սա

հրաշալիորեն գիտակցում են արդեն վերոհիշյալ քննադատական մտածող-
ներից հատկապես Ջ.Բաթլերը, ում մշակութային թարգմանության շուրջ
մտորումներից մեկն եզրակացություն կարելի է անել:¹⁴

Եթե հղացքների քվազիացման ուղղվածությունը ելք է վերոհիշյալ «ձեղքի»
կամ «խզման» իրողությունից, ապա է՞լ ինչ ուղղվածություն կարող է մեզ
այլընտրանքային ուղի առաջարկել այս իրադրության մեջ: Այս ճանապարհին
ողիտի հայացքն ուղղել մեկ այլ մտածողի, որի մտավորական ժառանգու-
թյունը ևս միջգիտակարգային տիրույթում է, ինչպես Գ.Չ.Սոփակակինը:

ՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Հայտնի գրականագետ, հետազոտության մտավորական Փ.Գիլրոյն իր
Սևական Անտլանտիկան. արդիություն և երկակի գիտակցություն նշանավոր
աշխատության մեջ քննության է առնում մի մշակույթ, ինչպես ինքն է ան-
վանում, Սևական Ատլանտիկան, որը վերանցնում է ցանկացած էթնիկություն
ու ազգություն, և իր մեջ ամփոփում աֆրիկյան, ամերիկյան, կարիբյան կամ
բրիտանական մշակույթների տարրեր: Հակադրվելով արդիությունը միա-
ձույլ լուսատկերելու հոլիստական տեսակետին՝ նրան այն ներկայացնում է, ճիշտ
հակառակը, որպես ոչ միաձույլ ու բազմաբարդ, ներքին բազմազանությամբ
օժտված իրողություն: Փ.Գիլրոյը միաժամանակ նկատում է, որ այս համա-
տեքստում ստրկատիրությունից սևական ազատագրումն արևմտյան հեղա-
փոխությունների դարաշրջանի գաղափարաբանությունները կիրառել է ընտ-
րողաբար:¹⁵ Ուստի, այդ ազատագրումը գաղափարական առումով ղեկ է
ղիտել ոչ թե արևմտյան արդիությունից բացարձակ դուրս մի բան, այլ նրա
հետ շաղկապված, այսինքն՝ կարող ենք եզրակացնել, նաև՝ ներս, ինչը, ըստ
Փ.Գիլրոյի, մշանակում է նաև, որ Արևմուտքի և սևական մտավորականի միջև
հարաբերությունները դառնում են երկակի:¹⁶

Այս առումով գործելով արևմտյան տրամասային ժողովուրդների շրջանա-
կում՝ հաճախ այն, ինչ իրականացնում է հետազոտողը ոչարևմտյան փորձա-
ռության դեմքում ոչ այլ ինչ է, քան արևմտյան տեսությունների ու հղացքների
ընտրողական կիրառություն՝ տեղային խնդրի ձևակերպման ու լուծման հա-
մար: Վերջինս ենթադրում է, որ երբեմն անհրաժեշտաբար զուգակցվում են
տարբեր բաղադրիչներ տարբեր տեսություններից՝ հրաժարվելով այդ տեսու-
թյունների մյուս բաղադրիչներից: Այդ դեմքում, տեղական հետազոտողի և
արևմտյան տրամասային ժողովուրդների, տեսությունների, հղացքների ու
մեթոդների միջև հարաբերություններն էլ են դառնում երկակի, ինչպես Փ.Գիլ-
րոյն է Արևմուտքի և սևական մտավորականի միջև հարաբերությունները բնու-
թագրում: Տեղական հետազոտողը մի կողմից իր համատեքստի մեջ է, տե-
ղային՝ ոչարևմտյան փորձառությամբ, մյուսից՝ դուրս, քանի որ գործի է դնում
արևմտյան տրամասային ժողովուրդների: Հետաքրքրական կերպով հետա-

զոտական գործունեության շնորհիվ առաջանում է մի «տեղանք», որը թույլ է տալիս արևմտյանի ու ոչարևմտյանի, «Ճերսի» ու «դրսի» միջև եռուն փոխհարաբերություններ՝ մասխկին սահմանագծերի չեղարկումներով, խզումներով ու նորի, ըստ էության, ժամանակավոր վերահաստատումներով: Սահմանագծերի այս չեղարկումների ու նոր վերահաստատումների շնորհիվ արևմտյան տրամասային դրակտիկաները, տեսությունները, հղացքներն ու մեթոդները դադարում են դարձադադար արևմտյան լինելուց, և, ուրեմն, ինքնին արևմտյան/ոչարևմտյան բաժանումը դառնում է վիճարկելի կամ ընդունված դայանականորեն:

Այսդիտով, վերոհիշյալ երկու ռազմավարություններն էլ ինքնատիղ հարաբերություն են նշմարում ու հաստատում արևմտյանի ու ոչարևմտյանի, «դրսի ու Ճերսի», համընդհանուրի ու մասնակիի միջև, եթե, օրինակ, մեզ թույլ տանք բավական խոցելի, բայց իրականում շրջանառված ենթադրություն, որում նույնանում են մի կողմից՝ արևմտյանը, «դուրսը», համընդհանուրը, մյուսից՝ ոչարևմտյանը, «Ճերս»-ն ու մասնակին: Եվ սա հատկադադար վերաբերում է ուսումնասիրություն անելու դիրքի, միջոցների ու արդյունքների հուսալիության չափօրինակների հիմնախնդիրներին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՐՉՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԾԱԴՐՈՒՄԸ

Այժմ տեղին է անդրադառնալ հղացքների քվազիացման ու ընտրողական կիրառության երկու ռազմավարություններին կոնկրետ օրինակներով:

Ինչդեռ հայտնի է, հայկական տրամասային իրականության մեջ մինչև վերջերս լայնորեն շրջանառվող գաղափարների թվին էր դատկանում «դատմական (ան)արդարություն» գաղափարը: Ուստի, անհրաժեշտ էր գտնել այն հետազոտական միջոցները, որոնք թույլ կտային ուսումնասիրել հայկական տրամասային իրականությունը և այդ գաղափարի տեղն ու դերը այդ իրականության մեջ: Եվ որդեռ այդդիսին ընտրվել էր հետմարքսիստական մի ուսմունք՝ հայտնի տրամասության վերլուծության իր ավանդույթով և ստեղծված հետկառուցադադար քաղաքական մտածողներ Է. Լակլաուի և Շ.Սուֆի կողմից: Այս ուսմունքում կենտրոնական են «համգուցային կետ» եւ «հեգեմոնիա» հղացքները, որոնցից առաջինը ոչ միայն Է. Լակլաուն, այլև Ս.Ժիժեկը փոխառել են Ժ.Լակլանից ու զարգացրել տրամասության վերլուծության իրենց մոտեցման մեջ, իսկ երկրորդը՝ Ա.Գրամշիից: Եթե հակիրճ, ադա այս տեսության մեջ ցանկացած իրականության մեջ տրամասային դադարը նշանակությունների առումով, ըստ էության, ամրագրված չէ, ուստի, նշանակիչներն այստեղ լողացող են: Սակայն այն, ինչ միաժամանակ բնութագրում է այդ դադարը, նշանակությունների ավելցուկն է: Ամրագրում տեղի է ունենում այն ժամանակ, երբ տրամասային դադարի հանդեղ հեգեմոնիա է հաստատում

որևէ տրամասություն: Վերջինիս բնորոշ «հանգուցային կետը» ժամանակավոր ու մասնակիորեն ամրագրում է տրամասային դաշտի տարրերի՝ լողացող նշանակիչների նշանակությունները՝ այդպիսով կարգաբերիչ դերակատարություն ստանձնելով:¹⁷

Ահա, եթե «դատմական (ամ)արդարություն» գաղափարը դիտարկել որդես հանգուցային կետ, ադա դարգ ուրվագծվում է նախ այն գաղափարաբանական տիրադետությունը կամ հեգեմոնիան, որը բնութագրական է հայկական տրամասային իրականությանը՝ նորագատականության և դահողանողականության որոշակի համադրություն: Սակայն խնդիրն այն է, որ հայկական տրամասային իրականությունը դժվար է բնութագրել որդես նշանակությունների ավելցուկով օժտված իրականություն, որը մինչև հիմա էլ դահողանվում է և ի ցույց է դրել իրեն նա «թավշյա հեղափոխություն» անվանունը ստացած իրադարձության ժամանակ:

Մյուսից՝ ժխտել հայկական տրամասային իրականության մեջ ընդհանրադես ինչ-ինչ գաղափարական կամ գաղափարաբանական այլընտրանքների գոյությունը, նույնդես անհնար է: Ուստի, երկընտրանքը հետևյալն է(ր) կամ հրաժարվել այս տեսությունից, որը սակայն հնարավորություն է ընձեռում այդ իրականությունը բնութագրել, բացատրել, կամ ինչ-որ ռազմավարություն գործի դնել այս տեսության կիրառության ժամանակ: Եթե հետմարքսիստական այս տեսության երկու կենտրոնական՝ «հեգեմոնիա» և «հանգուցային կետ» հղացքները քվազիացնել՝ կիրառել վերադահումով, դայմանականորեն՝ ստույգությունը թուլացնելով, կարծես թե դրանց կիրառման բոլոր դայմաններն առկա լինեին, ադա մի կողմից՝ հնարավոր է որդես հետագոտող գործել արևնտյան տրամասային դրակտիկաներում, մյուսից՝ ստանալ հայկական տրամասային իրականության դատկերը: Պարգադես այս դարագայում անհրաժեշտ է ճգրտության ու ստույգության հանդեղ գգնություն ու վերադահություն դրսևորել, ինչը կարող է երաշխավորված լինել ինքնաքննադատության շնորհիվ:

Ի հավելումն, օրինակ, «հայկական թավշյա հեղափոխություն» անվանունը ստացած իրադարձությունը ևս ուսումնասիրելի է այդ հետմարքսիստական տեսության միջոցով: Այդ տեսության անկյան տակ եթե հայտնի «Քայլ արա, մերժիր Սերժին» կարգախոսը համարել դատարկ նշանակիչ, որն ինքնին մասնակի դահանջ լինելով, դարդվում է իր իսկ մասնավոր բովանդակությունից՝ իր մեջ ամփոփելու մնացած բոլոր ժողովրդական դահանջները, ադա հասկանալի է նաև, թե ինչու էր հնարավոր այսդիսի արմատական քաղաքական բեկում մի միջավայրում, ուր առնվազն տասը տարի մախողվում էին մմանատիղ մախորդ փորձերը: Սակայն կուզեի կրկնել, որ գաղափարաբանական այլընտրանքների, նշանակությունների դակասի դարագայում դարձյալ այս տեսության համար կենտրոնական հեգեմոնիայի հղացքը դարձյալ վերադահումով է կիրառելի:

Ինչ վերաբերում է երկրորդ ուղղվածությանը, ադա օրինակը դարձյալ վերոհիշյալ իրադարձությունն է: Եթե դարձյալ հակիրճ, թե ինչ հղացքներով այն կարելի է ուսումնասիրել, ադա այս դահին այն կարելի է անվանել ազատագրում, բայց դեռ ոչ լիովին հեղափոխություն արեմդթյան իմաստով, սոցիալական արդարության խնդիրների վրա կենտրոնացած ուսլյան իմաստով և արմատական ժողովրդավարացմանն ուղղված գործողություն հետմարքսիստական իմաստով և այլն: Սակայն, օրինակ, մույն Ջ.Ռուսի տեսության համար անկյունաքարային «լավ-կարգաբերված հասարակություն», «անձի», «ուսցիոնալության» հասկացություններն այս դարագայում կիրառելի չեն:

Իհարկե, հիմնական հարցերից մեկն այն է, թե ինչ է տեղի ունեմում, երբ հետազոտողը գործի է դնում համախ շատ տարբեր մտավորական ավանդույթներ ներկայացմող տեսություններ ու ուսմունքներ՝ նախաարդիից մինչև հետարդի, ժամանակակից դայմանագրականությունից մինչև հետմարքսիզմ: Պատասխանը դերիդայական, այսինքն՝ հետկաոուցադաշտական ոգով է՝ այս իրադրության մեջ ամեն ինչ շատ մման է էթիկա-քաղաքական որոշում կայացմելուն:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսդիսով, արևմտյան փորձաոության հեմքի վրա ստեղծված տեսությունների, դրանց տրամադրած հղացքների, սկզբունքների ու մեթոդների գործադրումը ոչարևմտյան փորձաոություններն ուսումնասիրելիս համարելով միանգամայն հնարավոր՝ այնուամենայնիվ հողվածը ելմում է մրամից, որ դրանց գործադրման հետևանքով անխուսափելիորեն «ճեղք», «խզում» է աուաչանում տեղային փորձաոության և դրանց միջև: Ուստի, տեղին է գործի դնել դրանց կիրառման ուղղվածություններ, որոնք այս դեղքում երկուսն են: Դրանցից աուաչինը որոշ աուանքային հղացքների քվադիացման ուղղվածությունն է, մյուսը՝ արևմտյան հետազոտական միջոցների ըմտրողական կիրառությունը: Այս ուղղվածությունների գործադրման տեղին ու արդյունավետ լինելն ակներև է հատկադես հայկական փորձաոության ուսումնասիրության ժամանակ, ի մասնավորի՝ հայկական տրամասային իրականության և «թավշյա հեղափոխություն» անվանումը ստացած իրադարձության հետազոտության աունչությամբ, ինչի շնորհիվ զիտական տեսանկյունից դրանք դաոնում են բնութագրելի, բացատրելի և հասկանալի: Միաժամանակ այս երկու ուղղվածություններն իմքնատիղ հարաբերություն են մշմարում ու հաստատում արևմտյանի ու ոչարևմտյանի, «դրսի ու ներսի», համընդհանուրի ու մասնակիի միջև՝ տեղ բացելով մախկին սահմանագծերի չեղարկումների ու մոր ձևերի հաստատման համար:


- 1 Տե՛ս *Open the Social Sciences: Report of the Gulbenkian Commission on the Restructuring of the Social Sciences*, Imanuel Wallerstein (խմբ.) (Stanford, Calif.: Stanford University Press, 1996), էջ 1-32; Ted Benton, Ian Craib, *Philosophy of Social Science: The Philosophical Foundations of Social Thought* (New York: Palgrave, 2001), էջ 26-27; Edward W. Said, *Orientalism* (New York: Vintage Books, 1979), էջ 1-4:
- 2 Պատահական չէ, որ այդ գիտությունների սկզբնավորման ժամանակաշրջանում դրանց տրվող անվանումները տարբեր էին արևմտյան տարբեր երկրներում:
- 3 Այս մասին ուշագրավ հոդված ունի հնդիկ սոցիոլոգ, գեմդերային հետազոտությունների մասնագետ Չանդրա Թալլադե Մոհանտին, սե՛ս Չանդրա Թալլադե Մոհանտի, «Արևմուտքի հայացքի ներքո. ֆեմինիստական ուսումնագիտություն և գաղութային դիսկուրսներ», Արևիկ Սիմոնյան (թրգմ.), *Ֆեմինիստական տեսության ժողովածու. 80-ականներ*, Շ. Ավագյան (խմբ.) (Երևան: Heinrich Böll Stiftung, 2018), էջ 105-157:
- 4 Տե՛ս *Open the Social Sciences*, էջ 20-39:
- 5 Տե՛ս Գայատրի Չակրավորտի Սոթիվակ, «Կարո՞ղ է ենթադասը խոսել. մտորումներ այրու զոհաբերության շուրջ», Նահրա Սկրտչյան (թրգմ.), *Ֆեմինիստական տեսության ժողովածու. 80-ականներ*, էջ 167:
- 6 Այս հեզմանքն ակնհայտ է դառնում, երբ Գ. Չ. Սոթիվակն անդրադառնում է հնդկական հատուկ անունների թարգմանության բրիտանական փորձին: Տե՛ս Սոթիվակ, «Կարո՞ղ է ենթադասը խոսել. մտորումներ այրու զոհաբերության շուրջ», էջ 189-190:
- 7 Տե՛ս Stephen Morton, *Gayatri Spivak: Ethics, Subalternity and the Critique of Postcolonial Reason* (Cambridge: Polity Press, 2007), էջ 45-59:
- 8 Տե՛ս Սոթիվակ, «Կարո՞ղ է ենթադասը խոսել», էջ 163-165:
- 9 Գ. Չ. Սոթիվակն աղավիհում է ոչ միայն Չ. Ֆրոյդի տեսությանը բնորոշ մեթոդաբանական աուրային, այլև գործադրում է Ժ. Դերիդայի կազմաքանդման մոտեցումը:
- 10 Տե՛ս Oliver Marchart, *Post-Foundational Political Thought: Political Difference in Nancy, Lefort, Badiou and Laclau* (Edinburgh: Edinburgh University Press, 2007), էջ 18-20:
- 11 Տե՛ս Martin Heidegger, *Beiträge zur Philosophie* (Frankfurt/Main: Vittorio Klostermann, 1989), էջ 379:
- 12 Տե՛ս Marchart, *Post-Foundational Political Thought: Political Difference in Nancy, Lefort, Badiou and Laclau*:
- 13 Տե՛ս Walter Benjamin, «Die Aufgabe des Übersetzers», *Gesammelte Schriften*, H. IV/1 (Frankfurt/Main: Suhrkamp Verlag, 1972), էջ 10-11:
- 14 Տե՛ս Judith Butler, «Restaging the Universal: Hegemony and the Limits of Formalism», Judith Butler, Ernesto Laclau, Slavoj Žižek, *Contingency, Hegemony, Universality: Contemporary Dialogues on the Left* (London, New York: Verso, 2000), էջ 20-21:
- 15 Տե՛ս Paul Gilroy, *The Black Atlantic: Modernity and Double Consciousness* (London, New York: Verso, 1993), էջ 44:
- 16 Տե՛ս Gilroy, *The Black Atlantic: Modernity and Double Consciousness*, էջ 47:
- 17 Տե՛ս Ernesto Laclau, Chantal Mouffe, *Hegemony and Socialist Strategy: Towards a Radical Democratic Politics* (London, New York: Verso, 2001), էջ 112; Slavoj Žižek, *The Sublime Object of Ideology* (London, New York: Verso, 2008), էջ 95-96:



ՀԱՅԿԱՏԱԿԱՆ 2018
ARMENIA

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES

**ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ՀԵՂՎԾՈՒՆՈՒԹՅԱԿ
ՀԵՌԱՆԿԱԿՐՈՄ**



ՀՐԱՆՏ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ»
ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՊՐԱԿՏԻԿԱՆ:
Ի՞ՆՉ Է ԱՅՆ ԵՎ ԱՐԴՅՈ՞Ք
ԿԱՐՈՂ Է ԻՐԱԳՈՐԾՎԵԼ



այաստանում 2018 թ. աղյուսակային ամիսներին տեղի ունեցած Թավշյա հեղափոխությունից հետո նոր իշխանությունները սկսեցին ձևավորել օրակարգ, որը միտված էր հեղափոխության արդյունքները հասարակության համար տեսանելի դարձնելուն: Կփոխակերպի⁶ արդյոք քաղաքական գործընթացը տնտեսականի: Հանրությանը մատուցվեցին ուժացված ակնկալիքներ. գեր-իշխող խոսույթը ազդարարում էր, որ եթե կոռուպցիան մվազի և օՖշորներից փողերը վերադարձվեն, ադա քաղաքացիների բարեկեցությունը անմիջա-դես և նշանակալիորեն կաճի:

Հանրային կարծիքը լուսաբանելու համար հայացք նետենք հասարակական կարծիքի ուսումնասիրության տվյալներին: Թավշյա հեղափոխությունից վեց ամիս առաջ հարցվածների 28.3%-ը վստահ էր, որ իր ընտանիքի ֆինանսա-կան վիճակը կբարելավվի առաջիկա տարում, և արդեն 2018 թ. սեդտեն-բերին, հեղափոխությունից մի քանի ամիս անց, այս վստահությունը անց 61%-ի:¹ Հիշյալ ժամանակահատվածում չէր արձանագրվել տնտեսա-կան աճ, սակայն փոխվել էր ընկալումը: 2018 թ. մայիսին 78%-ը կարծում էր, որ նոր վարչադեստ Լիկոլ Փաշինյանը ի վիճակի կլինի վեց ամսում լուծել երկ-րի հիմնական խնդիրները:

Լոր կառավարության մկատմամբ հանրային վստահությունը շատ ավելի բարձր է մախորդ կառավարությունների համեմատ:² Սակայն այս վստահու-թյունը տրվել է կանխավ և ըստ հեղափոխականների այն դեսոք է արդարաց-վի հնարավորինս կարճ ժամկետներում սդասված արդյունքների ադահով-մամբ: Հեղափոխությունից հետո ծնվեց «տնտեսական հեղափոխություն» լոզունգը, որը մի ուրույն փորձ էր բավարարելու փոփոխության հանրային դահանջը: Լշելոլ «փոփոխություն» բառը` մենք ընդհանրացնում ենք իրավի-ճակը, մինչ հասարակությանը հետաքրքրում էր երկու հիմնական հարց` կյան-քի որակի բարձրացումը և արդարադատությունը (որը հասկացվում էր որդես օլիգարխների գործողությունների ազատության սամանափակում): Կառա-վարության ծրագիրը Ազգային ժողովում մերկայացնելու ընթացքում Փաշի-նյանը հայտարարեց, որ «տնտեսական հեղափոխությունը սկսվել է»:³

ԻՆՉ Է «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ» ԼՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՍԱՄԲ

Տնտեսագիտության մեջ տնտեսական հեղափոխություն տերմինը չի կիրառ-վում կոնկրետ երևույթներ և դրակտիկաներ մկարագրելու համար, այն կի-րառվում է սոցիալական և տնտեսական կազմավորումներում տեղի ունեցող փոփոխությունների մկատմամբ: Օրինակ` ինստիտուցիոնալիզմի հիմնադիր-ներից մեկը` Դուգլաս Նորթը, անցումը որսորդության և հավաքչության վրա հենված հասարակությունից գյուղատնտեսական հասարակության անվանել է առաջին տնտեսական հեղափոխություն:⁴

Վերլուծելով վարչադատի և կառավարության այլ դաշտոնյաների ելույթներն ու հարցազրույցները, կարող ենք ենթադրել, որ «տնտեսական հեղափոխություն» ասելով իշխանությունները նաև նկատի ունեն տեխնոլոգիաների փոփոխությունը, հիմնականում SS ոլորտում, կառավարման համակարգի վերափոխումը և օլիգարխների ազդեցության նվազեցումը, ինչդեռ նաև իշխանության և տնտեսության նկատմամբ մարդկանց ընկալումների փոփոխությունը: Ըստ կառավարության՝ դա դեռ է հանգեցնի տնտեսական աճի քանակական և կյանքի ստանդարտների որակական փոփոխությունների: Սա նաև բնակչության ակնկալիքն է: Սակայն այս հետևանքները երկրորդային են, իսկ առաջնայինը բարեփոխումների ընդհանուր նախագիծն է, որն ամհամեմատ ավելի կարևոր է: Նիկոլ Փաշինյանը նշել է, որ կառավարությունը տիրադատում է «տնտեսական հեղափոխության» տեսությամբ և մեթոդաբանությամբ, սակայն մանրամասներին չի անդրադարձել, միայն մատմանշելով վերջերս ընդունված հարկային օրենսգիրքը:⁵

Դեռևս բավարար ժամանակ չի անցել, որդեսզի փորձագիտական համայնքը կարողանա ըստ ելույթի գնահատել նոր իշխանությունների վարած տնտեսական քաղաքականությունը: Սակայն, դատելով հասանելի հատվածային տեղեկություններից, արդեն կարելի է ասել, որ այս քաղաքականությունը կունենա նորագատական՝ նեոլիբերալ ուղղվածություն:⁶

Այն ներառում է հարկային տոկոսադրույքի համահարթեցում,⁷ հարկաբյուջետային կարգադատություն, աշխատաշուկայի արդյունավետություն և տնտեսության նոր ծյուղերի գերակայություն ավանդականների նկատմամբ: Միասին վերցրած՝ այս ծյուղերը ներկայացնում են բարեփոխության ծրագիր, հիմնված այն նույն գաղափարախոսության վրա, որի վրա հիմնված են տնտեսական հեղափոխության տեսությունն ու մեթոդաբանությունը:

Սակայն վերը նշվածը ունի նաև հակառակ կողմ: Համահարթեցված հարկադրույքի կիրառությունը կհանգեցնի եկամտահարկից բյուջերի մուտքերի նվազման: Այս կորուստները փոխհատուցելու համար կառավարությունը ստիպված կլինի ավելացնել անուղղակի հարկերը: Սրա արդյունքում աղքատ մարդկանց եկամուտները կնվազեն, մինչ դեռ միջին խավի վերին շերտի և հարուստ խավի եկամուտները կաճեն, որի արդյունքում կաճի անհավասարությունը: Հարկաբյուջետային կարգադատությունը վերաբերում է հարկերը թաքցնելու դեմ դաշտարին, որի հետևանքով փողերը փաստացի դուրս են մղվում տնտեսությունից, հատկապես հիմա, երբ կառավարությունը ջանք չի խնայում արտաքին դաշտարը վերահսկողության տակ դաշտելու համար: Հակառակ ընդհանուր դատկերացումների, սակայն, հարկերից ամենաշատը խուսափողները ոչ թե ամենահարուստներն են (հարաբերության մեջ վերցրած), այլ աղքատները և մանր ձեռնարկությունները: Ստվերային տնտեսության դեմ դաշտարը կվտանգի նրանց եկամուտները, եթե Կառավարությունը չնախաձեռնի հատուկ միջոցներ, որոնք կարող են լինել ժամանակավոր, սակայն փաստացի կունենան ոչ Ֆորմալ կարգավորման բնույթ:

Վարչապետի բացորոշ արտահայտած նախադաստիարակությունը բարձր տեխնոլոգիաների արտադրությանը տնտեսության ավանդական ծյուղերի համեմատ⁸ (ի դեպ անցյալում ևս նման հայտարարություններ էին արվում, օրինակ, Տիգրան Սարգսյանի կողմից)⁹ ուշադրությունն աստիճանաբար կշեղի գյուղատնտեսությունից և թեթև արդյունաբերությունից, ինչի արդյունքում այս ոլորտներն անկում կադրեն:

Տնտեսական ոլորտի կառավարումից Կառավարության լիակատար հրաժարումը կարող է ցնցումների լուրջ ազդեցություն հանդիսանալ, այն կարող է շահագործվել մեծ խաղաղոցների կողմից, կարող են ձևավորվել օլիգարխիաներ և արտաքին կառուցվածքի գերիշխանություն տնտեսության որոշ ոլորտներում: Ի դեպ, այս դրամաները արդեն առկա են, քանի որ նորագաղտական տնտեսակարգը կիրառվել է նաև նախկինում: Սակայն դրա վերածումը «իդեալական մոդելի», այն էլ դեռևս ուժեղ ինստիտուցիոնալ բացակայության դրամաներում, կարող է առավել սաստկացնել վերոնշյալ խնդիրները:

Այնպես որ, իր ողջ արտաքին հնայքով հանդերձ՝ նորագաղտական ուղղությունը դիսկեր է դարձնակում: Այս ամենը արվում է արտաքին ներդրողներին գրավելու նպատակով, սակայն նախ և առաջ դեպք է լինեն ներքին ներդրումների համար անհրաժեշտ դրամաներ: Պետք է մոռանալ, որ տասնյակ տարիներ տեղական ներդրումները եղել են երկրի տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը:

ԱՐԴՅՈ՞Ք ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԿԻՐԱՌԵԼ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք փորձեցինք առաջարկել «տնտեսական հեղափոխության» հնարավոր սահմանում՝ ինչպես այն դասակարգելու և Հայաստանի ներկայիս քաղաքական իշխանությունը: Դա մի փոխկառուցված հղացք է, բայց մույնիսկ գործնական իրականացման դեպքում չի երաշխավորում կայուն սոցիալ-տնտեսական հաջողություն: Դրա որոշ դիսկեր արդեն մշվել են վերևում: Փորձենք բաժանել դրանք հետևյալ խմբերի.

- Կոնցեպտուալ խնդիրներ, որոնք առնչվում են մոդելի որակին և Հայաստանի դրամաներում դրա կիրառելիությանը.
- Ինստիտուցիոնալ խնդիրներ, կապված Հայաստանում այդ մոդելի հնարավոր կիրառման որակի հետ.
- Արտաքին դաստիարակներ և դիսկեր, որոնք կարող են արգելակել մոդելի կիրառումը:

Կան որոշ հարցեր կապված նորագաղտական ռեֆորմի մոդելի որակի հետ Վաշինգտոնյան կոնսենսուսի շրջանակներում: Այս մոդելն օգտագործում է Չիլիի դեպքը¹⁰ (1973-1989) որպես նմուշ և հետևողականորեն կիրառվել է համարյա ամբողջ հետ-սոցիալիստական տարածքում կոմունիզմից կառուցված

լիզմի անցման փուլում (1989-ից ի վեր), ինչդեռ նաև փոփոխված տարբերակով՝ Վրաստանում (2004-2012 թթ.): Չիլիի օրինակն իրականում խառն արդյունքների է հասել, իսկ Վրաստանն այդ փորձից 15 տարի անց այդուհետ էլ չդարձավ տարածաշրջանային առաջատար՝ կյանքի մակարդակի և տնտեսական աճի տեմպի առումներով և հասարակական համերաշխությունն այդուհետ էլ չվերականգնվեց:¹¹ Թեև մոդելն ինքնին խնդրահարույց չէ, բայց եթե բարեփոխումների հաջողության գնահատման հիմնական չափանիշը ինքնին բարեփոխում իրականացնելու փաստն է և ոչ թե մարդկանց բարեկեցությունը, այն դառնում է ինքնանաղատակ:

Տեսնենք որքանով են Հայաստանի ներկայիս իշխանություններն ի վիճակի կյանքի կոչել այս մոդելը: Չնայած 2019 թ. հաստատված Կառավարության ծրագրի¹² ոչ հստակությամբ, իշխանությունները գիտեն ինչ են ուզում: Այս նախատեսված ուսումնասիրվում է Վրաստանի և Սինգապուրի փորձը, Փաշինյանը նույնիսկ սիմվոլիկ այց կատարեց Սինգապուր, որտեղ համդիտեց իշխանության ներկայացուցիչների հետ՝ տնտեսական համագործակցություն զարգացնելու նախատեսված: Իհարկե, առանց նախօրոք ձևավորած հստակ ծրագրի սկսված բարեփոխումները դատադարձված են նվազ արդյունավետության: Այնուամենայնիվ, երկրում նախորդ տարիներին ձևավորված արդյունավետ բյուրոկրատիայի առկայությունը կարող է հնարավոր դարձնել բարեփոխումների իրականացումը բավականին կարճ ժամանակի ընթացքում: Կառավարությունը կհամդիտի ևս երկու մարտահրավերի: Նախ շատ սահմանափակ միջոցներ կունենա եական բարեփոխումների համար, քանի որ արտաքին աջակցությունը աննշան է: Եվ երկրորդ՝ ժողովրդավար միջավայրում իրականացվող նորագատական բարեփոխումները ուղեկցվում են հանրային վստահության արագ կորստով և այն իրականացնող թիմի համար քաղաքական ռիսկերով: Եվ եթե Պինոչետը կարող էր արհամարհել այս ռիսկերը, իսկ Սաակաշվիլին էլ թերագնահատեց դրանք, ներկա կառավարությունը չի կարող հաշվի չնստել դրանց հետ: Սրա արդյունքում բարեփոխումների մի մասը կմնա կիսատ, բայց դրանք միևնույն ժամանակ թույլ չեն տա, որդեսգի կառավարությունը իրականացնի սոցիալական տեսանկյունից ամենաոխրակալին բարեփոխումները, այնուհետ, որ արդյունքը հնարավոր լինի գնահատել:

Երրորդ խնդիր մեջ են մտնում արտաքին գործոնները, որոնք ազդում են տնտեսական հաջողության և Հայաստանում բարեփոխումների իրականացման վրա: Եվ այս ազդակները բավականին շատ են: Գրեթե հնարավոր չի ակնկալել Ղարաբաղյան հակամարտության արագ լուծում, ավելին՝ այնուհետ լուծում, որը կբերի կայուն խաղաղության: Իսկ սա նշանակում է, որ ռազմական քաղաքական ռիսկերը կշարունակեն գոյություն ունենալ, չնայած փակ սահմաններին: Խնդիրը ոչ այնքան փակ ճանադարհներն են, որքան արտաքին աշխարհի հետ շփվելու խիստ սահմանափակ ուղիները: Օրինակ՝ Հայաստանից ամրանքների արտահանումը Եվրասիական միություն, ինչդեռ նաև

Ուկրաինա և մի քանի Եվրոպական երկրներ կախված է Ռուսաստան-Վրաստան սահմանային ճանադարիին առաջ եկող հնարավոր սողանքներից, ինչդեռ նաև այդ ճանադարիով տուրիստների շարժից: Երկրորդ արտաքին մարտահրավերը արտագաղթն է: Տասնյակ տարիներ արտագաղթն եղել է Հայաստանում ղեկավարվող աշխատանքային խնդիրներից մեկը: Բայց ժամանակակից, տեխնոլոգիական տնտեսություն կառուցելը մարդկանց հաճախակի թռիչքների դարագայում խնդրահարույց է, լավագույնները շարունակաբար կլքեն երկիրը: Եթե միգրացիայի տեմոլը համադրելի է դրոֆեսիոնալների նոր ենթադասի ձևավորման տեմոլի հետ, կրիտիկական զանգվածը, որն անհրաժեշտ է Հայաստանի տեխնոլոգիական ոլորտը զարգացնելու համար, չի ստեղծվի: Կան նաև արտաքին քաղաքական մարտահրավերներ, որոնք կարող են հարցականի տակ դնել այս երթերիմենտը՝ ներառյալ աշխարհի հիմնական խաղացողների միջև առկա աճող լարվածությունները, ինչդեռ նաև խորացող սոցիալ-քաղաքական ճգնաժամը Միջին Արևելքում:

Վերը նշվածն, իհարկե, չի նշանակում, որ Փաշինյանի կառավարությունը ի վիճակի չի լինելու իրականացնել իր քաղաքականությունը: Այլ նշանակում է, որ դրա իրականացման ծավալը կախված կլինի ինստիտուցիոնալ, տեղական և արտաքին քաղաքական սահմանափակումներից: Իրականացման ճանադարիին այս հանգամանքը միգուցե աննշան թվա, սակայն կարող է բարեփոխումների ողջ քաղաքականությունը հարցականի տակ դնել ադագայում: Այս դիսկերը նվազեցնելու համար կառավարությունը ղեկը է հաշվի նստի տարբեր սոցիալական խմբերի հետաքրքրությունների հետ և վարի ադեկվատ տեղեկատվական արշավ՝ մարդկանց բացատրելով բարեփոխումների գաղափարը: Քաղաքականությունն ինքնին ղեկը է լավ հաշվարկված լինի և հիմնվի ոչ թե քաղաքական, այլ տնտեսական հաշվարկների վրա:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎՐԱ

Հիմա դեռևս անհնար է վստահությամբ խոսել Նիկոլ Փաշինյանի կառավարության տնտեսական քաղաքականության արդունքների մասին, քանի որ քիչ ժամանակ է անցել: Մինչև այժմ մենք կարող ենք վստահությամբ խոսել միայն Փաշինյանի քաղաքական գործունեության տնտեսական արդունքների մասին: Ամենամեծ նվաճումը կարելի է համարել տնտեսական աճի միտումների դադարումը: Միևնույն ժամանակ աճի այս տեմոլը դանդաղել է, և այն տևել է 14 ամիս՝ 2018 թ. մայիսից 2019 թ. հունիս: Դիտարկենք ամսական տնտեսական աճի տեմոլերը Հայաստանում:

Գծադասեր 1. Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցիչ¹³



Աղբյուրը՝ ՀՀ Վիճակագրական կոմիտե


Նոթ. Աձի տեմդերը հաշվարկված են նախորդ տարվա նույն ամիսների համեմատ

Ներկա տնտեսական միտումների վրա ազդեցություն են ունեցել քաղաքական իրադարձությունները: 2016 թ. լայնամասշտաբ զինված բախումներ տեղի ունեցան շվեդական զինված ուժերի կողմից Երևանում և Ադրբեյջանի զինված ուժերի միջև, որոնք հայտնի են որդես 2016 թ. ադրիլյան դատերազմ: 2016 թ. հուլիսին Երևանում ներքին քաղաքական հակամարտություն տեղի ունեցավ՝ զենքի կիրառմամբ: 2016 թ. սեպտեմբերին մոր կառավարություն ձևավորվեց Կարեն Կարապետյանի գլխավորությամբ, որը կադեր ուներ Գագղորոմի հետ: 2017 թ. Հայաստանում տեղի ունեցան ԱԺ ընտրություններ: 2018 թ. ադրիլին սկսվեց մի իրադարձություն՝ հայտնի որդես Թավշյա հեղափոխություն, որի արդյունքում նախորդ կառավարությունը տաղավել, և մայիսի 8-ին Նիկոլ Փաշինյանը եկավ իշխանության: Նույն տարվա սեպտեմբերից մինչև դեկտեմբեր ընկած ժամանակաշրջանը աչքի ընկավ քաղաքական իշխանության համար դեկտեմբերի 9-ի ԱԺ ընտրությունները սկսեցին կայունացնել իրավիճակը: Այդ ազդեցությունը կարելի է տեսնել արդեն 2018 թ. դեկտեմբերից, բայց աճի տեմդերը սկսեցին վերականգնվել և առաջ անցնել 2018-ի առաջին եռամսյակի արդյունքներից միայն 2019-ի հուլիսից: Պետք է հաշվի առնել, որ 2018-ի վերջին և 2019-ի սկզբին նկատված աճի տեմդերի մի մասը կադված էր ստվերի դեմ դայքարի հետ, որի արդյունքում հաշվադվել է տնտեսության չերևացող հատվածը:¹⁴

Հեղափոխության ազդեցությունը տնտեսության դինամիկայի վրա գնահատելու համար դետք է նաև գնահատել 2018 թ. տնտեսության հիմնային միտումը և համեմատության մեջ որդել հեղափոխության ազդեցությունը դրա վրա: Սա հնարավոր է անել, քանի որ 2018-ին դրանից բացի այլ իրադարձություն տեղի չի ունեցել: Վերջին տարիներին ես նմանատիկ կախմատեսումներ էի անում իմ հաշվարկների համար՝ հիմնված հիմնական միտումի վրա,

որը դիտարկում էր տարվա սկիզբը և հաշվի առնում սեզոնային գործոնները: 2016-2017-ին կանխատեսումներս կարծես բավական ճշգրիտ էին (հուլիսին արված կանխատեսումից շեղումը կազմել է մոտ 0.5%)։ այն կօգտագործեն որդես ելակետ՝ հեղափոխության ազդեցությունը գնահատելու համար:

Գծադասեր 2. Տնտեսական ակտիվության դինամիկայի ցուցիչները 2017-2018 թթ. (փաստացի) և կանխատեսումը (2018 թ. ապրիլ-դեկտեմբերի համար)




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, հեղինակի հաշվարկները
 Նոթ. (1) Սոխարագույն հատվածները նշում են փաստացի և ակնկալված արժեքի տարբերությունը, որը արտահայտված է տոկոսներով: (2) Ամենամեծ տարբերությունը ակնկալված և փաստացի արժեքների միջև արձանագրվել է օգոստոսից սեպտեմբեր, որը կաղված է գյուղատնտեսության ոլորտում տեղի ունեցած անկումով:

Տնտեսական աճի տեմպերի ընդհանուր նվազումը 2018-ին, վերցրած որդես սղասված և փաստացի աճի հարաբերություն, կազմում է 5-5.5%: Սա բավականին նշանակալից է, բայց բարձր ելակետային հիմքի ղատձառով է, որ դեռևս հնարավոր է եղել աղահովել բավականին զգալի աճ տարվա վերջում՝ 5.2% 2018-ին: Բայց այստեղ առավել կարևորն այն է, որ հեղափոխության ուղիղ ազդեցությունը (իր իրականացման ընթացքում) զգալի է եղել աղրիլ-մայիս ամիսներին ՀՆԱ-ի 6% տատանմամբ, հունիս-հուլիսին իրավիճակը կայունացել է և տարբերությունը հասել է նվազագույնի՝ 2%-ի, որին հետո հաշորդել է լուրջ անկում: Եվ այս անկումը տեղի է ունեցել ոչ թե հեղափոխության, այլ արդեն նոր կառավարության քաղաքականության արդյունքում (տվյալ դեղքում կաղված գյուղատնտեսության, ինչղես նաև հանքարդյունաբերության և նրան առնչվող մետաղուղղիայի ողրտների հետ):

Եվ վերջաղես դիտարկենք Թավշյա հեղափոխության երկարաձանկետ ազդեցությունը երկրի տնտեսական դինամիկայի վրա: Աղր նղատակով տեսնենք, թե վերջին տարիներին ինչ փոփոխությունների է ենթարկվել ամսական տնտեսական աճը՝ ներաղյալ հեղափոխությունից հետո ժամանակահատվածը: Ողրեսզի բացառենք սեզոնային շեղումները, ինչղես նաև ելակետային

բազիսի գործոնը, կարող ենք օգտագործել արտադրանքի տարեկան ծավալի շարժվող ինդեքսը:

Գծադասուկեր 3. Տնտեսական գործունեության աճի ինդեքսի դինամիկան (12 ամիսների շարժական միջինի աճը և դրա ամսական բացարձակ փոփոխությունը)



Աղբյուր՝ հեղինակի հաշվարկները ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից տրամադրված տվյալների հիման վրա

Ուշադիր հայացք նետելով տնտեսական աճի դինամիկային, կարող ենք տեսնել, որ դրա միջինացված տարեկան ցուցանիշները նվազել են ընդհուպ մինչև 2019 թ. հուլիսը: Տնտեսական դինամիկայի տեսանկյունից՝ ամենակարևորը միտումնաբեր փոփոխությունն է: Եվ եթե 2017-ին և վաղ 2018-ին միտումը տնտեսական աճ էր ցույց տալիս, 2018-ին այն շրջվեց, իսկ 2019-ի կեսին նորից շրջվեց, և աճը սկսեց ավելանալ: Հետհեղափոխական տնտեսությունը ձեռք բերեց իր դինամիկան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2018 թ. գարնանը Թավշյա հեղափոխությունից և իշխանության փոփոխությունից հետո տնտեսական աճի որոշակի դանդաղում էր նկատվում, որը կաղված էր անկայունության և քաղաքական առճակատումների հետ: Որոշ ժամանակ անց հարաբերական քաղաքական կայունություն ստեղծվեց, որը նույնպես տնտեսական աճի տեմպերի վերականգնմանը:

Նոր կառավարության ղեկավար Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց «տնտեսական հեղափոխության» կոնցեպտը: Բնակչությունը և իշխանությունները կարող են տարբեր կերպ հասկանալ այս գաղափարը: Հասարակությունում շատերը ակնկալում են տնտեսական աճ, արդարություն և հարստության վերաբաշխում աղքատներին և միայն վերջում՝ ներառական աճ: Իշխանությունները ղարտաստվում են իրականացնել նորազատական բարեփոխումներ՝ ստանալ տնտեսական աճի բարձր տեմպեր և ընդլայնել տնտեսության SS հատվածը: Այսօրվա՝ իշխանությունների համար «տնտեսական հեղափոխությունը» տեխնոլոգիական և կառավարչական փոփոխություն է, իսկ հասարակության համար՝ եկամուտների և սղառման աճ: Երկարաժամկետ առումով՝ բարեփոխումները կարող են մեծամասնության համար կյանքի ավելի լավ որակ ապահովել, սակայն դա դարձադրելու չէ:

Արդարության վերականգնման տակ իշխանությունները հասկանում են քաղաքականության մեջ ոչ լիարժեք և արգելափակող հնարավորություն ունեցող խաղացողների վերացումը և դայքարը կոռումպացված էլիտաների դեմ, որոնց մեջ մտնում են Հանրապետական կուսակցությունը և նրա աջակիցները: Այս գործողությունները քաղաքական են և չեն փոխակերպվում տնտեսական արդյունքի, թեև շատերն ակնկալում են ստանալ օլիգարխների կարկանդակի իրենց բաժինը: Նույնիսկ այս՝ եադես սահմանափակված արդարության վերականգնման քաղաքականությունը խոչընդոտ է հանդիսանում տնտեսական աճի և ներդրումների համար, բայց նրա սահմանափակ բնույթը դայնամավորված է կառավարության ձգտումով՝ զիջումներ անել քաղաքական օրակարգում հանուն տնտեսական հաջողության:

Կառավարության ծրագրը, թեև հակասական է, բայց նաև բավականին հավակնուտ է, և նոր կառավարությունը տրամադրված է այն իրագործել: Հակասականության հիմնական աղբյուրն այն է, որ բարեփոխումների մեծ մասը չի բննարկվել բնակչության լայն խմբերի հետ և այդ լիարժեք փորձերը կատարվել են: Նման ռեֆորմները, օրինակ՝ հարկային դրույքի համահարթեցումը, որոնք իրականացվել են Վրաստանում, հանգեցրել են անհավասարության աճի: Այնպես որ լավ կլինի հաշվի առնվել Վրաստանի և Ուկրաինայի փորձը և երկրի ժողովրդավարացման ճանապարհին խուսափել ցնցումներից:

Նոր կառավարությունը վստահեցրել է հասարակությանը և բիզնեսին իր կենսունակության մեջ և արմատաղեմ նվազեցրել է ներքին տեղեկատվության տիրապետողների ազդեցությունը տնտեսական դաշտում որոշումների կայացման մեջ: Այսպիսով, ոչ միայն ստեղծել են տնտեսական աճի համար հիմնական դայնամներ, այլ նաև բացվել է բիզնեսի դաշտը լայն դիվերսիֆիկացման և նախաձեռնությունների համար: Եվ վերջապես այս քաղաքականությունը մեծ ազդեցություն է թողել աշխատաշուկայի վրա, նվազեցրել է գործազրկությունը և ստեղծել է նոր միկրո և փոքր ձեռնարկություններ: Այս ձեռքբերումների հետ մեկտեղ 2018-ի վերջին և 2019-ին առաջ են եկել նաև նվազ գրավիչ կողմեր՝ Հայաստանում բիզնեսով զբաղվելու համար: Կառավարման հմտությունների բացակայությունը, ռազմավարական վատ լլանավորումը և մեծ ու միջին բիզնեսի վրա քաղաքական ազդեցության փորձերը արգելակում են տնտեսական աճը, նյարդայնություն է առաջացնում խոշոր ձեռնարկատերերի շրջանում, իսկ միջազգային վարկանիշային աղյուսակում առաջխաղացումը սահմանափակ է:

Կարող ենք եզրակացնել, որ Թավշյա հեղափոխությունը տնտեսական արդիականացման համար ստեղծել է որոշ հնարավորություններ, սակայն իրականում շատ ավելի ժամանակ է լիարժեք արդյունքներն ամփոփելու համար: Այնուամենայնիվ, հիմնական եզրահանգումն այն է, որ ի վերջո շատ բան չի փոխվել մակրոտնտեսության և ֆինանսական քաղաքականության մեջ: Կառավարությունը և բիզնեսը միմյանց ճանաչելու գործընթացի մեջ են և դեռ սովորում են համագործակցել: Եթե հաջողվեց, Հայաստանում միջնաժամկետ զարգացումը բավականին ինտենսիվ կլինի:

- ¹ Вырос социальный оптимизм, растут ожидания, но они не всегда оправдываются – опрос, Блог *Политическая география Южного Кавказа*, 6 հոկտեմբերի 2018, <https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/34819>, այց` 12.11.2020:
- ² Steve O'Brien, Julie Ray, «Stakes High for Armenia's New Government», Blog *Gallup*, 31 մայիսի 2009, <https://news.gallup.com/opinion/gallup/257972/stakes-high-armenia-new-government.aspx>, այց` 12.11.2020:
- ³ Ani Mejlumyan, «Armenia Adopts Plan for "Economic Revolution"», *eurasianet*, 15 փետրվարի 2019, <https://eurasianet.org/armenia-adopts-plan-for-economic-revolution>, այց` 12.11.2020:
- ⁴ Douglass C. North, Robert Paul Thomas, «The First Economic Revolution», *The Economic History Review*, հ. 30. թիվ 2 (մայիս, 1977), էջ 229-241:
- ⁵ «Նիկոլ Փաշինյանի ուղիղ եթերում հարցազրույցը Ազատությունն ուղիղախոսում», *ՀՀ Վարչապետ*, 17 հուլիսի 2019:
- ⁶ Samson Martirosyan, «Pashinyan's Neoliberal Reforms Risk Undermining the Values of the Revolution», *OC-Media*, 5 մարտի 2019թ., <https://oc-media.org/opinion-pashinyan-s-neoliberal-reforms-risk-undermining-the-values-of-the-revolution/>, այց` 12.11.2020:
- ⁷ Մինչև Փաշինյանի վարչապետության գալը Հայաստանի արտաքին դարտքը դադարել էր աճել և նույնիսկ կրճատվել մի ընթացքում: «ՀՀ արտաքին դարտքը երկու ամսում նվազել է \$58.8 մլն-ով», *PanARMENIAN.Net*, 7 մայիսի 2019, <http://www.panarmenian.net/eng/news/268535/>, այց` 12.11.2020:
- ⁸ Նիկոլ Փաշինյան, « Հայաստանը ղեկը է ագրարային երկրից վերածվի արդյունաբերական երկրի», *Panorama.am*, 17 հոկտեմբերի 2018, <https://www.panorama.am/am/news/2018/10/17/Նիկոլ-Փաշինյան/2019470>. այց` 12.11.2020:
- ⁹ Տիգրան Սարգսյան, «Չարագանձ երկրները նրանք են, որոնք ստեղծում են գիտելիք, ոչ թե աղբանքներ», *Հետք*, 26 դեկտեմբերի 2011, <https://hetq.am/hy/article/8470>. այց` 12.11.2020:
- ¹⁰ Ricardo French-Davis, «Economic Reforms in Chile. From Dictatorship to Democracy» (UK: Palgrave MacMillan, 2010 (SE):
- ¹¹ Հրադարակում եղած տվյալները ցույց են տալիս, որ Վրաստանում, տարածաշրջանի մյուս երկրների համեմատությամբ առկա է ամհավասարության ավելի մեծ աստիճան, հատկապես եկամտի առումով: *St`u Human Development Indices and Indicators: 2018 Statistical Update*. UNSP, 2018, http://hdr.undp.org/sites/all/themes/hdr_theme/country-notes/GEO.pdf, այց` 12.11.2020:
- ¹² ՀՀ Կառավարության ծրագիր, 2019 փետրվար, <https://www.gov.am/files/docs/3133.pdf>, այց` 12.11.2020:
- ¹³ Այս ցուցիչը օգտագործվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից` ցույց տալու ազգային հաշիվների շարժը, որը ներկայացնում է արտադրանքի ծավալի ամենամսյա շարժը:
- ¹⁴ Համաձայն ՀՀ վարչապետի մամուլի ասուլիսին հնչած տվյալների, որ 51 հազար աշխատատեղեր դուրս են բերվել սովերից կամ ստեղծվել են մեկ տարվա ընթացքում (փաստ թիվ 6), ՀՀ վարչապետի Ֆեյսբուքյան ուղիղ եթեր, 26 ապրիլ 2019, https://www.facebook.com/watch/live/?v=2171438936238589&ref=watch_permalink, այց` 12.11.2020; «100 փաստ Նոր Հայաստանի մասին. ՀՀ Վարչապետ Նիկոլ

Փաշինյանի ներածական խոսքը ասուլիսի ժամանակ», ՀՀ վարչապետ, 8 մայիս 2019, <https://www.primeminister.am/hy/interviews-and-press-conferences/item/2019-05/08/Nikol-Pashinyan-Press-Conference/>, այց` 12.11.2020:



ՀՐԱՆՏ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍՏՎԵՐԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹԱՎՇՅԱ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ
ԵՎ ՀԵՏՈ



այաստանում տնտեսական փոխակերպման, բարեփոխումների և սոցիալական արդարության հանրային լուսաբանման ծնավորվել էր և դարձել առավել տեսանելի միջև 2018 թվականը: Մի շարք լուսաբանման թվում էին նաև բիզնեսի համար հավասար դրամատիկայի առաջնությունը և ղեկավարական մարմիններում իրավակիրառ ղեկավարական ուժի ղեկավարական «բացառություններից» հրաժարումը: Ստվերային տնտեսության դեմ դառնալով «մեկ կրակոցով երկու նախատակ ստանալու» իդեալական տարբերակ էր թվում:

Ստվերային տնտեսության հարցը նախկինում ևս կազմել է ինչպես հանրային դիսկուրսի, այնպես էլ կառավարության ծրագրերի մաս, սակայն իշխանության փոփոխությունը ստվերի դեմ դառնալով խնդիր դրեց նոր օրակարգի կենտրոնում: Իր քաղաքական բնույթի դատաճանաչումը խիստ անհրաժեշտություն կա մանրամասնորեն քննարկել այս թեման ինչպես տնտեսական, այնպես էլ այլ դիտարկումներից:

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ


Ինչպես նախկին ԽՍՀՄ այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում, գոյություն է ունեցել ստվերային շուկա, որը մասամբ կարգավորում էր խորհրդային ժամանակի տնտեսության անհավասարակշռությունները: Ի սկզբանե լինելով համակարգային բացերի արդյունք՝ ստվերային այս շուկան աստիճանաբար դարձավ ազդեցիկ ինստիտուտ և, ըստ առկա ուսումնասիրությունների, ղեկավարողական ժամանակաշրջանում առաջնություն էր ազգային եկամտի մոտ 1/5-րդը¹ և խորհրդային Հայաստանի բնակչության եկամուտների կեսից ավելին²:

«Երկրորդ տնտեսության» հարաբերական ծավալով Հայաստանը առաջատարների շարքում չէր նախկին ԽՍՀՄ-ում: Սակայն վերջին տասնամյակներում դրա աճի միտումներ էին նկատվում, ինչը դառնալով լավագույն թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական գործոններով:

Մասնավորապես, Հայաստանում 1960-ական թվականներին տեղի ունեցող խորհրդային իշխանությունների առաջնությունում, որը զուգորդվում էր լուրջ ժողովրդագրական և սոցիալական փոխակերպումներով (ուրբանիզացիա, այլ խորհրդային հանրապետություններից հայրենադարձության ալիք, ծնելիության աճի նվազում և Հայոց ցեղասպանության ճանաչման համար մղվող դառնություն), ընդհանուր տնտեսության մեջ հանգեցրեց ստվերային տնտեսության մասնաբաժնի տեսանելի աճի. այսպես՝ 1965 թվականին 12.1%-ից 1969 թվականին այն փոխվեց 16.8%-ի: 20 տարի անց ևս գրանցվեց նմանատիպ միտում. ազգային համախառն եկամտի մեջ ստվերային տնտեսության մասնաբաժինը 1986 թվականի 16%-ից 1989 թվականին դարձավ 21%: Ըստ էության սա վկայում էր Հայաստանի սոցիալ-տնտեսական ոլորտում ինքնաշարժ տեղի ունեցող առաստվետականացման մասին:

Մինձույն ժամանակ, այս միտումը նույնը չի եղել այլ հանրադատություններում: Այսօր օրինակ՝ Վրաստանը, որտեղ ստվերային շուկան միշտ մեծ է եղել, ադարդյուն է փորձել ղայքարել դրա դեմ,³ այնինչ Բելառուսում ողջ ուշ խորհրդային ժամանակաշրջանում շարունակվել է օրինակելի կոմունիստական հասարակարգի ստեղծումը, ինչը հանգեցրել է ստվերային տնտեսության մասնաբաժնի շարունակական նվազման:

Գծադատկեր 1. Ստվերային տնտեսության փոփոխությունները հարաբերական մեծությամբ Հայաստանում, Վրաստանում և Բելառուսում⁴



«Կոոդերատիվների մասին» օրենքի շնորհիվ ստվերային տնտեսության մի մասը օրինականացվեց: Ավելին՝ օրենքի բացերը խթանեցին ստվերային տնտեսության աճը: 1990-ին կոոդերատիվներում ներգրավված էր զբաղվածների 11% -ը, որն ադահովում էր ամբողջ տնտեսության եկամտի մինչև 14%-ը:⁵ Այդ ժամանակ ավարտվեց կոոդերատիվների գրանցման տեսանելի միտումը և փոխարենը՝ ողջ տնտեսությունը սկսեց խորտակվել ստվերի մեջ: Սա դայանավորված էր սովետական կարգավորող մարմինների, նախ և առաջ ՕԲԽՍՍ-ի՝ սոցիալիստական սեփականության հափշտակման դեմ դայքարի վարչության առաջընթաց փլուզմամբ: 1985 թ. ղետական ունեցվածքի հափշտակման հարյուր գրանցված դեղքերի համար դատադարտվել էր 114 անձ, իսկ 1990 թ.՝ միայն 17-ը:⁶ Հատկանշական է, որ ԽՍՀՄ փլուզման շրջանում ստվերային տնտեսությունը շատերի կողմից դիտվում էր որդես ադագա շուկայական տնտեսության հիմք, բայց ձեռներնեղից շատերը, որոնք սովոր էին բիզնես վարել կոոուղիոն եղանակով, այդդես էլ չըբեցին ստվերը նույնիսկ այն ժամանակ, երբ շուկայական տնտեսությունը օրինականացվեց:

Ինչդես արդեն նշվեց, ուշ խորհրդային շրջանում ստվերային տնտեսությունը ինստիտուցիոնալ սխալից վերածվեց ազդեցիկ հաստատության: Մարդիկ, որոնք ներգրավված էին ստվերային տնտեսական գործունեության մեջ, սովորել էին տարբեր եղանակներով բիզնես վարել ստվերում: Նրանք խուսափում էին հարկերից և շրջանցում օրենքները, ձեռք էին բերում բանավոր

դայնամավորվածություններ և ղեկավարումը զուգահեռ ձևավորում վեճերի կարգավորման համակարգեր: Հատկանշական է, որ այս իմաստիտուտը զգալի դեր ունեցավ Հայաստանի անկախացման ճանապարհին: Մինչ դաշտոնական տնտեսությունը ամբողջովին ենթարկվում էր ղեկավարմանը, ոչ ֆորմալ տնտեսական հարաբերությունները կարողացան ֆինանսական միջոցներ առաջնորդել քաղաքական գործունեության ծավալման, փախստականների տեղավորման և կանավոր խմբերի համար զենք գնելու նպատակներով:⁷

ԽՍՀՄ-ի փլուզման ընթացքում և շուկայական տնտեսության անցման ժամանակ ղեկավարման հատվածը, որի հիմնական մասը կազմում էր խոշոր արդյունաբերությունը, ամենաշատը տուժեց: Հայաստանի համար այս առումով առանձնահատուկ եղավ տնտեսության կտրուկ անկումը, որը տեղի ունեցավ գրեթե վայրկենապես՝ 1991 թ. օգոստոսից մինչև 1993 թ. սեպտեմբեր: Անկման արագությունը թույլ չտվեց, որ միջանկյալ հաստատություններ ի հայտ գան, իհարկե, եթե այդպիսի միջանկյալ հաստատություն չհամարենք հենց ստվերային տնտեսությունը: Ի հավելումն, ղեկավարումը թե՛ բարոյադատ և թե՛ նյութադատ դարձավ մնաց ստվերային տնտեսությանը: 1990 թ. Հայկական ԽՍՀ բյուջետային ավելցուկը կազմում էր ՀՆԱ-ի 5,6%-ը, որը 1991 թ. իջավ 1,6%-ի, իսկ 1992 թ. գրանցվեց բյուջետային անհավասարակշռություն՝ ՀՆԱ-ի 33,7%-ի չափով: 1993 թ. դեֆիցիտը տատանվեց մինչև ընդամենը ՀՆԱ-ի 11,9%-ը:⁸ Այս դեֆիցիտը հիմնականում փակվեց տեղական աղբյուրներից (որտեղ միակ դաշտը, որը մինչ այդ կառուցվել էր կուտակվել, ստվերային տնտեսությունն էր)՝ մերադալ արտաբյուջետային միջոցները:

1994 թվականի մայիսին Ղարաբաղյան դատարանի ավարտով ավարտվեց նաև Հայաստանի փոխակերպվող տնտեսության անկումը: Արդեն 1994 թ. տնտեսությունը սկսեց աճել, և գնաճը կտրուկ անկում ադրեց. մասնավորեցման հիմնական փուլը տեղի ունեցավ 1995 թվականին և քանի որ կարգավորող ինստիտուտները թույլ էին, դեռ նոր օրենքներ չէին ընդունվել և *մեր-սիմներն* էլ մեծ ազդեցություն ունեին որոշումների կայացման վրա, մասնավորեցման ժամանակ տեղի ունեցան լայնամասշտաբ չարաշահումներ, որոնք և հանգեցրին ստվերային տնտեսության կտրուկ ընդլայնմանը: Ստվերի աճի ևս մեկ դրամադրական աղբյուրի աճն էր. մինչև 2000-ականների կեսերը Հայաստանի բնակչության կեսից ավելին գտնվում էր աղքատության գծից ցածր:⁹

Այսպիսով, հետխորհրդային տարածքին բնորոշ կառուցվածքային խնդիրներից բացի, Հայաստանում կային նաև այնպիսի գործոններ, ինչպիսին էին դատարանը և բնակչության կտրուկ աղքատացումը, որոնք ավարտվեցին 1994 թ. սկզբներին: Ստվերային տնտեսությունը «փրկության հասավ»՝ ծառայելով որդես աղաղակապես մեխանիզմ և գոյատևելու ռազմավարություն՝ ինչպես ամենաաղքատների, այնպես էլ նոր ձևավորված ձեռներեցների դասի համար: 2000 թ. ստվերի դեմ դաշտարը հայտնվել է յուրաքանչյուր կառավարության ծրագրում որդես անհրաժեշտ տարր, բայց այն առավելա-

գույն դեր է խաղում Հայաստանի նոր, 2018 թ. հեղափոխական կառավարության հոնտորաբանության և գործողությունների մեջ:

ԿԼԻԵՆՏԵԼԻՉՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՍԿՈՒՐՍԸ

Անկախության ողջ ժամանակաշրջանում Հայաստանի ղեկավարությունը փորձել է հետամուտ լինել տնտեսության մեջ ստվերային մասնաբաժնի նվազեցմանը, նդատակ ունենալով ընդլայնել հարկային եկամուտները և նվազեցնել կոռուպցիան և հանրային կյանքում չկարգավորված գործունեության տեսակները: Միևնույն ժամանակ Հայաստանի իշխանական համակարգը և դրա ձևավորման եղանակն ինքնին անհնարին էին դարձնում կոռուպցիայի դեմ ղայքարը:

Բանն այն է, որ այն մարդիկ, որոնք երկրում ֆինանսական, քաղաքական և սոցիալական ամենամեծ կառիտալն ունեին և կազմում էին Հայաստանի քաղաքական ընտրախավը, հենց իրենք էին իշխանությունը: Ըստ ընտրախավի համալրման ժամանակաշրջանի, նրանց կարելի է բաժանել երեք հիմնական և հավասար խմբի՝

- ուշ խորհրդային շրջան,
- Ղարաբաղյան շարժման, ղատերազմի և անկախության համար ղայքարի շրջան (1988-1994),
- նոր հայկական ղետության ձևավորման շրջան (1995-2005):¹⁰

Համաղատասխանաբար, արդեն ձևավորված ընտրախավը, սեփական դիրքերի ղահողանման և ամրացման համար, օգտագործում էր այս կան այն կոռուպցիոն մեխանիզմները, այդ թվում՝ ընտրողներին կաշառելը ընտրությունների ժամանակ: Միևնույն ժամանակ ղետությունը ղայքարում էր կոռուպցիայի դեմ՝ արձագանքելով առաջ քաշված հետևյալ կարիքներին.


- (1) դիմակայել Ադրբեջանին, ավելի քիչ ղետուրներ ունենալու ղայմաններում,
- (2) բավարարել հայաստանյան հասարակության՝ ղետուրների հավասար և արդար հասանելիության ղահանջը,
- (3) աղահովել Եվրողական կառույցների հետ հաղորդակցության ու ինտեգրման գործընթացների ղատշաձ իրականացումը:

Հաձախ նույն մարդիկ համատեղում էին երկու դերերը. ա) ղահողանում էին հարաբերությունների հովանավոր-հաձախորդ համակարգը և սեփական դերն այդ համակարգում և բ) շարունակում էին ղայքարել կոռուպցիայի դեմ՝ վերոնշյալ նդատակներին հասնելու համար: Դա հանգեցրեց նրան, որ մինչև

2010 թ. կեսերը հայաստանյան իշխանությանը հաջողվեց ետդադնել կաշառակերությունը և ստվերային տնտեսության մասնաբաժինը՝ միաժամանակ դադարեցնելով կլիենտելիզմը քաղաքականության մեջ:

Կլիենտելիզմի տարածվածությունը՝ որդես էլիտայի համալրման սկզբունք, ինչդեռ նաև սթրեսի ընդհանուր բարձր մակարդակը՝¹¹ տայմանավորված աղքատությամբ և Ղարաբաղյան դատերազմում կողմերի անհամաչափությամբ, հանգեցնում էին կոռուպցիայի չափազանցված ընկալման, երբ մարդիկ հակված էին մտածելու, որ երկրում կոռուպցիայի մակարդակը շատ բարձր է, թեև իրենք անձամբ դրա հետ չէին բախվել գործնականում: Այս կարծիքը հաստատող մի բանի էմոփրիկ փաստեր կան. դրանցից ամենաակնհայտը, օրինակ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի «Կյանքը փոխակերպման մեջ» հարցումն է (III ալիք) 2016 թ., համաձայն որի, հարցմանը նախորդող տարվա ընթացքում հարցվածների 10%-ից մի փոքր ավելին է մշել, որ կաշառք է տվել դետալական մարմինների հետ շփման ընթացքում (իրական կոռուպցիա), մինչդեռ 35%-ը հավատում էր, որ իրենց համաքաղաքացիները բախվում են դրան կանոնավոր կերպով (ընկալվող կոռուպցիա):¹² Համեմատության համար ասենք, որ Ռուսաստանում կոռուպցիան գործնականում կազմել է մինչև 18%, իսկ կոռուպցիայի ընկալումը՝ ընդամենը 5%: Հայաստանում կոռուպցիայի ընկալվող մակարդակը մի բանի անգամ գերազանցել է իրականը և այդ տարբերությունը ամենաբացասականն էր ամբողջ հետխորհրդային Եվրասիայի տարածաշրջանում անցումային փուլում գտնվող երկրներում:

Գծադասեր 2. Իրական և ընկալվող կոռուպցիայի մակարդակի տարբերությունը Եվրասիայի մի շարք երկրներում



Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հարցումները Հայաստանում կոռուպցիայի համեմատաբար ցածր մակարդակի ի համեմատ դրա բարձր ընկալման միակ վկայությունը չէ: Նմանատիպ արդյունքներ են արձանագրել նաև, օրինակ, Յետագոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-

Հայաստանի հարցումները: 2013 թ. Ադրբեջանի հարցված քաղաքացիների 27%-ը հաստատել է կոռուպցիոն փորձառությունը: Վրաստանում այդ թիվը կազմել է ընդամենը 1%, իսկ Հայաստանում՝ 4.3%:¹³ 2017 թ. այդ թվերը կազմում էին Վրաստանի համար 2%, իսկ Հայաստանի համար՝ 3.2%:¹⁴ Այդ թվում, Համաշխարհային բանկի Ձեռնարկությունների հարցման համաձայն, բիզնեսի ոլորտում կաշառակերության մակարդակը Հայաստանում 2013 թ. կազմել է 7.1%, Վրաստանում՝ 2.2%, Ադրբեջանում՝ 15.9%, Ռուսաստանում՝ 14.2%, իսկ Ուկրաինայում՝ 50.4%:¹⁵

Ընկալվող կոռուպցիայի բարձր մակարդակի մեկ այլ ցուցանիշ է որոնողական համակարգերում «բանալի» բառերի որոնման քանակը: Արդյունքները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 1. Google-ում «Կոռուպցիան ...-ում» բառակադակցության որոնումների քանակն ըստ երկրի

| | Որոնումների քանակը* | Բնակչությունը ըստ 2017 թ.** | Որոնումների քանակն ըստ 100 մարդու |
|-----------|---------------------|-----------------------------|-----------------------------------|
| Ալբանիա | 6 510 000 | 2 873 000 | 227 |
| Հայաստան | 11 300 000 | 2 930 000 | 386 |
| Ադրբեջան | 7 900 000 | 9 862 000 | 80 |
| Բուլղարիա | 12 200 000 | 7 102 000 | 172 |
| Ղրղզստան | 5 270 000 | 6 202 000 | 85 |
| Լատվիա | 4 570 000 | 1 950 000 | 234 |
| Լիտվա | 6 370 000 | 2 848 000 | 224 |
| Մակեդոնիա | 5 620 000 | 2 074 000 | 271 |
| Մոլդովա | 5 870 000 | 3 550 000 | 165 |
| Սլովակիա | 5 810 000 | 5 435 000 | 107 |
| Տաջիկստան | 6 110 000 | 8 921 000 | 68 |

Լոթ.

*«Corruption Albania», «Corruption Armenia» և այլ որոնումների արդյունքներով. որոնումը կատարվել է 2018 թ. օգոստոսին, բացառությամբ Վրաստանի, որի արդյունքները աղավաղվում են ամերիկյան Ջորջիա նահանգի արդյունքներով:

** Յուրաբանչյուր երկրի բնակչությունը Համաշխարհային բանկի 2017 թ. տվյալների համաձայն:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ կաշառակերությունը չի կարող նկարագրել կոռուպցիոն բոլոր դրսևորումները, այդ թվում այնպիսի երևույթներ, ինչպիսիք են յուրացումը կամ կոռուպցիան բիզնեսի ոլորտում: Բացի այդ, այն երկրներում, որտեղ քրեական հետադիմում է իրականացվում կոռուպցիայի համար կամ գոյություն ունի խոսքի ազատության տական սահմանափակում, մարդիկ կարող են թերագնահատել ինչդեպ ընկալվող կոռուպցիան, այնպես էլ (ավելի հազվադեպ) կոռուպցիոն փորձառությունը: Վերջապես, իշխանությունների կողմից թողստված մակարդակը ևս ազդում է ընկալվող կոռուպցիայի մա-

կարդակի վրա, բայց առավել քիչ կերտով է ազդում իրական կոոուղցիայի դրսևորման թվերի վրա:

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՎՇՅԱ ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՑ ԱՌԱՋ ԵՎ ՅԵՏՈ

Հանրային ընկալման մեջ կոոուղցիան և ստվերային տնտեսությունը ըստ տության չեն տարբերակվում: Իրականում այդ երևույթները խիստ փոխկադակցված են, քանի որ կոոուղցիայի բարձր մակարդակը թույլ է տալիս ձեռնարկություններին գործել ստվերային տնտեսության մեջ: Կոոուղցիոն դրսևորումների չափազանցված ընկալումը և դրանց տության թյուրընկալումը իշխանությունների և հասարակության շրջանում սղասելիքներ էր առաջացնում այն իմաստով, որ հնարավոր կլինի ստվերային տնտեսության հաղթահարման հաշվին լուծել մի շարք տնտեսական ու քաղաքական խնդիրներ:


Նախ, ինչդես արդեն մշվեց, ստվերային տնտեսության ծավալը գերազանհատվել էր: Երկրորդ, թվում էր, թե կոոուղցիոն դրսևորումների, ստվերի և օՖշորի դեմ դայքարի միջոցով հնարավոր կլինի Հայաստանի տնտեսության մեջ ներգրավել օՖշորային ֆոնդեր, ինչը մոլորություն էր: Երրորդ, ենթահրվում էր, որ ստվերը հիմնականում բաղկացած է հարկերից խուսափող խոշոր բիզնեսից, մինչդեռ այն միայն ստվերի առավել տեսանելի մասն էր, իսկ տոկոսային հարաբերակցության առումով փոքր ձեռնարկությունները, միկրոբիզնեսը և ոչ ֆորմալ աշխատողները կազմում էին ստվերային տնտեսության ամենամեծ հատվածը:

Արդյունքում, երբ 2014 թ. մայիսին մորանշակնակ վարչադետ Հովիկ Աբրահամյանը հայտարարեց «ստվերային տնտեսության դեմ անողոք դայքարի» մասին¹⁶ և փորձում էր համոզել խոշոր բիզնեսին դուրս գալ ոչ ֆորմալ տնտեսության հատվածից, նա հաջողության առանձնադետ չհասավ: Եթե 2014 թ. մարտի վերջին (մինչև Աբրահամյանի մշանակումը) ստվերային տնտեսության մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում կազմում էր 37.6%, ադա նրա վարչադետության ավարտին՝ 2016 թ. սեդտեմբերի սկզբներին, այդ ցուցանիշը նվազեց մինչև 36.0% (թեն դետք է հաշվի առնել, որ նրա վարչադետության ընթացքում գրանցվեցին մի քանի տնտեսական ու քաղաքական ցնցումներ): Պետք է ընդգծել, որ այլընտրանքային գնահատականները, որոնք թեն այնքան էլ ճշգրիտ չեն, սակայն մնամատիղ արդյունք են տալիս. 41%՝ 2009 թ., 35%՝ 2014 թ. և 36%՝ 2015թ.:¹⁷

Այնումենայնիվ, 2016 թ. վերջից՝ գործադիր իշխանության փոփոխությունից հետո, դայքարն առավել արդյունավետ դարձավ, քանի որ այն հիմնվում էր կառուցվածքային փոփոխությունների, ինչդես նաև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և ֆինանսական գործարքների հաշվառման առավել բարձր որակի, հարկային և մաքսային համակարգի բարեփոխումների

վրա, այդ թվում՝ Եվրասիական միության անդամակցության և համադատասխան վերազգային կարգավորումների ընդունման հաշվին: Ստորև ներկայացնում ենք 2016-2019 թթ. ստվերային տնտեսության դինամիկան:

Գծադաստիկ 3. Ստվերի մասնաբաժնի գնահատված դինամիկան ՀՀ տնտեսության մեջ 2016-2019 թթ.



Աղբյուր՝ Հեղինակի հաշվարկները Գութամի վերափոխված մեթոդաբանության հիման վրա:

Նոթ. Ուղղահայաց գծերով նշված են հիմնական քաղաքական իրադարձությունները:

Թավշյա հեղափոխությունից հետո կոռուպցիայի դեմ լայնածավալ հիմնախնայությունը կտրուկ աճեց, քանի որ կոռուպցիային դիմակայելը հեղափոխականների՝ նախկին իշխանությունների դեմ ուղղված հիմնական թեզն էր: Ակնկալվում էր, որ այս լայնածավալ կազմի ոչ միայն քաղաքականության և հանրային տրամադրությունների, այլ նաև տնտեսության վրա, և ակնկալվում էր բյուջեի հավաքագրման մոտ 30% աճ:


Հեղափոխությունից հետո առաջին մի քանի ամիսների ընթացքում նկատվում էր կոռուպցիոն բնույթի հանցագործությունների կտրուկ աճ, ինչը լայնածավալված էր այդ հանցագործությունների բացահայտման աճով: Այս ցուցանիշների դինամիկան ներկայացված է ստորև:

Աղյուսակ 2. Կոռուպցիայի դեմ ղայթարի վիճակագրությունը Չայաստանում, 2017-2018 թթ.

| | A (2017) | B (2018) | C (2018) | ԱՃ (C/B) |
|---|-----------------------------|----------------------------|---------------------------|----------|
| | Հունվ.- դեկտ. ¹⁸ | Հունվ.- ապր. ¹⁹ | Մայիս- սեպ. ²⁰ | (C/B) |
| Կոռուպցիոն բնույթի բոլոր հանցագործությունները | 634 | 380 | 750 | |
| Միջին ամսական | 53 | 95 | 150 | 58% |
| Կաշառք տալը, ստանալը և միջնորդությունը | 163 | 88 | 318 | |
| Միջին ամսական | 13.6 | 22.0 | 63.6 | 189% |
| Իշխանության չարաշահում | 150 | 55 | 126 | |
| Միջին ամսական | 12.5 | 13.8 | 25.2 | 83% |

Եթե 2017 թ. միջինում ամսական գրանցվել է կոռուպցիոն բնույթի 53 հանցագործություն, այդ թվում՝ 13.6-ը կաշառքի փաստի առթիվ, ապա 2018 թ. հունվար-ապրիլ ամիսներին գրանցվել են համադաստիսանաբար 95 և 22 դեռք, հեղափոխությունից հետո դրանք եղել են՝ 150 և 63.6: Կոռուպցիոն հանցագործության վիճակագրությունը առավել երկարատև ժամանակահատվածի համար ունի հետևյալ ղատկերը:

Գծաղատկեր 4. Պաշտոնաղես գրանցված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քանակի դինամիկան Չարավային Կովկասի երկրներում, 2004-2018 թթ.



Աղրուրներ՝ Վղաստանի վիճակագրողաղան քրեական հանցագործողաղան ամսական հղաղարականներ, 2011 թ. հուլիս-2018 թ. դեկտեմբեր, «Սղհիալ-տմտեսական դղրողությունը Չայաստանում հունվար-դեկտեմբեր ամիսներին» զեկույցներ, 2005-2018 թթ., «Crime and Offense in Azerbaijan» տարեկան հղաղարականներ, 2012-2018 թթ.:

Նղթ. Տարբեր երկրներում տվյալների վիճակագրողաղան վարման տարբեր մեթղղաբանողաղան ղատճաղղղ տվյալները միղղտ չեղղ, ողղ կարող են համաղղրելի լինեղղ:

Ինչդեռ տեսնում ենք, հայաստանյան ներկայիս իշխանությունները տեսա-
նելի ջանքեր են ներդնում կոռուպցիայի նվազեցման ուղղությամբ, ինչը ի վեր-
ջո հանգեցրել է որոշակի արդյունքների: ԱՄՆ Սիջազգային հանրադատա-
կան ինստիտուտի հարցման համաձայն, որն անցկացվել է 2019 թ. մայիսին,
հարցվածների 63%-ը ասել է, որ առաջընթաց են նկատում կոռուպցիայի դեմ
ոլայքարում և միայն 7%-ն է նկատել հետընթաց:²¹ Նաև առաջընթաց է գրանց-
վել ստվերային տնտեսության շրջանառության կրճատման գործում. եթե
2018 թ. ամրիլի սկզբին ստվերի մասնաբաժինը կազմում էր 26%, ամառ
2019-ի առաջին կիսամյակում այն նվազել է մինչև 22%:

Չուգահեռաբար, գրանցվել են նաև բազմաթիվ նոր աշխատողներ: Նկատելի
աճը, ընդհուպ 1/3-ի չափով, գրանցվել է մի շարք սուղերմարկետներում, որոնք
դատականում են նախկին իշխանության խորհրդարանականներին:²² 2018 թ.
մայիս-սեպտեմբեր ամիսներին գրանցվել է ընդհանուր առմամբ 33 հազար նոր
աշխատակից, որոնց մեծամասնությունը սեզոնային զբաղվածություն չէր: Դա
աշխատակիցների ստվերից դուրսբերում էր: Այստիսով, 2018 թ. հոկտեմբերի
դրությամբ բոլոր վարձու աշխատողների մոտ 6%-ը մինչև թավշյա հեղափո-
խությունը եղել է ստվերում և գրանցվել է հեղափոխությունից հետո:

ՀԱՎԱԿՈՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՅՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐԸ

Հետհեղափոխական շրջանում ստվերային տնտեսության դեմ ոլայքարի
նախնական փուլից հետո մենք բախվեցինք մի քանի սահմանափակումների,
որոնք առ այսօր գոյություն ունեն: Փաստն այն է, որ գործող ինստիտուտ-
ների, տնտեսական զարգացման ներկա մակարդակի, հասարակության
իրավագիտակցության և ֆինանսական գրագիտության մակարդակի ոլայ-
մաններում, ստվերային շրջանառությունը նվազեցնելու ցանկացած քաղա-
քականություն բախվելու է արդյունավետության որոշակի սահմանի, որին
հասնելուց հետո ստվերի հետագա նվազեցումը գրեթե անհնար կլինի:

Հաշվի առնելով, որ մինչև 2018 թվականի ամրիլը ստվերային տնտեսու-
թյունն արդեն զգալիորեն սահմանափակվել էր, ստվերային տնտեսության
նվազագույն նվաճելի մակարդակի և հեղափոխության ղաիին եղած մակար-
դակի միջև տարբերությանը հնարավոր է հասնել բավականին սահմա-
նափակ ժամանակահատվածում: Իր հերթին սա նշանակում է, որ ի տարբե-
րություն Վրաստանի, որտեղ 15 տարի առաջ ևս իրականացվել են հակակո-
ռուպցիոն բարեփոխումներ, մույն արդյունքին հասնելու դեմքում անգամ,
վերջնարդյունքը հանրության կողմից չի ընկալվի որդես շատ նշանակալից
ձեռքբերում:

Բացի այդ, օբյեկտիվ սահմանափակումներ կան մի շարք այլ ոլորտներում
ևս, որոնք կգրանցեն սահմանափակ արդյունք: Այստիսով, ենթադրվում էր,
որ օՖՂոր հանված գումարների զգալի մասը կվերադարձվի երկիր: Սակայն

հեղափոխությունից հետո դարձվեց, որ նախ՝ օՖՅՈՐ դուրս բերված միջոցների բանակը մեծադեպ չափազանցված էր, և հետո՝ այդ միջոցների մեծ մասը կամ օրինականացված է, կամ՝ լավ թաքցրած: Յետևաբար արդարության վերականգնման այս քաղաքականությունն էական տնտեսական արդյունքների չհանգեցրեց: Բացի այդ, նախկինում մենաշնորհված աղյուսակների շուկայական գների նվազեցման ազդեցությունը ևս շատ անմշան էր: Այդ աղյուսակների թվում 2018 թվականին արդեն մնացել էին միայն բանանը և շաքարը, որոնց գները իրականում նվազեցին մրցակցության աճի և այլ գործոնների շնորհիվ: Ներմուծողների և առևտրային ցանցերի սեփականատերերի գերշահույթները, եթե դրանք անգամ նախկինում գոյություն ունեին, վերջին տասը տարիներին անհետացել են հայկական դրամի երկու արժեզրկման արդյունքում (2009 և 2014) և ցածր գնաճի դարազայում:

Այս համգամանքները երկընտրանք են ստեղծում Յայաստանի նոր կառավարության համար: Չնայած կոռուպցիայի դեմ դայքարում լուրջ արդյունքներ գրանցելու քաղաքական կամքին, վերոնշյալ փաստերը ցույց են տալիս, որ դա բավականին դժվար կլինի, ինչն իր հերթին կբերի համրային հիասթափության դիսկի կամ նախկին և նոր իշխանությունների միջև կոռուպցիոն կառուցիվների փոփոխության նարատիվի: Իսկ նոր իշխանության համար իր հիմնական թեզերից մեկից՝ կոռուպցիայի և ստվերի դեմ դայքարի թեզից հրաժարվելը ծայրահեղ դժվար կլինի: Կառավարության ամբողջ հաջողությունը նախ և առաջ գնահատվելու է նրանով, թե որքան լուրջ տնտեսական արդյունքներ են գրանցվել կոռուպցիայի դեմ դայքարի շնորհիվ: Այդ դատճառով, արդյունքում, հասարակության մի մասի հիասթափությունն ամխուսափելի կլինի, կամ էլ անհրաժեշտ կլինի նոր իշխանության լեգիտիմության աղբյուրի փոխակերպում՝ նոր հասարակական դայմանագրի կմքում, որտեղ կոռուպցիան ձևակերպված չի լինի որդես առաջնային մշանակության խնդիր:

- ¹ Buyng-Yeon Kim, Yoshisada Shida, *Shortages and the Informal Economy in the Soviet Republics: 1965-1989*, RRC Working Paper Series, թիվ 43:28 (Kunitachi, Tokyo: The Institute of Economic Research, Hitotsubashi University), մարտ 2014:
- ² Gregory Grossman, «Roots of Gorbachev's Problems: Private Income and Outlay in the Late 1970s», *Joint Economic Committee US Congress Gorbachev's Economic Plans*, հ. 1 (Washington, 1987), էջ 213-229:
- ³ David Law, «Corruption in Georgia», *Critique: Journal of Socialist Theory*, հ. 3, թիվ 1 (1974), էջ 99-107:
- ⁴ Տե՛ս Kim, Shida, *Shortages and the Informal Economy in the Soviet Republics: 1965-1989*:
- ⁵ Грант Микаелян, *Теневая экономика в Армении* (Երևան: Институт Кавказа, 2016), էջ 72:
- ⁶ Քաշվարկված է ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրության, ղետական ռեգիստրի և վերլուծության ղետական դեղարտամենտի տրամադրած տվյալների, «Статистический ежегодник Армении – 1990» (Երևան, 1991), էջ 355:
- ⁷ Ըստ ձեռնարկատերերի հետ անցկացրած հեղինակային սոցիոլոգիական հարցազրույցների, *Հայաստանի սովետային տնտեսությունը* գրքի ղատրաստման ընթացքում:
- ⁸ *Statistical Handbook States of the Former USSR. Studies of Economies in Transformation*, Paper 19 (World Bank: Washington, 1995), էջ 48:
- ⁹ Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից անցկացրած տնային տնտեսությունների իմտեզրված հարցումների: Յուրաքանչյուր մման ուտումնասիրություն մերառում է 5000-ից 8000 ընտանիք:
- ¹⁰ Տե՛ս Alexander Iskandaryan, Hrant Mikaelian, Sergey Minasyan, *War, Business and Politics. Informal Networks and Formal Institutions in Armenia* (Yerevan: Caucasus Institute, 2016):
- ¹¹ Gallup «Global Emotions 2019» զեկույցի համաձայն Հայաստանն աշխարհում ամենազայրացած երկիրն է, <https://news.am/arm/news/511002.html>
http://cdn.cnn.com/cnn/2019/images/04/25/globalstateofemotions_wp_report_041719v7_dd.pdf, այց՝ 19.11.2020:
- ¹² ՎՉԵԲ, *Life in Transition (III). A Decade of Measuring Transition* (2016), էջ 29, <http://www.ebrd.com/documents/oce/pdf-life-in-transition-iii.pdf>, այց՝ 19.11.2020:
- ¹³ CRRC Caucasus Barometer 2013:
- ¹⁴ CRRC Caucasus Barometer 2017:
- ¹⁵ Սյա ղարագայում կաշառք ստամալու դեղքերի հաճախականությունը հասկացվում է ձեռնարկատերերի այն բանակը, ովքեր առնվազն մեկ անգամ կաշառք են վճարել ղետական մարմիններում հարցմանը մախորդող տարվա ընթացքում: Enterprise Surveys, The World Bank, <http://www.enterprisesurveys.org>, այց՝ 19.11.2020.
- ¹⁶ «Հայաստանի վարչաղետը խոստացավ «ամողք» ղայքար մղել սովետայի դեմ և առավել խոստաղահանջ լինել իր մտերիմների մկատմամբ», *Մեղիամաքս*, 20 մայիսի 2014, <https://mediamax.am/am/news/politics/10296/>, այց՝ 19.11.2020:
- ¹⁷ Leandro Medina, Friedrich Schneider, *Shadow Economies Around the World. What did We Learn Over the Last 20 Years*, IMF Working Paper 18/17, էջ 69, <https://www.imf.org/~media/Files/Publications/WP/2018/wp1817.ashx>, այց՝ 19.11.2020:

- ¹⁸ Հայաստանի վիճակագրական կոմիտե: Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը, 2017 թվական, հունվար-դեկտեմբեր, Իրավախախտումների վիճակագրություն, էջ 170-190. https://www.armstat.am/file/article/sv_12_17a_550.pdf, այց՝ 19.11.2020:
- ¹⁹ Հայաստանի վիճակագրական կոմիտե: Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը, 2018 թվական, հունվար-ապրիլ, Իրավախախտումների վիճակագրություն, էջ 123-124, https://www.armstat.am/file/article/sv_04_18a_530.pdf, այց՝ 19.11.2020:
- ²⁰ Հայաստանի վիճակագրական կոմիտե: Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը, 2018 թվական, հունվար-սեպտեմբեր, էջ 149-151, https://www.armstat.am/file/article/sv_09_18a_540.pdf, այց՝ 19.11.2020:
- ²¹ Public Opinion Survey: Residents of Armenia, *Center for Insights*, May 6-31, 2019, https://www.iri.org/sites/default/files/armenia_poll_may_2019_final.pdf, այց՝ 19.11.2020:
- ²² Ստվերի դեմ ղայքարի արդյունքը. «ՍԱՍ ԳՐՈՒՊ»-ի գրանցված աշխատողների թիվը հունիսին կտրուկ աճել է: B4B, 16 օգոստոսի 2018, <http://b4b.am/archives/news/%D5%BDտվերի-դեմ-ղայքարի-արդյունքը-սաս-գրո>, այց՝ 19.11.2020:



ՀԱՅԿԱՏԿԱՆ 2018
ARMENIA

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES

**ՀԱՅԿՉԵ
ՍԹՅՈՒՈՔԻՆ**



ԽԱՉԻԿ
ԹԵՕԼԵՕԼԵԱՆ

ԸՆՏՐԱԽԱՎԵՐԸ ԵՎ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԴՐԱԶԳՈՒՄ¹

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ²



րևը երբեք մայր չի մտնում հայկական սփյուռքում: Ըստ բնակչության բանակի նվազման և ոչ թե մշակութային, քաղաքական կամ տնտեսական կարևորության գործակցի, այն ներառում է բաղկացուցիչ համայնքներ Ռուսաստանում (մոտ 2 միլիոն), Միացյալ Նահանգներում (800.000), Վրաստանում (400.000), Ֆրանսիայում (250.000), Ուկրաինայում (150.000), Լիբանանում (105.000), Իրանում (100.000), Սիրիայում (70.000), Արգենտինայում (60.000), Թուրքիայում (60.000), Կանադայում (40.000) և Ավստրալիայում (30.000): Մոտ տասներկու ավելի փոքրաթիվ բնակչությամբ՝ 25.000-ից մինչև 3.000-ի միջակայքում տատանվող այլ համայնքներ կան Բրիտանիայում, Հունաստանում, Գերմանիայում, Բրազիլիայում, Շվեդիայում, Եգիպտոսում, Հորդանանում, Իրաքում, Քուվեյթում, Օոցի Եմիրություններում, Իտալիայում, Բելգիայում, Նիդեռլանդներում, Ավստրիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Վենեսուելայում, Հունգարիայում, Ուզբեկստանում և Եթովպիայում:

Այս համայնքներն այնքան տարբեր են ու տարասեռ, որ դրանց ու դրանցով կազմավորվող համաշխարհային սփյուռքի վերաբերյալ երեք ընդհանրացում կարելի կլինի ամել: Առաջին, համայնքային ընտրախավերն իրենց կողմից դեկավարվող սփյուռքի հիմնարկությունների, կազմակերպություններն և միությունների հետ մեկտեղ³ արտասովոր կարևորություն են ունեցել համայնքների համար արտասովոր երկար ժամանակ: Հիմնարկությունների և ընտրախավերի կատարած գործերը միշտ եղել են բարեգործական, մշակութային ու քաղաքական միևնույն ժամանակ: Այդ գործը ղախանջել է նյութական միջոցներ ու համայնքային աստիճանակարգ և միավորել է անձնագոհ կամավորությունը հանրայնորեն ղարտադրված մասնակցության հետ, և այդ ամենը՝ հանուն աքսորյալ ազգի: Երկրորդ, այս սփյուռքն աքսորական ազգայնականությունից դեռի սփյուռքային անդրազգայնություն արագընթաց փոխակերպում է աղբյուրում: Եվ երրորդ, այս փոխակերպումը մարտահրավեր է նետում գոյություն ունեցող հիմնարկությունների օրակարգերին, խոսույթներին և միջոցներին՝ ղատճառ դառնալով փոփոխությունների և ինքնաբերաբար նդաստելով նոր կազմակերպությունների ստեղծմանը:

Այս փորձագրության մեջ խոսք է գնալու հայկական սփյուռքի՝ աքսորական ազգայնականությունից սփյուռքային անդրազգայնություն անցման մասին, նախ՝ քանի որ այդ փոփոխությունն ուշագրավ է ինքնին և աղա՝ այն կարող է ի ցույց դնել հիմնարկությունների, ընտրախավերի և նյութական միջոցների կարևորությունը սփյուռքը հղացականացնելու այլ փորձերի համար: Այդ կարևորության գիտակցումը հանգեցնում է այնդիսի հասկացությունների տեղն ու դերը վերաիմաստավորելուն, ինչդիսին են՝ առաջնորդությունը, իշխանության բանեցումը և ազգայնականության համախմբող ներուժը ինչդես գոյություն ունեցող սփյուռքների, այնդես էլ սփյուռքի տեսության համար: Վերջաղես, նման գործոնների վրա ուշադրություն հրավիրելը թույլ կտա որոշակի զգայունություն նե-

րարկել ներկայումս մերժված այնտիպի կատեգորիաների հանդեմ, ինչդիպիսիք են՝ սփյուռքների նստակեցությունը, աղատարածականացմանն ուղղված ազդակը, ինչդեպ նաև՝ վերջիններիս քաղաքական դրակտիկաները:

Անցման գործընթացն հայկական սփյուռքում համաժամանակյա չէ: Այն սկսվել է տարբեր ժամանակներում ու ընթացել տարբեր տեմպերով: Նամանադեմ՝ չեն զգացվել նրա հրատարակություններն ու չեն եղել միատեսակ արձագանքներ: Գործոճները, որոնք ազդել են սփյուռքի յուրաքանչյուր համայնքում անցման տեմպի ու ձևի վրա, ներառում են նրա անցյալի դատմությունը, հարաբերությունն «ընդունող» ազգային լիցությունն հետ, որտեղ այն գտնվում է, որքանով են անդրազգայնականությունն ու համաշխարհայնացումը ներթափանցել այդ լիցություն, ինչդեպ նաև՝ յուրաքանչյուր համայնքին հասանելի նյութական ու հիմնարկային միջոցները: Ամհրաժեշտաբար, այս հոդվածն ամտեսում է աքսորականությունից դուրս գալու և անդրազգային սփյուռքայնություն անցնելու շատ մանրամասներ, տարբերություններ ու փոխառնչություններ: Փոխարենը այն առաջարկում է որոշ կայուն կառույցների ու ընթացքների ակնարկ, որոնք կառավարում են հայկական սփյուռքի տեղի ունեցող և ներկա փոխակերպումները: Առանց այլևայլի ընդգծելու՝ են համայնքային ընտրախավերի և նրանց ձևավորած հիմնարկությունների դերը սփյուռքային անկայուն գոյության դայնամիկներում: Պնդելու են, որ կազմակերպված, հիմնարկայնորեն մոբիլիզացված և կայուն կառույց, նյութական ու մշակութային փոխանակության համատեղումը ինչդեպ սփյուռքի համայնքների, այնդեպ էլ հայրենիքի և սփյուռքի միջև, հիմնական բաղկացուցիչներն են յուրակերպ «սփյուռքային» հասարակական կազմավորման, որը դարձադեպ վերանվանված էթնիկական խումբը չէ:

Համաշխարհայնացմամբ շրջանակված ու դրանում ընթացող արդի փոխակերպման սկզբնավորման այս դասին՝ հայկական սփյուռքը վաղուց արդեն բաղկացած չէ աքսորական համայնքների շարքից, ազգի հատվածներից, որոնք սղատում են իրական կամ խորհրդանշական հայրենադարձության: Ավելի շուտ, սփյուռքը գոյություն ունի (և իր անդամների ճնշող մեծամասնության ու իր անհաշտ առաջնորդության կողմից գնահատվում է) որդեմ մշտական երևույթ: Այս համաշխարհային հայկական սփյուռքը կազմված է համայնքներից, որոնք անհրաժեշտաբար և անխուսափելիորեն զարգացրել են տեղական, ընդունող երկրին հատուկ «էթնիկ» հատկություններ:⁴ Յուրաքանչյուրը կազմակերպված է, թեթեո ոչ հավասար չափով, և յուրաքանչյուրը զարգացնում է հիմնարկություններ՝ հոգալու համար տեղական կարիքները: Իրենց գերազանցադեպ տեղական մտահոգություններով հանդերձ՝ առանձին հիմնարկություններ – կրոնական, բարեգործական կամ քաղաքական – ունեն նաև անդրազգային օրակարգեր ու ձգտում են խթանել ընդհանուր համոզմունքներին համադատասխանող, բազմավայր և հետևաբար հենց «սփյուռքային» արժեքներ, խոսույթներ, գաղափարախոսություններ, կողմնորոշումներ և դրակտիկաներ: Առանձին կամ միասին վերցրած այս կազմավորումներն ընդգրկում են բազմաթիվ հասարակական, մշակութային և (շատ ավելի քիչ դատահող, բայց անհամեմատ կարևոր դեմ-

քերում) քաղաքական ինքնություններ, որոնք գոյակցում են, բախվում, հարմարվելու ու համաձայնության գալու հնարներ փնտրում: Երբ նրանց հաջողվում է հասնել այդ նույնատակներին, հազվադեպ է, որ հաջողությունը տևական կայունություն է ցուցաբերում, բացառությամբ այն վայրերի, որտեղ գերակշռում են սփյուռքի գետտոյացված ձևերը: Ինչ-որ իմաստով, սփյուռքի համայնքը գոյատևում է էթնիկ և սփյուռքային մշակութային ինքնությունների ու քաղաքական դրակտիկաների դարադրաբալ զուգակցման շնորհիվ. դրանց միջև դաշինքը լարումներ է առաջացնում, բայց նաև օգնում է սահմանել սփյուռքը որդես այդ-դիսին: Այդ ինքնությունների մի մասն ավանդական է, մաքրամուլ ու մեղմիտ, մինչդեռ մյուսները ներառում են նաև կոսմոպոլիտ հանձնառություններ, որոնք առաջ են բերում ոչ անբողջական, այլ ավելի շուտ ընտրողական հրաժարում արարական ազգի վերաբերյալ երևակայական դատկերացումներից:

Այս տարատեսակ համայնքներից յուրաքանչյուրում սփյուռքին բնորոշ տնտեսական, քաղաքական և մշակութային ընտրախավերի խմբակցությունը կիսում է սփյուռքի այլ հատվածների ու հայրենիքի հետ հիմնարկային, անդրազգային կապեր ու փոխանակություններ իրականացնելու հանձնառությունը: Փողն ու քաղաքական խորհրդատվությունը, գրքերն ու թերթերը, տեսասկավառակներն ու տեսագրությունները, նկարներն ու ֆիլմերը, տեղեկատվությունն ու դրոշմագանդան, քահանաներն ու քաղաքական ակտիվիստները շրջանառվում են հայկական անդրազգի տարածքում:⁵ Համարյա բոլոր համայնքներում կա տարանջատում, մրցակցություն ու դաշինք մշամաբանական ու քաղաքական ներկայացման ձևերի հետ կապված: Մրցակցությունը տարածվում է բոլոր մակարդակներում՝ վերահսկել հիմնարկություններն ու ֆոնդերը, հավաքագրել հավատարիմ հետևորդների շրջանակ, տղավորել մշակույթ արտադրողներին սփյուռքային ինքնության այս կամ այն տեսլականով (որոնցից յուրաքանչյուրը առաջ է բերում յուրահատուկ մշակութային և քաղաքական հանձնառություններ՝ ինչդեռ տեղական, այնդեռ էլ անդրազգային մակարդակներում) և առերեսել մարտահրավերը նորից հասնելու սահմանին, ուր անընդհատ մշակվում են նոր ինքնություններ, մինչդեռ հները քննադատվում են կամ լքվում: Այդդիսի մշակումը տեղի է ունենում ինչդեռ խոսքային, երաժշտական և տեսողական մեդիայում, այնդեռ էլ ցուցադրման, սղառման, անգամ՝ բարեգործության նոր եղանակների միջոցով: Շատ քիչ, բայց ահռելիորեն ազդեցիկ դեղքերը, նոր քաղաքական և ինքնութենական դրակտիկաներն այնքան արձատական են, որ հանգեցրել են նույնիսկ ներհամայնքային բռնության:⁶

Այնդիսի սփյուռքում, ինչդիսին հայկականն է, ինչդեռ ազգային դետությունների ներսում, մշակույթի (վեր)արտադրությունը ամենօրյա, համառ և ծախսատար գործունեություն է, որը կառավարվում է ոչ միայն մի քանի անհատ արվեստ արտադրողների, այլև լրագրողների, մտավորականների, ուսուցիչների, գիտնականների, ակտիվիստների, արվեստագետների, դերասանների ու զվարճանքն ադահովողների լայն խմբերի ջանքերով: Դրանց մի մասը կապված են կան, ինչդեռ ուսուցիչների դեղքում՝ շատերը, կախված են կազմակերպություններից

ու հիմնարկություններից, որոնք նյութական աջակցություն և զաղափարական լոգիստիկա են առաջադրում: Այս հիմնարկությունները կազմավորում են սփյուռքի քաղաքացիական հասարակությունը, որն ամրապնդում է բանավեճերի և մշակութային արտադրության համային ոլորտի գոյությունը:⁷

Մինչ Անտոնիո Գրանչիի տեսանկյունից Պետությունն ու Քաղաքացիական հասարակությունը սովորաբար ընդհանուր լեզու և ազգություն ունեն, սփյուռքի համային ոլորտը, հատկապես նրա հիմնարար հայախոս բաղկացուցիչը մինչև վերջերս մեկուսի էր մնում հյուրընկալող երկրների հասարակությունների ավելի լայն, այլախոս համային ոլորտից: Հասկանալի է՝ հյուրընկալող հասարակությունից ու ղեկավարությունից իր տարբեր լինելը հաստատելու ջանքերում առավել համակարգը կան տնտեսական ու մշակութային աջակցություն մա ակնկալել կան ստանալ չէր կարող: Հատկապես Մերձավոր Արևելքում, որտեղ երկար ժամանակ քրիստոնյա հայերը բավականին զատված են մնացել մուսուլման հասարակությունից, հայկական սփյուռքի մեծ մասը լավագույն դեպքում առանձին ձևերով և դեպքից դեպք է մասնակցել հյուրընկալող երկրի մշակույթին ու քաղաքականությանը: Մյուս սփյուռքների ներկայացուցիչների մասն ղիմադրելով կանխակալությունը, բայց ընդունելության և ներգրավման ինչ-ինչ ձևեր փնտրելով՝ հայկական սփյուռքի համայնքային ընտրախավերն, առանձին դեպքերում մեկուսի մնալով, գիտակցված կերպով ինքնատարփակվում են մշակութային տեղայնացմամբ ստեղծված անկլավում: Ինչպես սփյուռքի մի քանի այլ ընտրախավերը, նրանք իրենց հերթին նախատարածություն են ցուցաբերում խնամքով ընտրված ու լայնամեծից թելադրված մեկուսացման և համայնքային որոշ սահմաններ գծելու իրավունքի հանդեմ՝ սնուցելով և զարգացնելով ինչ-ինչ տարբերություններ, երևակայելով ու ինքնավար կերպով արտադրելով իրենց մի քանի ինքնություններն ավելի շուտ, քան թե ընդունելով հյուրընկալող հասարակության՝ գերիշխող ներկայացման ռեժիմից բոլորին շնորհվող կոլեկտիվ սփյուռքային սուբյեկտի դիրքը: Այս նախընտրությունը լոգիստիկա են ինքնության հիմնարկայնացված հակա-արտադրություն թե՛ գեղարվեստական, թե՛ զանգվածային մշակույթի լոգիստիկաների միջոցով:

Նմանատիպ արտադրությունն ու վիճարկումը հաղորդվում են հին ու նոր մեդիաներով, թերթերի ու գրքերի զարմանալի տարածմամբ, ռադիոյով և հեռուստատեսությամբ, համերգներով և հիշատակի երեկոներով, բարեգործական և հովանավորյալ երեկոներով, բեմերով, ցուցասրահների և բանախոսությունների սրահներով, վերջերս մասն համացանցով, ինչպես մասն համայնքի ֆինանսավորմամբ գործող դրոնգներով ու խնջույքներից մինչև վիճաբանություններ ձգվող հավաքներով: Մինչև վերջերս այստիպի արտադրության մեծ մասը բնույթով ու բովանդակությամբ սահմանափակ էր⁸ և վերարտադրում էր աքսորական ազգայնականության ձևերը: Սակայն, սփյուռքում վաղուց արդեն կան առանձին ձայներ, որ կոչ են անում բացվել հյուրընկալող հասարակության առջև, և այդ ձայներն այժմ ավելի համառ ու ազդեցիկ են, քան երբևէ: Արտադրության երկու տեսակներն էլ հնարավոր է վերլուծել որպես տեքստեր,

դրանց մի մասը՝ որոշես յուրահատուկ գեղարվեստական տեքստեր: Բայց դրանց հասանելիությունը որոշես տեքստեր կարող է և մոլորեցրել է գիտնականներին, տոպավորություն ստեղծելով, որ գործ ունեն մշակաբանական և գեղարվեստորեն ինքնավար մյուսի հետ, այնինչ այն գրեթե միշտ հիմնարկային է, կաղված սփյուռքում աշխատող ուժերի հետ: Փաստորեն, այս հիմնարկությունները վճռականորեն լծված են սփյուռքի մշակութային ու քաղաքական «արդիացումն» ուղղորդելու փորձերին, կամ, նկատի ունենալով անցանկալի բեռնվածությունը, որն այս հասկացությունն ստացել է երրորդ աշխարհին վերաբերող նեոգաղութատիրական խոսույթում, կերտավորելու հայկական ու առդիությունը անդրազգային դարաշրջանում:

2. ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԹԵՄԱՆԵՐ

Այս հոդվածը քննարկում է արտարկական ազգայնականության սփյուռքային անդրազգի ընթացքի մեջ գտնվող փոխակերպումը՝ ուրվագծելով այն փոփոխությունները, որոնք վերակերտում են հին, լայնորեն տարածված և հաճախ հիմնարկայնորեն հագեցած սփյուռքը, միևնույն ժամանակ հույս ունենալով նույնատեղի սփյուռքի վերաբերյալ այսօր լայն տարածում ունեցող խոսույթների միջև որոշակի հավասարակշռության վերականգնմանը՝ իրենց հերթին այս փոխակերպման մեջ ներգրավված հիմնարկային և մյուսական գործոնները ներկայացնելով: Հայկական սփյուռքի արտադրած խոսույթը որևէ դժվարություն չի առաջացնում ընդունելու այդ գործոնների կարևորությունը: Բայց սփյուռքների *վերաբերյալ* Միացյալ Նահանգներում ստեղծված գիտական խոսույթը հեշտությամբ չի ներառում դրանք և իհարկե խուսափուկ է դառնում, երբ բախվում է ազգայնականության, իշխանության և սփյուռքի ղայմաններում տեղայնացման⁹ մղումի մասին խոսելու ամհրաժեշտությանը: Այդ թեմաներն ու խնդիրներն են հյուսվում սփյուռքային կառույցների ու փոխակերպումների վերաբերյալ հաջորդիվ ծավալվող քննարկման ողջ ընթացքում:

Իմ լուրջների սխեմատիկ ուրվագիծը, որը մասամբ միայն կարող է բացվել կամ մանրամասնվել այս հոդվածի սահմաններում, ղետք է սկսվի այն դիտարկմամբ, որ արդարացի քննադատությունը, երբ առավել քան երբևէ առաջ է մղվում ու մշակվում գիտնականների և մտավորականների կրթոտ խմբի կողմից, երբեմն կառուցում է ծաղրադատություններ այն առարկայի, որը քննադատում է: Նիլ Լազարուսը ղմնում է, որ Արևմուտքի հակաօրիենտալիստական քննադատությունները մեծացրել են «Արևմուտքը» ծաղրադատությունների վերածելու հավանականությունը: Նույն կերպ ազգային-ղետության և մի քանի (իրականում բավականին տարբեր տիղի) ազգայնականությունների քննադատությունների կրթոտությունն այնքան առօրեական է դարձել, որ սփյուռքի ղաշտղանները ձգտում են ազատել ու մաքրել սփյուռքներն իրենց ազգայնականության բոլոր հետքերից: Թե որքանով է ազգայնականությունը, հատկաղես սփյուռքյան ազգայնականությունը խնդրահարույց, քննարկվել է դեղք առ դեղք: Նույ-

Միսկ հիմա, հայկական սփյուռքի աճող անդրազգայնացման և բազմիցս ազդարարված ազգային-դեմոկրատիայի մայրամուտի ժայռաններում ազգայնականությունը մնում է գործուն ուժ: Դրանց բնույթի և ցանկալիության՝ որդես դրական, մոբիլիզացնող ուժի վերաբերյալ ժայռարը բաժանում է սփյուռքի որոշ կազմակերպությունների անդամներին, մինչդեռ քաջալերում ու զորացնում է մյուսներին: Այսօրիսի ազգայնականության բնադատությունն ու մերժումը զբաղեցնում է գիտնականների ու մտավորականների մի փոքր, բայց լսելի խմբի: Ինչդեռ ցանկացած երկարակյաց կազմավորում, հայկական սփյուռքը լավագույնս կարող է ըմբռնվել, եթե նկատի ունենանք, որ այն կազմող անդամները կրթությամբ կերտված են հակամարտությունների մեջ, որոնք այն տրոհում են իրենց տեղական, ազգային և անդրազգային ժայռատավորությունների ու ինքնությունների բնույթին համադասխան: Սփյուռքի քաղաքացիական հասարակության հիմնարկությունները մյուսական աշակցություն են տրամադրում (իսկ հաճախ փորձում են Գրանցիկ իմաստով գրաքննել կամ ուղղորդել) հանրային ոլորտը, որը, մի շարք մշակութային արտադրություններում ու քաղաքական ժայռակտիկաներում ներգրավված լինելով, առաջ է տանում այս բանավեճերն ու ժայռարները՝ սահմանելով, վերարտադրելով և արտադրելով ընթացքի մեջ գտնվող սփյուռքը:

Այսօրիսի հակասությունը (սովորաբար ոչ բռնի, թեև՝ ոչ բոլոր հանգամանքներում) ներառում է ուժի բանեցում՝ դիսկուրսիվ, սոցիալական, մշակութային, տնտեսական, իսկ երբեմն՝ բացահայտ քաղաքական ուժի: Սփյուռքն ուսումնասիրողները դժկամորեն են ընդունում «ամոլետություն ուժի»¹⁰ գոյությունը, ուժի մի ձև, որը թե՛ ստեղծարար է, թե՛ արգելակիչ, և որը գործում է մույնիսկ սփյուռքային այն հասարակական կազմավորումներում, որտեղ հիմնական կանոնը անհատական կամավորությունն է և ոչ թե համայնքային հարկադրանքը, կամ գոնե այդպես թվում է: Այսօրիսի դժկամությունն ընդհանուր է սփյուռքի որոշ լավագույն, և հատկապես մի քանի ամենաազդեցիկ տեսականացումներին: «Ուժը» ինչդեռ և «ազգայնականությունը» մի երևույթ է, որից սփյուռքյան գիտական դասը հեռացնում է իր հայացքը: Փոխարենը, գիտությունը եկել է սփյուռքները որդես հակադեմոկրատիկ, հակաազգային և ավելի շատ ազգային ժայռատություններն արատավորող ուժի գործադրումից անտեղյակ մի իրողություն ժայռակերպացնելու: Սփյուռքներն իդեալականացվել են որդես բաց, ծակոտկեն, շրջանակային, կոսմոպոլիտ և ոչ ավանդական, ադատեղայնացված, անդրազգային ժայռը ներկայացնող օրինակելի համայնքներ, որոնք դրա շնորհիվ ունակ են առաջարկել (ի տարբերություն ազգային դեմոկրատիկների, որոնք վերագրում կամ ժայռատություն են իրենց քաղաքացիներին) ճկուն, բազմակի ինքնություններ:

Այդ դիտարկումներում ակնհայտ ճշմարտություն կա, բայց դա իրականում կենսճշմարտություն է, որի անտեսված կողմն այն է, որ ուժը, հիմնարկայնացումը և դրանց ժայռատարած սահմանափակումները գոյություն ունեն մաս սփյուռքում: Իրավացիորեն մատնաշելով տեքստայնությունը, շարժումությունը, գեղարվեստական աշխատանքն ու հիբրիդային ինքնությունը որդես սփյուռքին

բնորոշ մշակութաձին իրողություններ և միևնույն ժամանակ՝ սփյուռքային արտադրանք, գիտությունը գալիս է մերժելու և անգամ հրաժարվելու այնտիպի համագոյ գործոններից, ինչդիպիսի են վերը մշված ուժի գործարկումը և ազգայնականությունը, բայց նաև՝ նստակեցության համառ տրամաբանությունը, տեղակայման և աղատեղայնացման մղումները, որոնք հակադարձ միտում են ձևավորում և հանդես են գալիս որդես սփյուռքյան շարժունության ու ծակտուկենության անբակտելի «մյուսը»: Հատկապես այստիպի քվազի-տարածական սփյուռքային աղատեղայնացման շրջանակներում, բայց նաև՝ դրանից դուրս, առկա են հիմնարկայնացման և այնտիպի կազմակերպությունների ստեղծման ազդակներ, որոնք հավակնում են իրենց համայնքները ներկայացնելու արտոնությանը և կարող են ազատորեն քաղաքական կոչվել: Ընդհանուր առմամբ, սփյուռքի մշակութային ինքնությունները հազվադեպ են ամբողջությամբ անկախ համայնքային այս կազմակերպություններից: Հրեական և կուբայական սփյուռքների հետ մեկտեղ հայկական սփյուռքը դրանց կարևորության շարունակական, անընդհատ զարգացող ակնառու օրինակ է առաջարկում:

Աքսորական ազգայնականության փոխակերպումը սփյուռքային անդրազգայնության շատ հիմնարկություններ է ներառում և տեղի չի ունենում հավասարաչափ, ինչդեպ նաև այն հավասարապես դիտարկելի չէ հայկական սփյուռքի բոլոր համայնքներում: Փոփոխությունը տեղի է ունենում ժամանակի ընթացքում անհամաչափ տևողությամբ՝ կախված հիմնականում համայնքի տեղակայվածությունից: Վկայակոչելով Ռեյնոն Ուիլիամսի առաջարկած եզրերը՝¹¹ կարող ենք ասել, որ որորոշ հայկական համայնքներ, օրինակ՝ Եթովպիայում, հիմա *մնացորդային են (residual)*: Թվաքանակի անկում աղբյուրվ և տեղակայված լինելով այնտիպի քաղաքական միջավայրում, որն ինքնին ճաք է տալիս սեփական դժվարություններից, նրանք տեղական լայնամասների փոփոխություններին արձագանքում են առավելապես գաղթելով, այլ ոչ թե հարմարվելով և նոր հիմնարկություններ, մշակութային ու հասարակական որակտիկաներ կամ ինքնություններ զարգացնելով: Մյուսները *ծագող (emergent)* սփյուռքներ են: Օրինակ՝ Շվեդիայում, որտեղ Թուրքիայի, Իրանի և արաբական Միջին Արևելքի միմյանցից տարբերվող ելակետային հայկական սփյուռքներից գաղթածները՝ նախկին Խորհրդային Միությունից եկածների հետ կողք-կողքի՝ որդես կրոնա-քաղաքական հավաքականություն սկսեցին գոյակցության և համագործակցության ուղիներ փնտրել: Վերջերս առաջին շվեդահայն է ընտրվել երկրի խորհրդարանում: Դրա հետ մեկտեղ, կան մի քանի խոշոր, *գերիշխող* սփյուռքահայ համայնքներ, որոնցում տեղի ունեցող բազմաչափ փոխակերպումները դժվար է ամփոփ բնութագրել: Դրանցից յուրաքանչյուրում շատ անհատներ ծուլվել են, մինչդեռ մնացածը փարված են հիմ, փորձված և լայնապատի թեմիկ ինքնությունների որոշ կողմերին, չնայած որ դրանց կողքին զարգանում են նոր սփյուռքյան ինքնությունները: Շատերը հրաժարվում են հայկական բոլոր հիմնարկությունների հետ կապերից, նույնիսկ եթե համայնքի որոշ հատվածներ համախմբվում են լավ ֆինանսավորվող կազմակերպությունների և հիմնարկությունների շուրջը: Սրանց մի մասը գործում է տեղական (ասենք՝ մեկ քաղաքում), մեկ այլ մասը՝ անդրտե-

ղական (հյուրընկալող երկրի ողջ տարածքով) մակարդակներում, մինչդեռ սփյուռքի մի քանի առանցքային հիմնարկություններ գործում են անդրազգայնորեն: Միացյալ Նահանգները նախևառաջ, բայց նաև Ֆրանսիան, Կանադան, Լիբանանը, Սիրիան և Իրանը բոլորն էլ ունեն համայնքներ, որոնցից յուրաքանչյուրում այսօրվա հիմնարկությունները կարևոր են մնում: Վերջապես, կան հայ փախստականների ու արտագաղթածների հսկայական նոր ցրոնքներ, որոնք փախել են Անդրկովկասի Պատերազմներից և տնտեսական անկումներից: Վերջիններս մոտ երկու միլիոն են կազմում Ռուսաստանի Դաշնությունում և նախկին Խորհրդային Միության տարածքում, որտեղ կազմավորման ընթացքի մեջ գտնվող սփյուռքը Արևմուտքում տեղակայված դիտորդների մեծամասնության հասողության սահմաններից դուրս է գտնվում:

Շատ քիչ բան կարելի է ասել, որ հավասարադաս ճիշտ լինի այս բոլոր սփյուռքյան խմբերի համար: Բոլորն էլ մոտավորապես բաղկացած են մարդկանց չորս կարգից, որոնք գտնվում են հյուրընկալող հասարակությանը ինտեգրվելու տարբեր աստիճաններում. ծուլված կամ գրեթե ծուլված, հարմարավետ էթնիկական կենսակերպ զարգացրած, նոր գաղթածներ կամ փախստականներ, որոնք ղախում են կամ հափշտակված են ավանդական հայրենիքի ինքնությանը, և սփյուռքային տարրեր:¹² Այս կարգերը «փուլեր» չեն դաստնական միակողմանի հետազոծում: Քանի որ ժամանակի ընթացքում միտում կա շարժվել գաղթականից դեռի սփյուռքյան ինքնություն և հետո՝ էթնիկականությունից դեռի ծուլում, հնարավոր են միջանկյալ կայունացումներ կամ մուլտիսկ վերացումներ: Չուլման չափն ու ուղղությունը ո՛չ կանխորոշված են, ոչ էլ՝ հնարավոր է խուսափել: Հատկապես, սփյուռքյան դասը թե՛ կորցնում, թե՛ գտնում է կողմնակիցներ (էթնիկականացման և ծուլման) տարբեր աղբյուրներից. վերջերս գաղթածների շարքերից, որոնք սկսել են բնակություն հաստատել նոր երկրում, կամ էթնիկներից, որոնք արձագանքում են հայրենիքի հետ ավելի ու ավելի դյուրացած անդրազգային կառույցի խթանմանը, կամ իրոք նրանցից, ովքեր արձագանքում են անդրազգային հիմնարկությունների աշխատանքներին, որոնց առաքելությունը բացահայտորեն սահմանված է ավելի շուտ *սփյուռքային*, քան միայն էթնիկ կամ տեղական-համայնքային: Քանի որ միավորման կառույցներում են հին խմբերից (հատկապես գյուղական կամ ծագման շրջանով լայնամասշտաբ) թուլանում են, ինչը հանգեցնում է շատերի ծուլմանը, ուստի փոքրամասնությունը հայկական սփյուռքում փնտրում է հանձնառություն, կարգավիճակ և հնարավորություն կառավելու մարդկանց առավել լայն, բազմատարած ցանցի և գործունեության աստիճանի հետ:

Բայց անդրազգային նկրտումներով ոչ մի համայնքային ընտրախավ չի կարող հաջողության հասնել, քանի դեռ չի ըմբռնել տեղական խնդիրները: Այդպես է ազգային ղեկավարության մեջ, այդպես է նաև սփյուռքում: Բոլոր քաղաքականությունները տեղական են այն իմաստով, որ մուլտիսկ ամենաընդարձակ անդրազգային կազմակերպությունները ղեկավարում են ունենալով տեղական բաղադրիչ ու հասցե:¹³ Օրինակ՝ այնպիսի անդրազգային կառույցում, ինչպիսին Հայ

առաքելական եկեղեցին է, մտահոգությունների երկատվածությունը դրսևորվում է անձնակազմի ու կառույցի երկատվածության մեջ: Նրա ամուսնացյալ քահանաները տասնամյակներով, երբեմն՝ ամբողջ կյանքի ընթացքում, ծառայում են տեղացի ծխականներին, նույնիսկ այն դեպքում, երբ նրանք տեղացիներ չեն: Սրան հակառակ, նրա կուսակրոն քահանայությունը գործում է որդես վեղարավոր գործադիրի շարժական կրոնական բյուրոկրատիա. նրանք ծառայում են որդես անդրազգային կադրեր՝ հատկանշականորեն մի դիրքից մյուսը շարժվելով: Եղիսկոթոսները, որոնք սփյուռքի եկեղեցու բարձրագույն աստիճանին են ձգտում, սովորաբար ղեկավար են ծառայել թե՛ Մերձավոր Արևելքի, թե՛ Հյուսիսային Ամերիկայի համայնքներին: Առհասարակ, նաև՝ Պարագուայի կերտով, որքան հաջող է անդրազգային սփյուռքային կազմակերպությունը գործում, այնքան ավելի հավանական է, որ նա զարգացած տեղական մասնաճյուղեր ու ծառայություններ ունենա:՝¹⁴

Չնայած ինքնին հասկանալի չէ, բայց փաստն այն է, որ հայկական սփյուռքում տեղականը հենց այն վայրը չէ, որտեղ միայն տեղական ընտրողների առաջնորդությունն է ձևավորվում: Դա այն վայրն է նաև, որտեղից բազմաթիվ – թեև ոչ բոլոր – անդրազգային առաջնորդներն են հավաքագրվում: Ամենահաջողածները տեղական կարիքներին գործնականորեն անդրադառնալու կարողություն են ցուցաբերում. իբրև համայնքի կազմակերպիչներ, բարեգործությանը աջակցողներ, համայնքի տեսչականը ձևակերպողներ, համայնքի և ուժի աղբյուրների (սովորաբար հյուրընկալող երկրի) ու «մեծ» փողի (որը կարող են դրդված լինել ներդնելու այլադես տեղական համայնքից հեռու ղեկավարությունը կամ մեծահարուստ ազգակիցները) միջև միջնորդներ: Տեղական այս դեկավարները որդես համայնքի ներկայացուցիչներ հնուս են խոսելու տարբեր օրինավոր հանրային հարթակներից. հաճախ այն ղեկավարող, որ նրանք կարևոր դիրք են ձեռք բերել ընդունող հասարակության մեջ, ավելացրել են հայ համայնքի վարկը՝ առանց վերջինիս հետ իրենց կապերը խզելու: Առավել հնարամիտները, որոնք ձևավորվել են նաև որդես անդրազգային առաջնորդներ, չեն մոռանում ներկայացնել իրենց տեղական համայնքները որդես հյուրընկալող հասարակության մեջ *արմատավորված* և միևնույն ժամանակ ուղիներ որոնող անդրազգային սփյուռքային ցանցի մի հանգույց:¹⁵

Այս կառուցվածքի ներսում մշակույթ արտադրողները, որոնք դրականորեն են ներկայացնում սփյուռքի կյանքը և լայնորեն ընդունվում հյուրընկալող երկրի ներկայացուցչական ռեժիմի մուտքը հսկողների կողմից, հազվադեպ են հավաքագրվում սփյուռքի ընտրախավերից: Երբ նրանք խախտում են իրենց հավատարմությունը, ինչն արվեստ արտադրողներն հաճախ են անում, նրանց ներկայությունը և աջակցությունը որոշակի հիմնարկությունների կազմակերպած միջոցառումներին միևնույն է փնտրվում է և գովազդվում, նախ՝ որովհետև այն կարող է խթանել դրամահավաքը, առաջ նաև՝ որովհետև սփյուռքի ընտրախավերը, սովորաբար, թեև անուղղակիորեն, գնահատում են հիմնարկային դիրքերի¹⁶ մշակութային լեգիտիմացման արժեքը՝ ինչպես ընդունող

հասարակությանը ներկայանալու առումով, այնպես էլ համակիրներ հավաքագրելու ու համայնքի ներսում իրենց լոյալությունը և կաղվածությունը ամրադնդելու համար: Թարմ օրինակ է System of a Down ռոք խումբը, որի անդամները երիտասարդ ամերիկահայեր են: Խումբը բաղկացած է անկախ մշակույթ արտադրողներից: Նրանք իրենց արժանիքներով և առանց սփյուռքի հիմնարկությունների օժանդակության հաջողության են հասել լայն հասարակության մեջ: Խումբը համերգ տվեց ու հասույթը նվիրաբերեց ամերիկահայ լոբբիստական կազմակերպություններից մեկին՝ Ամերիկայի *հայ* դատի համաձայնաբերի (ընդգծ.՝ հեղ.)՝ ցույց տալով իր աջակցությունը մի կազմակերպության, որը զբաղված է Միացյալ Նահանգներից Պահանջելու ճանաչել հայերի ցեղաստանությունը: Գրելով համերգի մասին՝ անանուն լրագրողը նկատում է. «Ցեղաստանությունն այնպիսի բան չէ, որ սովորաբար ոգեշնչում է համերգներ տալը, բայց System of a Down-ի համար այն պվելին է, քան Պատճառ, այն խաչակրաց արշավանք է» (Ն.Ա.): Նկատի առնելով այն կարևորությունը, որ սփյուռքի որոշ հիմնարկություններ ցուցաբերում են մշակութային արտադրության և ներկայացման հանդեպ, Պատահական չէ, որ մի շարք կարևոր քաղաքական ու բարեգործական հիմնարկություններ գրականության, թատրոնի, դրամի և երաժշտության, ինչպես նաև՝ սոցիալական աջակցության համար սատարում են տեղի կազմակերպություններին, որոնց ղեկավարները միաժամանակ միջին կամ բարձր դիրք են գրավում գլխատար կազմակերպություններում և հաճախ իրենց հերթին մշակույթ արտադրողներ են, որոնք կանոն՝ լրագրողներ, բայց նաև՝ բանաստեղծներ և արձակագիրներ:¹⁷

Այսօր, առավել քան երբևէ, առաջնորդության ձգտող հիմնարկություններն օգտագործում են համաշխարհայնացումն իր ընձեռած արդյունավետ միջոցներով՝ հաղորդակցություն, ճամփորդություն, ֆոնդերի և տվյալների փոխանցում, գաղափարների և մշակութային արտադրության փոխանակումներ, որոնք սպասում են լինեն սփյուռքի այլևայլ հատվածների և հայրենիքի գաղափարակից խմբերի հետ՝ իրենց դիսկուրսիվ ժողովրդավարների համար մոր հետևորդներ ու զինակիցներ հավաքագրելով և փոխհամաձայնացնելով ու հաստատելով ընդհանուր անդրազգային օրակարգերը: Բայց նրանց օրակարգերն էականորեն տարբեր են իրենց նախորդներից: Վերջիններս իրենց սփյուռքը դիտարկում էին որպես հայրենիք վերադարձին սղասող աքսորյալ ազգ,¹⁸ որի մշակույթի ղախողանությանն էին լծվել տեղական անկլավներում, որտեղ որ այն հասանելի էր կամ կարող էր ղախողանվել: *Ազգաղաղանունը* հիմնական կարգախոսն էր: Մի քանի կազմակերպություններ էին գործում անդրազգայնորեն, այնքանով, որքանով որ ֆինանսական միջոցներն ու տեխնոլոգիաները թույլ էին տալիս. հիմնականում՝ եկեղեցին, Հայ հեղափոխական դաշնակցությունը, Ռամկավար ազատական կուսակցությունը և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Ամսագրերը, որոնք հովանավորում էին նրանք, շարունակաբար արտադրում էին գրականություն, որը միջհամայնքային էր և միջտեղական, թեև որոշ համայնքներ իրենք չէ, որ արտադրում էին, այլ միայն սղառում էին այդ գործերը:

Այսօր սփյուռքի ընտրախավերը սկսել են սփյուռքի համայնքների ամբողջությունը դիտարկել որդես *հարատև հայկական անդրազգ*, որի կարգախոսները միևնույն ժամանակ սերտորեն առնչվում են այնդիսի հասկացությունների, ինչդիսին են՝ (1) «հյուրընկալող ազգը»՝ սփյուռքի ավանդական բառադաշարին դատկանող արտահայտություն, որով սփյուռքները դեռևս դիտարկվում էին ժամանակավոր և հանդուրժվող հյուրեր; (2) հայրենիքը, որը հեշտ հասանելի է դարձել Խորհրդային Միության անկումից հետո; և (3) համաշխարհայինը, ինչդես էլ այն ներկայանալիս լինի՝ Միացյալ ազգերի կազմակերպության կամ ՀԿ-ների, թե համացանցի կամ արբանյակային հեռուստատեսության տեսքով: Հզորացած ինչդես արևմտահայ սփյուռքի համայնքների մեծամասնության բուրժուականացմամբ ու համադատասխան ինստիտուտների բարգավաճմամբ, այնդես էլ տեխնոլոգիաներով և մոտիվացված գաղափարաբանության ու ներկայացման դրակտիկաների կայուն հերթափոխով, անդրազգը կարող է ադաիովել այս ձեռնարկներից շատերը: Հետաքրքիր է, որ համաշխարհայնացման դաիը նշանավորվեց նորոգված և զարգացած, անգամ ինտենսիվացած հանձնառությամբ տեղականի մեջ այնդիսի ներգրավմամբ, որը հաղթահարում է գետտոյացված անկլավներում աքսորյալներ լինելու զգացողությունը:¹⁹ Տեղականը ներառելու նոր եղանակների և համաշխարհայինի առանձին ասդեկտների մարտավարական ներգրավման կողքին *ազգի* հղացքի հանդեմ հանձնառությունը հարատևեց: Նույնիսկ այն դեղքում, երբ աքսորական ազգայնականության ոտքի տակի հողը անցավ սփյուռքային անդրազգայնությանը, «ազգ» հղացքը, ինչդես և բառն ինքը, շարունակում է գոյություն ունենալ՝ շարունակելով նստած մնալ անդրազգայնության ներսում և դաիդանելով թեև փոփոխվող, բայց տևական կարևորությունը հայկական սփյուռքի հանրային ոլորտում:

3. ՍՓՅՈՒՐՔԻ ՀԱՍԱՅՆՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԽԱՎԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

Ձևավորվող հայկական անդրազգն իր անդամների կողմից դիտվում է իբրև կազմավորում, որն ունի տարածականորեն տեղակայված դետական հատված հայրենիքում, դետական հատված՝ վիճարկվող հայաբնակ Լեռնային Ղարաբաղի մարզում, որը միջազգային իրավունքը տեղակայում է Ադրբեջանի կազմում, բայց որն այժմ *de jure* անջատողական դետական միավոր է, ինչդես նաև սփյուռքի համայնքները բոլոր մնացած վայրերում (տե՛ս ծանոթ. 5): Սփյուռքի հատվածը բարդ դատմություն ունի, որը, զարմանալի չէ, անծանոթ է մնում ոչ հայ գիտնականներին:²⁰ Որդեսզի գաղափար կազմվի այն խնդիրների շարունակականության վերաբերյալ, որոնց առերեսվում է սփյուռքը, եական է հաշվի առնել նրա ջրբաժանները, սոցիալ-բաղաբական ու մշակութային դաիդանողականության վերաբերյալ վերնախավերի որոշ արձագանքները և ի հայտ եկող հիմնարկային լուծումները: Ոչ շարունակականությունն ու փոփո-

խութունը առավել իմաստալից են դառնում, երբ դիտարկվում են Ֆերնան Բրոդելի կոչած *longue durée*-ի մատրիցայի ներսից:²¹ Ուրեմն, համադաստասխան լատինական փուլը գնում հասնում է մինչև վերջին հազարամյակի շրջադարձը:

1) 1045–1453. ՑՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՍԵՐ ՓՈՒԼԸ

Այս ժամանակահատվածում թրքական ու մոնղոլական ծագմամբ տարբեր միջինասիական նվաճողները աստատակում են Հայաստանը, ոչնչացնում հայկական ղեկավարությունն ու շատերին մղում փախուստի: Փախստական հայերը բնակություն են հաստատում երկու տարածաշրջաններում. Սև ծովի շրջակայքում, որտեղ հիմա Ուկրաինան ու Լեհաստանի հարավային մասն են, հիմնականում արհեստագործական և առևտրային համայնքներում, որոնք ենթարկվում էին տեղական օրենքներին, և Կիլիկիայի շրջակայքում (մերկայիս Թուրքիայի միջերկրածովյան ափի հարավարևելյան գոտին), որտեղ բնակություն են հաստատում գաղթող Ֆեոդալ ազնվականների ու բարձրաստիճան հոգևորականների մեծ մասը (իրենցից կախված ճորտերի և հաճախորդ ազգաբնակչության հետ միասին): Վերջիններս իշխանություն են ձեռք բերում տեղացի հատվածական բնակչության հանդեպ (մեծամասամբ հույների և ասորի սիրիացիների, առանց գերիշխող մեծամասնության) և հիմնում են ղեկավարություն, որը գոյատևում է մոտ երեք դար (մոտավորապես 1075–1375): Սինգաղուրի հետ մեկտեղ, սա հազվադեպ իրողություն է, երբ սփյուռքի փոքրամասնությունը տարածքային գերիշխանության է հասնում և ղեկավարություն ստեղծում:²² Սփյուռքային, աղատարածական հայկական ղեկավարության հաջողությունը ցույց է տալիս հայրենիքի որոշ հիմնարկությունների՝ եկեղեցիների, ձեռագրատների, դատարանների, ձեռագրերի մշակույթի համեմատաբար ճկունությունն ու հարմարվողությունը, ինչդեռ նաև տեղայնացման մղումները, որոնք շարունակում են բնորոշ լարումներ ստեղծել շատ սփյուռքներում: Միևնույն ժամանակ ափամերձ տարածքներում բնակեցումը լատինական մեջ առաջին անգամ լեռնաբնակ հայերին շփման մեջ է դնում ծովափնյա մարդկանց հետ: Սա արագացնում է սփյուռքի առևտրային ընտրախավի զարգացումը, որը շատ բան է սովորում Միջերկրականի տիրակալներից՝ Վենետիկից ու Ջենովայից:

2) 1453-1604. ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՐՄԱՐՎՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՍԵՐ ԿԱՅՍԵՐՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄՆԵՐՈՒՄ

1453 թ. օսմանյան թուրքերը նվաճեցին Կոստանդնուպոլիսը և այն վերանվաճեցին Իստամբուլ: Սուլթան Մեհմեդ Ֆաթիհը տարբեր քրիստոնյաների, ավելի ուշ՝ հրեական համայնքներին հրավիրեց բնակություն հաստատել նոսր բնակեցված տարածքներում: Շատ ցրված հայեր Կիլիկիայից, արևմտյան Ա-

նատուիայից և Սև ծովի ափամերձ հատվածներից, ներկայիս՝ Բուլղարիայի, Ռումինիայի և հարավային Ուկրաինայի/Ղրիմի տարածքներից մնամաղես ընդունեցին հրավերը: 1461-ին կամ դրան մոտ մի թվականի կայսերական հրամանով այս համայնքներին նոր ձև տրվեց. նրանք կոչվեցին *միլլետ*: Վերջինս դարձավ մասամբ ինքնակարգավորվող միավոր (չնայած, վերջին հաշվով, այն միշտ ամբողջությամբ ենթակա էր Օսմանյան իշխանությանը)՝ օժտվելով Հայ առաքելական եկեղեցու ղաթարիարքությամբ և աջակցություն ստանալով նշանավոր դեմքերից: Այն գործում էր որդես հավաքական էթնոդեմոկրատիայի (ethnarchy) տիտղոսակիր, որի իշխանությունը հայերի և մի քանի այլ քրիստոնյա փոքրամասնությունների վրա ի վերջո տևում է Օսմանյան կայսրության ողջ ընթացքում:²³ 1603-1604 թթ. Պարսկական կայսրությունում Իսֆահանի հաստատումը՝ որդես Սաֆավիտյան հարստության նոր մայրաքաղաք, ուղեկցվել է իրենց հայրենիքից տասնյակ հազարավոր հայերի բռնի տեղահանությամբ: Նրանք գաղթեցվում և վերաբնակեցվում են Նոր Ջուղայում՝ մայրաքաղաքի արվարձանում: Քաղաքային այս կենտրոնի շուրջ հիմնվում են նաև հայկական գյուղեր, որոնք բոլորն էլ կառավարում էին մայրաքաղաքի նշանավոր դեմքերը՝ միաժամանակ սերտ կապեր ղաթարի շայաստանյան եկեղեցու հետ:

3) 1605-1784. ՎԱՃԱՌՎԱԿԱՆԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԳԵՐԻՇԵՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս փուլում ծաղկեց վաճառականական հայ սփյուռքը, հատկապես՝ Իրանում և Հնդկաստանում, բայց նաև հասնելով այնքան արևմուտք՝ մինչև Նիդեռլանդներ և այնքան արևելք՝ մինչև Ճավա:²⁴ Հայկական կաթիտալի հանդիպումը ֆրանսիական, գերմանական և հատկապես բրիտանական կաթիտալի հետ (Արևելյան հնդկական ընկերություն) ի վերջո հանգեցրեց հայկական կաթիտալի ղարտության, որն ավելի փոքր էր քանակով և թիվում չունեց հայրենի ղարտական աղարատ:²⁵ Երկուսն էլ՝ թե՛ բարգավաճումը, թե՛ ղարտությունը, քաղաքական հետևանքներ ունեցան: Առևտրականության աչքի ընկնող անդամներն ու նրանց համախոհները, առանձին հոգևորականներն ու առաջին աշխարհիկ մտավորականները տղազրական մշակույթի միջոցներով սկսեցին ազգայնական տեսակետներ զարգացնել: Պարտությունները հաճախ խթանում են մշակութային համախոհները ինչպես սփյուռքներում, այնպես էլ հայրենիքներում: Այդպես, 1794 թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում մի հոգևորական հրատարակեց առաջին թերթը՝ հայրենիքում հրատարակված առաջին թերթից մոտ վաթսույն տարի առաջ:²⁶ Այս շրջանում Մխիթարյաններ կոչվող կաթոլիկ հայրերի դասը տարօրինակ կերպով, որը երկար վերլուծական շարադրանք է դադարում, ինչն այստեղ անելն անհնար է, հանդես եկավ որդես ազգայնական միտումներ սաղմնավորող մտավորական առաջամարտիկ՝ ստեղծելով բառարաններ, դրամներ և դատամբանական ու մանկավարժական տեքստեր, որոնք հայկական սփյուռքին ներկայացնում էին գերմանական, իտալական և ֆրանսիական ազգայնական գաղափարներ և ղարտակալներ:²⁷ Նույն կերպ, Մադ-

րասի ու Կալկաթայի մտավորականները՝ այս քաղաքներում տեղակայված առևտրականների երիտասարդ թևը, նույն սփյուռքի խոսույթ ներմուծեց ազգի վերաբերյալ անգլիական ու ամերիկյան հղացքներ:²⁸

4) 1784-1923. ԱՉԳԱՅՆԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ԳԱԼԸ ԵՎ ՆՐԱ ԽԱՌԸ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԸ

Հայկական սփյուռքն ավելի վաղ սկսելով, քան հայրենիքը, բայց ի վերջո նրա հետ դաշինքի մեջ, սեփական տնտեսական, մտավորական, արվեստային ու քաղաքական ընտրախավերի առաջնորդությամբ մշակել, հիմնել և աշխատեցրել է մի ամբողջ շարք հիմնարկություններ, որոնք աստիճանաբար ձևավորել են «միասնության» ավելի աշխարհիկ, լեզվական և ազգային ձևեր: Կրթական ուղղվածությամբ այս համակարգը նախ համալրեց, աղա առերեսեց և ի վերջո դուրս մղեց (առանց ամբողջությամբ ոչնչացնելու) նախորդ ավելի քան յոթ դարերի ընթացքում ձևավորված համակարգը, որտեղ եկեղեցին և այն ֆինանսավորող երևելիները, որոնք հիմնել էին համակարգը, առաջիններն էին հավասարների մեջ: Նոր մշակութային ազգի հիմնարկություններն առաջնորդող ընտրախավերի որոշ հատվածները՝ դպրոցները, մասնուր, տղազիր միջոցները, գրադարանները, քաղաքական կուսակցությունները և բարեգործական կազմակերպություններն աստճանաբար փորձում են սփյուռքին հանձնառու դարձնել հայրենիքի մեծ մասի քաղաքական ազատագրության գործին: Այդուհանդերձ փորձերը ճնշվել են ինչդեպ Օսմանյան կայսրության, այնպես էլ ցարական և կոմունիստական Ռուսաստանի կողմից: 1915-1918 թթ. ընթացքում Օսմանյան ղեկավարները ցեղասպան կերպով կոտորեց իր 2 միլիոն հայ քաղաքացիներից 1.5 միլիոնին: Փրկվածների կեսը միացավ լատինական Հայաստանի իրենց ազգակիցների փոքրիկ հատվածին, որը մնացել էր Ռուսաստանի, ավելի ուշ՝ Խորհրդային գերիշխանության տակ, իսկ 1991 թվականին ԽՍՀՄ-ի անկումից հետո դարձավ Հայաստանի Հանրապետություն: Մյուս փրկվածները ստեղծեցին նոր սփյուռք: Ոմանք բնակություն հաստատեցին այն տարածքներում, որտեղ կային փոքրիկ, հին հայկական սփյուռքներ (օրինակ՝ Սիրիայում, Եգիպտոսում և ԱՄՆ-ում. վերջինում 50.000-ի մոտ հայեր կային Առաջին համաշխարհային լատերազմի նախօրյակին):²⁹ Մի մասն էլ միացավ ավելի հին, բայց հիմնովին հաստատված գաղութներին (Իրանում, որտեղ հայերն ադրբեյ ի Երև, մինչդեռ մեկ այլ մաս էլ բնակություն հաստատեց տարածքներում, որտեղ նշանակալի քանակությամբ հայ ազգաբնակչություն չի եղել (ինչդեպ օրինակ՝ Արգենտինան, որն այսօր տունն է վաթսուհազարանոց մի համայնքի): Ցեղասպանությունից հետո ձևավորված սփյուռքի յուրաքանչյուր համայնքում կա հզոր կայսերական կենտրոնների հին սփյուռքների ծաղկուն համայնքներում հիմնարկությունները վերաստեղծելու ընդհանուր առմամբ տղավորիչ մի հանձնառություն, հատկապես՝ Իստամբուլում: Որևէ խոշոր *նոր* սփյուռքային հիմնարկություն այդ շրջանում և փաստորեն մինչև 1972-ը չի ստեղծվել:

5) 1923-1965. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՓՈՒԼԸ

Հայկական ինքնությունը մնաց աքսորական-ազգային, չնայած հին ու նոր սփյուռքների ընտրախավերի տարբեր հատվածներ մեծ ջանքեր գործադրեցին հաստատելու, ուղղորդելու և գերիշխելու բոլոր վերակառուցված հիմնարկությունները՝ կրոնականից մինչև մարզական, արվեստային և բարեգործական: Իհարկե, շատ փախստականներ փրկություն էին փնտրում ծուլման կամ էթնիկականացման մեջ, այն դեռքում, երբ մյուսները, տեղից կախված, գերադասեցին մնալ կամ այլ ելք չունեին տեղայնացված անկլավներում մնալուց բացի, որտեղ քաղաքական ներկայացման բոլոր ձևերը և գեղարվեստական ներկայացման ձևերից շատերը, ներառյալ տղազիր մամուլը, ցուցասրահներն ու բեմերը, որտեղ դրանք կարող էին ֆինանսավորվել և իրականացվել, դեռևս լայնորեն ուղղորդվում էին հիմնարկություններից: Բեյրութի Բուրջ Համուդ թաղամասը, որը տակավին տունն է 75.000 հայերի, այսօր մնում է այդդիսի անկլավներից ամենաքիչ վերափոխվածը, չնայած նրան, որ նույնիսկ նա սկսեց փոփոխվել 1990-ի Լիբանանի երկրորդ քաղաքացիական ղատերազմի վերջերին:

6) 1965-1988. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՌԵԺԻՄԻՆ ՍԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԻ ՓՈՒԼԸ

Այս ժամանակահատվածում մեծ ջանքերով և ծախսերով վերակազմավորված ցեղաստանությանը հաջորդած աքսորի ազգայնական կարգը փորձարկվեց, ամբավարար գտնվեց և մինչ այժմ դիմակայում է ամդրազգային անողոք մարտահրավերների: Որոշ մարտահրավերներ տասնամյակներ շարունակ լուրջ պայքարում ունեն սփյուռքի կյանքի տարբեր ոլորտներում, մյուսներն՝ ավելի նոր են: Յուրաքանչյուրն ի սկզբանե ծագել է իր տիրույթի ներքին դիմամիկայից, բայց դրանք համընկան ու սկսեցին նույնիսկ ազդել միմյանց վրա, երբ մարտահրավեր նետեցին հին սփյուռքային, հիմնարկային կարգին: Նրանք ուղղորդեցին, իրադես, ալթյուսերյան իմաստով, գերորոշադրեցին (*over-determined*) անցումը,³⁰ որը վերածվեց փոխակերպման: Քանի որ այս հողվածը չի ղատմում հայկական սփյուռքի ողջ ղատմությունը, այդ մարտահրավերները կարող են միայն թվարկվել ու ներկայացվել ամփոփ կերպով և ոչ թե բննարկվել մանրամասնորեն: Դրանք ներառում են առնվազն հետևյալ երևույթները.

(ա) *Աքսորից սփյուռք խոսույթային շրջադարձ*: Դարեր շարունակ հայերենը գաղթականներին և նրանց ցրված համայնքները անվանելու մի շարք բառեր ունի, ինչդես նաև գաղթականության (*migrancy*) հետ կաղված հղացքներ և հուզական կառուցվածքներ: Դրանց միջև կաղերը առանձին բանասիրական հողվածի նյութ են, բայց տարածումը հարկ է նշել: Ի հավելումն *սփյուռքի*, ամենաուշաբձանը *գաղութն* է (եբրայերեն *galut*-ից, որը նշանակում է բնակավայր կամ գաղութ հայերենիքից դուրս), որտեղից էլ *գաղթել* բայը, *գաղթական* և *գաղթաշխարհ*, որը բառացիորեն «գաղութի աշխարհն» է կամ սփյուռքը: Կա նաև

բուրոսովին վերջերս շրջանառվող *արտերկիրը*, «հայրենիքից դուրսը», որը օգտագործվում է «սփյուռքի» համար հատուկ քաղաքական հնչեղությամբ: Կանալ բարձր մշակութային *ցրոնքը*, «ցրունը», որն ավելի շուտ նկարագրում է՝ առանց ցրման առանձնահատուկ ձևեր առանձնացնելու: Եվ ի վերջո, կա *դարհիքը*, որը հղում է մասնավորաբար գյուղացիներին, որոնք որդես աշխատողներ գաղթում են քաղաքային տարածքներ: Լեզվական առատությունը մշան է բռնի և կամավոր գաղթի հանդեպ սփյուռքում մտքի ու զգացմունքի դիաքրոնիկ կերտով շերտավորված բարդության: Որոշ համայնքներում թվարկված հասկացությունների մի մասն օգտագործվում է ինքնանկարագրության համար: Հատկանշական է, որ մի երկու դար առաջ հայկական սփյուռքի ամենամեծ և ամենակարևորը համարվող համայնքը՝ Իստամբուլը, հազվադեպ է իրեն սփյուռք դիտարկում: Բացառությամբ այն դեղքերի, երբ հալածվում է թրքական դեմոկրատիայից, իրեն համարում է հին, հոյակապ կերտով կազմակերպված և հիմնարկություններով հագեցված համայնք «տամը», որը Իստամբուլի համադրական հասարակության մի մասն է:

Խնդիրն այն է, որ ոչ միայն սփյուռքի նյութական իրականությունը, այլ նաև սփյուռքի սովորական անդամների կամ արվեստագետների, մտավորականների և դրոմադագանդիստների կողմից հողավորված հղացքները տարասեռ են, անկայուն ու հակամարտ: Հաճախ, խոսույթի մեջ կատարվող փոփոխությունները հիմնարկային ճանաչում են ակնկալում, ինչպես 1959-1965-ն ընկած ժամանակահատվածում:³¹ 1959-ին Բեյրութում, երկուհարյուրհազարանոց հայկական համայնք ունեցող Լիբանանում, Սիմոն Սիմոնյանի *Սփյուռք* շաբաթաթերթի հիմնումը Ֆորմալ առումով մշում էր դեղի սփյուռք շրջադարձի սկիզբը: Դրա ինքնառաջադրումը թերևս օգնեց գործարկել և իհարկե արագացնել խոսույթային անցումը թե՛ գաղափարաբանական, թե՛ գեղարվեստական արտադրության մեջ: Սա նախորդեց անցման քաղաքական և հիմնարկային լիարժեք ճանաչմանը, որն սկսվեց 1965-ից հետո:

(բ) *Հայրենիքի ու սփյուռքի միջև փոփոխվող կառը*: Մշտադեպ զարգացող փոխգործակցություն կա միջինարևելյան և եվրոամերիկյան համայնքների և հայրենիքի կառավարության միջև, որը, չնայած անձնակազմով և անվանադրեք հայկական լինելուն, ամբողջությամբ իբրև Մոսկվայի ենթադաս է գործել 1921-ի խորհրդայնացումից ի վեր: Այս կառավարությունը հենվում էր ինչպես սփյուռքահայ (հատկապես Ֆրանսահայ) աշխատավոր դասակարգի՝ կոմունիստների նկատմամբ ունեցած համակրանքի, այնպես էլ ցեղասպանությունը վերադարձնող ու հայրենիքում վերահաստատված մի մասի հուզական հզոր լիցքի վրա, որդեսգի հավաքագրի քաղաքական աշակիցների և ֆինանսական օժանդակություն, բայց մինևույն ժամանակ որդեսգի բաժանի, տիրի և գրավի այն, ինչը բացորոշ կերտով միտակավորել էր իբրև սփյուռքի «բուրժուա-ազգայնական» միտումներ: Խորհրդային ազգային քաղաքականության յուրաքանչյուր շրջադարձ՝ Լենինից մինչև Ստալին ու Խրուշչով և հետո, իր ազդեցություններն է ունեցել սփյուռքում՝

համադատասխան լարումներ ստեղծելով հայրենիքի հանդեպ ազգայնական լոյալության ու տիրապետող կոնունիզմի հանդեպ ազգայնական մերժման միջև: 1958-ին բեյրութահայ սփյուռքում բռնություն ծագեց Խորհրդային Չայաստանի ռեժիմի դաշնակիցների և հակառակորդների միջև, որի արդյունքում երեսուն հայ գնդակահարվեց երիտասարդ հայերի ձեռքով:³² Այդ դեմքից առաջ և հետո համայնքային բախումները ձեռք են բերել մուլեգին և երբեմն էլ հիստերիկ հոետորաբանություն՝ մերառելով հարկադրանքի ու հաշվեհարդարի բազմաթիվ դեմքեր Յունաստանում, Իրանում և Մույնիսկ Միացյալ Նահանգներում: 1965-ից հետո վարանոտ մերձեցման քաղաքականություններ էին դանդաղորեն զարգանում սփյուռքի և հայրենիքի միջև, որոնք բազմաթիվ շոջադարձերով շարունակվեցին հետխորհրդային շրջանում: Հետկոնունիստական Չայաստանի կառավարությունների վարքագիծը հաճախ խնդրահարույց էր սփյուռքի շատ կազմակերպությունների համար, որոնք ցանկություն չունեին առերեսել դրանք հակամարտության գնով: Հաճախ խոսույթի մեջ փոփոխությունները, որոնք հիմնարկային ճանաչում են ակնկալում, բացորոշ մարտահրավերներ էին նրանց համար: Այն, որ մույնիսկ Խորհրդային Միության անկումից հետո էլ այդ հակասությունները խնդրահարույց էին, ցույց է տալիս, որ ավելի վաղ ի հայտ եկած դժվարություններն ամբողջությամբ թայմանավորված չէին միայն կոնունիստական ռեժիմի բնույթով, այլ դրանք առավելադեպ բնորոշ էին կազմակերպված սփյուռքային կյանք ուղղորդելու հայրենիքի ցանկության և նման ուղղորդմանը սփյուռքի կազմակերպությունների ու առաջնորդների դիմադրությունից առաջ եկած լարումներին:

(գ) *Սերունդների թայքարը սփյուռքում:* Ցեղաստանությանը հաջորդած սփյուռքի առաջին սերնդի առաջնորդները բաղկացած էին նրանցից, ովքեր վերադարձ էին հայ ազգաբնակչության հանդեպ գործադրված թրջական ցեղաստանությունը, և նրանցից, ովքեր փախել էին հայերի ազգայնական ու սոցիալիստ առաջնորդների խորհրդային գտումներից 1921-ին: Հետաքրքիր է, որ իբրև համայնքի ներքին տեղաշարժերի և սառը թատերազմի արդյունք, 1945 թվականից հետո ցեղաստանությունն ու Թուրքիան՝ որդես սփյուռքի քաղաքական գործունեության համար հանգուցակետեր, անտեսվում են: Փոխարենը հայրենի ռեժիմի կողմից ուղղորդվող երկու կողմնորոշումներ՝ մեկը՝ շողոքորթող, մյուսը՝ թշնամական, առանձին-առանձին տիրապետում են նրանց գործողություններում: Քննական վերահաշվառումը սկսվեց 1965-ին, Օսմանյան Թուրքիայի իրականացրած ցեղաստանության հիսունամյակից, որը հանգեցրեց վերը նշված նոր սփյուռքների ձևավորմանը (տե՛ս կետ 4-ը վերևում): Նախաձեռնված լինելով երիտասարդների կողմից, որոնք ցեղաստանությունից հետո առաջին սերունդն էին սփյուռքում և որոնցից շատերը լավ կրթություն էին ստացել, բանիմաց էին ինչդեպ հայկական, այնդեպ էլ ոչ հայկական արվեստի, մտքի ու քաղաքական ավանդույթին, վերահաշվառումը նշանավորվեց նրանով, որ մերժեց նախկին առաջնորդության հակախորհրդային դիրքորոշումն ու վերա-

դարձավ սփյուռքի առաջին տասնամյակների մարտահրավերներին: Այդ մարտահրավերները, որոնք այլևս *ազգադաժնաճանաչման*, այսինքն՝ արքայազնի ազգային ավանդույթների դաժնաճանաչման ծիրում չէին, այլ ավելի շուտ՝ հարատև վերընթացող սփյուռքում հայ ինքնության լայնամասշտաբ վերանորոգման: Հաջորդած խոսույթային և կազմակերպչական ղեկավարող ազդեց շատ հիմնարկությունների, մասնավորաբար՝ ՀՀԴ-ի վրա, ադա նաև նրանց հայկական ահաբեկչության առաջացմանը (որն իրականացվեց 1975-ի և 1983-ի միջակայքում)՝ ուղղված ընդդեմ Թուրքիայի, իսկ որոշ առիթներով նաև՝ հայրենակից հայերի դեմ:

(դ) *Փոփոխություններ հայրենիքում. ներքին դինամիկայի արդյունքը, որն այնուամենայնիվ ազդեց սփյուռքի վրա: 1965 թ.* (տե՛ս գ կետը վերևում), հայոց դատարանի վերջին շրջանի *annus mirabilis*-ը, դիվանագիտության դատարանի մեջ դեռևս ոչ այնքան հստակեցված դատաճանաչումով այդ տարիներին հայկական հայրենիքը ղեկավարող խորհրդային ռեժիմը որոշում է թույլ տալ տասնամյակներով արգելված ազգային հիշատակի ու ոգեկոչման արարողությունները, այն դեռևս, երբ դրանք սփյուռքի առօրյան էին: Երևանում՝ հայրենիքի մայրաքաղաքում, թույլատրվեցին ցույցեր, որոնց մասնակցում էր մոտ մեկ միլիոն մարդ և որոնց ժամանակ հանրայնորեն վերակոչվեց ցեղասպանությունն ու հետ դաժնաճանաչվեց մի ժամանակ հայկական, իսկ այժմ Թուրքիայում գտնվող գրավված տարածքները: Թույլատրվեց կառուցել Ցեղասպանության հուշահամալիր, որը ուխտագնացության վայր դարձավ՝ իրեն քաշելով հայրենիք այցելողներին և սփյուռքի զբոսաշրջիկներին, որոնց թիվն աճեց տարեցտարի 1965-ից սկսած: Մեկ այլ հուշարձան կառուցվեց այն վայրում, որտեղ 1918-ին հայկական անկանոն բանակը կանգնեցրեց ցեղասպանությունը ավարտին հասցնելուն հակված առաջացող, շարդարար թուրք-օսմանական զորքերը: Այս երկու հուշահամալիրները՝ Հայաստանի Յադ Վաշեմ³³ ու Մասադան,³⁴ վերաբերում են սփյուռքի ազգայնականությանը մոյն չափով, որ չափով որ արտահայտում են հայրենիքում եղած դժգոհությունները:

(ե) *1965 թ. Հարթ-Սելլերի ներգաղթի ակտը:* Այս օրենսդրությամբ փոփոխվեցին Միացյալ Նահանգներ ներգաղթի քվոտաները շատ երկրների համար, ներառյալ արևելյան Ասիայի այն երկրները, որտեղ գոյություն ունեին սփյուռքի մի շարք խոշորագույն և լավ կազմակերպված հայկական համայնքներ՝ Լիբանանը, Իրանը, Սիրիան, Եգիպտոսը և Թուրքիան: Միացյալ Նահանգներ գաղթի սկսեց աճել, իսկ մեկ տասնամյակ հետո՝ շատ ավելի կտրուկ աճել, քանի որ Լիբանանի քաղաքացիական կռիվները (1975-1990) և Իրանի իսլամական հեղափոխությունը կտրեցին գոյություն ունեցող հանրությունները:

Իրադարձությունների և հակամարտությունների համակցվածությունը, որն ի բաց է դնում 1965-ից 1988-ը ընկած ժամանակաշրջանը, բնութագրում է այն բազմաշերտ խնդիրը, որին առերեսվում է հայկական սփյուռքն ուսումնասիրող

ղը: Այն ներառում է հայրենիքում ընթացող ներքին փոփոխությունները, սփյուռքում ծավալվող խոսույթային ու հիմնարկային դայքարը, ԽՍՀՄ-ի, Լիբանանի, Իրանի, Թուրքիայի և Միացյալ Նահանգների բազմազգ ղեկավարություններն ու հասարակություններն իրենց յուրահատկություններով և Սառը դատերազմն ու նրա խորքային բաժանարար ազդեցությունը Մերձավոր Արևելքի և Միացյալ Նահանգների հայկական սփյուռքների վրա: Սփյուռքային այս երևույթի մասին խոսելն ու այն վերլուծելը խորադաս բարդ է, քանի որ սփյուռքները ներթափանցում և ներթափանցվում³⁵ են տարբեր ազգային ղեկավարություններով: Այս փոխթափանցումները նյութական իրողություն են. սփյուռքահայերն աղբյուր են ուրիշների հետ և մեջ, իրենց կյանքը ձևավորում են ընդունող երկրի հասարակության, մշակույթի ու ղեկավարության և նախևառաջ տնտեսության հետ առօրյա շփումներում, որոնք երբեք տարանջատված չեն իրենց սեփական տնտեսությունից ու ամենօրյա մտահոգություններից: Հետևաբար, սփյուռքի շատ հիմնարկություններ, հատկապես նրանց մեդիան, անընդհատ հաշվի է առնում, «հյուսում», գաղափարախոսական առումով ազդում և ազդվում է դեղքերից, որոնք տեղի են ունենում տեղական և համաշխարհային մակարդակով և որոնք կարող են ներգործել իրենց՝ հայերի վրա: Կլիշե դարձած արտահայտությունը՝ «Բայց արդյո՞ք դա լավ է հրեայի համար», ունի իր հայերեն համաբանությունը, որը մարմնավորում է հայրենիքում, ընդունող երկրներում և աշխարհով մեկ տեղի ունեցող իրադարձությունները երբեմն կոսմոպոլիտ և խորիմաստ, երբեմն՝ տազնադաս նկատի առնելու հայկական խոսույթի հակումը: Սփյուռքի համարային ոլորտի մեծ մասն այս և նման հարցերին արձագանքում են:

7) 1988-ՄԻՆՉ ԱՅԺՄ. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԸՆՏՐԱՆԱԿԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՅՔԱՐԸ

Խորհրդային Միության և նրա բաղկացուցիչ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության դանդաղ անկումը արագացրեց համաշխարհային ցանցում ազդեցությունները, որոնք արդեն զգալի էին սփյուռքում: Անկմանը հաջորդեց տասնհինգ նոր հանրապետությունների ստեղծումը: Հայաստանի Հանրապետությունը դրանցից մեկն է: Այս փոքրիկ ղեկավարությունը, որի բնակչությունը շատ մոտավոր 3.7 միլիոն էր 1988-ին, ջախջախվեց 1988 թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած երկրաշարժից: Այն խլեց 25.000 մարդկային կյանք և տնամկ թողեց 520.000 մարդու: Հետո այն ավերվեց հայաբնակ Լեռնային Ղարաբաղի անկլավի՝ Ադրբեջանի կազմից դուրս գալու և անկախանալու հետևանքով ծագած չհայտարարված դատերազմից, որին 1988-ից 1994-ի միջակայքում զոհ գնաց 15.000 հայ (և 15.000 ադրբեջանցի) և մոտ 300.000 հայ (և մոտ 650.000 ադրբեջանցի) տնամկ դարձան: Տևական թշվառությունը ստիպել է մոտ 2 միլիոն հայերի արտագաղթել այդքան երկար սղասված անկախությունը ձեռք բերած հայրենիքից (և մոտ մեկ միլիոն ադրբեջանցիների՝ Ադրբեջանից):

Այս իրադարձությունները վերակենդանացրել և մարտահրավեր են նետել

սփյուռքի խոսույթին, բարեգործությանն ու քաղաքականությանը: Ցեղասպանությունից ի վեր աշխարհասփյուռ հայության տեղաբաշխվածությունն աշխարհով մեկ չէր փոխվել այնքան կտրուկ, ինչպես դա արեց արմատաղետ տարբեր ավանդույթներ ունեցող հայրենիքի ու սփյուռքի միջև շփումների աճը: Այդ տարբերությունն ավելի տղավորիչ ձևով ի հայտ եկավ, երբ ԳՅԴ-ն և սփյուռքի ևս երկու փոքրիկ կազմակերպությունները՝ ԶՌԱԿ-ը և Զնչակյան կուսակցությունը «վերադարձան» Չայաստան, որտեղից արտաքսվել էին առաջին անկախ Չայաստանի Գանրադատության (1918-1920) խորհրդայանցումից հետո 1921 թ.: Դիմնադրված լինելով սփյուռքում՝ այս կազմակերպությունները, հատկապես ԳՅԴ-ն, կարողացել են գրասենյակներ հիմնել, սկսել են անդամներ հավաքագրել, թերթեր տղել, ղեկավարողաշտոնների թեկնածուներ առաջադրել (սկզբում մեծամասամբ ամհաջող)՝ մրցակցելով տեղական՝ հետխորհրդային առաջնորդության հետ, որի անդամները կարճ ժամանակում կարողացան շահավետ կերպով մեծաշնորհել ղեկավարող իշխանությունը: Արդյունքը ԳՅԴ-ի հանդեպ կիրառված ղեկավարող բռնությունն էր, մի քանի դեռևս չբացահայտված սղանությունները և ընդհանուր դառնացածությունն ու հիասթափությունը, որը միայն հիմա է մասամբ ուշադրության արժանանում և որը դեռ որոշ ժամանակ կմնա հիմնական խնդիրը,³⁶ քանի որ թե՛ հայրենիքի, թե՛ սփյուռքի առաջնորդությունն ընդունել են, որ անդրազգի տարբեր հատվածները չնայած ժամանակավորապես միացել են ճգնաժամների շնորհիվ, սակայն չեն հետադարձում նույն քաղաքական մղատակներն ու սկզբունքները:

Այս տանջալից փոփոխությունների հետևանքներից մեկը 1990-ի սեպտեմբերին Երևանում տեղի ունեցած համաժողովն էր, երբ սփյուռքի հիսուներկու երկրների 800 ղառավորակներ, որոնց մի մասն ընտրվել, մի մասը ղառավորակվել էր համայնքային ընտրախավերից, միացան Չայաստանի 250 ղառույնյանների՝ փակ ժողովում քննարկելու հայկական անդրազգի աղազան, որի քվազի-ղառույնական ճանաչումը տեղի ունեցավ այս համաժողովում: Չնայած համաժողովը մեծապես տնտեսական ու քաղաքական նշանակություն ուներ, արժե ընդգծել, որ համաժողովին սփյուռքի ներկայացուցիչներից շատերը շարունակում էին մնալ խոսույթ արտադրողները՝ լրագրողները, գիտնականներն ու գրողները:³⁷ Նրանք է, որ հոգևորականների և գործարար-բարեգործների հետ մեկտեղ, որոնք նույնպես մեծաքանակ ներկայություն ունեին համաժողովում, 1784 թ. ի վեր կազմել են սփյուռքի այն ընտրախավերը, որոնք հիմնել են, Ֆինանսավորել, անձնակազմով աղահովել ու ղեկավարել հիմնարկներով հագեցած հայկական սփյուռքը, ուղղորդելով (երբեմն էլ՝ շեղելով) հանրային ոլորտն ու քաղաքացիական հասարակությունը: Այսպես է ձևավորվել սփյուռքի հասարակական կազմավորումը:

4. ՆԵՐԿԱ ԽՈՍՈՒՅԹԸ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս հոդվածի կենտրոնացումը անդրազգի, սփյուռքի համայնքների հիմնարկային առաջնորդության, ազգայնականության, ուժի խոսույթի արտադրության խնդիրների վրա կարող է առաջ բերել սոցիոլոգիական և մարդաբանական գիտելիքներ ունեցող ընթերցողների թերահավատությունը, քանզի նրանք շատ լավ գիտեն, որ սփյուռքներում, ինչդեպ այլուր, առօրյա կյանքը մարդկանց ճնշող մեծամասնության համար ոչ այնքան կազմակերպությունների հանդիմուններին ու ցուցադրություններին ներկա լինելուց է բաղկացած, որքան աղյուստ վաստակելուց, ընտանիք դաստիարակելուց, զվարճանալուց ու համանման բաներից: Սա, իհարկե, ճիշտ է: Ինչդեպ ցանկացած հասարակության մեջ, այնդեպ էլ սփյուռքի յուրաքանչյուր համայնքում բնակչության մեծամասնությունն ամենօրյա ռեժիմով և ուղիղ ներգրավված չէ իր հիմնարկությունների խոսույթային ու քաղաքական կյանքին և ոչ էլ ակտիվորեն զբաղված է մշակույթի արտադրությամբ (եթե սղառումը չի դիտարկվում որդես արտադրության շրջանառության անբակտելի մաս): Բոլոր հասարակությունների ներկայացման ռեժիմների վերաբերյալ հետազոտությունները կարող են կենտրոնանալ ամենօրյա կյանքից ելող և այնտեղից քաղվող իմաստների, առօրյա առարկաների և կենցաղային վարքի վրա: Կամ կարող են կենտրոնանալ ներկայացման հատուկ որակատիկաների վրա՝ սկսած հիշատակման տոներից, ծեսերից, դարերից ու հեռուստատեսությունից մինչև գրականություն և լրագրություն: Կամ էլ՝ կարող են արտացոլվել քաղաքականության հետ կապված ներկայացման այն հատուկ տեսակում, որտեղ երբեմն ընտրված, երբեմն ինքնառաջադրված քչերը, որոնք օժտված են հմտություններով և աչքի են ընկել իրենց ցուցաբերած ծառայություններով, նվիրվածությամբ ու քաղաքական ձեռներեցությամբ, լեզվատիմություն և արտոնյալություն ձեռք բերած դիրքերից ու ամբիոններից հանդես են գալիս շատերի անունից՝ դիմելով թե՛ սփյուռքին, թե՛ հյուրընկալող երկրին: Հայկական սփյուռքի փոքրամասնությունը, որը գերիշխում է հիմնարկություններում ու ներկայացման երկու՝ մշակային ու քաղաքական ռեժիմներում, ավելի մեծաքանակ է և ավելի համձնառու, քան շատ սփյուռքներում (ու շատ ազգերում): Ամենածայրահեղ և հազվադեպ հանդիմող համձնառությունն արտահայտվեց ռազմականացմամբ, որը հանգեցրեց 1975-1983 թթ. ահաբեկչություններին: Սովորական մարդկանց ներգրավվածության հիմնական ձևը յուրաքանչյուր անձի բարձր դաստիարակմանությունն է՝ օժանդակելու սփյուռքային հիմնարկությունների ամոլետական ուժի ամրադրմանը իրենց եկամուտներից ինքնահարկվող և ինքնական աշխատանքի միջոցով: Այս հոդվածի մնացած մասում կանդիդատանման նոր սփյուռքային անդրազգում մշակույթի հիմնարկային և գաղափարախոսական արտադրության մեջ նյութակամի և խոսույթի փոխհյուսվածությանը:

Ժամանակակից հայկական սփյուռքում մշակութային արտադրությունը ծնունդ է տալիս մի շարք մշակութային արտեֆակտների: Դրանք են՝ (1) մանրակրկիտ հոդվածի հիմնարկային և տեսականացված արվեստի սկզբունքներով թե՛ հայերեն,

թե՛ գերիշխող որևէ լեզվով, ասենք՝ անգլերեն, ֆրանսերեն կամ իտալերեն գրված գրական գործեր, որոնց մեծ մասը, բայց ոչ բոլորը արևմտյան կողմ-նորոշմամբ են; (2) ծայրահեղ մշակված ինտելեկտուալ և լայն հրատարակա-խոսական խոսույթ՝ վերջինս հաճախ ուղղված ad hominem և սփյուռքահայ ընտրազանգվածին լայնորեն հասու բոլոր լեզուներով ընթերցվող; (3) հայե-րեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և գնալով աճող իտալերեն, գերմանե-րեն, արաբերեն, թրքերեն և լատիներեն լեզուներով գիտական խոսույթ, որը տարբեր եղանակներով ուղղված է գերիշխող հասարակության գիտական հանրությանը և ընտրախավերին, բայց որը մանկավարժական մոտատակմե-րով ներկայացվում է նաև հայ բնակչությանը; (4) լատիներենի արտադրու-թյուն լուսանկարչության, գեղանկարչության, եկեղեցու լատիներագրման և տեսագրությունների ու ֆիլմերի մեջ, որոնց մեծ մասը հաճախ կրոնական և հատկապես ազգային թեմաներով են, խորհրդադասարկեր (iconic images) և մոտիվներ: Աճում է թիվը այն արտադրողների, որոնք միջազգային լսարան (ընթերցող, ունկնդիր և ակնդիր) են ձգտում և որոնք թեթև հոլոմներով գոր-ծածում են կամ էթնիկը, կամ ազգայինը՝ իբրև միջազգային գեղարվեստի³⁸ արժանի նյութ՝ մրցակցելով և դուրս թողնելով նրանց, ովքեր տեղ են տալիս վերը նշված ազգային բառադաշարին կամ շարժվում են դեմի վերացակա-նություն և ոչ հայկական կերպեր՝ հաճախ հղելով ավելի շատ հայրենիքին, քան սփյուռքի հայկականությանն իբրև նշան; (5) հայերեն կամ հայերենով ներ-ծծված երաժշտության ստեղծում ու ներկայացում, որտեղ խոսքը, մեղեդին և հայրենիքից ու հին սփյուռքային ավանդություններից քաղված գործիքները միավորված են ֆրանսիական կաբարեի երգերից մինչև ջազ ու ռոք ներառող ոճերին և ռուսերեն ու միջինարևելյան դարձվածքներին, որոնք միայն մասնա-գետները կարող են ճշգրտությամբ արտաբերել:

Ի հավելումն մշակութային արտադրության այս գերակշռող ձևերին, որոնք շատ սղառողներ ունեն, կան և ուրիշները՝ սկսած ժողովրդական լատիներ մինչև թվային տեխնոլոգիաներ, որոնք տարբեր համայնքներում դարձյալ կամ մնա-ցորդային են, կամ մոր առաջ եկող: Միացյալ Նահանգներում, բայց նաև համ-աշխարհային մասշտաբով մեծ կարևորություն է ձեռք բերել ամենամեծ հայ-կական անգլիալեզու վեբկայք-համացանցային ցուցակը, Groong@usc.edu-ն՝ իբրև տեղեկատվության և տեղեկացված կարծիք ձևավորող աղբյուր: Միայն 2000 թվականի սեպտեմբերին այն ուներ 2300 բաժանորդ քառասունչորս երկր-ներից (սփյուռքի քառասունչորս համայնքներից, որոնցից շատերը մի քանի հա-րյուր անդամ ունեն, չհաշված սփյուռքի հիմնարկությունները և Յայաստանը), որոնք էլեկտրոնային փոստով ստանում են Կոունկի գրառումներն ավտոմատ կերպով: Նշված ամսին, քաղաքական մոտություններից սկսած (ճնշող մեծա-մասնությունը) մինչև հայ դրոֆեսորների՝ Լոս Անջելեսից Բեյրութ տված դա-սախոսությունների ամփոփումները և հայ գրաքննադատական երկու փորձա-գրությունները, 1119 անհատական գրառում է արվել: Կարդացվել է 202.000 միա-վոր էջ (սա չի ներառում էլեկտրոնային մամակ ստացողներին, այլ միայն նրանց, ովքեր մուտք են գործել վեբկայք. այս հաշվարկում մեկ հոդված/գրա-

րում կարդալը մեկ միավոր է հաշվվում):³⁹ Կայքում չի խրախուսվում բացահայտ քաղաքական գաղափարախոսություն, բայց այն այնուամենայնիվ նկատելի է որոշ գրառումներում: Օրինակ՝ Լիբանանի վերջին ընտրություններում սփյուռքահայ իշխող կուսակցության՝ ՀՅԴ-ի երկարամյա գործունեության ընթացքում առաջին անգամ կրած թարտությունը քննարկող հոդվածները տեղեկատվական են, բայց դրանք թարունակում են վերլուծություններ, որոնք անկողմնակալ համարելը դժվար է:

Ես ելնում եմ նրանից, որ խոսույթի արտադրությունն ընդգրկում է ոչ միայն բարձր մշակույթը, այլև աշխույժ բանավեճերի հոետորական կերպերը, որոնք բնութագրական են հայկական սփյուռքին և նրա արտասովոր մեծաքանակ թերթերին: Նույն կերպ՝ այն ներառում է ոչ միայն Արշիլ Գորկու նկարչությունը կամ Ատոմ Էգոյանի ֆիլմերը, որոնք երկուսն էլ հայկական ծագումով և սփյուռքի գիտակցությամբ մշակույթ արտադրողներ են, այլ նաև՝ կորուսյալ հայրենիքում մնացած Արարատ լեռան կարծրատիղային մոստալգիկ լուսանկարները, որոնք զարդարում են հայկական բնակարաններն ու ռեստորանները և հանդես են գալիս իբրև էթնոսփյուռքային ինքնության ցուցիչներ այնպես, ինչպես Պանթեոնը հունական ինքնության համար: Կարծրատիղն ու բանավեճը հատկանշում են հայկական ներկայացման ռեժիմները սփյուռքում և սնվում են հայկական հիմնարկությունների հետ նրանց փոխադարձ դաշինքից, ներառյալ նրանք, որոնք ունեն բացահայտ քաղաքական, հաճախ՝ ազգայնական մոտատակներ:

Այնուհետև հասում, բայց մինչև մյուս ժամանակ անընդհատ փոփոխվող սփյուռքում, ինչդիպին հայկականն է, քաղաքականությունը տարաբնույթ է: Հազվադեպ է դատահում, որ այն ներառի ուժի և հարկադրամքի բանեցումը, մի բան, որը սովորական դայնամներում դետական իշխանության սահմաններում է: Վերջին տասնամյակներում հայկական սփյուռքի ամենակարևոր համայնքներից Լիբանանում, մասնավորաբար՝ ՀՅԴ և Հնչակյան կուսակցությունները, նախևառաջ համայնքը դաշտդանելու մոտատակով օժանդակել են կազմակերպված հայկական աշխարհագրայինների ստեղծմանը այն ժամանակներում, երբ դետությունը թույլ էր և քաղաքացիական դատերազմները (առաջինը՝ 1958-ին, երկրորդը, շատ ավելի կործանարար, 1975-1990 թթ.) ավերում էին երկիրը, բայց դրանով իսկ ավելի են ուժգնացրել զինված բախումների հակումը, որոնցում երբեմն հայերը սղանում էին այլ հայերի: Ոչ բուն դետական քաղաքականությունների ոլորտում, որն ամեն դետքում ներառում է նաև ուժի կիրառում, հայերին օրենքով թույլատրված է որոշ թվով անդամներ ունենալ Լիբանանի և Իրանի խորհրդարաններում: Մինչև վերջերս անդրազգային քաղաքական կազմակերպությունները, ինչդիպին ՀՅԴ-ն է, գլխավորում էր այս ընտրությունները՝ հաղթելով հազվադեպ հանդես եկող անկախ հայ թեկնածուներին: Սա սկսում է փոխվել աստիճանաբար հօգուտ անկախների ու ավելի փոքր քաղաքական խմբավորումների: Վերջին ավելի քան վաթսուներորդիներին Լիբանանի կառավարությունում եղել են լիբանանահայ նախարարներ, իսկ Ֆրանսահայ և ամերիկահայ քաղաքական գործիչներն ու ամերիկացիները, որոնք անտարբեր չեն հայկական սփյուռքի շա-

հագրագոյությունների հանդէտ, ընտրվել են սփյուռքի հիմնարկությունների ֆինանսական և ընտրարշավին ցուցաբերած օժանդակության շնորհիվ:⁴⁰ Այսօրինակ օժանդակությունը հանգեցրեց սփյուռքի քաղաքական կազմակերպությունների, ամենից առաջ ԶՅԴ-ի, անկախ Հայաստանում իբրև նշանակալի քաղաքական դերակատարներ հանդէս գալուն: Ավելին, այս կազմակերպությունների մասնակի հաջողությունները հայրենիքում սկսեց փոփոխություններ առաջ բերել անձնակազմերում և քաղաքականություններում, քանի որ սփյուռքի կազմակերպությունները փորձում էին հավասարակշռել անդրազգային հանրության համձնառություններն ու շահերը հայրենիքում, Ղարաբաղում և սփյուռքի համայնքներում, որոնք մեծադեպ տարբեր են բնակչությանը, տնտեսական ռեսուրսներով, մշակութային հեղինակությամբ և տեղական շահերով: Հազվագյուտ ամերիկյան ազգային կամ սփյուռքային կազմակերպություններ են բախվում բարդության այս մակարդակին:⁴¹

Հայկական սփյուռքի քաղաքականությունը հաճախ ուղղված է կարգավիճակների շնորհելուն, մարդկանց համոզելուն՝ միանալու համայնքային հիմնարկություններին, ինչդեպ նաև մարտական կադրերի և լայն իրաւորների շրջանում գիտակցություն, համձնառություն և հավատարմություն ձևավորելուն: Այսօրինակ աջակցությունը կամ համձնառությունը հիմնականում արտահայտվում է ժամանակի, աշխատանքի ու փողի կամավոր մվիրաբերությամբ: Նման գործողությունները հազվադեպ են ներառում սփյուռքային ճնշիչ մեխանիզմներ, բայց միշտ և գերազանցադեպ կիրառում են սփյուռքի գաղափարախոսական աղաբառը:⁴² Բանավեճներն ու բախումները կարող են ներառել ամբողջովին տեղական և ազգային մակարդակով ընդունված խնդիրներ, ինչդեպ օրինակ՝ կոնկրետ քաղաքում եկեղեցու կամ հայկական դպրոցի խորհրդի վերահսկողությունը: Բայց դրանք կարող են նաև վերաբերել խոշոր անդրազգային կազմակերպությունները ղեկավարելու իրավունքի համար լայնաբեր: Դրանցից ամենախոշորի հիմնադրամը գերազանցում է 300 միլիոն դոլարի մվիրաբերությունը (դա ԶԲԸՄ-ն է, որը ղեկավարում է կին բարերար): Սրա համեմատ մյուսները շատ փոքր են և սովորաբար ունեն 1-10 միլիոն դոլարի կարգի ֆոնդեր, բայց դրանցից առնվազն մեկը՝ մոտ 7000 համձնառու անդամ ունի և որոշ երկրներում տեղական ընտրություններին քվեարկելու համար կարող է բազմիցս հավաքագրել այդ քանակի կողմնակիցներ: Մյուսները փոքրիկ անկախ կազմակերպություններ են, որոնք ակտիվ են անդրազգի տարբեր բնագավառներում: Դրանց ազդեցությունը կարելի է զգալ յուրահատուկ ու տարասեռ ոլորտներում, և դրանք կարող են ներառել, օրինակ՝ սփյուռքի առանձին համայնքներում դպրոցների ու հրատարակությունների սուբվենցիաները, կանանց ու երեխաների առողջապահական ֆոնդերը՝ ներառյալ լատվաստումները հետխորհրդային Հայաստանում, որտեղ փլուզման եզրին էր առողջապահության ենթակառուցվածքը, Հայաստանում այն արվեստագետներին հատկացվող սուբվենցիաները, որոնք աղքատացել էին խորհրդային ժամանակի փլուզումից հետո, քանի որ ժողովրդական աշխատավարձ էին ստանում, և ի վերջո ջրատարների կամ ճանապարհների կառուցումը, որոնք թե՛ տնտեսական և թե՛ ռազմական նշանակություն

ուճեմ մի տարածքում, որը մի քանի հազար մղոն հեռու է աշակցություն ցուցաբերող սփյուռքի համայնքներից: Խոսքը Ղարաբաղի մասին է, տայքարող այն մարզի, որը ոչ սփյուռք է, ոչ էլ Հայաստան, բայց անդրազգի մաս է նկատվում (տե՛ս 103-104 էջի քննարկումը և 4-րդ ծանոթագրությունը):

Ինչդեռ ծառայությունների այս շրջանակն է ցույց տալիս, սփյուռքահայ հիմնարկությունները զբաղված են ինչդեռ մշակութային, այնդեռ էլ քաղաքական գործերով: Սփյուռքի որոշ հիմնարկություններ իշխանություն ունեն նեղ քաղաքական իմաստով. նրանք ազդում են հյուրընկալող ազգի իրադարձությունների վրա և գերիշխում համայնքային գլխավոր հիմնարկություններում: Վերածնակերդեղ Ֆուկոյին կարող ենք ասել, որ նրանք ունեն թե՛ արտադրող, թե՛ արգելակիչ ուժ: Շատերն արտադրող ուժ ունեն այն իմաստով, որ ներգրավված են սոցիալական ծառայությունների ընդլայնման մեջ՝ մի կողմից, և իմաստի ու ինքնության դիսկուրսիվ արտադրության մեջ՝ մյուս կողմից: Քաղաքական ու ոչ քաղաքականը տարանջատելու հարցը միշտ էլ բարդ հարց է առաջադեմ հասարակություններում՝ լինեն դրանք սփյուռքային, թե՛ ազգային: Արդյո՞ք քաղաքականությունը Միացյալ Նահանգներում իրական է, երբ վերաբերում է, ասենք, նախագահական ընտրություններին, և ոչ կամ քիչ իրական, երբ վերաբերում է, օրինակ, լյութերական համայնքային հիվանդանոցի կամ տեղական դպրոցի խորհուրդների ընտրությանը: «Սևամորթների տատանության ամիսը» արդյո՞ք բացառապես մշակութային, թե՞ նաև քաղաքական հիշատակման միջոցառում է:

Հայկական սփյուռքի միայն մի քանի հիմնական կազմակերպություններ են հետևողականորեն աշխատում մեկ աստիճանով: Ամերիկայի հայկական համագումարը և Ամերիկայի հայ դատի հանձնախումբը՝ հաջողություն ձեռք բերած հայ-ամերիկյան երկու լրբիստական կազմակերպությունները Վաշինգտոնում, ամենօրյա ռեժիմով չեն գործակցում մշակույթ արտադրողների հետ, բացառությամբ այն եզակի դեմքերի, երբ ներգրավում են Ֆոնդահայթայթոդների, ինչդեռ օրինակ վերևում հիշատակված System of a Down խմբի համերգը: Լոբբիստական այս կազմակերպությունները մասնագիտացած, հենց ԱՄՆ կազմակերպություններ են, որոնք իրենց համակիրների շահերն են ներկայացնում: Մյուս կողմից՝ ամենամեծ և երկրորդ ամենահին քաղաքական կազմակերպությունը սփյուռքում՝ ՀՀԴ-ն, ունի մասնաճյուղեր, որոնք աշխատում են սփյուռքի առօրյա կյանքի բազմաթիվ ոլորտներում,⁴³ և նրա առաջնորդների շարքերը սովորաբար համալրված են բազմաթիվ մտավորականներով: Սփյուռքահայ հայտնի բանաստեղծ Վահե Օշականը (1922-2000) ՀՀԴ անդամ էր և սյունակազիր նրա թերթերում: Բյուրոյի մի քանի նախկին և մեկ ներկայիս անդամ նույնպես արվեստի գործիչներ են, իսկ շատերը՝ կազմակերպության միջոցներով ֆինանսավորվող թերթերի խմբագիրներ (ներառյալ Միացյալ Նահանգներում իրատարակվող միակ հայալեզու օրաթերթը): Այն դեմքերում նույնիսկ, երբ մշակույթը հիմնականում դիտվում է որդես գվարձանքի և տեղեկատվության աղբյուր, մշակույթի ու քաղաքականության փոխներթափանցման օրինակների ժակաս այդ շրջանակում չկա: Լուս Անջելեսում մալուխային հեռարձակմամբ հայկական հե-

ուստապլիքի արտոնության համար շարունակական դայքար է մղվում. մի քանի հարյուր հազարի հասնող համայնքին (որը թե՛ քաղաքական ընտրազանգված է և թե՛ տնտեսական շուկա) դիմելու իրավունքը չի կարող գտնվել բացառապես տնտեսական կամ զանգվածային մշակույթի ոլորտներում: Այդ իրավունքը/արտոնագիրը քաղաքականացվեց, երբ քաղաքական խոշոր կազմակերպությունը հաջողված փորձ կատարեց վերահսկել այն: Ամերիկյան օրենսդրության համաձայն քաղաքական խմբի՝ համայնք մուտք գործելու ռեժիմի այս գերիշխանությունը *անօրինական չէ*, քանի որ կազմակերպությունը, որը շահում է վերահսկողությունը, քաղաքական չէ միայն, այլ նաև ակնհայտորեն ներգրավված է թերթերում, ամսագրերում, ռադիոյում և հեռուստատեսությունում *մշակութային* արտադրությունը աջակցելու գործի մեջ:⁴⁴

Այն հյուրընկալող ղեկավարներում, որտեղ սփյուռքահայ քաղաքական գործունեության ցանկացած տեսակ արգելված է ու դատվում է բանտարկությանը կամ շատ ավելի խիստ եղանակներով, ինչդեպ ասենք՝ Թուրքիայում, սփյուռքային կյանքը հիմնականում ձեռք է բերում կրոնական բնույթ, բայց շարունակում է խորապես կառված մնալ լեզվին, խոսույթին ու մշակույթին: Ընթացիկ օրինակներ տալու համար՝ Իստամբուլում 55.000 հայ աջակցում է երկու հայերեն օրաթերթի (յուրաքանչյուրը 2.000 տղաքանակ շրջանառությամբ) և 7.000 տղաքանակ շրջանառությամբ հայերեն ու թրքերեն երկլեզու առաջին շաբաթաթերթին: Նույնչափ բնակչությամբ ամերիկյան մի քանի փոքրիկ քաղաքներ ի գորու են դասել ոչ ավել, քան մեկ շաբաթաթերթ: Ավելի մեծ համայնքներում, ինչդեպ են Փարիզը, Բեյրութը, Լոս Անջելեսը, Մոնրեալը և Տորոնտոն (կամ անցյալում՝ Կահիրեն և Չալեդը), բազմաթիվ օրաթերթերի, շաբաթաթերթերի և դարբերականների հրատարակությամբ աղահովվում են մտավորական աշխույժ բանավեճեր, որտեղ միևնույն ժամանակ որդես թերթն հրատարակվել են հայկական ամենակարևոր վեղերից մի քանիսը, ինչդեպ նաև սփյուռքի բանաստեղծության մեծ մասը: Այս թերթերի գոյությունը կախված է ոչ միայն բաժանորդներից և վճարովի հայտարարություններից, այլ նաև սուբվենցիաներից, որոնք մեծամասամբ գալիս են հավատարիմ և հիմնականում ազգայնական հետևորդներ ունեցող կազմակերպություններից:

Հայերի երկարատև դատմությունը հայրենիքում և սփյուռքում այնքան անմխթար է եղել, որ խմբի ինքնության վերարտադրությունը դադարել է դարձադառնա առօրյա կյանքի բնական խնդիր լինելուց: Որոշ դեղքերում ոչնչացման ազդակներին տոկալու և գոյատևելու, այլ դեղքերում՝ ծուլման վտանգին դիմակայելու փաստն ինքնին քաղաքականացված մշակույթի խորհրդանիշ է դարձել 19-րդ դարից ի վեր: Միայն վերջին երկու տասնամյակում է, որ երևան է եկել հայկական ինքնության մի ըմբռնում, որը տարբերվում է եղածից առանց ճակատային հակադրության և ուղղագիծ քաղաքականացվածության: Դեռևս սաղմնային այդ ըմբռնումը, որը դարձյալ գիտնականների ու մշակութային գործիչների հայտնագործությունն է, զգալի դիմադրության է հանդիմում ավանդական առաջնորդներից շատերի կողմից:

Այս հողվածի տրամադրած հնարավորությունների սահմաններում հնարավոր չէր համադարձակ վերլուծություն ներկայացնել սփյուռքահայ քաղաքացիական հասարակությանն ուղղություն տալու ղայքարում ներգրավված նյութական ռեսուրսների, դրանց քանակության և ինտենսիվության մասին: Բայց կասկածից վեր է, որ նրա գեղարվեստական և մտավորական արտադրությունը կախված է նրա քաղաքացիական հասարակության հիմնարկություններից և ընտրախավերից, խմբերից և անհատներից, որոնք ունեն ինչդես բարեգործական, այնդես էլ քաղաքական անկեղծ դրդադատաճաններ, և որոնք մեծ ռեսուրսներ են ներդնում, որդեսզի ստեղծեն տարածքներ, որտեղ տղագրվում ու ներկայանում են մշակույթ արտադրողները, բայց նաև դղորցներ, որտեղ մշակույթ արտադրողները և օրգանական մտավորականները գործելով հոգում են իրենց արղուստը:

Ներկայումս նոր և լայնորեն տարածվող բարեկեցության հետ մեկտեղ աճում է նաև երկու կամ բազմակի մշակույթային կարողունակություն, ինչդես նաև հիբրիդային ինքնություն ունեցող անհատների թիվը: Սա նղաստել է մշակույթ արտադրողների նոր դասի ձևավորմանը, որն անկախություն է ձեռք բերել համայնքային հիմնարկություններից (և դրանով իսկ նոր, տարբեր կախվածության հարաբերությունների մեջ է մտել մշակույթային արտադրության գործակալների և տարածողների հետ, որոնք փոխարինել են հայկական կազմակերղությունների՝ մեծ ֆորումների և շուկաների մուտքն արղահովելու առումով): Ինչդես կարելի էր կանխատեսել, հիմնարկությունների՝ անցյալում նախընտրած և առաջաղրված մշակույթային նորմերից շեղումը նույնդես աճում է: Իրականում, հայկական հիմնարկություններն իրենք էլ ներքինից երկձեղքված են և անորոշության մեջ են գտնվում՝ շարունակե՞ն արղյոք հետամուտ լինել ավանղական նորմերին, թե՞ խրախուսեն այն խոսույթների, արվեստային դրակտիկաների ու զվարձությունների տարածումը, որոնք դեն են նետում այղ նորմերը՝ այղղիստղ որոշակի ազղեցություն ձեռք բերելով հայկական ինքնության ու սփյուռքի մշակույթը կամրջող խոսույթի շղջանակներում:

Հայաստանի Հանրաղետության՝ Խորիղղային Միության տիրաղետությունից անկախանալը խթանել է ղայքարն այն հարցի շղջը, թե անղրագգային և սփյուռքային ինքնության ինչ նոր ձևեր են ստեղծվելու և ող է լինելու դրանց ստեղծողը: Մինչ հետխորիղղային որոշ արվեստագետներ, որոնք ձևավորվել էին խորիղղային տարիներին՝ թաքնված ազգայնականության և համաշխարղային արևմտյան գեղագղիտական նորմերից ոգեշնչվող տարօրինակ հանգուցակետում շարունակում են կառչած մնաղ ազգային երևակայության ձևերին, որոնք ըմբռնելի են սփյուռքահայ սղաողների մեծ մասին, շատ ուրիշներ գբաղված են խառնուրղ ձևերի արտաղղությամբ, ներաղյաղ, օրինակ՝ ռուսական քաղաքային աշխատավոր դասակարղի երաժշտական ձևերի հետ խաչաձևված հայկական բաղլաղները, որոնք ծանոթ չեն ոչ Արևնուտքին և ոչ էլ արևմտյան հայկական սփյուռքներին: Նման նորամուծղությունները դատարղարտվում են սփյուռքի շատ ֆորումներում, բայց դրանք աճող ժղղվղղականություն են ձեռք բերում այն լա-

րաններում, որոնք նախկինում գերված էին մշակույթ արտադրող սփյուռքի հիմնարկություններից: Ոչ հիմնարկային մի քանի մոր գործիչներ հույս են ներշնչում սփյուռքի մոր ի հայտ եկող նորարարական մշակույթի, որը սակայն շուտ չի փոխարինի հինը և դեռ կարող է յուրացվել կամ ներառնվել սփյուռքի քաղաքացիական հասարակության հիմնարկությունների կողմից: Հայաստանի անկախացումից և սփյուռքի մոր անդրազգի ձևավորումից ի վեր այս հիմնարկությունները ստիպված են եղել անցնել բազմաթիվ կազմավորիչ լարումների միջով, բայց հայկական համայնքային, սփյուռքային ու անդրազգային հիմնարկությունների և վերնախավերի երկար ղատմությունը, որը որքան համառ է, նույնքան էլ ձկուն, հուշում է, որ մրանք կշարունակեն ղահողանվել՝ մոր կողմնակիցներ ձեռք բերելով հայրենիքում ու Ղարաբաղում, և կհետամտեն հայկական անդրազգի իրենց տեսլականն ու ծրագիրը ամրադնդելու քաղաքականությունը:

- 1 Հողվածն առաջին անգամ հրատարակվել է *Diaspora* ամսագրում, հ. 9, թիվ 1 (2000), էջ 107-136: Թարգմանությունը համալրված է այս հրատարակության համար արված հեղինակային ծանոթագրություններով (ծնթ. թրգմ.):
- 2 Շնորհակալ եմ դրո՛ճեսուր էլեն Ռունիին Բրաուն համլասարանից այս աշխատանքի երկու նախնական տարբերակները կարդալու և դրո՛ճեսուրներ Իմա Բադոյանց-Սքբեյքին Թաֆթց համալսարանից ու Արա Սանճեանին Բեյրութի Հայկազյան համալսարանից տեղեկությունների համար:
- 3 Այս երեքը համարժեք չեն, և մի ուրիշ հողվածով կտարբերակեն դրանք ըստ իրենց ընդգրկման, օրակարգի, գործունեության դաշտի, անդամների վրա բանեցրած հրամանների տեսակների և տրամադրած ղարգևների: Քանի որ սույն հողվածում խնդրո՛ւ առարկա է հայկական սփյուռքի «հիմնարկային հագեցվածությունը», ես «կազմակերպության» ու «միության» փոխարեն կգործածեմ «հիմնարկությունը»:
- 4 «Էթնիկ» ու «սփյուռքային» միջև տարբերությունը շատ կարևոր է, թեև սովորաբար մերժվում է ժամանակակից գիտական համայնքի կողմից: Ամտեսվում են նաև դրանց առնչվող այլ տարբերակումներ՝ այս երկու հասկացությունների և աքսորի, արտագաղթի, փոքրամասնության, միգրացիայի միջև: Եզրույթներին և սահմանումներին վերաբերող հարցերը ես քննարկել եմ այլ տեղում (Khachig Tölölyan, «Rethinking Diaspora: Stateless Power in the Transnational Moment» *Diaspora Journal of Transnational Studies*, հ. 5, թիվ 1 (1996), էջ 3-36, մասնավորապես էջ 16–19): Չափազանց ազատ իմաստով, ըստ որի «սփյուռք» նշանակում է «բոլոր մարդիկ, ովքեր ցրվել են ինչ-ինչ ղատածաններով և աղբյուր են իրենց նախնիների երկրից դուրս», էթնիկ խմբերը սփյուռքներում հանդես են գալիս որդես ենթախմբեր: Բայց սոցիոլոգիական ճշգրիտ իմաստով տվյալ համայնքը (ասենք, կուբացի ամերիկացիները կամ ամերիկահայերը) բաղկացած են հատվածներից. կան ծուլվածներ, որոնց հաշվում են միայն համայնքի թվաքանակը ուռճացնելու նդատակով, իբրև սփոփանք: Կան էթնիկներ, որոնք ղահողանում են ցուցադրական, կայուն և խորհրդանշական կաղեր մեկ կամ ավել համայնքային հիմնարկությունների և ինքնությունների հետ: Եվ կան սփյուռքի անդամներ բաղիս խիստ իմաստով, որոնք հետևողական ջանքեր են գործադրում կազմակերպված ու նաև հիմնարկային կաղեր հատատել սփյուռքի այլ համայնքների ու հայրենիքի միջև, երբ դա հնարավոր է:
- 5 «Անդրազգը» «սփյուռքի» հոմանիշը չէ: Առաջինը ներառում է սփյուռքի բոլոր համայնքներն ու հայրենիքը, որը չի ղատկերացվում իբրև ղետության վրա կենտրոնացած ազգ, բայց որդես անդրազգ, որն ընդունում է թե՛ իր հարատև ցրումը և թե՛ փոխկաղակցվածության կարևորությունը: Այդու՝ սփյուռքի, Հայաստանի Հանրաղետության և Լեոնային Ղարաբաղի բնակչությունը, որի անունն ու կարգավիճակը վիճելի են մնում, քանի որ Աղրբեջանի՝ հայկական ժառանգություն ունեցող այս անկավը ղայքարում է Աղրբեջանի կազմից դուրս գալու համար, միասին համարվում են հայկական անդրազգ: Ավերիլը համենատելի կերղով գործածում է այդ հասկացությունը, բնորոշելու համար Հայիթիի ժողովուրդն ու նշակույթը հայրենիքում և սփյուռքում, տե՛ս Gage Averill, «Mezanmi, Kouman Nou Ye? My Friends, How Are You? Musical Constructions in the Haitian Transnation», *Diaspora*, հ. 3, թիվ 3 (1994), էջ 253-27:
- 6 Գործնականում չկան հայկական սփյուռքի ներհամայնքային բնության մասին հրատարակված անգլերեն հետազոտություններ. Շահգալդեանն (Nikola B. Shahgaldian, *The Political Integration of an Immigrant Community into a Composite Society: The Armenians in Lebanon, 1920-1974*, չիրատարակված ղոկտորական

աշխատանք (Columbia University, 1979)) ու Սանձեանը *Լոր Յառաջ* թերթի «Տեսակցություն Փրոֆ. Արա Սանձեանի հետ» «Սփյուռքի հայ քաղաքական կուսակցությունները (1921-1988)» թեմային շուրջ մասնավոր բացառություն են: Սփյուռքում ծնունդ առած և թուրք դաշտոնյաների դեմ ուղղված հայկական ահաբեկչությունը նաև մշակույթում և քաղաքականությունը ներառող բարդ երևույթ է, որը մանրամասնորեն հետազոտված է, տես՝ Khachig Tölölyan, «Exile Governments in the Armenian Polity», *Governments in Exile in Contemporary World Politics*, Yossi Shain (խմբ.) (NY: Routledge 1990/1), էջ 166-187; Khachig Tölölyan, «Cultural Narrative and the Motivation of the Terrorist», *Journal of Strategic Studies*, հ. 10. թիվ 4 (1987), էջ 217-233; Khachig Tölölyan, «Terrorism in Modern Armenian Political Culture», *Political Parties and Terrorist Groups*, Leonard Weinberg (խմբ.) (London: Frank Cass, 1992), էջ 8-21:

⁷ Այս հոդվածի առաջին տարբերակը գրել են նախքան Փնինա Վերբների «Սփյուռքի քաղաքական դատկերացումները» աշխատանքը կարդալը, որտեղ նա գործածում է «սփյուռքի հանրային ոլորտ» հասկացությունը՝ հղելով բրիտանական դակիստանյան մուսուլմաններին: Վերջինս սահմանում է այն որդես «տարածք, որտեղ տարբեր անդրազգային երևակայություններ մեկնաբանվում ու վիճում են, որտեղ ձևակերպվում են սփյուռքի գեղարվեստական և բարոյախոսական դատմությունները և գեներացվում է քաղաքական գործխմբումը», Prina Werbner, «Diasporic Political Imaginaries: a Spehere of Freedom or a Sphere of Illusion?», *Communal/Plural*, հ. 6, թիվ 1 (1998), էջ 11: Սա հենց այն է, ինչը որոշ չափով գործում է վաղեմի ու խստորեն հիմնարկայնացված հայկական սփյուռքի հանրային ոլորտում: Ավելի մանրամասն տես՝ «Վտարանդի կառավարությունները հայկական քաղաքական միջավայրում», որտեղ ես տարբերակում եմ ավանդական *աքսորական* կառավարությունը սփյուռքային հայկական *աքսորի* կառավարությունից, որի մեջ հիմնարկային դրակտիկաներն ու խոսույթները կառուցում են խորը կերտով սահմանագատված, բայց գործուն հանրային ոլորտ:

⁸ Եվ մեծադես նահապետական, թեմետ դարադոքսալ ձևերով: Հայտնի շատ հայ կանայք աշխատում են ինչոհես մշակութային արտադրության մեջ (որդես լրագրողներ, արվեստագետներ ու գիտնականներ), այնդես էլ շատագովական և բարեգործական կազմակերպություններում (վերջիններից շատերը առանձնահատուկ կերտով սահմանվում են որդես կանանց խմբեր, իսկ դրանցից երեքը առաջնորդում են կանայք): Այնուամենայնիվ, անդրազգը, ինչոհես ազգը, իր սեռային տարբերությունները համախմբում է մի ամբողջականության մեջ, որի մշանը արական է: Տղանարդիկ և կանայք տարբեր կերտ են փորձառում, արտահայտում ու կրում սփյուռքայնության բերը: Այդ տարբերությունների ջնջումը հիմնական դրակտիկա է, բացառությամբ արվեստի:

⁹ «Տեղայնացում» ասելով ես նկատի ունեն սփյուռքի որոշ անհատների ու խմբերի եմդատիկ նախադատվությունը բնակություն հաստատել այն վայրերում, որտեղ կարող են լինել ազգակիցների և հայրենակիցների կողքին, որտեղ կարող են նկատելի փոքրամասնություն կամ մեծամասնություն լինել, որտեղ բնակչությունն այն հիմքն է, որն ադահովում է կրոնական հիմնարկությունների, դորոցների, խանութների և ռեստորանների, ակումբների և ծերանոցների գործունեությունը, որտեղ աշխարհագրական, բայց հատկադես մշակութային սահմանները կարող են հաստատվել և խորհրդանշականորեն դահդանվել, և որտեղ, երբեմն, կարելի է ստեղծել ընտրական և լրբիստական քաղաքականության ուծային բազա: Բոլոր այս միտումները գոյակցում են հավասարադես, կամ ավելի ուծեղ կերտով գետտոյից կամ հարևանությունից դեղի արվարձաններ ցրվելու, բարձրանալու և դուրս

գալու հակվածության հետ: Ինչդեռ ցույց են տվել իմ մի գրության մեջ (տե՛ս Khachig Tölölyan, «The American Model of Diasporic Discourse», *Diasporas and Ethnic Migrants*, Rainer Münz, Rainer Ohliger (խմբ.) (Oxford, U.K. Frank Cass, 2003), էջ 56-73), սփյուռքային շարժումության տրամաբանությունը հասկացվել, ընդունվել ու նույնիսկ ողջունվել է, այնինչ նստակեցության, տեղայնացման տրամաբանությունը, որը հավասար է համառ վերատարածականացմանը և որը ազգի ու սահմանների որոշակի դատկերացումներ է հարուցում, չի ընդունվում նույն ոգևորությամբ (տե՛ս մնամադես՝ Henry Goldschmidt, «Crown Heights is the Center of the World: Reterritorializing a Jewish Diaspora», *Diaspora*, հ. 9, թիվ 1 (2000), էջ 83-106): «Տեղականը» որդես համաշխարհայինին դիմադրություն ողջունվում է, «տեղականը»՝ որդես տեղայնացված անկլավին միախառնվելու և ծուլման քվազիազգայնական մերժում չի ողջունվում: Ուիլիամ Սաֆրանը գրել է նաև այն ուղիների մասին, որոնցով բազմամշակութայնության լիբերալ քննադատությունը ենթադրում է, որ սփյուռքային տեղայնացումը մեղանշում է անհատի, հատկապես երեխաների իրավունքների դեմ, «այնքանով, որքանով, որ [անկլավը համձն է առել] նախադատության երեխաներին ոչ ավելի լավ բանի, քան մեծամասնության մշակույթի մեջ ընկղմվելուն և անհատի՝ գնալով աճող շարժումությունը խոչընդոտելուն»:

- ¹⁰ Տե՛ս Khachig Tölölyan, «Rethinking *Diaspora(s)*: Stateless Power in the Transnational Moment», *Diaspora*, հ. 5, թիվ 1 (1996):
- ¹¹ Raymond Williams, «Dominant, Residual and Emergent», գլուխ 8, *Marxism and Literature* (Oxford University Press, 1977), էջ 121-127:
- ¹² Տե՛ս ծանոթ. 4, «Rethinking *Diaspora(s)*: Stateless Power in the Transnational Moment»:
- ¹³ Ամսահման տարբեր է, թե ինչդեռ է իրականանում տեղական գործունեությունը: Այսպես, ամդանակցությունը աշխարհիկ կառույցներին, որոնք հոգևորականության հետ կողք կողքի են գործում (և ունեն շրջափելի ազդեցություն), միշտ սկսում է ծխական մակարդակից, բայց ընդլայնվում է և ի վերջո կարող է ծխական դատվիրակներին ուղարկել ազգային ու համերկրային համաժողով՝ բարձրագույն մակարդակով հնարավոր դարձնելով եղիսկորոսների ընտրությունն ու եկեղեցու աշխատանքներին մասնակցությունը: Կան մի քանի կազմակերպություններ, ինչդեռ ասենք՝ Ամերիկայի հայկական համագումարը, որին ամդանակցությունը հաճախ տեղական չէ և բաղկացած է Վաշինգտոնում տեղակայված լոբբիստական կազմակերպության ֆինանսական ներդրումներից: Սա փոփոխվող է, քանի որ Չամագումարը սկսել է գիտակցիլ ստորին օղակներում երիտասարդների հավաքագրման ակնհայտ կարևորությունը:
- ¹⁴ Տե՛ս Khachig Tölölyan, «Exile Governments in the Armenian Polity»:
- ¹⁵ James Clifford, *Routes: Travel and Translation in the Late Twentieth Century* (Harvard University Press, 1997):
- ¹⁶ Սա, իհարկե չի նշանակում, որ սփյուռքներն ըստ իրենց բնույթի ավելի են հետաքրքրված մշակույթով, քան ազգերը: Բայց առանձին դեպքերում, և հայերը որոշակիորեն դրանց մեջ են, ազգ-դեմոստոսության բացակայությունը մեծադեպ կարևոր է դարձրել նրանց, ովքեր մշակել ու հաստատել են ազգի *հղաքը* սփյուռքում: Այդ մշակման գործում արվեստագետներն ու մտավորականներն անփոխարինելի դեր են խաղացել:

¹⁷ Սա չափազանցությունն չէ: Խորհուրդներն ու գործադիր քարտուղարությունները, որոնք վարում են հայկական խոշոր կազմակերպությունները, ինչդիպում են՝ Հայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) և Հայ օգնության միությունը (ՀՕՄ), ներառել են լրագրողներ, էստեխտներ, գիտնական ու թարգմանիչ նախորդ տասնամյակում: Նրանք սովորաբար շատ ավելի մարդկանց են ներառում: Ավանդաբար բարեգործական նվիրաբերությունները, կազմակերպչական հմտությունը, դիրքը եկեղեցում կամ սփյուռքահայ ազգայնականության հետտորաբանության ոգով լավ գրելու կարողությունը եղել են այն չորս ուղիները, որոնցով որակավորվել է սփյուռքի առաջնորդությունը: Միայն Միացյալ Նահանգներում ստեղծված առաջին խոշոր կազմակերպության՝ Ամերիկայի հայկական համագումարի (1972) խորհուրդն է, որ բացառություն է, չունի ակնառու մտավորական անդամներ: Այստեղ գերիշխող դիրք ունեն գործարար կառավարիչներն ու իրավաբանները, որոնցից էլ ստանում են բարեգործական աջակցության:

¹⁸ Այս կերպ բորբոքվում էր վերադարձի ծարավը. 1946-1947 թթ. մոտ 105.000 հայեր, սփյուռքի ավելի քան 10%-ը, ընդունեց ստալինյան խորհրդային կառավարության՝ Խորհրդային Հայաստան հայրենադարձվելու հրավերը: Սա իրական հայրենադարձություն չէր, այն իմաստով, որ վերադարձողները փաստացիորեն ծնվել էին ոչ թե Հայաստանի այն հատվածում, որը 1828 թ. ի վեր գտնվում էր ռուսական/խորհրդային իշխանության ներքո, այլ՝ Օսմանյան Թուրքիայի իշխանության տակ գտնվող հայկական տարածքում, և ցեղասպանությունը վերադարձողները կամ վերադարձողների զավակներն էին: Այնուամենայնիվ, նրանք ուզում էին ապրել մի Հայաստանում, որը հասու էր իրենց, և այդու նրանք իրավունք էին վերադառնում իրենց հավատալ, որ տնտեսապես ավերված և քաղաքականապես ճնշող հետդարձված խորհրդային Միությունը կարող էր օթևանել իրենց: Նրանցից շատերը, որոնք աղոթեցին այս հայրենադարձությունը, իրենց երեխաների հետ միասին ցավալիորեն հիասթափված թողեցին Խորհրդային Հայաստանը 1957-1988 թթ.՝ հաստատվելով Կալիֆորնիայում, որտեղ ձևավորեցին շուրջ 150.000 հասնող առանձին համայնք:

¹⁹ Լայն սփյուռքային համայնքներում տեղականի հետ ներթափանցունը թե՛ հեշտ է, թե՛ բարդ: Հեշտ է, որովհետև շատ խմբեր ու նախադրյալներ կան, բարդ, որովհետև տեղականը այնքան կլանող է և այնքան ներկայանալի է թվում հայերի համաշխարհային համայնքում, որ այն ծնում է միասնականացած անդրազգային լարումը ավելորդ նկատելու զգացում: Որոշ համայնքներ այնքան մեծ են և գաղթի այնքան շատ տարբեր կողմեր են ընդգծում (Հարավային Կալիֆորնիան 1990-ականներին, Բեյրութը 1940-1970-ականներին, Ստամբուլը մինչև 1915-ը), որ դրանք իրենց հերթին ծխականություն են զարգացրել («մենք հայկական աշխարհ ենք այստեղ» կամ «մենք միջնաբերդ ու մայրաքաղաք ենք հայկական սփյուռքի համար»): Ինչ որ Նյու Յորքն է աշխարհի հրեաների համար, Լոս Անջելեսը այդդիպում է դառնում աշխարհի հայերի համար, շատ կարևոր, բայց ինչ-որ առումով ծխական աշխարհ սփյուռքային աշխարհում:

²⁰ Ադայանը հայկական սփյուռքի դատմության մի փոքր այլ դարբերացմամբ և սփյուռքի քաղաքականությունների բնույթը շատ տարբեր տեսանկյունից քննարկող օգտակար մի ուսումնասիրություն է տրամադրում անգլերենով, Rouben Paul Adalian, «The Historical Evolution of Armenian Diasporas», *Journal of Modern Hel-lenism*, h. 6 (1989), էջ 81-114:

²¹ Fernand Braudel, «Histoire et sciences sociales: La longue durée», *Annales. Histoire, Sciences Sociales*, h. 13, թիվ 4 (1958), էջ 725-53:

²² Այս «հազվադեպությունը» նվազում է, երբ մենք սփյուռք հասկացության մեջ ներառում ենք գաղութացման փոքրամասնություններին, որոնք գալիս բնակություն են հաստատում և գերիշխանություն են ձեռք բերում տարածքներում, որոնք լայնորեն բնակեցված են տեխնոլոգիադաշտի տակաս զարգացած բնակչությամբ: Որոշ գիտնականներ հակված են խոսել նրանց մասին որպես սփյուռքի (քանի որ նրանք ցրվել են, հեռու են ու հուզականորեն կառված են իրենց հայրենիքի հետ) (Robin Cohen, *Global Diasporas* (University College of London Press, 1997), միջշեղտ մյուսները (William Safran, «Cultural Pluralism, Ethnicity and Race», զեկուցում *Locality, Identity and Diaspora*, U. of Hamburg, Germany, February 11, 2000 գիտաժողովում; Tölölyan, «Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment») շարունակում են լինել, որ փոքրամասնությունները, որոնք հզորության բացարձակ առավելություն ունեն մեծամասնությունների հանդեպ, որոնց կառավարում են իբրև գաղութարարներ, չեն կարող դիտվել որպես սփյուռքներ: Այս տեսակետը ենթադրում է, որ ուժի անհամաչափությունը եսկան գործոն է սփյուռքները սահմանելու հարցում: Առաջխաղացած սելջուկ-թուրքերից, որոնք իբրև փախստական փոքրամասնություն էին եկել, Կիլիկիա փախած հայերը տեխնոլոգիական ու տնտեսական առումով որքան էլ անբարենյաաստ վիճակում էին, կարողացան գերիշխանության հասնել հունական քաղաքներում և սիրիական գյուղացիների հանդեպ, որոնք զուրկ էին բավարար համայնքային միասնականությունից և կորցրել էին մի ժամանակ իրենց կառավարած Բյուզանդական հունական ժողովուրդը: Բնակություն հաստատող փոքրամասնությունների սփյուռքային/գաղութային բնույթի հետ կառված խնդիրները հատկապես բարդանում են, երբ այդ-դիսի խմբերը թիկունքում ունեն զորեղ սփյուռք, ինչպիսին Պաղեստինում մոտավորապես 1880-ից 1948-ի միջակայքում բնակություն հաստատած հրեաների դեղքում է:

²³ Օսմանյան և Պարսկական, իսկ ավելի ուշ Ռուսական և Արևմտյան գաղութատիրական կայսրությունները մշանակալի դեր են խաղացել ազգակերտման գործում՝ Հայաստանից և Ղազախստանից մինչև Ալժիր և Ռուանդա: Փոքրամասնությունները, ցեղերը, սփյուռքները և փոքր, բայց տարածքներ ունեցող ազգերն ընդհանրապես նոր հիմնարկություններ և քաղաքական ինքնություններ են զարգացրել ոչ Պարզապես իրենց սեփական ջանքերով, այլ նաև կայսերական հրովարտականների կազմավորիչ ազդակների ներքո: Այս փաստը ժխտում են յորիմօրդիալիստները և Պերենիալիստները (որոնք Պաշտոնանում են ազգի մախսարդիական ծագումը) և չարաշահում կոնստրուկտիվիստները (Գելլներ, Հոբսբաում և, ինչ-որ իմաստով, Անդերսոն), որոնք ազգերի ձևավորումը հիմնականում կաղում են վերջին մի քանի դարերի հետ և գերազմահատում են կայսերական ղեկավարման կազմավորիչ դերակատարությունը՝ չնկատելով սոցիալական ու մշակութային կազմավորումների գոյությունը, որոնք վերաձևավորվել են քաղաքական և կրոնական ընտրախավերի կողմից և ոչ թե ստեղծվել ոչնչից՝ կայսերական տիրապետության շնորհիվ:

²⁴ Առևտրային այս սփյուռքի ուժի և նրանց Պարսկաստանում հաստատված հեմակետերի խնդիրների մասին առայժմ լավագույն ուսումնասիրությունը ՄքՔեյբինն է, McCabe, Ina Baghdiantz, *The Shah's Silk for Europe's Silver: The Eurasian Trade of the Julfa Armenians in Safavid Iran and India* (Scholars Press, Atlanta, GA, 1999):

²⁵ Jirair Gerard Libaridian, *The Ideology of Armenian Liberation: the Development of Armenian Political Thought Before the Revolutionary Moment, 1639-1885* (UCLA History Dissertation, 1987):

²⁶ «Տղազիր մշակույթի» երևան գալն (տե՛ս Benedict Anderson, *Imagined Communi-*

ties: *Reflections on the Origin and Spread of Nationalism* (London, New York: Verso, 1991)) ու ազգայնականության կերպը, որը կարող էր ուղեկցել նրան, հայերի համար այդ ժամանակ բացառապես սփյուռքյան երևույթներ էին: Փոքրիկ քաղաքներն ու գյուղական վայրերը հայրենիքում, որոնք բաժանված էին և որոնք կառավարում էին Օսմանյան և Ռոմանովյան կայսրությունները, չեն զարգացրել գործուն, տեղական տղազիր մշակույթ մինչև 19-րդ դարի կեսերը:

²⁷ Բարդակչյանն ամփոփ անդրադառնում է այս արտասովոր խմբի մշակութային ձեռքբերումներին, որը հաստատվել է որոշես տեղական վանական միաբանություն Վենետիկի ծովածոցի Սան Լազարո փոքրիկ կղզում և այնուհետև վերածվել անդրազգային խմբի՝ հանդես գալով մշակութային ու կրոնական առաքելությամբ ամենուրեք, ուր կար սփյուռքահայ շոշափելի համայնք, տե՛ս Kevork Bardakjian, *The Mkhitarist Contributions to Armenian Culture and Scholarship* (Cambridge, Ma: Publication of the Middle East Department of the Harvard College Library, 1976):

²⁸ Այս հղացքների մասին կարդալ Khachig Tölölyan, «Textual Nation: Poetry and Nationalism in Armenian Political Culture», *Intellectuals and the Articulation of the Nation*, Ronald Suny, Michael Kennedy (խմբ.) (Ann Arbor, MI: University of Michigan Press, 1999), էջ 79-105:

²⁹ Բնակչության քանակի վերաբերյալ տվյալները տե՛ս Robert Mirak, *Tom Between Two Lands: Armenians in America, 1890 to World War I* (Harvard University Department of Near Eastern Languages and Civilizations, 1988): Միացյալ Նահանգներում հին ու նոր հայկական սփյուռքների փոփոխվող գրական մշակույթի վերաբերյալ ամփոփ հարցումը տե՛ս Khachig Tölölyan, «Armenian-American Literature», *New Immigrant Literature in the United States*, Alpina Sharma Klipping (խմբ.) (Westport CT: Greenwood P. 1996), էջ 19-42:

³⁰ Louis Althusser, *For Marx*, Ben Brewster (թրգմ.) (New Left Books, 1977):

³¹ Ստեղծարար այսօրինակ մախազյուտերի մասին, որոնք գործել են միգրացիայի բոլորովին այլ համատեքստում՝ ամերիկյան գաղութների բրիտանական «սփյուռքում», օգտակար քննարկում են առաջարկում Արմսթրոնգն ու Թեննենհաուսը, տե՛ս Nancy Armstrong, Leonard Tennenhouse, *The Imaginary Puritan. Literature, Intellectual Labor, and the Origins of Personal Life* (Berkeley: University of California Press, 1992), հատկապես 4-րդ և 5-րդ գլուխները՝ «The Work of Literature» և «The Vanishing Intellectual»:

³² Տեղեկությունների համար, թե ովքեր են եղել սղանվածները, ինչո՞ւ են ճանաչվել և ում կողմից, Պարտական են Բեյրութի Հայկազյան համալսարանի Պատմության բաժանմունքի դոկտոր Արա Սամճեանին: 1958-ի սղանությունները այնպես էին ցնցել հայ համայնքը, ներհամայնքային դատահական բռնություններից ավելին լինելու իրենց անսովորությամբ, որ իրադարձություններին առաստելական չափեր վերագրվեցին: Հաճախ խոսվում է 150-300 մարդու մահվան մասին, բայց Պաշտոնական արձանագրություններում այդքան զոհերի ամունների վկայություն չկա: Ես ու հայրս փրկվել ենք Բեյրութում մեր վրա գործած մահափորձից, երբ ես տասնչորս տարեկան էի և ընկերակցում էի նրան, ով համայնքում հայտնի ու ճանաչված մտավորական էր: Արա, 1960-ին և 1975-1990-ի քաղաքացիական կոիվների ժամանակ դարձյալ, չնայած ավելի քիչ թվով, բայց հայեր են սղանվել հայերի ձեռքով:

³³ Հոլոքոստի հիշողության համաշխարհային կենտրոնը Երուսաղեմում (ծմթ.՝ թրգմ.):

- ³⁴ Մասադան հուշահամալիր է Իսրայելում, որը լուծարվում է այն ամստամբներին, որոնք նախընտրեցին անձնաստան լինել, քան հանձնվել Հոռոմի լեզոններին (ծնթ. թրգմ.):
- ³⁵ Եզրույթը վերցնում են Բրաունից (Carl Brown, *International Politics in the Middle East* (Princeton UP, 1984)), որը գործածում է այն Լիբանանի հասարակության համար՝ դիտարկելով վերջինս որդեմի ամբողջության, որը միշտ թույլ է «ներթափանցված» է մրցակցող քաղաքական ուժերի կողմից ինչոփսին են Սիրիան, Իսրայելը, ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը: Գործածելով այն հայկական սփյուռքի նկատմամբ մասնավորաբար և սփյուռքների համար առհասարակ՝ են ընդգծում են սփյուռքային շատ տարածությունների բնույթն իբրև ո՛չ մեկ ազգային գաղափարախոսությամբ ամբողջացած և ոչ էլ հարմարավետ կերպով հիբրիդացած, այլ ավելի շատ ներթափանցված տարածքներ, որոնք բնորոշվում են գաղափարախոսությունների, խոսույթների և մշակույթների համակայությամբ կամ տարբեր ազգային արմատների չինտեգրվող լուրջակառուցների դժվար համագոյակցությամբ:
- ³⁶ Razmik Panossian, «Between Ambivalence and Intrusion: Politics and Identity in Armenia-Diaspora Relations», *Diaspora*, h. 7 (1998), էջ 149-196:
- ³⁷ Տողերիս հեղինակը լուրջակառուցներից մեկն էր, որին հանձնարարված էր զեկույց լուրջաստել հայրենիք-սփյուռք կառուցի մասին: Այն բաժանվեց բոլոր մասնակիցներին և վեց այդդիսի զեկույցներից մեկն էր, որոնք ձևավորում էին հիմնականում այդ կառուցի բնույթի մասին երկօրյա բանավեճի կառուցվածքը:
- ³⁸ Ինչոփս այլ սփյուռքների արվեստագետներ, հայերը նույնոփս թմջուկված են: Սի կողմից՝ նրանք, հատկաոփս իրենց գործունեության սկզբում, կարող են դեռևս հոգեբանորեն և Ֆինանսաոփս կախված լինել համայնքային լսարանի ընդունելությունից, որը կարիք ունի նրա, ինչը իդիչի մասնագետ Ռուֆ Ուայզը կոչում է «ցեղային արվեստ» (վերցված է՝ Edward Rothstein, «A Jewish Canon, Yes, But Not Set In Stone», *New York Times*, 24 February, 2001, էջ A15): Մյուս կողմից՝ շատ ավելի մեծ, բարձրակարգ արվեստի շուկայի գոյությունը հյուրընկալող ազգի և իհարկե համաշխարհային օյկունների մեջ հմայում է նրանց՝ արտադրելու մի արվեստ, որը կարող է այն կողմ անցնել և «հանընդհանուրի» հայտ ներկայացնել: Այս իմաստով, սփյուռքի արվեստագետները և նրանք, ովքեր արտադրում են փոքր ազգերի մեջ՝ Հայիթից մինչև Գվիենա և Լիբանան, նույն վիճակում են: Ուայզը համադատասխանաբար առանձնացնում է «հանընդհանուրի» երկու տարբերակ՝ անդրադառնալով հրեա (և այս առնչությամբ այլ) սփյուռքի արվեստագետների թմջուկներին: Ձգտում կա դեոփի հանընդհանրակառուցությունը, որը ներառում է ցեղային հետքերի վերացումը արվեստից, կամ հանընդհանրությունը, որը շարունակում է ստեղծել արտեֆակտեր, որոնք կարող են «ցեղային» կամ «ազգային-սփյուռքային» համարվել, բայց դրանք կառուցվում են ավելի լայն շուկայի զեղազիտական նախասիրություններին համադատասխան: Հայկական սփյուռքներից Ֆրանսիականն է միայն, որի զեղազիտությունը փարիզակենտրոն լինելով, լավագույնս հաջողել է տալ արվեստագետներ, որոնք կրում են այս կամ այն, կամ երկու հատկանիշների ամբողջությունը (երգիչ Շարլ Ազանվուրը, Մկարիչներ Գառզուն, Ասատուրը և ժանսեմը):
- ³⁹ Ասոփս Բեդրոյանի հետ անձնակառուց հաղորդակցությունից, ով 1992-ին հիմնել է անենաառաջին ինտերնետ համայնքը և զարգացրել ու օժանդակել է Կոունկը 1994-ից ի վեր: Շնորհակալ են նրան այս և այլ տեղեկություններ ստանալու հարցում ցուցաբերած աջակցության համար:

⁴⁰ 1980-ականներին Կալիֆորնիայի Հանրապետական նահանգապետ Ջորջ Դեոբ-մեջյանը հայկական ծագում ուներ: Լեռկայուն նահանգների կառավարման համակարգում տասնվեց լոպստոնյաներ ծագումով հայ են և իրենք իրենց հայ են ճանաչում, նույն կերպ նաև Կոնգրեսի և երկու ներկայացուցիչներ՝ մեկը Հանրապետական, մյուսը՝ Դեմոկրատ: Հայկական սփյուռքի կազմակերպությունների քաղաքական կարողությունների առավել վառ վկայությունը կարող է լինել այն փաստը, որ ԱՄՆ Կոնգրեսի 435 անդամներից 89-ը (24,5%) ամուսնացած են հայերի շահերը լոպստոնյանող խմբին, այն դեպքում, երբ հայերն ԱՄՆ բնակչության մոտ 0.3%-ն են կազմում (թվով 800.000):

⁴¹ Քննարկում այն մասին, թե որքանով են հայրենի քաղաքական խմբերը սահմանում իրենց սփյուռքահայ ազգականների քաղաքական օրակարգը և որքանով՝ հակառակը, մնում է չլուծված և հավանաբար երբեք էլ չկարողանա լուծվել լիարժեքորեն: Սիկխ անդրազգի վերաբերյալ բանավեճի մասին տես Gurharpal Singh, «A Victim Dispora? The Case of the Sikhs», *Diaspora*, h. 8 (1999), էջ 293-308, ով լուծում է, որ տվյալ դեպքում գերիշխող է մնում հայրենիքի օրակարգը:

⁴² Նկատի ունեն Լուի Ալթյունների կողմից հանրայնացված երկու հասկացությունները, որոնք կարևոր դեր են ունեցել մշակութային հետազոտություններում, տես «Ideology and Ideological State Apparatuses», *Lenin and Philosophy and Other Essays* (Monthly Review Press, 1971, էջ 127-186): Ինչ վերաբերում է սփյուռքներին, «Ճնշիչ» մեխանիզմները կարող են հարաբերական իմաստ ունենալ միայն. այս տեքստում դրանք կարող են նշանակել կազմակերպված հարկադրանքի ձևեր, որոնք միջինարևելյան համայնքներում երբեմն հանգեցրել են բռնության: «Պետական գաղափարախոսական աղարատն» ընդհանուր առմամբ ավելի շատ կիրառելի է հայկական սփյուռքի համար, քան «դեմոկրատիա» հասկացությունը կարող է ենթադրել տալ, քանի որ Ալթյունները լուծում է հենց այն, որ «դեմոկրատիան» ավելի ընդգրկում է, քան կառավարությունը, և այն կարող է կազմակերպված գաղափարախոսության ավելի շատ արտադրողներ ներառել: Սփյուռքի հիմնարկությունները, որոնք են քննարկեցի, գործում են իբրև արվեստ, խոսույթ, գաղափարախոսություն և ներկայացում արտադրողներ ու տարածողներ այլությունների իմաստով: Այդ գործունեությունը մեծապես լոպստոնյանված է համայնքի նյութական միջոցների վրա եղած հիմնարկային հսկողությամբ:

⁴³ ՀՀ-ն ինքնին հայտնի քաղաքական կազմակերպություն է, որի ծագումը կապված է մոտ 110 տարի առաջ ծնունդ առած սոցիալիստական և ազգայնական շարժման հետ, որը Օսմանյան Թուրքիայի և Ցարական Ռուսաստանի կայսրությունների հայկական հողատակներին լոպստոնյանելու լոպսար էր մղում: Երբ մյուս մասնաճյուղերը ներառում են Սիսցյալ Լահանգներում Հայ օգնության միությունը կամ ՀՕՄ-ը՝ հայերի Հաղասահը, որը գրեթե ամբողջությամբ կազմված է կանանցից, Հայ մարզական ընդհանուր միությունը կամ ՀՄԸՄ-ը՝ մարզական կազմակերպություն, որն իր սեփական սկաուտական շարժումն ունի և անառարկելիորեն ամենահայտնի ՀՀ-ի կազմակերպությունն է աշխարհով մեկ, Հայկական երիտասարդաց դաշնակցությունը՝ ՀԵԴ, Համազգայինը՝ մշակութային կազմակերպությունը, որը գրախանութներ ու գրքերի շարժական կենտրոններ է վարում և բեմականացնում է ներկայացումներ, լոպսեր, արվեստի միջոցառումներ և դասախոսություններ, ունեն մեկ հայերեն օրաթերթ, մեկ անգլերեն շաբաթաթերթ, այս լոպսին անկայուն, բայց շատ կարևոր մի լոպսերական, մի հեռուստահաղորդում և Ամերիկայի հայ դատի համամասնումը՝ կազմակերպության լոպսիստական թևը Վաշինգտոնում: ՀՀ-ի անդամները ձևավորում են Սիսցյալ Լահանգներում հայ եկեղեցիների և դպրոցական շրջանների խորհուրդների կազմի թերես մեծամասնությունը: Ավելի քան 100 եկեղեցի և մոտ

քսանվեց ամենօրյա վարժարան, ինչդեռ նաև անթիվ անհամար շաբաթօրյա և կիրակնօրյա դպրոցներ կան Միացյալ Նահանգներում: Չնայած այն բանին, որ նրանց բյուջեներն ամբողջությամբ հավաքագրվում են համայնքի ինքնազանձվող հարկերից և կազմում են մի քանի հարյուր միլիոն դոլար, գաղտնադահի դեկավարները մշտադեռ խուսափում են հասարակությանը առանձին տրվող հաշվետվությունից:

⁴⁴ Այսինքն՝ բազմաթիվ իրավիճակներում այն, ինչն արտոնված չէ քաղաքական կազմակերպությանը, կարող է արտոնվել մշակութային քան ուսումնական կազմակերպություններին:



ԽԱՉԻԿ
ԹԵՕԼԵՕԼԵԱՆ

ՎԵՐԱՄՏԱԾԵԼ ՅԱՅ
ԱՆԴՐԱԶԳԸ



րեմն ընդհանուր նիւթը ինձի համար վերամտածելն է անդրազգի գաղափարը, այնուհետև ինչու է որ ան կաղուած է սփիւռքին եւ կաղուած է մանաւանդ հայկական սփիւռքին: Սփիւռքները հին երեսոյթ են, անդրազգայինը՝ նոր: Իբր յղացք է իբր հաւաքականութիւն սփիւռքներ գոյութիւն ունին 585 թուականէն ի վեր: Անդրազգային բառը, անգլերէնով՝ transnational, սկսած է գործածուիլ 1968-ին բիզնեսի սեղմ շրջանակներու մէջ: Քաղաքական գիտութիւններու մարզին մէջ կը սկսի գործածուիլ 1971-ին եւ դանդաղօրէն կ'ընթանայ: Չայն քաղաքագիտութեան մէջ ներմուծող առաջին անձերը՝ Քրիտէյն եւ Ջոզեֆ Նայ, ի վերջոյ դարձած են Ամերիկայի քաղաքական գիտութիւններու ամենէն կարկառուն դէմքերէն, Ջոզեֆ Նայը հատկապէս:

Սակայն միայն 1990-1991 թուականներուն է, այսինքն՝ 27 տարի առաջ, որ transnationalism բառը մտաւ թէ՛ մոդայիկ, թէ՛ ալ իսկապէս օգտակար գիտական եւ մտաւորական լայն շրջանակներուն մէջ: Ամշուշտ 1991-ը Հայաստանի անկախութեան եւ Խորհրդային Միութեան անկումի տարին էր: Այդ անկումը շրջադարձային տարի էր նաեւ մեզի համար, այսինքն՝ գիտական մտքի համար: Հումանիտար եւ հասարակական գիտութիւններուն մէջ անհաստատալի արագութեամբ տարածուեցաւ մախաղէս գոյութիւն ունեցող բայց քիչ գործածուած բառերու խումբ: Սփիւռքը ինքը անդրազգային է, նաեւ աշխարհայնացումը (globalization), միաժամանակ mobility-ն՝ շարժունակությունը, border crossing՝ սահմանանցումը եւ վերջապէս գաղթականութեան կաղուած բառամթերքը: Կարծես թէ անոնք բոլորը մէկ անգամէն զորաշարժի ենթարկուեցան: Գաղթականութիւն (migration) եւ անոր տարբերակներ immigrant՝ ներգաղթող, emigrant՝ արտագաղթող, migrant՝ գաղթող, աղա նորակերպ՝ transmigrant՝ անդրգաղթող բառերը բազմաաղատուեցան եւ երանգաւորուեցան արտասահմանեան շարժունակութեան ուսումնասիրութիւններու մէջ: Ես իմ գրութիւններուս մէջ երբեք transmigrant՝ անդրգաղթող բառը չեմ գործածած: 1991 մայիսին լոյս տեսավ իմ հիմնադրած դարբերաթերթի առաջին թիւը՝ *Diaspora: A Journal of Transnational Studies*-ը, այսինքն՝ *Սփիւռք. անդրազգային ուսումնասիրութիւններու դարբերաթերթ*: Օր մը լիտի ուզեմ դատմել թէ ինչու է ինչու եւ ինչու եւ ինչու գործի խորհրդական կազմի մեղսակից անդամները հանգեցանք դարբերաթերթը այդպէս կոչելու որոշումին: Հոս կը մշտն միայն որ մախընտրեցինք անդրազգային բառը, որվիտեւ անոր բաղադրիչ արմատները միաժամանակ կ'ընդգծեն թէ տակաւին կարելոր է ազգը՝ nation-ը, բայց միաժամանակ որ Խորհրդային Միութեան մօտեցող փլուզումով կը մտնենք մոր աշխարհ մը, ուր ազգը եւ ազգ-միութիւնը միակ կարելոր գործօնները չեն եւ լիտի չ'ըլլան: Ազգ յղացքի, աղա նաեւ ազգ-դէտութեան սահմանները կտրող-անցնող մոր անդրազգային երեսոյթներ լիտի զգացնեին իրենց ներկայութիւնը, ասիկա ակնյայտ էր մեզի: Եվ անոնք սերտօրէն կաղուած էին ոչ միայն աշխարհայնացման, շարժունակութեան, այլ նաեւ հին գաղութատիրութեան խամրելուն եւ մոր՝ հետ-գաղութատիրութեան ծաւալող ուժին: Այս բոլոր բառերը, հասկացութիւնները իւրաքանչիւրը այնչափ գոյութիւն ունեին, քիչ-քիչ գործածուած եւ մէկ անգամէն խուփ վերածուած, ծանր խուփ որ եկան, փշրեցին տրամասութիւնը:

Ուրեմն, իմ խմբագրած նոր դարբերաթերթի անունը կը մեկտեղեր հարցեր որոնք մեզ կը հետարթրեն այս գիտաժողովին ալ, գլխաւորաբար՝ սփիւռք, ազգութիւն եւ անդրազգայինը, թե՛ անցեալին, թե՛ արագօրէն փոխուող մերկային: Յաւելեալ կ'ետ մը որ այս դատմութեան անցեալը անցեալի սերտօրէն կը կապուի մերկային: Սօստ հինգ տարի առաջ, տմտեսագէտ բարեկամ մը զիս ծանօթացուց Գուգլ սքուլար կոչումով եւ առաջին անգամ տեսայ որ ուրիշ գիտնականներ իմ հրատարակած գրութիւններս կը հուշեն իրենց յօդուածներուն մէջ: Աղաօգնական ուսանողի մը յանձնարարեցի հաւաքել տուեալներ յաճախ մէջբերուող նախադասութիւններու ու բնորոշումներու մասին:

Արդիւնքը հետեւեալն էր: 1991-ին հրատարակուած յօդուած մը սա էր շատ յաճախ մէջբերուած նախադասութիւնը, որ ես գրել էի. «Diasporas are the exemplary communities of the transnational moment»՝ «Սփիւռքները անդրազգային դասի օրինակելի համայնքներն են»: Երկրորդը 1996-ին լոյս տեսած յօդուածի մը խորագիրն էր. «Rethinking Diasporas: Stateless Power in the Transnational Moment», այսինքն՝ «Վերամտածել սփիւռքները. ոչ լիակատար ոյժը անդրազգայինի դասին»: Եւ վերջապէս երրորդն էլ նորէն յօդուածներուն մէկին խորագիրն է՝ «Elites and Institutions in the Armenian Transnation», այսինքն՝ «Վերնախաւեր եւ հաստատութիւններ հայ անդրազգային մէջ»: Ուրեմն, երեք նախադասութիւն, որոնցմէ երկուքը «սփիւռք» բառը կը դարձնակեն, մինչ երեքն ալ ունին «transnational» բառը: Քսամհինգ տարիէ ի վեր ինքզինքս սփիւռքագէտ համարած էի ու հանկարծ անդրադարձայ, որ ես երեւի անդրազգայնագէտ եմ՝ transnationalist, այդ մանագիտութիւնը չկայ, բայց այդպէս: Աւելցնեն որ հայ անդրազգայնութիւնը որ գրել էի ատենին մկատուեցաւ գայթակղեցուցիչ եւ նոյնիսկ Բեյրութի *Չարթընք* թերթին մէջ քննադատական յօդուած մը լոյս տեսաւ ըսելով որ «անդրազգ» բառը հակաազգային է:

Եւ իսկապէս, ի՞նչ կ'ուզեն ըսել զանազան գիտնականներ բազմաթիւ բառերու կցելով այս trans՝ անդր նախդիրը: Ո՞վ մտածեր է յիշել՝ ինչն՞ ու հունարէն «դիաստորա» բառին «դիա» նախդիրը կը թարգմանուի լատիներէն «trans»-ով: Այսինքն՝ ոչ միայն այս բառերուն մէջ այլ ընդհանրապէս «դիա»-ն կ'ըլլա «trans»: Մենք սփիւռք կ'ըսենք, սակայն հունարէն բառը իրական սփիւռք չէ՝ դիաստորա է, կը նշանակէ անդր-սփոռում՝ մարմինն դուրս սերմի, այսինքն՝ սղերմի, օրինակի համար, ցրում, կամ հայրենիքէն դուրս ժողովուրդի ցրում: Լատիներէն transnational ձկուն բառը կ'ակնարկէ ազգէն, ազգայինէն, մերկայիս փաստօրէն նաեւ՝ ազգ-դէտութեան սահմաններէն անդին, դուրս, այդ սահմանը կտրող-անցնող երեւոյթներուն: Սփոռուելու եւ ցրոնքի քիչ մը կրաւորական գաղափարը կը տկարանայ եւ կը զօրանայ սահմաններէն անդին երթալու, կտրող-անցնողի իմաստը, երբ կը գործածենք transnational: Այս լեզուական նրբութիւնները ունին ինացական լուրջ հետեւանքներ:

Այսօրուայ մեր միւթի համար ամենէն կարեւորը կ'ենթադրեն այն է որ սփիւռք բառը երկուութիւն թելադրող բառ մըն է, կը հակադրուի սփիւռքը հայրենիքին կամ անձով սփիւռքը որեւէ լիակատարութեամբ օժտուած ազգի մը: Անդրազգային

մը ոչ երկուութիւն, այլ՝ երրորդութիւն հաստատող բառն մըն է: Գոնէ արեւմտեան քիչ թէ շատ գիտական լեզուներուն մէջ: Օրինակ, երբ սեռային հարցերու մասին կը գրուի, սեռայինը՝ sexual, կ'ենթադրե բաժանում մը, երկուութիւն մը՝ heterosexual եւ homosexual, գոնէ մինչեւ վերջերս այդպէս էր, այսինքն՝ մարդկութեան սեռային իղծերը կը սահմանուէին այդ երկու բառերով: Ներկայիս transsexual բառը կը գործածուի որոշ ինքնութիւններ բնորոշելու համար, որոշ սեռային նախընտրութիւններ եւ վարուելակերպեր նկարագրելու համար: Եւ հոն հիմնադրուած երկուութիւնը կը մերժուի: Այսինքն՝ transsexual-ները եւ անոնց ի տալիս գրողները կը վերամտածեն սեռայնութեան տեսութիւնը, ըսելով, որ երկու բաժանումը homo եւ heterosexual չի բաւեր: Ուրեմն, trans-ը կ'ըլլա այն բառը որ կը կցուի շատ մը յղացքներու ուր երկուութիւնը կը փոխուի երրորդութեամբ: Կենսական է ընդգծել որ երեքը ստեղծելը երկուքը չի ճնշեր, սակայն կը բարդացնէ զանոնք: Այսինքն՝ ազգադէտութիւն եւ սփիւռք, այդ երկուութիւնը կը մնա եւ ան կ'ունենա շատ կարեւոր դերակատարութիւններ մեր կեանքին մէջ: Սակայն հատկապէս սփիւռքին, իմ կարծիքով նաեւ ազգ յղացքին վերագրուած իմաստները ու վարվելակերպերը կ'ենթարկուին որոշ վերանայման, կը վերամեկնաբանուին ի տատասխան աշխարհայնացման եւ շարժումակութեան անուրանալի ներկայութեան եւ անոնց աղթած փոփոխութիւններուն:

Ինչպէս արդէն հղանցիկ ձեռք մը, սփիւռք-հայրենիք երկուութեան երկու մասերն ալ կը փոխուին ներկայիս: Հասկնալու համար թէ ինչն է ինչպէս դիտուի վերադառնալ 1990-1991 թուականներուն transnational եզրի ընդհանրացումին՝ դատասխանելու որոշ ուսումնասիրութեանց: Ի միջի այլոց, transnationalism-ը լաւ հասկնալու համար կարեւոր է կարդալ 2007-ին հրատարակուած *Transnational Studies Reader* ստուարածաւալ հատորը ուր կը վերահրատարակուին 50 յօդուածներ մէկն ալ իմ գրչես, որոնք սատարած են անդրազգային բառի գործածութեան տարածումին իբրեւ գիտական եզր:

Հետաքրքրականը այն է որ հոն գրեթէ բոլոր կարեւոր կրթանքներն գրողներն կան, գրականութենէն սկսած դատմութիւն, մարդաբանութիւն եւ այլն, այդ բոլոր կրթանքներու մէջ խօսքն այն մասին է թէ ինչպէս trans բառը իր նոր դերը ստանձնեց: Հոն, աղա նաեւ ընկերաբան Փեգգի Լեւիտսի *The Transnational Villagers (Անդրազգային գյուղացիներ)* գործին մէջ որ շատ-շատ կարեւոր յիշատակում մը կայ, կ'ընդգծուի որ նոր գաղթականութիւնները չեն տեղաւորուի երկուութեան մը մէջ: Օրինակ՝ իր օրինակը բերեմ, Կարիբեան կղզիներու դոմինիկանները երբ իբրեւ միգրանտներու նախասփիւռք կը հաստատուին Նյու Յեորքին եւ Բոստոնին մէջ, կը մշմարուի որ անոնց փորձառութիւնները չունին հին սփիւռքներու հատկութիւնները, անոր հատկանշական անջատումները հայրենիքէն, ոչ ալ հայրենիքի հետ կապ մասնաւորապէս սփիւռքեան փորձերը: Չի մշանակեր որ սփիւռք չեն, սակայն ոչ անջատումները, ոչ կապերը անհրաժեշտ են:

Աղա նաեւ չկայ, այսպէս ըսեմ, անհրաժեշտ սփիւռքի ծիգը ինքնութիւն դա-

հելու: Չեն ըսեր որ չկայ բայց այդ բառերով եւ այդ յղացքով չկայ այլեւս: Անդադար կառփի մէջ են հայրենի գիւղի, իրենց բարեկամներու հետ՝ հեռախօսով, ներկայիս անշուշտ նաեւ ինտերնետային բոլոր միջոցներով: Եւ երբ որ մտածելը, ըլլայ տմտեսական, ըլլայ կենցաղային հարցերու մասին, այդ մտածումը կը յղուի ոչ միայն ամերիկեան մեծամասնութեան, ոչ միայն մախասփիութեան իրենց տեղական ցրօնքին, ոչ միայն հայրենիքին, այլ այդ երեքին միասին եւ միաժամանակ: Համբաւաւոր մէկ օրինակը թեւս դոմինիկանցն կու գայ, թէ մեքսիկացիներ երբ յիշուի ամուսնանան, կը սկսին մտածել՝ այս մէկը կայ, այս մէկը կայ, այս մէկը կայ, չէ՞: Ոչ մէկ տարբերութիւն չկայ որ այս մէկը փողոցի վրայ է, թաղի մէջն է, Նյու Յեորքի մէջ է, թէ Դոմինիկեանի մէջ է: Իրենց համար այդ աշխարհը մէկ աշխարհ է: Իրենց համար մէկ ժամանակ կայ՝ անդրազգայինը, եւ մէկ տարածք՝ նորին անդրազգայինը որ հաստատ աշխարհագրական սահմաններով չի սահմանուիր այլեւս:

Հոմի Բահբան, տեսաբան եղվարդ Սոժան եւ ուրիշներ զայն կոչեցին «երրորդ տարածք»: Սա ինքնութեան տարածք մը չէ այլեւս, ինչդէս հայրենի հողն է կամ նոյնիսկ Պեյրոյի Պուրճ Համուդն է: Երրորդ տարածքը գործունեութեամբ սահմանուող ու ճանչցող տարածքն է: Եւ այդ գործունեութիւնը կը փոխէ ինքնութեան իմաստը: Ինչդէս կը գրեն նաեւ Հայաստանէն երիտասարդ գիտնականները սփիւրճագիտական համաժողով մը առաջարկելու ընթացքին. «Երբ միգրանտների համայնքները ղախանում են սփյուռք տիրոջը, մախընտրելի չէ՞ ինչ է սփյուռքը կտրվածքով աշխատել, առաջ անցնելով ի՞նչ է սփյուռքը դիսկուրսից»: Քիչ մը տարօրինակ կը թուի այս շարահիսութիւնը ինձի, սակայն կը կարծեն թէ կ'ըսեն որ միմէն հիմա կայ դիսկուրս մը որ կը ղոնդէր թէ ինչ է սփիւռքը, իմ բառամթերքովս՝ թէ ինչ է սփիւռքեան ինքնութեան հարցը, եւ աւելի լավ է մտածել թէ սփիւռքը ի՞նչ է անում: Ասիկա ճիշտ ձեւով մը կը նկարագրէ այն ինչ որ դոմինիկանցներուն ղարագան է: Ոչ ինչ ենք արդոյր, բայց ի՞նչ կ'ընենք եւ ի՞նչ տարածքի մէջ կ'ընենք: Միշտ անդրասահմանեան տարածքի մէջ է: Այս հարցումը սփիւռքեան մտածումի՝ անդրազգայնացումի յատկանիշն է մեր մօտ:

Անդրազգայնացած սփիւռքը այնքան ալ հարց չի տայ ի՞նչ է իմ ինքնութիւնը, այլ ի՞նչն է իմ գործունեութեան դաշտը, եւ կը ղատասխանէ՝ հոս է եւ հոն, շնորհիւ այլեւս անխազելի արդիական կառերուն: Աւելցնեն որ Փեգգի Լեւիտտիի նշած դոմինիկեան գիւղացիները իրենք չեն անդրադառնար այս փոփոխութիւններուն, այն իմաստով, որ ատոր մասին չեն խօսիր այն յղացքներով, որոնք մենք կը խօսինք: Կառփին եւ կը գործեն եւ անգիտակցօրէն իրենց գործունեութեամբ կը փոխեն իրենց ինքնութիւնը, սփիւռքի ամրուած իմաստը, աղա նաեւ հայրենիքի մէջ բնակուողներու աշխարհիմացութիւնը, վարուելակերպը եւ ինքնութիւնը: Երբ ես հայութիւնը կը կոչեն անդրազգ, կ'ուզեն ընդգծել որ ան ալ այս ընթացքին մէջ է: Այս ընթացքին մէջն են մախ սփիւռքեան համայնքներն ու հատուածը բայց ինձի կը թուի նաեւ հայրենի հատուածը նոյնդէս: Արցախեան մասի մասին չեն համարձակիր խօսիլ որովհետեւ ղտը

Եղածին չափ ծանօթ չեն անշուշտ բայց կ'ենթադրեն որ դայանմաներու բերու-
մով ան ալ կրնայ ներկայիս տարբերուիլ որովհետեւ արդէն սովետական օրե-
րուն իր անունն էր «Ներխորհրդային սփիւռքը»: Կ'ուզեի որ հետազոտուի թէ
ինքնութիւնը ու մանաւանդ վարուելակերպը ինչո՞ւ կը փոխուի այդ ներ-
խորհրդային սփիւռքին մէջ: Ոչ միայն ընդհանուր հայութեան մը, ընդհանուր
ռուսական տարածքին մէջ, այլ նաեւ՝ հատկապէս արդէն գոյութիւն ունեցող
Ղարաբաղեան սփիւռքը որ կար երկար տարիներէ ի վեր:

Ինծի կը թուի որ 2018 աղբիւ-մայիսեան փոփոխութիւնները Հայաստանին
մէջ մնամադէս սկսած են ցուցաբերել երկուութենէ դէտի երրորդութիւն անցը
մը: Մեր դաշտօնական տրամախօսութիւնը թէ՛ հոս, թէ՛ սփիւռքին մէջ զար-
գացած էր ազգ-դէտութիւն դարունակին մէջ: Հասկնալի էր թէ ինչո՞ւ՝ անկախ
դէտականութենէն զուրկ ազգերը կը ձգտին դէտութեան տիրանալու, վեր-
ջին երկու դարերուն գոմէ: Բայց թարմ փորձառութիւնը ցոյց տուաւ ուրիշնե-
րու ալ, մեզի ալ որ դէտականութեան վերականգնումէն ետ անոր գոյութիւնը,
դէտականութեան գոյութիւնը բաւարար չէ: Պէտութիւնը կրնայ ազգին հան-
դէտ վարուիլ որո՞ղ տէր, ոչ իբրեւ ծառայ: Ստացուեցաւ որ ազգ-դէտութիւն
երկուութիւնը կարիք ունի երրորդանալու, ներքին երրորդ տարածքի մը որուն
անունն է առողջ քաղաքայնացուած տարածք եւ հանրային ոլորտ: Արդէն այս
նիւթերուն մասին խօսած են ուղղակիօրէն եւ անուղղակի, օրինակ բերելով
Աշոտ Ոսկանեանը եւ Հրաչ Բայաղեանը եւ ուրիշներ ալ երեւի: Աւելցնեն որ
մենք՝ սփիւռքահայերս, մենք ալ լուրջ է ձերբազատուինք մեր ազգ-դէտու-
թիւն երկուութիւններէն, ընդունինք երրորդ տարածքի կենսականութիւնը եւ
օգնենք զանոնք կերտելու թէ՛ սփիւռքին, թէ՛ ալ Հայաստանին մէջ:



ՎԱՐԵ ՍԱՐԱԿՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔ, ԷԹՆԻԿՈՒԹՅՈՒՆ
ԵՎ «ՅԱՅ ԱՆԴՐԱԶԳ»
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ԱՄՓՈՓ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ
ՍՓՅՈՒՌՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՇՈՒՐՋ



նքնության մասին խոսելիս ամերիկահայերն հաճախ են օգտագործում «I am 25% Armenian, I am 50% Armenian, I am 100% Armenian»¹ արտահայտությունները:² Այստիպի դատողությունների մեջ հետաքրքիրն այն է, որ դատողությունն անողների համար սա թերևս զուտ արյունակցական կառիկ և գեներտիկայի նշումն է, այսինքն՝ եթե ծնողներից մեկը հայ է, առաջ ինքը 50 տոկոս հայ է, եթե ղառիկ-տատիկներից մեկն է միայն հայ, առաջ ինքը 25 տոկոս հայ է, եթե երկու ծնողներն էլ հայ են, առաջ 100 տոկոս հայ է: Սակայն սփյուռքագետ հետազոտողի տեսանկյունից ավելի կարևոր է հասկանալ, թե արդյո՞ք այստիպի ինքնանույնականացմամբ անձանց ղետոք է համարել սփյուռք:

Դեյվիդը³ աղղում է ԱՄՆ-ում, վերը նշված չափանիշներով 50 տոկոս հայ է՝ մայրը հայ է, հայրը՝ իռլանդացի: Ամերիկյան բանակի սղա է, սակայն ամեն կիրակի մոր և ընտանիքի հետ հաճախում է տեղի Զայկական առաքելական եկեղեցիներից մեկը: Զայերեն չի խոսում, կինը հայաստանցի հայ է, երեխաներն ունեն հայկական անուններ, սակայն ընտանիքի լեզուն անգլերենն է: Եկեղեցին, որ Դեյվիդը հաճախում է, ղատկանում է 1950-ականներին Զայ հեղափոխական դաշնակցության (ԶՅԴ) ջանքերի շնորհիվ ձևավորված Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հովանու ներքո գործող Զյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի Ազգային առաջնորդարանին, որն իր սկզբնավորումից ի վեր ավելի մոտ է եղել ԶՅԴ շրջանակներին:⁴

Երբ Դեյվիդին հարցրեցի «Why don't you attend St. J. Church?» («Ինչո՞ւ չեք հաճախում Սբ. Յ. Եկեղեցին»), ղատասխանեց. «Because they are Democrats. I am not a Democrat» («Որովհետև նրանք Դեմոկրատներ են, ես Դեմոկրատ չեմ»): Շարունակեցի հարցս. «Would you say then you are a Dashnak or do you sympathize with the Dashnak party?» («Այդ դեղքում, կարելի՞ է ասել, որ Դուք Դաշնակ եք կամ համակրում եք ԶՅԴ-ին»): ղատասխանեց. «No, I am not a Dashnak. The Dashnaks are Socialist. I am Republican» («Ոչ, Դաշնակ չեմ, Դաշնակները սոցիալիստ են, ես Զանրաղետական եմ»): Ուրեմն, որղես Ամերիկյան Զանրաղետական կուսակցության անղամ՝ Դեյվիդի համար դժվար էր եջմիածնի կաթողիկոսության իրավասության ներքո գտնվող եկեղեցին գնալ, որովհետև իր իսկ գնահատմամբ, այն Դեմոկրատների եկեղեցին էր: Սակայն Դեյվիդը նաև Դաշնակցության համակիր կամ անղամ չէր, որովհետև իր իսկ ղղմամբ, Դաշնակները սոցիալիստ են, իսկ ինքը՝ Զանրաղետական է: Դեյվիդի աոոյայում իր ամերիկյան ու հայկական ինքնություններն իրար միաձույլ էին, և իր համար էլ երբեմն դժվար էր հստակ բաժանել իր ինքնության ամերիկյան ու հայկական բաղաղրիշները:

Դեյվիդի համար իր տունն Ամերիկան է, ԱՄՆ-ն իր առաջնային հավատարմության երկիրն է: Չնայած այս ամենին, նրա ինքնության մի մասը հայ է, և իր կյանքի մի մասն անցնում է հայկական միջավայրերում՝ իր ընտանիքում, հայկական հաստատություններում և հայկական բարեգործական այլ ձեռնարկներում:

Մեկ այլ օրինակ էլ Ֆրանսիայից. մարսելաբնակ Դոմինիկն իրեն համարում էր հայկական ծագմամբ ֆրանսիացի՝ *Français d'origine arménienne*:⁵ Հայերեն չէր խոսում, անգլերեն էին խոսում: Դոմինիկը հրավիրեց իրենց ղարախմբի փորձը դիտելու: Վերջինս ամբողջությամբ հայկական էր՝ երաժշտությունը, ղարերը, իսկ ղարողներն ու խմբի երաժիշտները կամ հայ էին՝ հիմնականում Հայաստանից ներգաղթած, կամ երկրորդ/երրորդ սերունդ հայկական ծագմամբ ֆրանսիացիներ: Դոմինիկն իր ժամանակի մեծ մասն անց էր կացնում որդես ֆրանսիացի, ֆրանսիական մի կազմակերպության մեջ բարձր ղաշտոնյա էր, սակայն հայկական հարցերի մեջ ընդգրկված էր մշտադաշտ, լավ հարաբերություններ ուներ Ֆրանսիայի տեղական ու նահանգային ղեկավարների հետ:

Սփյուռքում, անշուշտ, շատ են նաև այնպիսի անձինք, ում համար հայ լինելն առաջնայնություն է, ովքեր, չնայած լինելով այլ երկրների քաղաքացիներ և լիիրավ անդամներ, իրենց առօրյա մեծ մասն անցկացնում են հայկական միջավայրերում, հայկական կազմակերպություններում և այլ հայերի հետ շփումներով, հաճախ իրենց հայրենիքը համարում են Հայաստանը և Հայաստան տեղափոխվելը կամ վերադարձը քննարկում որդես աղագայի հնարավոր տարբերակ:

Սփյուռքյան այսպիսի բազմազան ու խառնածին ինքնությունների մասին օրինակների շարքը կարելի է շարունակել: Փաստ է, որ անկախ այն բանից, թե ինչդեպ են գիտնականները, քաղաքականություն մշակողները կամ այս կամ այն կազմակերպության ղեկավարները սահմանում հայ լինելը սփյուռքում, սփյուռքյան խառնածին ինքնություններ ունեցող այս անձինք մասնակցում են սփյուռքի կառույցների ղահողանմանն ու գործունեությանը, սփյուռքահայ մշակույթների արտադրությանն ու վերարտադրությանը: Ուստի, այս ամենը հաշվի առնելով, ինչդեպ կարելի է սահմանել հայ սփյուռքը, որդեսգի այն ավելի ընդգրկում լինի և չբացառի այսօրինակ անձանց, ովքեր իրենց այս կամ այն կերպ հայ են համարում, ունեն հայկական ծագում, ովքեր այս կամ այն կերպ ընդգրկված են սփյուռքի տարբեր հայկական կազմակերպությունների գործունեության մեջ, իրենց կյանքի և առօրյա գործունեության որոշ մասն անցնում է հայկական միջավայրերում և հայկական հարցերի շուրջ քննարկումներում, սակայն ովքեր իրենց միաժամանակ լիարժեքորեն համարում են մեկ կամ մի քանի այլ էթնիկ կամ այլ մշակութային ինքնությունների կրողներ:

Վերացարկվելով այս գործնական օրինակներից՝ հետագա շարադրանքում քննարկվում են, թե արդյո՞ք հնարավոր է հայ սփյուռքյան իրականությունները բնութագրել էթնիկ հասկացություններով, արդյո՞ք էթնիկությունն աղահովում է սփյուռքը հասկանալու և մեկնաբանելու համար անհրաժեշտ աղարկայական հենքը, և որո՞նք են սփյուռք, էթնիկություն և անղրագգ հասկացությունների սահմանները և նրանց միջև հարաբերությունները:

Սույն հոդվածի հիմնական նդատակն է ցույց տալ, որ սփյուռքի վերոնշյալ օրինակներն ընդգրկող խառնածին իրականություններն ու բազմազանություններն ավելի առարկայական վերլուծության են ենթարկվում սփյուռքը անդր-էթնիկ, անդր-լեզվական և անդր-մշակութային տիրույթներում քննարկելիս:

Գիտական մոտեցումներում սփյուռքը հաճախ նույնացվում է ընդհանուր էթնիկ ծագում ունեցող, տարբեր երկրներում աղյուղ և իրենց իրական կամ երևակայական հայրենիքի հետ կապված ցրված համայնքների հետ: Որոշես այդդիսիմ, տեսաբանները քննարկում են ընդունող երկրների և հայրենիքի միջև սփյուռքների միջանկյալ վիճակը: Գաբրիել Շեֆֆերը, Ուոբեր Քոննեյրը, Ուիլիամ Սաֆրանը, օրինակ, սահմանում են սփյուռքը որոշես իրենց ընդունող երկրներից օտարված և հայրենիքների հետ ուղղակի կապ ղա հող էթնիկ փոքրամասնական խմբավորումների հանրագումար:⁶ Այս մոտեցման կողմնակիցները հաճախ կարևորում են (երբեմն հասցնելով չափազանցության) տարբեր երկրներում աղյուղ փոքրամասնական համայնքներին միավորող էթնիկ ընդհանրությունները: Այսդիսի ըմբռնմամբ, վերը նշված անձինք, չնայած ունեն «սփյուռքյան գիտակցություն» (diaspora consciousness), մասնակցում են սփյուռքյան կառույցների գործառնությանն ու սփյուռքյան մշակութային (վեր)արտադրությանը՝ դուրս են մնում սփյուռքի սահմանումից: Հետևաբար, ինչդե՞ս կարելի է սահմանել սփյուռքը, որդեսգի այն ավելի իրական կերդով արտացոլի սփյուռք երևույթը և ընդգրկի բոլոր այն խմբավորումները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերդով գործնականում նդատաում են սփյուռքյան կազմակերդությունների հարատևմանն ու մշակութային (վեր)արտադրությանը:

Սփյուռքի ժամանակակից մի շարք տեսաբաններ քննարկում են սփյուռքի ինքնությունների խառնածնության հարցերը: Մշակութաբան, սոցիոլոգ Ստյուարտ Հոլմ, օրինակ, սահմանում է սփյուռքը «ոչ թե [էթնիկ] տությանբ կամ մաքրությամբ, այլ անիդաժեշտ տարասեռության ու բազմազանության ճանաչմամբ. ինքնության այնդիսի հայեցակարգով, որն աղյուղ ու շարունակվում է տարբերության հետ և միջոցով, ոչ թե հակառակ դրան. հիբրիդայնությանբ (կամ խառնածնությանբ)»:⁷ Այս իմաստով, նա դիտարկում է սփյուռքյան ինքնությունները՝ որդես հարափոփոխ երևույթներ, որ մշտաղես արտադրվում և վերարտադրվում են փոխակերդումների և տարբերությունների միջոցով:⁸

Հրեական կրոնի դատմաբան Դանիել Բոյարինն այսղես է մեկնաբանում սփյուռքյան ինքնությունները. «Սփյուռքյան մշակութային ինքնությունն ուսուցանում է մեզ, որ մշակութայինները չեն դահողանվում «խառնվելուց» դաշտողանվելու միջոցով, այլ թերևս կարող են շարունակել գոյություն ունենալ որդես այդդիսիք հենց խառնվելու արդյունքում: Մշակութայիններն, ինչդես և

ինքնությունները, մշտադեմ վերստեղծվում են: (...) Հրեությունը խզում է ինքնության նույն այդ կատեգորիաները, որովհետև այն ոչ ազգային է, ոչ ծննդաբանական, ոչ կրոնական, այլ այս ամենի ամբողջությունն է՝ իրար հետ դիալեկտիկական լարումի մեջ»:⁹ Շարունակելով միտքը՝ Բոյարինը լուրջ է, որ հրեությունն անհնար է բնականորեն նույնացնել որևէ աշխարհագրական տարածքի հետ, և անհնար է վերլուծել հրեական մշակույթը որդես «ներփակված, սահմանափակ երևույթ»:¹⁰ Ինքնության այստիպի ըմբռնմամբ է, որ հրեան կարող է միաժամանակ լինել եգիպտացի արաբ, և եգիպտացի արաբը կարող է միաժամանակ լինել հրեա:¹⁰

Ամփոփելով սփյուռքի այստիպի ըմբռնումները, անհրաժեշտ է նաև ընդգծել, որ սփյուռքը սերունդների ընթացքում ձևավորվող երևույթ է. *սփյուռքայնացման գործընթացներում ցրման մեկ կամ մի քանի շարունակական ալիքների հետևանքով տարբեր երկրներում հաստատված գաղթականների և/կամ փախստականների սերունդները ձևավորում են խառնածին ինքնություններ՝ նախ և առաջ որդես իրենց երկրների լիարժեք քաղաքացիներ/անդամներ և միաժամանակ որդես այլ մշակութային ժառանգության կրողներ, ովքեր մշտական բնակչությունների միջոցով լուրջաբանում են ինքնության որոշ բնութագրիչներ (կրոնական, լեզվական, մշակութային և այլ) և անդրազգային կառույցներ, որն իրենց տարբերում է տեղական այլ խմբավորումներից:*

Հենց այստիպի մոտեցումներն են, որ առաջարկում են սփյուռքի ավելի ընդգրկում սահմանումներ, ուր բազմակի ինքնություններով անձինք, ովքեր իրենց համարում են սփյուռք, ովքեր մասնակցում են սփյուռքային տարբեր կառույցների գործունեությանը և սփյուռքային բազմազան մշակույթների արտադրությանն ու վերարտադրությանը, միաժամանակ հանդիսանալով իրենց ծննդավայր կամ բնակության երկրների լիարժեք քաղաքացիներ ու անդամներ, դուրս չեն մնում սփյուռք հասկացության տիրույթից:

Այստիպի ըմբռնմամբ, սփյուռքները, ներառյալ հայ սփյուռքը, չունեն հստակ սահմաններ, և չեն կարող սահմանվել զուտ էթնիկ բնութագրիչներով: Սփյուռքի սահմանները հարափոփոխ են, քանի որ սփյուռքը կազմող կազմակերպություններին աջակցող, անդամակցող կամ սփյուռքային մշակույթների արտադրությանն ու վերարտադրությանը նպաստող անհատները գործում են մի քանի լեզվամշակութային տարածություններում և հանդիսանում են մի քանի լեզվամշակութային ինքնությունների կրողներ: Հայ սփյուռքի դարազային սփյուռքածին սերունդները որոշ իրավիճակներում գործում են որդես հայ, որդես իրենց երկրների քաղաքացիներ՝ այլ իրավիճակներում, և երբեմն նաև որդես երրորդ՝ այլ երկրի քաղաքացիներ կամ նախկին քաղաքացիներ: Լիբանանի, Իրանի, Թուրքիայի, Սիրիայի հայերն ԱՄՆ-ում, օրինակ, երբեմն գործում են երեք լեզվամշակութային տարածություններում՝ հայկական, ամերիկյան և, համադաստասխանաբար, լիբանանյան/արաբական, իրանա-

կան, թուրքական կամ սիրիական/արաբական: Հայաստանից կամ Ադրբեյջանից ԱՄՆ-ի կամ Ֆրանսիայի տարբեր մասերում հաստատված անձինք ու նրանց սերունդները նույնպես երբեմն երեք ազգային-լեզվական տարածություններում են գործում՝ հայկական, ամերիկյան/ֆրանսիական և ռուսական/հետխորհրդային: Չարգացման ընթացքում հայկականության դրսևորումներն ու սահմանումները նույնպես փոփոխվում են տարբեր երկրների համատեքստերում, տարբեր ժամանակներում, և մի շարք այլ հանգամանքների ազդեցությունների ներքո:

Ադրբեյջանի փախստական հայերից մեկը, որ այժմ բնակվում է ԱՄՆ-ում, օրինակ, ԱՄՆ քաղաքացի է, իրեն բնորոշում է շատ հստակ. «Я армянка» («Ես հայ եմ»): Սակայն դարբերաբար հաճախում է տեղի ռուսական եկեղեցին, որովհետև այն ավելի մոտ է: Ամուսինը նույնպես հայ է, սակայն ընտանիքի լեզուն ռուսերենն է: Հայ ընտանիք է, խոսում են ռուսերեն, ավելի մոտ են տեղի ռուսական-հետխորհրդային, քան հայկական համայնքներին: Իրենց նման ռուսական և հետխորհրդային երկրներից եկած համայնքների հետ կապված շատ այլ հայեր էլ կան, ռուսախոս, սակայն ովքեր միաժամանակ Հայաստանի ու Արցախի հետ ուղղակի կամ անուղղակի կապեր են պահպանում:

Իսրայելա-դադեստինյան կամ իսրայելա-լիբանանյան դատերազանների հետևանքներով տառադանքներ կրած, տուն ու տեղ կորցրած, գաղթական դարձած Պաղեստինի և Լիբանանի հայերը, ովքեր տառադել են ոչ թե որդես հայեր, այլ որդես դադեստինցիներ և լիբանանցիներ, և ովքեր այժմ բնակվում են ԱՄՆ-ում, ԱՄՆ քաղաքացիներ են, Իսրայելի հետ ԱՄՆ-ի հարաբերություններին շատ հաճախ մոտենում են ավելի շուտ որդես դադեստինցիներ կամ լիբանանցիներ՝ բնականաբար երկու դեղքում էլ ընդդիմանալով ԱՄՆ դրո-խորայելյան քաղաքականություններին: Պաղեստինում կամ Լիբանանում ծնված հայերն անխուսափելիորեն ունեն ինքնությունների այդ շերտը նույնպես՝ անկախ այն բանից, որ թե՛ Երուսաղեմում և թե՛ Լիբանանում շատերը մեծացել են մայր և առաջ որդես հայ և դաստիարակվել են հայկական միջավայրերում:¹¹

Այս անփոփ դիտարկումներում առաջարկված իմաստով՝ երբ սփյուռքը ձևակերտվում է որդես անդր-էթնիկ, անդր-լեզվական երևույթ, սփյուռքների ուսումնասիրության հարցում լեզվի ընտրությունը դառնում է կարևորագույն հարց: Սփյուռքի մեղ ըմբռնմամբ, թերևս, լավ է ենթադրել, որ սփյուռքը լավ է խոսի մեկ՝ այն է էթնիկ լեզվով: Հայերը լավ խոսեն հայերեն, հրեաները՝ եբրայերեն և այլն: Սակայն սփյուռքների իրականությունն այլ է: Սփյուռքները մեկ լեզվով չեն խոսում և չունեն մեկ լեզու: Այդ դատաճառով, սփյուռքի ուսումնասիրություններն էլ լավ է անցկացնել մի քանի լեզուներով:

Եթե որոշ դարազաններում սփյուռքի ներկայացուցիչների հարցազրույցները էթնիկ լեզվով են, հայերի դեղքում՝ արևմտահայերեն կամ արևելահայերեն,

սփյուռքի դրակտիկայի տեսանկյունից կարևոր է, որ հետազոտողները համադատասխան հարցերի միջոցով դարձեն մաս հայկականից բացի այլ ինքնությունների կարևորությունը, Հայաստանից բացի, սփյուռքահայ տարբեր շրջանակների համար իրենց ծննդավայր և մշտական բնակության երկրների կարևորությունը:

Բազմակի այս ինքնությունների կարևորությունն, իհարկե, տարբեր է սփյուռքահայ տարբեր շրջանակների մոտ: Սփյուռքում անշուշտ կան մասնաճիկ թեթևաբանի բնորոշմամբ՝ համայնքային ինքնասահմանման գործում կենսական դեր ունեցող անձինք:¹² «Նրանք կազմում են սփյուռքն «առաջնորդող վերնախավերը», կան այլ կերպ ասած՝ «չահագրգիռ մի խումբ», որի անդամները բացառապես սփյուռքյան մտահոգություններ ունեցող կազմակերպություններին ադապտվում են աշխատակազմով և ֆինանսական միջոցներով. նրանք ճնշում են գործադրում հոգուտ կան ընդդեմ հայրենի կառավարության (...), կան հայրենիքի համար դրամահավաք են կազմակերպում (...) կան դայքարում են նոր հայրենիքի շարժման շուրջ անդրազգային կրոնական համայնքը համախմբելու համար: Նրանք հաճախ մի երկրի քաղաքացիներ են, սակայն իրենց համարում են մաս անդրազգային քաղաքական ու մշակութային մի համայնքի անդամներ, երբեմն մաս որդես անդրազգային ազգ կան «անդրազգ»:¹³ Ինչդեռ թեթևաբան ինքն է մկատել, սակայն, այստիսի առաջնորդների թիվը, սովորաբար, սփյուռքում մեծ չէ, չնայած նրանք մեծ ազդեցություն կարող են ունենալ սփյուռքյան որոշ շրջանակների վրա:

Ամփոփելով սփյուռքի այս՝ ավելի ընդգրկում մոտեցումը, որ մերառում է ոչ միայն սփյուռքում ամենօրյա հայկականությանը աղորդ անձանց, էթնիկությանը այստես կոչված գտարյուն հայերին, այլ մաս նրանց, ովքեր տարբեր իրավիճակներից կախված են գործում որդես հայ և իրենց հայ համարում, ովքեր աղորում և գործում են երբեմն մի քանի լեզվական ու մշակութային դաշտերում՝ անդրադառնալով «սփյուռք» և «անդրազգ» հասկացությունների հարաբերություններին:

«Անդրազգ» հասկացությունը երբեմն օգտագործվում է միգրացիայի ժամանակակից ուսումնասիրություններում՝ մատնանշելու համար համաշխարհայնացման և արագացող բնակչության տեղաշարժերի այս ժամանակաշրջանում ազգերի անդրազգային կաղվածությունը ազգային դետությունների սահմաններից անդին: Միգրացիայի ուսումնասիրությամբ զբաղվող տեսաբաններն առաջ են քաշել անդրազգային սոցիալական տարածությունների և դաշտերի գաղափարները,¹⁴ որոնց միջոցով այլընտրանքային մոտեցումներ են առաջարկում տարածված ներգաղթ-ինտեգրացիա-ձուլում միակողմանի տեսություններին, խուսափելով մեթոդաբանական ազգայնականությունից, երբ միգրացիան վերլուծվում էր բացառապես ազգային դետությունների համատեքստերում:¹⁵ «Անդրազգ» հասկացությունն էլ առավել հաճախ գործած-

վում է միգրացիոն հոսքերի արդյունքում տարբեր երկրներում հաստատված այս կամ այն ազգային-դեմոկրատիայի քաղաքացիների համայնքների և նրանց երկրներում մնացած հայրենակիցների միջև առկա անդրազգային երևակալված համայնքն ընդգծելու մոտատակով:¹⁶ Հետխորհրդային Հայաստանից այլ երկրներում հաստատված գաղթական համայնքներին, այս իմաստով, թերևս, կարելի է համարել «հայ անդրազգ»-ի մաս` Հայաստանում և Արցախում բնակվող հայրենակիցների հետ միասին: Հայ անդրազգ հասկացության մեջ թերևս կարող են տեղավորվել նաև Թեօլեօլեանի մատնանշած «առաջնորդող ընտրախավերը» և նրանց որոշ հետևորդներ: «Անդրազգ» հասկացությունը ենթադրում է, որ տարբեր երկրներում աղյուսակային հայ գաղթականների սերունդները անդայնամորեն և միայն հայ են, օժտված են հիմնականում (կամ բացառապես) հայկական ինքնություններով ու հավատարմություններով և անդայնամորեն կապված են միմյանց և Հայաստանում ու Արցախում աղյուսակային ազգի մնացյալ հատվածներին:

Սփյուռքն, իհարկե, անդրազգային երևույթ է: Խաչիկ Թուլոյանի հաճախակի մեջբերվող ձևակերպմամբ` սփյուռքները «անդրազգային դահի օրինակելի համայնքներն են»:¹⁷ Սակայն, անդրազգ հասկացությունն ավելի, քան սփյուռքը, դարձնում է ենթադրում է մշակութային որոշ մոլորություն, որ դժվար է ուրվագծել իրեն 25% հայ և 75% աներիկացի համարող, բայց հայ ինքնությունը երբեք չժխտող և սփյուռքի մասը հանդիսացող անձի, և Հայաստանում կամ Արցախում բնակվող հայի միջև: Այս առումով «անդրազգ» հասկացությունը չի ընդգրկում սփյուռքի այն զանգվածներին, որոնք գործում են մի քանի էթնիկ-մշակութային դաշտերում, ունեն խառնածին և բազմազան ինքնություններ, որոնք նաև անվերադարձ կազմում են սփյուռքի մասը` անկախ այն բանից, թե որևէ կառավարություն, կազմակերպություն, խմբավորում, կառույց կամ անհատ իրենց համարում է սփյուռք, թե ոչ: Խառնածին ինքնություններով հայ սփյուռքի ստվար զանգվածներ, որոնք կանոնավոր մասնակցություն ունեն սփյուռքյան կառույցների գործառնությանը, սփյուռքահայ մշակութային ձևերի արտադրությանն ու վերարտադրությանը, որոնք տարբեր իրավիճակներում կարող են մերկայանալ որդես տարբեր ազգային խմբերի ներկայացուցիչներ, դուրս են մնում «անդրազգ» հասկացության սահմաններից:

Սփյուռքի այս բազմազան դրսևորումները հաշվի առնելով` անհրաժեշտ է ձևավորել սփյուռքի ուսումնասիրության այնպիսի մեթոդաբանություններ, որոնք հնարավորություն կընձեռեն արձանագրել սփյուռքի իրական ու բազմազան դրսևորումները` հայրենիքի ու հայկականության մասին բազմազան ընկալումներով: Կարևոր է հասկանալ, թե ինչ մեթոդներով, ինչ լեզվով/լեզուներով ղեկավարվում է անցկացնել սփյուռքի ուսումնասիրություններ, որդեսակի հետազոտական կազմակերպությունների և հետազոտողների դիրքորոշումներ:

րի ազդեցությունները դաշտային աշխատանքների և սոցիոլոգիական ու մարդաբանական մեթոդներով ստացվող տեղեկատվության վրա հնարավորինս նվազագույնի հասցվեն:¹⁸ Այս դարազայում է, որ հնարավոր կլինի հասկանալ սփյուռքների ողջ բարդությունն ու սփյուռքյան մշակույթների և ինքնությունների բազմազանությունը, և, համադաստասխանաբար, մշակել սփյուռքի տարասեռ համայնքների ու կազմակերպությունների հետ աշխատելու, սփյուռքի կարողությունները հավաքագրելու և սփյուռքյան գործընթացներին մասնակցելու ավելի իրազեկ քաղաքականություններ:

- 1 «Ես 25 տոկոս հայ եմ, ես 50 տոկոս հայ եմ, ես 100 տոկոս հայ եմ»:
- 2 Հողվածում օգտագործվում են հատվածներ հեղինակի՝ 2012-2014 թվականներին Լիբանանում, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում անցկացրած հարցազրույցներից և դիտարկումներից:
- 3 Հարցվողների ինքնության գաղտնիությունն առաջադրելու նպատակով հողվածում ամուսնները փոխված են: Դեյվիդի հետ հարցազրույցն անցակացվել է ԱՄՆ-ում, 2014 թվականի փետրվարին:
- 4 ԱՄՆ-ում Հայ Առաքելական եկեղեցին ունի չորս թեմ՝ երկու Արևմտյան թեմ և երկու Արևելյան թեմ, որոնցից ամեն զույգը գործում է համադասախանաբար էջմիածնի և Սեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունների իրավասության ներքո: Կիլիկիո կաթողիկոսության թեմերն իրենց եկեղեցիներով ավանդաբար ավելի մոտ են եղել ՅՅԴ-ական շրջանակներին, իսկ էջմիածնական թեմերը՝ Բարեգործական (ՅԲԸՄ)-Ուսմկավար (ՈՍԿ) շրջանակներին: Սանրամասնությունների համար տես՝ Vahe Sahakyan, *Between Host-Countries and Homeland, Institutions, Politics and Identities in the Post-Genocide Armenian Diaspora, 1920s-1980s* (PhD Dissertation, Ann Arbor: University of Michigan, 2015), էջ 207-213, 306-328:
- 5 Դոմինիկի հետ հարցազրույցն անցկացվել է 2012 թվականի սեպտեմբերին:
- 6 Տես Walker Conner, «The Impact of Homelands Upon Diasporas», *Modern Diasporas in International Politics*, Gabriel Sheffer (խմբ.) (London & Sydney: Croom Helm, 1986), էջ 16-46; William Safran, «Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return», *Diaspora: a Journal of Transnational Studies*, հ. 1, թիվ 1 (1991), էջ 83-99; Gabriel Sheffer, «A New Field of Study: Modern Diasporas in International Politics», *Modern Diasporas in International Politics*, Gabriel Sheffer (խմբ.) (London & Sydney: Croom Helm, 1986), էջ 1-15:
- 7 Stuart Hall, «Cultural Identity and Diaspora», *Identity: Community, Culture and Difference*, Jonathan Rutherford (խմբ.) (London: Lawrence & Wishart, 1990), էջ 235-236: Այս և հետագա մեջբերվող հատվածների թարգմանությունները՝ Վահե Սահակյանի:
- 8 Hall, «Cultural Identity and Diaspora», էջ 235:
- 9 Daniel Boyarin, Jonathan Boyarin, «Diaspora: Generation and the Ground of Jewish Identity», *Critical Inquiry*, հ. 19, թիվ 4 (1993), էջ 721:
- 10 Boyarin, «Diaspora: Generation and the Ground of Jewish Identity»:
- 11 Այստեղ հարկ է նշել, որ ոչ բոլոր հայերն են, օրինակ, Լիբանանում մեծանում բացառապես հայկական ու հայադասիական միջավայրերում: Այս մասին տես՝ Անահիտ Տոմադետեան, «Արևմտահայերենը այսօր Լիբանանի մէջ. իրողութիւններ եւ դասակարգումներ», *Լիբանանի հայերը (Բ.)*, *Գիտաժողովի Գիրքեր*, Անդրանիկ Տազետեան (խմբ.) (Պէյրուս: Haigazian University Press, 2017), էջ 265-266, 270-272:
- 12 Khachig Tölölyan, «Armenian-American Literature», *New Immigrant Literatures in the United States: a Sourcebook of Our Multicultural Literary Heritage*, Knippling Alpana Sh. (խմբ.) (Westport, Connecticut: Greenwood Press, 1996), էջ 25:
- 13 Khachig Tölölyan, «Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment», *Diaspora*, հ. 5, թիվ 1 (1996), էջ 18-19:
- 14 Անդրազգային սոցիալական տարածությունների և դաշտերի մասին տես Thomas Faist, *The Volume and Dynamics of International Migration and Transnational Social Spaces* (Oxford: Clarendon Press, 2000); Peggy Levitt, *The Transnational Villagers* (Berkeley: University of California Press, 2001); Peggy Levitt, Nina Glick Schiller,

«Conceptualizing Simultaneity: a Transnational Social Field Perspective on Society», *International Migration Review*, թիվ 38 (2004) էջ 1002-1039; Cristina Szanton Blanc, Nina Glick Schiller, Linda G. Basch, Katherine Ong, *Nations Unbound: Transnational Projects, Postcolonial Predicaments, and Deterritorialized Nation-states* (London: Routledge, 1993); Nina Glick Schiller, «The Centrality of Ethnography in the Study of Transnational Migration», *Sociology of Diaspora: A Reader*, Ajaya Kumar Sahoo, Brij Maharaj (խմբ.), հ. 1 (New Dehli: Rawat Publications, 2007), էջ 118-156:

¹⁵ Մեթոդաբանական ազգայնականության և միգրացիայի մասին տե՛ս Andreas Wimmer, Nina Glick Schiller, «Methodological Nationalism and Beyond: Nation-State Building, Migration and the Social Sciences», *Global Networks*, հ. 4, թիվ 2 (2002), էջ 301-334; Andreas Wimmer, Nina Glick Schiller, «Methodological Nationalism, the Social Sciences and the Study of Migration: An Essay in Historical Epistemology», *International Migration Review*, հ. 37, թիվ 3 (2003), էջ 576-610:

¹⁶ Ամերիկայի հասկացության քննադատական ըմբռնումների մասին տե՛ս, օրինակ՝ *State/Nation/Transnation: Perspectives on Transnationalism in the Asia-Pacific*, Brenda S.A. Yeoh, Katie Willis (խմբ.) (London and New York: Routledge, 2004) հոդվածների ժողովածուն, կամ հետևյալ հոդվածները. Deborah A. Boehm, «"For My Children": Constructing Family and Navigating the State in the U.S.-Mexico Transnation», *Anthropological Quarterly*, հ. 81, թիվ 4 (2008), էջ 777-802; Amanda Wise, «Nation, Transnation, Diaspora: Locating East Timorese Long-distance Nationalism», *Sojourn: Journal of Social Issues in Southeast Asia*, հ. 19, թիվ 2 (2004), էջ 151-180; Weimin Tang, «Echoes from the Borderlands: Transnation and Cultural Identity in Chuang Hua's Crossings», *Crossings: Journal of Migration & Culture*, հ. 1, թիվ 1 (2010), էջ 25-36 և այլն:

¹⁷ Khachig Tölölyan, «Nation-State and its Others: In Lieu of a Preface», *Diaspora*, հ. 1, թիվ 1 (1991), էջ 5:


¹⁸ Չեռազոտոդի դերի շուրջ հետաքրքիր քննարկման համար տե՛ս Takeyuki Tsuda, *Strangers in the Ethnic Homeland: The Japanese Brazilian Return Migration in Transnational Perspective*, գլուխ 1 (New York: Columbia University Press, 2003) էջ 1-54:



ՀԱՅԿԱՏԱԿԱՆ
ARMENIA 2018

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES

**ՊԿՏԱՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՊԿՏԱՎԳՐՈՒԹՅՈՒՆ**



ՈՒՆԱԼԴ
ԳՐԻԳՈՐ ՍՅՈՒՆԻ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՆԳ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ. ՀԻՇԵԼՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
(ԵՎ ԴԱՍ ՔԱՂԵԼՈՎ)
ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻ ԱՆՑ



ատնություն դասավանդելով Միջիգանի համալսարանի բակալավրիատի ուսանողներին՝ դասընթացս սովորաբար սկսում են բացատրելով, թե ինչ նկատի ունենալով լուրջ հիմունքներ ասելով, հինգ տարրեր, որոնք, կարծում են, լավ լուրջաբանները հաշվի են առնում, թերևս ոչ լիովին գիտակցված, որոշեցի համակարգեն իրենց նյութը, կազմակերպեն համադասարանական փաստերի ընտրությունը և որոշեցի ձևակերպեն իրենց փաստարկներն ու բացատրությունները: Այդ հիմունքներն են՝ ՀԱՄԱՏԵՔՍԱԸ, ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԴԻՊԼՈՄԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՇՓՈՒԹՅՈՒՆԸ: Այսօր կցանկանալի վերոնշյալ լուրջաբանական հղացքներն օգտագործել՝ ներկայացնելու համար իմ ընթերցումը Հայաստանի առաջին հանրապետության լուրջաբանական և ժողովրդական վերաբերյալ հարյուր տարի անց:

Հայերն իբրև ժողովուրդ ավելի հաճախ ղեկավարվում են իրենց լուրջաբաններից, քան ղեկավարում այն: Հեռավոր անցյալի իրադարձությունները գրեթե ճակատագրորեն են ազդում նրանց՝ իրենց մասին ունեցած լուրջաբանականների վրա, իսկ տասնամյակների, նույնիսկ դարերի հաղթանակներն ու լուրջաբանությունները վերարտադրվում, վերամտածվում են, ու դրանով իսկ վերագործարկում հնագույն երկրաբանություններն ու ընդհարումները: Վերցնենք, օրինակ, այն արտառոց հանգամանքները, որոնցում ծնվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, Երևանում 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին դաշնակցական կառավարության անկմանն ուղեկցած ողբերգական իրադարձությունները, Խորհրդային իշխանության հիմնումը և 1921 թ. փետրվարից ադրիլ տևած աղստամբությունը կամ խռովությունը – վերցրեք որը կուզեք: Հեռավոր այս իրադարձությունները հայերի շրջանում դեռևս բանավեճի և փոխադարձ մեղադրանքների առարկա են, ասես անցյալում կատարվածը օրինավորություն է հաղորդում մի կողմին և բացառում մյուսի քաղաքական ղեկավարները:

Պատմաբանների համար կարևորագույն գործոնները լուրջաբան է լինեն (սակայն հազվադեպ է այդպես լուրջաբանում) ոչ թե լուրջաբանական իրենց ներկայացման քաղաքական հետևանքները, այլ հենց բուն իրադարձությունները: Ի՞նչ է եղել, ինչո՞ւ է եղել և ինչո՞ւ է կարելի է եղածը մեկնաբանել ու հասկանալ: Իրենց խնդիրն իրականացնելու համար լուրջաբանները դիմում են սկզբնաղբյուրներին, այնքանը, ինչքանը կկարողանան ձեռք բերել, և վերլուծում են առավելագույնս ամբողջական փաստագրությունը հնարավորինս ճարտարամտորեն և ազնվորեն: Թեթևաբան կատարյալ օբյեկտիվությունն իրականում երբևէ հնարավոր չէ, լուրջաբանների լուրջաբանությունն է ազնվի և բաց լինել իրենց կողմնակալությունների, մեթոդների և աղբյուրների հաշվով, որոշեցի ընթերցողները կարողանան դատել, թե ինչո՞ւ է կառուցվել նրանց լուրջաբանությունը: Այդ իսկ լուրջաբանով, լուրջաբանական ընթերցողության այս հինգ կարևոր աստիճանները հարկավոր է ներգրավել խնդրի լուծման մեջ. **համա-սեֆուս** (հասարակական, քաղաքական, մշակութային, մտավորական միջավայրը, որում տեղի են ունեցել իրադարձությունները, ինչո՞ւ են նաև այն

ժամանակը, որում դրանք տեղի են ունեցել), **համադրություն** (խոշոր լատինական գործընթացների շարժը), **դիմվածայնություն** (մասնավոր իրադարձությունների, դիմվածների, ամձերի ազդեցությունը), **հակասություններ** (անկանոնություններ, բաներ, որոնք հեշտորեն չեն համակարգվում և խոյս են տալիս տարբեր կողմեր լատինաբանի ընտրած ուղղությունից), և **չփոթություն** (խոնարհությունը, որ ամեն ինչ իմանալ չես կարող և բոլոր հարցերին քեզ հարմար լատինաբան չես գտնի):

Ի՞նչ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ էր ստեղծվում Հայաստանի առաջին հանրապետությունը: Ամենաընդարձակ և, թերևս, կարևորագույն համատեքստը Առաջին համաշխարհային լատերագրի կործանարար դրությունն էր. աղետալի արյունառությունը, որում գոհվեցին տասնյակ միլիոնավոր մարդիկ, և ուրիշ տասնյակ միլիոններն էլ խեղվեցին, տեղահանվեցին ու ստիպված եղան լքել իրենց բնակության վայրերը: Հայերի համար այդ համատեքստն ընդգրկում էր կոտորածներ, տարագրություններ և հարկադրված դավանափոխություններ՝ ճանաչված որդես Հայոց ցեղասպանություն: Սրան լատեր է հավելենք 1917 թ. Ռուսաստանը ցնցած ու հաջորդ հինգ տարիների մահաբեր քաղաքացիական լատերագրի տեսքով շարունակված հեղափոխությունները: Հեղափոխությունները երկարաձգեցին մահամերձ Օսմանյան կայսրության կյանքը ևս մի քանի տարով, բայց վերջիվերջո լատերագրի ավարտը լատերապես ստեղծեց տերությունների միջև՝ օսմանների և ռուսների, կայսրություններ, որոնք դարերով ղեկավարել էին (միգուցե ասենք զավթել էին) Հայաստանը և հայերին տրամադրել սեփական լատությունը ստեղծելու կարճատև, անցողիկ հնարավորություն: Հայաստանի անկախությունը, միշտ անկայուն, իրականություն դարձավ 1918 թ. մայիսին՝ անկանխատեսելի քաղաքական հնարավորության՝ Ռուսաստանի մահանջի և Օսմանյան կայսրության վերահաս փլուզման արդյունքում:

Առաջին հանրապետության ծնունդի համատեքստն, ուրեմն, ԵԼՔՆ ԷՐ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԵԼՔՆ ԱՐԵՏԱԼԻ, ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ:

1918 թ. Թիֆլիսում ռուսների մահանջից ստեղծված լատերապես լատյաններում հայ քաղաքական առաջնորդները Հայաստանը ղժկամորեն հայտարարեցին անկախ լատություն: Այդ լատությունը մոտ երկուսուկես տարվա կարճատև ու ղժկարին գոյատևում աղահովեց, զգալի չափով սեփական ժողովրդի և նախընտրած քաղաքական առաջնորդների՝ *Դաշնակցության*, ինչպես նաև Բրիտանիայի և Միացյալ Նահանգների տեղին, չնայած խիստ սահմանափակ օժանդակության շնորհիվ: Անկախությունը հնարավոր էր մինչև երկու մրցակից տերությունները վերակազմավորվեցին բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի ու խեղդեցին իրենց միջև ընկած փխրուն, քիչ հավանական նկատվող, լքված լատությունը: Պատմության օրենքն է թերևս, որ Հայաստանը կարող է գոյատևել իբրև անկախ լատական միավոր միայն, երբ շրջապատող տերությունները կամ թույլ են, կամ ձախողված կամ էլ փոխ-

հավասարակշռող: Հակառակ դեղքում հայերի ճակատագիրը կամ դրանց միջև բաժանված, կամ դրանցից ավելի հզորի տիրապետության տակ լինելն է:

Իսկ ի՞նչ կարելի է ասել անկախ Հայաստանի նախ գոյությունը թույլատրող և ամրա դրա տաղալունը վճռող ուժերի յուրահատուկ ՀԱՍԱԴՐՈՒԹՅԱՆ մասին: Սերտորեն կաղված լինելով այն համատեքստին, որում հայերը հայտնվել էին, համադրությունը ներառում էր Արևմտյան տերությունների՝ մրցակից ինքնակալությունների միջև գտնվող և ժողովրդավարական ղեկավարություն ստեղծելու փափագով տոգորված փոքրիկ, մեկուսացած հանրապետությանը արդյունավետորեն օգնելու ձախողումը: Առանց բարերարի՝ անկախ նրանից կլինեի դա Սիացյալ Նահանգները թե Բրիտանիան, անկախ Հայաստանը անկարող էր ինքնուրույն գոյատևել քեմալականների և բուլշևիկների մրցակից նրա տակադրությունների ղայմաններում: Հաշվի առեք, որ այս յուրահատուկ **համատեքստում**, այս յուրահատուկ **համադրության** մեջ հայերի գործողություններն ու ցանկությունները մեծապես անեական էին: Նրանք իրենց անվտանգությունն ամրապահելու նույն զորավոր գործորդներ չէին. փոխարենը ենթակա էին մրցակից տերություններին: Նրանց ճակատագիրը մեծապես, բայց ողջ ամբողջովին, որոշում էին ուրիշները: Այստեղ, երկրի ճակատագրի համար կարևոր գործոններ էին ընտրությունների և գաղափարախոսական նախադասությունների ՀԱՍԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ինչպես նաև՝ առաջնորդների աշխարհի ղատկերացման ձևերը:

Անկախ դրանք իրապես վճռորոշ էին, թե ոչ, դժվար է ժխտելը, որ հայ առաջնորդները սխալներ գործել էին: Նրանց աշխարհագրական նրա տակադրություններն իրենց նյութական միջոցների համեմատ չափազանց մեծ էին: Նրանք իրենց ամենից շատ նույնականացնում էին Արևմտյան դաշնակիցների հետ, ինչը և՛ քեմալականների, և՛ բուլշևիկների համար նշանակում էր, որ նրանք իմպերիալիստների խաղաղիվորներն էին: Հանրապետությունը կառավարող դաշնակները Մոսկվայի և Անկարայի կողմից դիտվում էին իբրև միջազգային սոցիալիստական հեղափոխության, թուրքական ազգայնականության և բուլշևիկների ու քեմալականների հակազդության ղատակների թշնամիներ:

ԴԻՊԿՍՕՍՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ղատնությանն այլ ուղղություն տալ կարող առանձնահատուկ իրադարձությունների ու անձերի շարքում հարկ է նկատի առնել քաղաքական առաջնորդների հայացքները, նրանց գաղափարախոսություններն ու բաղձանքները, կամքն ու դատողության և ընթրնողության սխալները: Ինչպես այլ տեղերում են գրել, վերջին հաշվով, անկախ Հայաստանի ձախողումը ո՛չ հանրապետության առաջնորդների մեղքն էր, ոչ էլ հայկական համայնքի ներսում նրանց հակառակորդների: Այն դաշնակների անձեռնհասության կամ հարձակողականության հետևանք չէր, թեպետև իշխող կուսակցությունը լիովին անմեղ չէր: 1918 թ. ոուսական կողմնորոշումից հրաժարումը հոգուտ եվրոպական կողմնորոշման բավական ողջամիտ քայլ

եր՝ հաշվի առնելով այդ ժամանակ ուսական օժանդակության անհնարինությունը, բայց դա բախտախաղ էր: Իրադեպ քիչ հավանականություն ունեցող բայլ: Դեռևս որ խորհրդային ուժերը 1920 թ. շարժվեցին Կովկաս, դաշնակներն առերեսեցին մի նոր վտանգ: Խորհրդային Ռուսաստանն անվերադարձորեն չէր աջակցի Արևմտյան տերություններին կառաված ու բոլշևիկների դեմ թշնամության երկար դատարանություն ունեցող կուսակցության կողմից կառավարվող հանրապետությանը: Դաշնակները կարող էին ավելի արագ գործել խորհրդային աջակցությունը շահելու համար, նրանք մաս կարող էին դասակաս սահմանի չգտնվել թուրք ազգայնականների հանդեմ: Բայց, վերջին հաշվով, նրանք ավելի խոշոր տերությունների դաշնակցների գոհն էին:¹

Նախքան վերջին երկու հիմունքների՝ ՀԱՎԱՍՈՒԹՅԱՆ և ՇՓՈԹՈՒԹՅԱՆ քննարկմանը անցնելը, եկեք մախ դիտարկենք հանրապետության անկումն ու հանրապետությունը վերականգնելու վերջին հուսահատ փորձը խորհրդային զավթումից հետո:

Ի՞նչ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ էր Հայաստանի խորհրդայնացումն ու 1921 թ. փետրվարյան ադատամբությունը: Մինչև 1920 թ. գարունը կոմունիստները վերահաստատում էին ուսական կենտրոնական կառավարության իշխանությունը մի ժամանակ ուսական կայսրությունը կազմող անկախ հանրապետությունների նկատմամբ: Ռուսական քաղաքացիական դատերազանը ավարտին էր մոտենում, իսկ օտարերկրյա ուժերը, որոնք միջամտել և օժանդակել էին այդ ազգային հանրապետությունների ձևավորմանը, մահանջում էին աստարեզից: Քաղաքական իրադրությունը կտրուկ փոխվել էր մինչև 1920 թ.: Թուրքիան վերակենդանանում էր քեմալականների իշխանության ներքո, իսկ կոմունիստները հաղթանակած էին դուրս գալիս ուսական քաղաքացիական դատերազանում: Ադրբեջանում առաջխաղացող թուրքերի ու Կարմիր բանակի արանքում հայտնված՝ դաշնակներն ընտրեցին քաղաքական համաձայնության գալ կոմունիստների հետ և մուտք գործել դաշնային կառավարություն:

1920-1921 թթ. մի յուրահատուկ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ առաջացավ ուսական քաղաքացիական դատերազանում բոլշևիկների հաղթանակով ու քեմալական շարժման հաջողությամբ: Խորհրդային Ռուսաստանը ամենից շատ հետաքրքրված էր սեփական անվտանգությամբ ու միջազգային սոցիալիստական հեղափոխության աջակցմամբ: Գիտակցելով, որ Արևմտյան կաթիլալիստական աշխարհում նոր կայունացում է սղասվում, Կոմունիստական ինտերնացիոնալի առաջնորդները կողմնորոշվեցին դեռևս ոչարևմտյան աշխարհ՝ Միջին Արևելք, Հնդկաստան և մի փոքր էլ Չինաստան՝ հույս ունենալով, որ այսօրվա անվանմամբ «երրորդ աշխարհում» հեղափոխությունը կխարխլի բրիտանական կայսերականությունն ու կարագացնի հեղափոխության ժամանակը Եվրոպա: Սա էր Բաքվի 1920 թ. սեպտեմբերի հայտնի՝ Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի թեման, որտեղ և քննարկվեց Հայկական հարցը, և մնաց իբրև Հայաստանի հանդեմ խորհրդային քաղա-

քականության գիտակցված հաշվարկ հաջորդող մի քանի տարիների ընթացքում: Հայաստանի ճակատագիրը ստորադասվեց մուսուլմանական աշխարհում հեղափոխության ավելի լայն խնդրին, ինչպես նաև թուրք և Պարսիկ ազգայնականների շրջանում դաշնակիցներ ձեռք բերելու ռազմավարությանը: Ուղիղ ասած՝ «Հայաստանը Խորհրդային Միության համար արժեք չէր ներկայացնում ու միշտ ստորադաս էր Ռուսաստանի հեղափոխական նպատակներին»:²

Արևմտյան Հայաստանը՝ հիմնականում դատարկված հայերից և հաղթանակած քեմալականների ձեռքերում էր. ռուսական քաղաքացիական Պատերազմի (1918-1921) ավարտին միայն Արևելյան Հայաստանն էր, Պատմական Հայաստանի այն փոքրիկ կտորը, որը մինչև 1828 թ. Պարսկական տիրապետության տակ էր, իսկ հետո՝ մինչև 1917 թ.՝ Ռուսական կայսրության, որ մնացել էր հայերի ղեկավարության ներքո:³ 1920 թ. փետրվարից ղեկտեմբեր բախտորոշ ամիսներին Պարզ դարձան հայկական ղեկավարության հանդեպ Արևմտյան հավատարմության սահմանները, և քեմալական թուրքերի ու Խորհրդային Ռուսաստանի մահաբեր դաշինքն իր բուռն առավ հանրապետությունը: Փետրվարին Լոնդոնի համաժողովից սկսած, Հայաստանը հետզհետե կորցրեց Դաշնակիցների արդյունավետ աջակցությունը, իսկ ամրիլին Սան Ռեմոյում Բրիտանիան, Ֆրանսիան և Իտալիան հստակեցրին, որ չնայած հայերի կորուստների ու հավատարմության հանդեպ իրենց կարեկցությանը, իրենք՝ հանրապետության գոյությունը երաշխավորելու նպատակով ուժ չեն կիրառի: Սին հույսեր կային, թե Միացյալ Նահանգները կվերցնի այդ բեռն իր վրա: Որտեղ հայերը տարտղնված էին, ինչպես հարավային Անատոլիայի Մարաշ քաղաքում, այնտեղ նրանք սղանվում կան արտաքսվում էին քեմալականների կողմից: Որտեղ կարողանում էին համախմբել սեփական ուժերը, ինչպես օրինակ Կարսի մարզում, այնտեղ նրանք սեփական գործողություններն էին սկսելու տեղացի մահմեդականների դեմ: Հանրապետության հայ գործակալները չարաբաստիկ մի աղստամբություն սկսեցին հարևան Ադրբեջանի կողմից զավթված Ղարաբաղում, որը հանգեցրեց հարյուրավոր հայերի սղանությանը Շուշիում և այլուր: Ադրբեջանցիները տիրացել էին Ղարաբաղին այն Պահին, երբ Կարմիր բանակը մվաճեց նրանց մայրաքաղաքը՝ Բաքուն, և արմատաղես փոխեց ուժերի հավասարակշռությունն Անդրկովկասում: Խորհրդային ուժերի Կովկասում գտնվելը Հայաստանի և Վրաստանի տեղական բուշկիկներին խրախուսեց աղստամբություններ սկսել, սակայն իշխող մեմշկիկներն ու դաշնակները դաժանորեն ճնշեցին նրանց: Մայիսյան աղստամբությունը Հայաստանում տաղալեց չափավոր կառավարությունը, որը փոխարինվեց Դաշնակցության բյուրոյի անդամներից բաղկացած կուսակցական բռնատիրությամբ:

Բոլոր երեք նորաստեղծ հարավկովկասյան հանրապետությունների նպատակը ազգային հողում սեփական ժողովրդի գերակայությամբ էթնիկաղես համասեռ ղեկավարություններ ստեղծելն էր: Քանի որ Կովկասը կայսրությանը

սահմանամերձ տարածք էր, որտեղ բարդ միախառնում էր ընթացել, կառավարություններն ու անկախ ուժերն ազդեցություններ էին արձակում, ինչպես նաև Անդրանիկն ու Նոյեմբերը, ձեռնարկել էին ստեղծել «փաստեր գետնի վրա», տարածքն ազգայնականացնելու մի քաղաքականություն, որն ի գործու կլիներ դիմակայել:

Հայաստանի դաշնակցական առաջնորդները ստիպված էին գործ ունենալ անգոր և անվստահելի բանակի, ինչպես նաև հանրադատության սահմանների ներսում գտնվող մուսուլմանների ստվար զանգվածի հետ: Նրանք ձեռնամուխ եղան ազգայնացման քաղաքականության՝ դաժանելով, որ բոլոր ղեկավարները մոր աշխատողները գործածեն հայերենը՝ հեռացնելով ռուս լեզուստոնյաներին և հրահանգելով, որ դատարաններում դատարանի կիրառվի հայերենը: 1920 թ. հունիսի 5-ի քաղաքացիության ազատական օրենքը հանրադատության բոլոր այն բնակիչներին, ովքեր նախկինում Ռուսաստանի կամ Թուրքիայի հողատակներ էին եղել, ճանաչեց Հայաստանի քաղաքացի, ինչպես նաև միջոցներ ձեռնարկվեցին, որ արտերկրի հայերը կարողանան դիմել քաղաքացիություն ստանալու համար: Բայց միևնույն ժամանակ կառավարությունը ուժեղացրեց գործողություններ մեկնարկեց մուսուլմանական գյուղերի դեմ՝ քրդերին ու թուրքերին նախկին ռուս-թուրքական սահմանից դուրս հանելով: Հրաժարվելով ճանաչել հայկական դաժանությունները՝ քեմալականները վիճարկում էին սահմանային այդ շրջանը, որը 1878-ին օսմանյան թուրքերը տանուլ էին տվել ցարական Ռուսաստանին: Էլ ավելի չարաբեր էր Հայաստանի համար այն, որ երբ հայկական բանակը փորձեց շարժվել դեպի մուսուլմանաբնակ Նախիջևան, ճանադարին արգելափակված էր խորհրդային ու թուրքական զորքերով՝ միավորված կեղծ-կարմիր դաշինքով: Հուլիսին Բաթումիում Բրիտանական կայազորը՝ Դաշնակիցների վերջին զորքն Անդրկովկասում, նահանջեց՝ հայերին մեծակ թողնելով ընդդեմ ավելի հզոր թշնամիների:

Նման քաղաքականությունները հիմնված էին ազգերի մասին ավելի ու ավելի ազդեցիկ դարձող խոսույթի վրա, համաձայն որի «ազգին», ինչպես էլ որ այն ըմբռնվեր, անհրաժեշտ էր որոշակի տարածք, որտեղ նա իշխում էր: Սրանից բխում էին ինքնակառավարման ու անկախ ղեկավարման ձևավորման նրա իրավունքները: Ազգային ղեկավարություն ստեղծելու այս ջանքերը հարավ-կովկասյան ժողովուրդների միջև խորը թշնամանք ու անհամագստություն առաջացրեցին, որոնք գոյություն ունեն մինչ օրս: Ժողովուրդների շխառնվելու սկզբունքը դրված էր երեք հանրադատությունների ստեղծման հիմքում:

Հայկական դիվանագիտական ջանքերը զարգանում էին երկու առանձին ուղղություններով. մեկը Արևմուտքում, որը և հանգեցրեց Սևրի մեռելածին դաշնագրին, որով թղթի վրա ստեղծվեց ընդարձակ հայկական ղեկավարությունը՝ Վուդրո Վիլսոնի գծած սահմաններով, մյուսը՝ Մոսկվայում և Երևանում, Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների՝ թուրք ազգայնականներից

դաշտդանություն ձեռք բերելու նույնքան աղադրյուն ջանքերով: Ե՛վ հանրա-
 ղետությունում, և՛ արտերկրում գտնվող հայերը 1920 թ. համախմբվեցին ան-
 կախ ղետության իրենց աջակցության շուրջ: Երանք կիսում էին այն հույսը,
 որ ինչ-որ ժամի անկախատեսելի աղազայում փոքրիկ կովկասյան միավո-
 րը կդառնա ավելի ընդարձակ, միավորված հայկական ղետության կորիզը,
 որը կներառի ղատմական Հայաստանի հողերը, այն հողերը, որոնցից երիտ-
 ղությունը 1915-1916 թթ. ջնջել էին հայերին: 1920 թ. մայիսի վերջին նախա-
 գահ Վիլսոնը դիմեց Կոնգրեսին՝ Հայաստանի նկատմամբ հայկական իրա-
 վասության հաստատման ղույլտվություն ստանալու համար, սակայն սենա-
 տոր Հենրի Քեքոթ Լոջի առաջնորդած «անհաշտները» Սենատում դեմ քվե-
 արկեցին նրա դիմումին: Դաշնակիցների ընկրկման ղայմաններում Հայաս-
 տանի անկախ աղազան ավելի ու ավելի էր կախվում Խորհրդային Ռուսաս-
 տանի հետ վստահելի հարաբերության մշակումից: Բայց խորհրդային առաջ-
 նորդներն իրենք բաժանված էին երկու մասի՝ ջափավորների, ինչդես, օրի-
 նակ՝ արտաքին գործերի կոմիսար Գեորգի Չիչերինը, որոնք ղատրաստ էին
 Հայաստանի ու Վրաստանի հետ հաստատել խաղաղ միջդետական հարա-
 բերություններ, և ռազմատեմչների, օրինակ՝ Սերգո Օրջոնիկիձեն, որոնք
 ձգտում էին մնացյալ Հարավկովկասյան հանրաղետությունների հեղափո-
 խական կամ ռազմական գրավմանը:

Անկախ ղետության ստեղծմանն ի նղաստ՝ Չիչերինը փորձում էր համոզել
 հայերին հետ կանգնել ղուրքական Հայաստանի նկատմամբ ղահանջներից:
 Բայց հայերը մերժեցին: Նախիջևանի, Չանգեզուրի և Ղարաբաղի հարցով
 լուրջ տարաձայնությունները ևս ղառակտում էին Հայաստանն ու Խորհր-
 դային Ռուսաստանը: Նույնիսկ, երբ երկու ղետությունների միջև բանակցու-
 ղությունները ջարունակվում էին, Կարմիր բանակի միավորները ջարժվեցին
 վիձահարույց տարածքներ և խորհրդային ու հայկական զորքերը բախվեցին
 Չանգեզուրում: Խորհրդային ղատվիրակ Բորիս Լեզրանը բանակցեց ընդ-
 հարման ջուտափույթ դաղարի համար, և օգոստոսի 10-ի համաձայնությանը
 ձանաչեց «Հայաստանի հանրաղետության անկախությունն ու լիարժեք ինք-
 նորոջումը»:4 Այդ նույն օրը, Եվրողայի մյուս ձայրում, հայկական ղատվիրա-
 կությունը ստորագրեց Սևրի դաշնագիրը՝ հանրաղետության ձակատագիրը
 կաղելով Արևմտյան դատարկ խոստումներին: Տասը օր անց Խորհրդային
 Ռուսաստանը ստորագրեց Քեմալի առաջնորդած ղուրք ազգայնականների
 հետ բարեկամության դաշնագիրը, և Հայաստանն ընկավ խորհրդային մուր-
 ձի ու քեմալական զնդանի արանքը:

Հանրաղետության գոյության վերջին արարը սկսվեց սեղտեմբերի սկզբին,
 երբ ղուրքական զորքերը նախահարձակ եղան նախկին ռուս-ղուրքական
 սահմանի երկայնքով: Իրաղարձություններն արագ զարգացան: Թեղետև
 Մոսկվան համակրում էր քեմալականների հակակայսերական օրակարգը,
 կողմերից յուրաքանչյուրը կասկածանքով էր վերաբերում Անդրկովկասի ա-
 ոնջությանը մյուսի մտաղրություններին: Լեզրանը Երևանում մեծահոգի ղայ-

մանագրի մի նախագիծ էր ստորագրել՝ խորհրդային ճանաչում շնորհելով Հայաստանի տարածքային դաժանեցների մի մասին, սակայն միևնույն ժամանակ Մոսկվայում և Բաքվում խորհրդային քաղաքականությունը կողմնորոշվել էր դեմի ռազմատենչների դիրքորոշումը՝ նախադասություն տալով հանրադատության խորհրդայնացմանը: Վհատված հայկական բանակը Կարսում խուճաղի մատնվեց՝ հոկտեմբերի 30-ին բերդաքաղաքը գեներալ Քյազըմ Կարաբեքիրի զորքերին կորցնելով և այդդիտով վճռելով Հայաստանի հանրադատության ճակատագիրը: Թուրքական բանակը գրավեց Ալեքսանդրապոլը (Գյումրի) և շարժվեց առաջ դեմի Ղարաբախ՝ հայկական կառավարությանը ստիպելով կնքել զինադադարի նվաստացուցիչ մի դաժանագիր: Թուրքական հաշտություններից անհանգստացած՝ խորհրդային Ռուսաստանն առաջարկեց միջնորդել հակամարտության լուծմանը: Երևանն ու Անգորան համաձայնեցին: Բանակցությունների մի մասը՝ անմիջականորեն թուրքերի հետ, անցավ Ալեքսանդրապոլում, իսկ մյուս մասը՝ խորհրդային դատավիճակների հետ՝ Երևանում:

Ռազմատենչ կոմունիստները որոշեցին գործն իրենց ձեռքը վերցնել և նոյեմբերի 29-ին Հայաստանը հռչակեցին խորհրդային Սոցիալիստական Հանրադատություն: Կարմիր բանակը Հայաստան մտավ Ադրբեյջանից՝ կանխելով Լեզգանի՝ իշխանությունը խաղաղ փոխանցելու ջանքերը: Խորհրդային Ադրբեյջանի առաջնորդ Նարիման Նարիմանովը մեծահոգաբար և միակողմանի կարգավորեց Հայաստանի հետ տարածքային վեճերը՝ Նախիջևանը, Չամգեզուրն ու Ղարաբաղն ընծայելով նոր հռչակված խորհրդային Հայաստանին: (Հետագայում նա կփոխի իր միտքն այդ «ընծայի» վերաբերյալ:) Ի հակադրություն սրան, թուրքերը հայկական տարածքի արմատական նվազեցում էին դաժանաբան: Դաշնակցական կառավարությունը որոշեց իշխանությունը փոխանցել խորհրդային ուժերին, բայց Թուրքիայի հետագա հետադարձների դեմն առնելու համար միևնույն ժամանակ ստորագրեց թուրքերի կողմից առաջադրված կոշտ դաժանների տակ: Գեներալ Դրոն (Դրաստանատ Կանայան)՝ Հայաստանի դաշնակցական կառավարության լիազոր ներկայացուցիչը, և Սիլիմը՝ խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը հռչակեցին «անկախ սոցիալիստական հանրադատություն»: Մի քան ժամ անց նախկին կառավարության դատավիճակությունը կնքեց Ալեքսանդրապոլի դաժանագիրը, որը թե՛մտև փաստացի անօրինական էր, այդուհանդերձ հաստատեց այն սահմանը, որն ընկավ նորաստեղծ խորհրդային Հայաստանի Հանրադատության և ազգայնական Թուրքիայի միջև:

Խորհրդայնացման դաժան երկիրը գտնվում էր իր արդի դատության անկման ծայրագույն կետում: Հայերը ոչ միայն արտաքսվել էին Հայկական բարձրավանդակի թրքական ենթակայության տակ գտնվող մասից 1915 թ. ցեղասպանական կոտորածներով ու տեղահանմամբ, այլև Առաջին համաշխարհային դատերազմի բռնկումից ի վեր դատերազմի, գաղթի ու համա-

ճարակների հետևանքով կտրուկ անկում էր ադրել Ռուսահայաստանի բնակչությունը: Մինչև 1920 թ. Արևելյան Հայաստանում ադրում էր ընդամենը 720.000 մարդ, 30 տոկոս անկում: Ավելին, այս բնակչության գրեթե կեսը կազմում էին փախստականները: Բազմաթիվ հասարակական և քաղաքական հաստատություններ, որոնք հայերը կառուցել էին դարեր շարունակ Կովկասում և Թուրքիայում, ոչնչացվել էին: Հայկական միջին խավը՝ ժամանակին արտոնյալ վերնախավը Թիֆլիսում և Բաքվում, այժմ վստահություն չէր վայելում Վրաստանի և Ադրբեջանի նոր խորհրդային կառավարությունների մոտ: Նրանց ոչ նախանձելի ընտրությունն էր կան հարմարվել օտար սոցիալիստական կարգին, կան գաղթել Արևմուտք: Պատերազմի, ցեղասպանության, հեղափոխության և քաղաքացիական դատերազմի յոթ տարիներին (1914-1921) հայ հասարակությունը բազմաթիվ առումներով «աղաարդիականացվել էր», հետ էր դարձել դեռի իր նախակաթիտալիստական երկրագործական տնտեսությունն ու ավելի ավանդական գյուղացիական հասարակություն:

Երևանում նորաստեղծ խորհրդային կառավարության առաջին խնդիրներն էին տնտեսության վերակառուցումը, «սովահար հայերին» կերակրելն ու նրանց նոր քաղաքական կարգի հիմնումը: Դաշնակցականներն ու կոմունիստները դայնամավորվել էին, որ ողջ իշխանությունը հանձնվելու է հինգ կոմունիստներից և երկու դաշնակցականներից բաղկացած Հեղկոմին, որոնցից վերջիններին դիտի հավանություն տային առաջինները: Դաշնակցականների կան ուրիշ ոչ կոմունիստների դեմ որևէ ճնշիչ միջոցառում չդեռեք է գործադրվեր: Բոլորի համար դարձ էր, որ հայերի շրջանում Դաշնակցությունը մնացել էր ամենամեծ ժողովրդականություն վայելող կուսակցությունը, և որ կոմունիստները երկրում շատ քիչ աջակցություն ունեին, բացառությամբ մի քանի հարյուր արմատական մտավորականների ու աշխատավորների: Բնակչությունը հյուծված էր դատերազմից, սովից, հիվանդություններից ու քաղաքական հուսահատությունից, ինչի վկայությունն էր Կարմիր բանակի Երևան մուտք գործելուն ուղղված դիմադրության դակասը: Բողոքի փոխարեն նոր կառավարությանը ողջունեց լուրջությունը: «Հեղափոխությունը», որն իշխանության էր բերել կոմունիստներին, դատահել էր, որդեգրի կասեցվի Արևելյան Հայաստանի զավթումը թուրքերից, և հայերը հույս էին տածում, որ Կարմիր բանակը թուրքերին դուրս կքշի Ալեքսանդրապոլից ու գրավյալ Հայաստանի մյուս տարածքներից:

Այստեղ է, որ գործ ենք ունենում ԴԻՊԿԱՍՏԱՆՈՒԹՅԱՆ հետ. դիմվածը, թե ով ստանձնեց ղեկավարությունը Հայաստանում խորհրդային իշխանության առաջին իսկ դահերին: Առաջին խորհրդային կառավարությունը, որ գլխավորում էր Սարգիս Կասյանը (1876-1937), կազմված էր բավականին երիտասարդ ու մարտնչող կոմունիստներից, ինչդիտին էին՝ Ասքանազ Սոսվյանը, Ավիս Նուրիջանյանը, Աշոտ Հովհաննիսյանը և Ալեքսանդր Բեկզադյանը: Ընդհատակյա գործունեության նշանակալի փորձով այս երիտասարդ կոմունիստները խորը թշնամանք ունեին դաշնակցականների հանդեմ, որոնք, ի

վերջո, ճնշել էին հայ բուլշևիկների աղստամբություններն ու մահադատով ենթարկել նրանց ընկերներից ոմանց: Լիովին անփորձ իբրև կառավարիչներ, այժմ իրենց ենթակա ժողովրդի հոգնածության ու վիատության նկատմամբ անտարբեր՝ *Յեղկոմը* սկսեց արագորեն տարտադրել իր իշխանությունը: Օրերի ընթացքում ռուսական ՉԷԿայի օրինակով ստեղծեց գաղտնի ոստիկանական կազմակերպություն և ոչնչացրեց նախկին հանրադատության բոլոր ղեկավար հաստատությունները: Անտեսելով դաշնային կառավարություն ստեղծելու համաձայնագիրը՝ կոմունիստները ձերբակալեցին բազմաթիվ դաշնակցականների: Նախկին ռուսական կայսերական օրենսգիրքը, որը գործում էր անկախ հանրադատությունում, փոխարինվեց Ռուսական Խորհրդային Ֆանրադատության իրավական դրույթներով: Իսկ ամենից ծանրը հետագայում «ռազմական կոմունիզմ» անունը ստացած տնտեսական քաղաքականությունն էր, որ տարտադրվեց Յայաստանին. բանկերի և արդյունաբերության ղեկավարացում, սննդամթերքի բռնագրավում, շուկայի խիստ սահմանափակումներ:

Կոմունիստների սկզբնական քաղաքականությունների արագությունն ու կոշտությունը խորհրդային կառավարության հանդեպ մեծ դժգոհություն ստեղծեց: Կառավարությունը չկարողացավ մեղմել սննդի ու վառելիքի թակասը, որը մասամբ առաջացել էր մենշևիկյան Վրաստանի շրջափակումից: Կարմիրբանակայինները գյուղեր էին մտնում ու գյուղացիներից հացահատիկ խլում, որոնք կերակրեին զինվորներին ու քաղաքացիներին: Յույսը, թե Կարմիր բանակը թուրքերին դուրս կքշի, փուչ դուրս եկավ: Բուլշևիկյան Ռուսաստանը թուրք ազգայնականներին դիտում էր իբրև դաշնակիցներ՝ ընդդեմ Արևմտյան կայսերականության, ու չէր ուզում նրանց մարտի մեջ մերթաշել Յայաստանում:

Վաղ խորհրդային շրջանի ղառամաբան Բ. Ա. Բորյանը այսպես է գրում Խորհրդային Յայաստանի առաջին կառավարության տնտեսական ահաբեկչության մասին.

Յաշվի չառնելով դասակարգն ու նկատի չառնելով գյուղացիության ընդհանուր տնտեսական և հոգեբանական վիճակը՝ Յեղկոմը մի շարք բռնագավթումներ և բռնագրավումներ սկսեց: Չուրկ լինելով հեղափոխական ծրագրից և գործադրվելով անհարկի դաժանությամբ՝ այս բռնագրավումներն անկազմակերպ էին ու անկարգ: Առանց կարգադասական մեխանիզմի գործադրման ու առանց նախնական քարոզչության կամ լուսավորության, ինչպես նաև բացարձակ անտեսելով երկրի արտասովոր թշվառ կացությունը՝ Յեղափոխական կոմիտեն կարգադրեց ղեկավարացնել քաղաքների ու գյուղացիության սննդամթերքը: Չարմանալի անխոհեմությամբ ու անհոգությամբ նրանք բռնագրավեցին և ղեկավարացրեցին ամեն ինչ՝ զինվորական համազգեստները, արհեստավորական գործիքները, բրնձի գործարանները, ջրաղացները

րը, վարսահարդարման �ղարագաները, փեթակները, քաթանը, կենցաղային կահույքն ու ընտանի անասուններին:⁵

1921 թ. հունվարին հայկական բանակի 560 սղաներ, ներառյալ դաշնակ հերոսներ Սիլիկովն ու Յեգարբեքյանը, շրջադատվեցին ու արտաքսվեցին Ադրբեջան: Գեներալ Դրոն «հրավիրվեց» Մոսկվա: Յաջորդ ամսին Յովհաննես Քաջազնունին՝ անկախ Յայաստանի նախկին վարչադատը, ով մնացել էր Երևանում, ձերբակալվեց ու տարվեց Չեչայի բանտ: Բայց այնտեղ նա մնաց միայն ութ օր: Երբ Կարմիր բանակը 1921 թ. փետրվարին դուրս եկավ Յայաստանից, որդեսգի տաղալի Կրաստանի մենշևիկներին, դաշնակցական առաջնորդները ատելի կոմունիստական վարչակարգից ազատվելու իրենց հնարավորության դառն ուրախացին: Խորհրդային իշխանության դեմ դաշնակցական սկզբնական դիմադրությունը մայրաքաղաքից դուրս էր՝ Չանգեզուրում՝ առաջնորդված Ռուբեն Փաշայի կողմից, և Ղարաբաղում՝ առաջնորդված բուլղարահայ գնդադատ Նժդեհի կողմից: Փետրվարի 18-ի առավոտյան դաշնակցական աղետամբները մտան Երևան՝ իրենց առջևից քշելով կոմունիստներին: Բուլշևիկները վերջին ուժերով իրենց ղայքարը մղեցին երկաթուղային կայարանում, իսկ կեսօրին զրահադատ գնացքը նրանց դուրս տարավ քաղաքից ղարտված: Կարմիր բանակը, զբաղված լինելով Կրաստանի խորհրդայնացմամբ, անկարող էր օգնության հասնել:

Երբ Չեչայի բանտերը բացվեցին, ազատարարներին դիմավորեց մի սարսափելի տեսարան: Յայտնաբերվեցին յոթանասունհինգ կացնահարված դիակներ: Մահացածների թվում էին դաշնակցական հերոսներ Յանազասյուն ու գնդադատ Կորգանովը: Դաշնակները հակադարձեցին՝ ձերբակալելով բուլշևիկներին. նրանցից ոմանք հետագայում սղանվեցին: Նոր կառավարությունը գլխավորում էր Սինոն Կրացյանը, ով դիմեց Արևմուտքին՝ նոր Յայաստանին աջակցելու համար: Յաջորդող մի քանի ամիսներին հայերը կռվեցին հայերի դեմ, ռուսական զորքերի՝ Երևանը հրետակոծելուն ու խորհրդային իշխանությունը վերահաստատելու նղատակով վերջիվերջո Կրաստանից վերադառնալուն զուգահեռ: Դաշնակները փախուստի դիմեցին դեղի Չանգեզուրի լեռներ, որտեղ դիմակայեցին մինչև աղրիլ:

Աղետամբությունը կոմունիստների վրա սթափեցնող ազդեցություն ունեցավ: Մոսկվան ռազմատենչ Յեղկովը փոխարինեց նոր կառավարությամբ, որը գլխավորում էր Ալեքսանդր Մյասնիկովը (Մյասնիկյան) (1886-1925), մարդ, ով իրավաբանական կրթություն էր ստացել, բայց ռուսական քաղաքացիական կռիվների ժամանակ արևմտյան ճակատում կռվելու երկարատև ծառայության փորձ ուներ: Նա մշանակվել էր Լենինի՝ Մոսկվայում խորհրդային կառավարության ղեկավարի կողմից, որդեսգի Կովկասում վարեր ավելի հավասարակշռված քաղաքականություն: Իր կովկասյան ընկերներին հաճախակի ուղղվող մամակներում Լենինը մշում էր, որ Ամդրկովկասի խորհրդային հանրադատություններն ավելի հետամնաց են, «ավելի գյուղական, քան Ռու-

սաստանը», և որ սոցիալիստական քաղաքականություններն այստեղ ղեկավարել է ի գործ դրվեն շատ դանդաղորեն: Նա կոչ արեց կուսակցությանը «մանր բուրժուազիայի, մտավորականության և հատկապես գյուղացիության հետ առնչվելիս լինել չափազանց նրբանկատ, զգույշ և զիջող»: Լենինը կասկածներ ուներ, որ շատ կոմունիստներ զգայուն չեն տեղական և էթնիկ առանձնահատկությունների հանդեպ, որ նրանց «միջազգայնականությունը» և խորհրդային Ռուսաստանի հետ միավորվելու կոչերը իրականում ռուսական ազգայնականության ծղոտված ձևերն էին: «Ճանկո՞ւք կոմունիստին, – ասել էր նա մի անգամ, – և կհայտնաբերեք մեծն ռուսական ազգայնականին»: Նա համոզված էր, որ ավելի փոքր ազգությունների համար անհրաժեշտ էր ինքնավարության որոշակի աստիճան՝ խորհրդային գործի նկատմամբ նրանց համակրանքը շահելու համար: Մինչ այդ, Ռուսաստանը որդեգրել էր ավելի չափավոր տնտեսական քաղաքականություն՝ հայտնի որդես ՆԷՊ (Նոր տնտեսական քաղաքականություն), որն աղազայնացրել էր տնտեսության մեծ մասն ու գյուղացիներին տվել նրանց հացահատիկի ավելցուկները տնօրինելու իրավունք: Խորհրդային Չայաստանի երկրորդ կառավարությունը Երևան ժամանեց իրենց առավել ծայրահեղ նոտատակները զիջելուն շատ ավելի դատարարական, քան առաջին կառավարությունը կես տարի առաջ:

Այսօր, որտե՞ղ են ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆ ու ՇՓՈԹՈՒԹՅՈՒՆԸ: Նրանք ավելի ուշ են հայտնվում, երբ դատաբաններն իրենց հայացքը դարձնում են դեմոկրատի 1918-1921 թթ. լարված իրադարձությունները: Առաջին հանրապետության հիմնադրումից հարյուր տարի անց դրա դատությունը տարակարծության (ևս մեկ հիմունք) և շփոթության աղբյուր է մնում: Հարցերն անդադարախախտ են մնացել: Որոշ հայերի համար Առաջին հանրապետությունն ու փետրվարյան աղետամբությունը փառքի փայլատակում էին, ուժերի ակնհայտ անհավասարության դեմ ազգային ինքնադատաբանության մասին, որը ղեկավարել է ըմբռնվի որդես ազգի հայրենասիրական դատաբանություն: Մյուսների համար այն դատական ճակատագիրը շրջելու սին փորձ էր, և, ի վերջո, շատ բան չարեց հայերի դրությունը բարելավելու համար: Իմ ընթերցմամբ Առաջին հանրապետությունը չափազանց հավակնոտ էր ընդարձակ Չայաստան ստեղծելու իր փորձերում՝ իր խիստ սահմանափակ միջոցների և հզոր հակառակորդների դիմադրություն: Խորհրդայինները նույնպես սկզբում չափազանց հավակնոտ էին: Աղետամբության հիմնական դատաձևը խորհրդային առաջին կառավարության ծայրահեղություններն էին, և դիմադրությունը հասկանալի էր ու արդարացված:

Կասյանի կառավարությունը, ինչպես և ստալինամետ տարրերը Վրաստանում, ցամաքային շրջանին աշխատել հասարակական և քաղաքական ավելի լայն ուժերի հետ, ինչի շատագուց էր Լենինը, և հետևաբար կորցրեց ավելի խաղաղ, ժակաս ցավոտ անցման հնարավորությունը դեմոկրատիային իշխանություն: Աղետամբությունը նախազգուշացում էր, որին Լենինն ու Մյասնիկյանը ակամջ դրեցին, և Կովկասում միառժամանակ ավելի չափավոր

քաղաքականություն էր վարվում: Խորհրդայինները մտադրվեցին Վրաստանում մենչևիկների հետ դաշնային կառավարություն ստեղծել և դաշնակների հետ համագործակցության համար բանակցեցին Ռիգայում: Բայց շուտով քաղաքացիական կոիվներում կոփված վետերանների գրեթե բնազդային ռազմականությունը խեղդեց այս ավելի չափավոր մղումները: Մարդիկ, ովքեր ամենամոտոն էին կանգնած Ստալինին, ինչդեռ օրինակ՝ Օրջոնիկիձեն, ազգայնականների նկատմամբ ավելի անզիջում քաղաքականություն հրահրեցին, և խորհրդային վարչակարգը կորցրեց սեփական ծրագրի համար ավելի ընդարձակ քաղաքական հիմք ստեղծելու ամենախոստումնալից հնարավորությունը:

Հայկական փոքրիկ ղեկավարության ղառությունը ձկվում է ողբերգության ու ղաթոսի միջև, և կարող է ղատմվել կամ իբրև հայկական հնարավորություններից վեր հանգամանքների, կամ հայ առաջնորդների ձախողումների ղատմություն: Հաջորդող դարում ժողովրդավարական ղետություն ստեղծելու սկզբնական ջանքը ղիտի վերածնվեր բազմիցս: Հենց այս ղահին այն կրկին դրսևորվում է հետխորհրդային Երևանի փողոցներում և կառավարության դահլիձներում:

- 1 Տե՛ս՝ Ronald Grigor Suny, *Armenia in the Twentieth Century* (Chico, CA: Scholars Press, 1983), էջ 32-33:
- 2 Suny, *Armenia in the Twentieth Century*, էջ 33:
- 3 Հայաստանի առաջին հանրապետության վերջին տարվա հնտորեն շարադրված մանրակրկիտ դատմությունը տես՝ Richard G. Hovannisian, *The Republic of Armenia*, h. 3, *From London to Sèvres, February-August 1920* (Berkeley, CA: University of California Press, 1996) և *The Republic of Armenia*, h. 4, *Between Crescent and Sickle: Partition and Sovietization* (Berkeley, CA: University of California Press, 1996):
- 4 Hovannisian, *The Republic of Armenia*, h. 4, էջ 95:
- 5 Баграт А. Борьян, *Армения: Международная дипломатия и СССР* (Москва-Ленинград, 1929), էջ 126:



ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ
ԸՆԿԱԼԵԼՈՒ ԵՎ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ.
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ. ՀԱՅԱՑՔ
ԴՐՍԻՑ ԵՎ...
ՄԱՍԱՄԲ ՆԵՐՍԻՑ

թ. հունիսին տեղի ունեցած *Չայաստան 2018. Իրողություններ և հեռանկարներ* գիտաժողովին ներկայացրած շատ այլ հոդվածների հեղինակների մնացած, ես էլ ստիպված եղա հոդվածի մախնական սևագիրը եսկանորեն վերանայել՝ գիտաժողովից երկու ամիս առաջ Չայաստանը ցնցած քաղաքական երկրաշարժի հետևանքով: Երբ հոդվածիս սկզբնական ամփոփումը 2018 թ. մարտին հանձնեցի գիտաժողովի կազմակերպիչներին, թվում էր, թե երկրում հաստատադրված տիրում էր ավտորիտարիզմը: Ամփոփման մեջ զգալի բնադատության էի ենթարկել Չայաստանում գերիշխող հետխորհրդային դատամագրության որոշ միտումներ և շեշտել, որ մնացած անկատարությունների հետևանքով այն մեծադրեց մեկուսացած է դատմության տեսության ու մեթոդաբանության ժամանակակից, ամբողջ աշխարհում լայնորեն կիրառվող ու բննարկվող դրոցներից: Այդուհանդերձ, տիրող հասարակական-քաղաքական դայնամիկներում ես մաս կասկածի տակ էի առել Չայաստանում փոքրաթիվ այլընտրանքային շրջանակների՝ այս գիտակարգում որևէ նշանակալից փոփոխություն ղարտադրելու կարողությունը: Ինչդեռ շատերը, թե՛ երկրի ներսում, թե՛ դրսում, ես մոյմդես զարմանքով, բայց մաս գոհունակությամբ ողջունեցի 2018 թ. ադրիլի հակակառավարական ցույցերի հաջողությունն ու դրանց հաջորդած փոփոխությունը կառավարությունում: Ամփոփադես երևաց, որ Չայաստանում մարդկանց մեծամասնությունը խանդավառության մեջ է: Բազմաթիվ անհատներ ու հասարակական խմբեր այժմ զգում էին, որ իրենց ձայնը վերջադես կարող է լսելի դառնալ: Շատ մասնագետներ առաջ էին քաշում արմատական առաջարկություններ՝ ուղղված երկրում կյանքի տարբեր ոլորտների բարելավմանը, ներառյալ՝ գիտության և կրթության: Այս մոր տրամադրությունը նկատի առա, երբ գիտաժողովի կազմակերպիչների խորհրդով 2018 թ. վաղ հունիսին վերանայեցի հոդվածիս ամփոփումը: Չայաստանում աչքի ընկնող մի բանի գործընկերներիս դրդմամբ և խրախուսված գիտաժողովի կազմակերպիչներից՝ գիտաժողովին ներկայացրեցի ոչ միայն հայաստանյան դատմաբանների անցած ճանադարիի իմ գնահատականը, հատկադես մրանց, ովթեր խորհրդային շրջանի ավարտից ի վեր զբաղվում են Չայոց դատմությամբ, այլև որոշ առաջարկություններ, թե ինչդես կարելի է բարելավել այս գիտակարգի ներկայիս դրությունը՝ հեռանկարով, որ այն ի վերջո դառնա աշխարհում ընթացող դատմագրական բանավեճերի գործուն մասնակից: Ձեր ձեռքին գտնվող այս հոդվածը 2018 թ. հունիսին երևանում ներկայացրած բարեփոխված իմ ելույթի ընդլայնված տարբերակն է:

Սփյուռքահայ լինելով՝ Չայաստանի զարգացմանն ուղղված խորհուրդներ տալը երկրի անկախացումից՝ 1991-ից ի վեր (և դրանից առաջ էլ) խրթին գործ է եղել միշտ: Քանի որ կանխատեսում են, որ առաջարկություններս տարաբնույթ արձագանք են ստանալու (տե՛ս ստորև), այստեղ դարտավոր են զգում բացատրել, որ վերնագրում «հայացք... մասամբ ներսից» հղումն դայմանավորված է վաղ 1980-ականներին Լիբանանում դրոցակա նարիներ

րից ի վեր Երևանում լույս տեսած Պատմության, հատկապես Հայոց Պատմության գրքերի իմ շարունակական ընթերցանությամբ, դրան հաջորդած Երևանի Պետական համալսարանի Պատմության ֆակուլտետում առկա ուսուցմամբ անցկացրածս հինգ տարիներով, առաջ համալսարանն ավարտելուց հետո Հայաստանի տարբեր հետազոտական հաստատությունների ու անհատ գիտնականների հետ ղախողանած կապերով՝ նախ իբրև Լիբանանում Հայկազյան համալսարանի Հայագիտության ամբիոնի վարիչ, և այժմ՝ որդես Միջին-գանի համալսարանի (Դիրբորն) Հայագիտական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, և ի վերջո, վերջին երկու տասնամյակներում Հայաստան կատարած իմ բազմաթիվ այցելություններով: Մյուս կողմից, «հայացք դրսից» բնորոշումը հիմնված է ոչ միայն Հայաստանից դուրս իմ ծնված լինելու, մանկության և Պատմականության տարիների, այլև, ինչն առավել կարևոր է, Միացյալ Թագավորությունում դոկտորական աստիճանի եռամյա կրթության, ինչպես նաև դրան հաջորդած Լիբանանում ու ԱՄՆ-ում քսամերեք տարի համալսարանական դասավանդման ու հետազոտական աշխատանք կատարելու փաստի վրա:

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԵՐՋԱՆԱԼԻ ԲԱՆԱՎԵՃ Է»¹

Ըմբռնումներն այն մասին, թե ինչ է Պատմությունը և կամ ինչ լիտի լինի, մերայալ, թե այն ինչպես լիտի դասավանդվի և հետազոտվի, շարունակաբար քաղաքական, հասարակական և մշակութային փոփոխությունների ազդեցությամբ են ենթարկվում: Այս խնդիրների շուրջ բանավեճեր տեղի են ունենում նույնիսկ կայուն համարվող հասարակարգերում, ուր մնաց թե կտրուկ փոփոխությունների միջով անցնող հասարակություններում, ինչպիսին Հայաստանի իրավիճակն է 2018-ի ապրիլից ի վեր: Ներկայիս հեղափոխական ավյունը, մերայալ ուսումնական ծրագիրը փոխելու և նոր տեսություններ ու մեթոդաբանություններ որդեգրել տալու որևէ լուրջ փորձ, միայն կընդգծի Հայաստանում քաղաքական անկախության վերջին քառորդ դարի ընթացքում Պատմության նկատմամբ բյուրեղացած տարբեր մոտեցումների համակիրների կարծիքներում առկա տարամիտումները, բայց նաև նոր քաղաքական և մշակութային միջավայր կստեղծի այդ տարածայնությունների շարունակության ու որակական փոփոխությունների համար:

ՀԵՏԵՆՈՐՅՐԴԱՅԻՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ
ԻՆՉՊԻՍԻՆ ՈՐ ԿԱ

Հայաստանի Պատմաբանների մեծ մասը, այլ գիտնականներ ու մտավորականներ վերջին տարիներին Պարբերաբար իրենց ուրախությունն ու գոհունակությունն են հայտնել խորհրդային շրջանի ղետակամորեն ղարտադրված,

այսուհետ կոչված՝ մարքս-լենինյան գաղափարախոսության ավարտի առթիվ:² Գաղափարախոսական կարծիք դրույթների շուրջ կառուցված խորհրդային դե-տալությունը դատարանությունը մշտապես հսկողության տակ էր դառնում: Սա-կայն, գաղափարախոսական մեկնաբանությունները հաճախակի փոփոխու-թյան էին ենթարկվում, երբեմն նույնիսկ՝ կտրուկ կերպով, հենց իշխանական բրգի գագաթին, հատկապես 1953 թ. Իոսիֆ Ստալինի մահվանն անմիջապես նախորդած մի քանի տարիների ընթացքում: Ուստի, Կրեմլի կամ միութենա-կան հանրապետություններում դրան ստորադաս ղեկավարության՝ դատարան-բաններին վերևից իջեցրած հրահանգները տատանումներ ունեին: Չնայած սրան, Հայաստանի ժամանակակից, հետստալինյան շրջանում մեծացած ու կրթված դատարաններից այսօր լսվող դժգոհությունները թվում է թե հիմնա-կանում վերաբերում են համեմատաբար կայուն այն իրավիճակին, որը ձևա-վորվեց 1950-ականների կեսերին՝ Նիկիտա Խրուշչովի ղեկավարության առա-ջին տարիներին և շարունակվեց մինչև Միխայիլ Գորբաչովի «վերակառուցու-մը»՝ 1980-ականների երկրորդ կեսեր:³

Բարձր վարչական դաստիարակով զբաղեցնող բազմաթիվ ժամանակակից հայ դատարաններ նույնպես նշում են, որ Հայաստանում դատարանությունը վեր-ջին քսանհինգ տարիների ընթացքում զգալիորեն առաջադիմել է: Նրանք մատ-նանշում են նախկինում քաղաքական կամ այլ դատաճանաչող խորհրդային գրաքննությանը արգելված թեմաներով զբաղվելու իրենց նոր ձեռք բերած կա-րողությունը: Դրանցից են՝ 1917 թ. Ռուսաստանի կայսրության մասնատումից հետո առաջացած Վրաստանի և Ադրբեջանի հետ Հայաստանի տարածքային վեճերի վերլուծությունը, Խորհրդային Հայաստանում ստալինյան վարչակար-գի ծայրահեղությունները կամ Խրուշչովի և նրան հաջորդած Լեոնիդ Բրեժնևի ժամանակաշրջանի այլախոհական շարժումները: Այս դատարանները նաև ղեկավարում են, որ այժմ կարող են ավելի հանգամանակից ուսումնասիրել թեմաներ, որոնք նախկինում սահմանափակվել են կոմունիստների կողմից՝ որակվելով իբրև «ազգայնական», այդ թվում՝ հայ ազատագրական շարժումը նախկին Օս-մանյան կայսրությունում և հայոց ցեղասպանությունը առաջին համաշխարհա-յին դատարանի շրջանում: Վերջապես, նրանք նաև ուշադրություն են հրավի-րում այն հնարավորությունների վրա, որ իրենք վայելում են ներկայումս, այն է՝ անցյալի իրադարձություններն ու փորձառությունները նորովի՝ խորհրդային վարչակարգի՝ անցյալում եղած թելադրանքներից տարբեր մեկնաբանելը:⁴

Այս դասին Երևանում դատարանի գիտակարգի իրավիճակին, մասնավո-րապես՝ Հայոց դատարանի հետազոտության ու ներկայացման խնդիրնե-րի մասին իմ գնահատականն ավելի զուտ է: Ինքս վերոնշյալ գնահատման հետ համաձայն են այն առումով, որ Խորհրդային Միության փլուզումից ի վեր Հայաստանում հրատարակված նոր ուսումնասիրություններից շատերը ան-ցյալի մասին մեր գիտելիքներին օգտակար լրացումներ են տրամադրել, ինչ-

դես նաև այն դատաճառով, որ Հայոց դատախազի մեջ որոշակի առանցքային դատախազի և անձերի վերաբերյալ հետխորհրդային Հայաստանի դատախազների կողմից առաջարկվող մի շարք նոր մեկնաբանություններ ինձ, կարծում եմ նաև շատերի համար, իսկադես ավելի հանդիշ են թվում, քան ժամանակին խորհրդային ղեկավարության կողմից թելադրվածները:

Այսուհանդերձ, 2012 թ. Երևանի դատական համալսարանի Հայոց դատախազի անբիռնի հրատարակած Հայոց դատախազի դասագրքի շարադրանքի և խմբագրման վերաբերյալ իմ մի շարք կարևոր վերադասումները դեռևս 2017 թ. հրատարակային ելույթումս արձանագրված փաստ են:⁵ Կարծում եմ՝ կարելի է ասել, որ մշված հատորը, որոշ առումով, հետխորհրդային շրջանի Հայոց դատախազի հայաստանցի մասնագետների անցած ճանապարհի ամփոփումն է: Այս հոդվածում ես վերադառնում եմ այդ կադրակազմային արտահայտած իմ որոշ մտահոգություններին, նախքան դրության բարելավմանն ուղղված առաջարկներ ներկայացնելը, հատկապես, կրկնում եմ, հայաստանյան դատախազներին համաշխարհային թատերաբեմում ընթացող դատախազական բանավեճերին ակտիվ մասնակից դարձնելու համար:⁶

Հետխորհրդային Հայաստանում հրատարակված դատական ուսումնասիրություններում չափազանց քիչ են ուղղակի հղումները մի ժամանակ միակ ճշմարիտ գաղափարախոսություն ու մեթոդաբանություն հայտարարված մարքսիզմին, ավելի ստույգ՝ դրա դաշտոնական խորհրդային տարբերակ(ներ)ին: Խորհրդային մարքսիզմի հիմնարար սկզբունքներից շատերը, չնայած ոչ բոլորը, նույնպես մի կողմ են նետվել, հատկապես՝ համաշխարհային, հետևաբար և Հայոց դատախազները՝ ըստ արտադրաբանականների հինգ հիմնական հասարակարգերի դարբերացման սկզբունքը: Խորհրդային շրջանում դիմում էին, որ Հայաստանը նույնպես անցել է նախնադարյան-համայնական (նախքան Ուրարտական թագավորության հիմնումը մ.թ.ա. 9-րդ դարը), ստրկատիրական (մ.թ.ա. 9-րդ և առավելապես 4-րդ դարից մինչև մ.թ. 3-րդ դարը), ավատատիրական (մ.թ. 4-րդ դարից մինչև 19-րդ դարի սկիզբը) և դրամատիրական (19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի սկիզբը) հասարակարգերով, և որ 1917 թ. Հոկտեմբերյան բուլժևիկյան հեղափոխությունից հետո այն թևակոխել է սոցիալիզմի և կոմունիզմի վերջնական փուլ:⁷

Խորհրդային Միության քայքայումից կարճ ժամանակ անց, իր գործունեությունն այժմ դադարեցրած Պատմաբանների հայկական ընկերությունը 1992 թ. մայիսի 9-ին կազմակերպեց մի գիտաժողով՝ Հայոց դատախազի նոր դարբերացման վերաբերյալ համաձայնություն ձևավորելու նպատակով:⁸ Սակայն այդ հավաքի ավարտին ներկայացված եզրակացություններին հաջորդող տարիներին առանձնապես հետևող չեղավ: Փոխարենը, նոր հրատարակությունները, որոնցից են 2010 թ. սկսած ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի մաս առ մաս հրատարակվող *Հայոց դատախազություն* քառահատորյակը (ութ գրքից բաղկացած),

2012 թ. Երևանի ղետական համալսարանի Հայոց ղատմության ամբիոնի հրատարակած *Հայոց ղատմություն* բուհական դասագիրքը, ինչդես նաև այս ղահին 6-րդից 9-րդ և աղա 10-րդից 12-րդ դասարաններում օգտագործվող բոլոր դորոցական դասագրքերը հետևում են չորս փուլանի ղարբերացման, որի համաձայն Հին շրջանն ընդգրկում է նախնադարից մինչև Ք.հ. 3-րդ դարն ընկած ժամանակահատվածը, այսինքն՝ մինչև Հայաստանի քրիստոնեացման նախօրեն:⁹ Հաջորդ ժամանակաշրջանը՝ Միջնադարը, ձգվում է 4-րդ դարի սկզբից մինչև 17-րդ դարի կեսերը, իսկ 17-րդ դարի երկրորդ կեսից 1918 թ. մայիսի 28-ի Հայաստանի անկախության հռչակումն ընկած ժամանակամիջոցը կազմում է Նոր շրջանը: Եվ վերջում, 1918 թ. մայիսից սկսվող ժամանակաշրջանը կազմում է Նորագույն ղատմությունը:¹⁰ Այս նոր սկզբունքը շատ չի տարբերվում ցարական Ռուսաստանում կիրառված ղարբերացման ծրագրից, որը վերստին ներդրվեց խորհրդային կառավարության կողմից՝ դորոցներում քաղաքացիական ղատմություն ուսուցանելու մասին 1934 թ. մայիսի 16-ի հրամանագրով: Ըստ հրամանագրի, քաղաքացիական ղատմությունը դիտի բաժանվեր հին, միջնադարյան և նոր շրջանների:¹¹ Այն առավել հետևողականորեն կիրառվեց համաշխարհային ղատմության նկատմամբ, երբ երկրորդ համաշխարհային ղատերազմին հաջորդող ժամանակաշրջանում հավելվեց նաև Նորագույն շրջանը, որդեսզի կոմունիստական դարաշրջանի արշալույս համարվող բուշկիկյան հեղափոխությանը հաջորդած իրադարձությունները տարանջատվեն դրան նախորդած և մինչև 1917 թ. հոկտեմբեր ձգվող դրամատիրական և կայսերաղաշտական դարաշրջանից:

խորհրդային Հայաստանում հին, միջնադարյան և նոր շրջանների այս բաժանումը Հայոց ղատմության նկատմամբ կիրառվեց վերոնշյալ 1934 թ. հրամանագրի հիման վրա Հայոց ղատմությունը դորոցական ծրագրի մեջ վերստին ներառելու առաջին փորձերից մեկի ժամանակ՝ ՀԽՍՀ Ուսուցիչների որակավորման ինստիտուտի 1938-ին հրատարակած Համո Հարությունյանի *Հայ ժողովրդի ղատմության ծրագրի նախագիծ* գրքույկում: Սակայն Սերոբ Պողոսյանի, Համո Հարությունյանի և Մկրտիչ Ներսիսյանի կազմած և 1939 ու 1940 թթ. Երևանի ղետական մանկավարժական համալսարանի հրատարակած *Հայ ժողովրդի ղատմության ծրագիր*ը այս ղարբերացմանը չի անդրադարձել:¹² Ամեն դեղքում ակնհայտ է, որ Հայոց ղատմության երեք դարաշրջանների բաժանման այս կաղաղարը իր տեղն արագորեն զիջել է հինգ արտադրատեղանակներն ընդունող մոտեցմանը: Վերջինս ղաշտոնականացվեց կենտրոնական իշխանությունների հրահանգով 1940-ականների վերջին և 1950-ականների սկզբին անցկացված ուսական և խորհրդային Միության այլ ժողովուրդների ղատմությունների ղարբերացման մասին քննարկումների ընթացքում:¹³

1991 թվականից ի վեր հայաստանյան ղատմագրություն վերաղարձած չորս շրջանների բաժանումը շատ քիչ է տարբերվում խորհրդային ժամանակնե-

րում համաշխարհային դատմության համար տասնամյակներով օգտագործված դարձրեցումից. համաշխարհային դատմության մեջ մ.թ. 476 թ. Արևմտյան Հռոմեական կայսրության կործանման փոխարեն այժմ իբրև Հայաստանում Հին ու Միջնադարյան շրջանների բաժանարար սահման է դիտարկվում քրիստոնեության ղեկավարացումը շորորոդ դարի սկզբում, իսկ 1918 թ. մայիսի 28-ի Հայաստանի անկախության հռչակումը այժմ դատարկվում է իբրև Նորագույն դատմության սկզբնակետ՝ 1917 թ. հոկտեմբերի 25-ի բոլշևիկյան հեղափոխության փոխարեն: Այսուհանդերձ, դարձրեցումն շուրջ մոր համաձայնություն գոյացնելու որոնումները կարծես դեռ շարունակվում են: 2017 թ. ապրիլի 13-14-ին Հայաստանի դատազետների միություն հասարակական կազմակերպությունը Հայաստանի ղեկավար բյուջեից ֆինանսավորվող մի շարք ղեկավար, հետազոտական և ակադեմիական հաստատությունների հետ միասին անցկացրեց մեկ այլ գիտաժողով՝ *Հայոց դատմության մոր դարձրեցումն խնդիրը* թեմայով: Ըստ կազմակերպիչների՝ «Գիտաժողովի նդատակն էր վերանայել Հայոց դատմության դասական դարձրեցումը և մոր ձևաչափեր մշակել Հայոց դատմությունը համաշխարհային դատմության համատեքստին հարմարեցնելու համար»:¹⁴

Այնուամենայնիվ, կոմունիստական համակարգի փլուզումից քառորդ դար անց Հայաստանում հրատարակված երկրորդային գրականության (ուսումնասիրությունների) մեջ, հատկապես ավագ սերնդի դատմաբանների շրջանակներում, ովքեր իրենց ուսումնառությունն անցել են խորհրդային ժամանակներում, դեռևս անգիտակցաբար հղվում կան օգտագործվում են խորհրդային շրջանից մնացած որոշ, սովորաբար լուսանցքային, մարքսիստական հասկացություններ և ձևակերպումներ: Այստիպի հղումները թվում է թե գոյատևած ավելի լավ հնարավորություն ունեն, երբ բացեիբաց չեն բախվում սկզբնական ազգայնականության (primordial nationalism) ներկայումս տիրապետող մտայնությանը, որը հաղթական վերադարձ է իրականացրել Հայաստան՝ լրացնելու խորհրդային մարքսիզմի լուսանցքայնացումից առաջացած բացը:

Պատմագրության, ավելի ստույգ՝ ազգերի և ազգային ղետությունների դատմությունները գրելու փիլիսոփայական հիմքերը սովորաբար գնում են դեռևի 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի գերմանական ողմանտիզմի գաղափարները: Արդի շրջանի հայ դատմաբանները նույնդես՝ սկսած 18-րդ դարի վերջում գործած Վենետիկի Մխիթարյան միաբան Հայր Միքայել վարդապետ Չամչյանից, իրենց դատմությունները զգալի չափով շարադրել են այս կաղաղարի համաձայն: Սկզբնական շրջանում նրանք հետևում էին Մովսես Խորենացու *Պատմություն հայոց* մատյանում ներկայացված միջնադարյան ավանդույթին, ըստ որի՝ Բելի դեմ Հայկի աղստանբությունը հայ ազգի դատմական ծնունդն էր: Այս մոտեցումը տիրական էր հայ դատմաբանների և ոչ դատմաբանների մոտ մինչև 1890-ականները հրատարակվող բոլոր ուսումնասիրություններում ու դասագր-

քերում: Դրանից հետո հայության ազգածագման լուրջ փոխվեց հնդեվրոպական նախալեզվի մասնատման ու դրան հաջորդող հնդեվրոպախոսների՝ դեռի Եվրոպայի և արևմտյան Ասիայի տարբեր շրջաններ գաղթերի վարկածով: Նեղ իմաստով չլինելով սկզբնական (primordial), ինչդեռ Հայկի և Բելի լուսնային թուրքերը, այս մոր տարբերակը մուսուլման հարատևական (perennial) էր, քանի որ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ուսումնասիրությունները ուրարտացիներին, որոնց թագավորությունը կործանվեց մ.թ.ա. վաղ 6-րդ դարում, և նախահայերին սովորաբար ներկայացնում էին իբրև երկու առանձին միավորներ: Նույնիսկ եթե այս երկու խմբերը հետագայում խառնվել են, ինչդեռ լուրջում էին 20-րդ դարի սկզբի հայ լուսնայինները, այդ միախառնումը տեղի էր ունեցել, երբ արդեն գոյություն ուներ ավելի վաղ, առանձնահատուկ հնդեվրոպական *արմեն* ինքնությունը: Այս մեկնաբանությանը հետևող հայ լուսնայինների մտածողությունը համահունչ էր այլ ազգեր և տարածաշրջաններ ուսումնասիրող իրենց ժամանակակից օտարերկրացի լուսնայինների մտածողությանը, քանի որ սկզբնական ազգայնականությունն ամբողջ աշխարհում տիրապետող էր 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին կեսի լուսնայինության մեջ:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակների ընթացքում բուլղարները թե՛ ռուսական, թե՛ միութենական մյուս հանրապետությունների տիրույթային ազգությունների լուսնայինների նկատմամբ խառը վերաբերմունք էին ցուցաբերում: Պատմաբանների հին սերունդը և այլ բնագավառներում այսօր կոչված «հավատարիմ բուրժուական փորձագետները», Հայաստանում ներառյալ, սկզբնական շրջանում ազատ թողնվեցին հետևելու իրենց իսկ կողմից սահմանված հետազոտական օրակարգերին: Միաժամանակ, վերջիններս շարունակում էին դասավանդել բուրժուական: Այսօր, նախախորհրդային ժամանակաշրջանում հաստատված լուսնային բազմաթիվ մեկնաբանություններ այս նախնական փուլում գոյատևեցին հասարակության մտավորական վերնախավի մակարդակում: Մինչդեռ ժամանակ, բուլղարները ազգային լուսնայինների ուսուցումը ամբողջովին դուրս բերեցին ուսումնական այլ հաստատությունների, ներառյալ հանրակրթական ծրագրերից:

Ռուսական (ծովածած «ԽՍՀՄ ժողովուրդների լուսնային» անվան ներքո) և միութենական մյուս հանրապետությունների տիրույթային ազգությունների լուսնայինները խորհրդային դրոշմակա ծրագրի վերադարձվեցին 1930-ականների կեսերին: Հայաստանում միջնակարգ դրոշմների համար խորհրդային շրջանի Հայոց լուսնային առաջին դասագիրքը լույս տեսավ 1943 թ.:¹⁵ Ցավոք գոյություն չունի ոչ մի համեմատական վերլուծություն այս և ուշ ցարական շրջանի Հայոց լուսնային կամ 1930-ականներին հայկական սփյուռքում շրջանավոր դասագրքերի տարբերությունների, իսկ որ ավելի կարևոր է մեր նշանակալի համար՝ դրանց նմանությունների մասին: Նման ուսումնասիրությունը մեզ թույլ կտար հայտնաբերել, թե խորհրդային

մարքսիստական ղատմագրությունը 1930-ականներին ինչ տեղ էր հատկացնում սկզբնական ազգայնականությանը՝ չնայած մարքսիստական այն դիմադրությանը, որ ազգերը ղատմության ընդամենը բուրժուա-դրամատիրական փուլի արդյունքն էին:

Ներկայումս, հետխորհրդային Հայաստանում, վերադարձող սկզբնական ազգայնականությունը (այժմ նույնիսկ չունենալով խորհրդային մարքսիզմի բառանթերքով ծղոտվելու անհրաժեշտություն) հասել է նոր մակարդակի: 2012 թ. Հայոց ղատմության բուհական դասագրքի համաձայն՝ ղատմական Հայաստանի տարածքը շատ ավելի ընդարձակ է եղել (400.000 քառ. կմ),¹⁶ քան նույն ամբիոնի կողմից խորհրդային իշխանության տարիներին՝ 1960-70-ական թվականներին հրատարակված նախորդ դասագրքերում նշված 300.000 քառ. կմ:¹⁷ Ավելին, նույն դասագրքի համաձայն հայ ժողովրդի ձևավորումը տեղի է ունեցել շատ ավելի վաղ, քան նշվում էր խորհրդային իշխանության շրջանում: 1960-70-ականների դասագրքերը այս գործընթացի սկիզբը տեղակայում էին մ.թ.ա. 7-րդ դարի վերջին, այսինքն՝ Ուրարտական թագավորության անկման շրջանում, իսկ դրա ավարտը՝ մ.թ.ա. 2-րդ դարի սկզբին, երբ գահ բարձրացավ Արտաշեսյանների արքայատոհմը:¹⁸ Սակայն 2012 թ. դասագիրքը այս գործընթացի սկիզբը տեղակայում է Ք.ա. 4-րդ հազարամյակի վերջ և 3-րդ հազարամյակի սկիզբ, երբ, ենթադրվում է, որ առաջին հայերեն խոսողները բաժանվել են մյուս հնդեվրոպացիներից: Այս գործընթացի վերջնակետը այն տեսնում է Ք.ա. 6-րդ դարում, այսինքն՝ ղատմական աղբյուրներից Ուրարտուի մասին հիշատակումների ամհետացումից կարճ ժամանակ անց:¹⁹

Հայության ազգածագման մասին 2012 թ. դասագրքում ներկայացված ղատումին ուղեկցում է մի դիմում, համաձայն որի հայերը շարունակաբար ադրել են իրենց բնօրրանում Ք.ա. 4-րդ հազարամյակի վերջերին երևան գալուց ի վեր, այսինքն՝ սկսած շատ ավելի վաղ ժամանակաշրջանից, քան նշվում էր խորհրդային իշխանության տարիներին: Հիմնվելով բացառապես խորհրդային լեզվաբաններ Թամազ Գամկրելիձեի և Վյաչեսլավ Իվանովի 1970-1980-ականներին առաջադրած տեսության վրա՝ այդ ղատումը հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը միանշանակորեն տեղակայում է Հայկական լեռնաշխարհում: Դասագիրքը չի հիշատակում, որ գոյություն ունեն հնդեվրոպական նախահայրենիքի տեղակայման ուրիշ տեսություններ ևս, էլ չսասած՝ որ ներկայումս այդ ուրիշ տեսություններից մի քանիսը Գամկրելիձեի և Իվանովի տեսության համեմատ հետևորդների շատ ավելի լայն զանգված ունեն միջազգային ակադեմիական շրջանակներում:²⁰ Ընթերցողին ասվում է, որ հայերի նման ի սկզբանե հնդեվրոպական նախալեզվով խոսող մյուս ժողովուրդների՝ Հայկական լեռնաշխարհը լքելուց հետո հայերը դարձան վերջինիս միակ բնակիչները, հավանաբար բավականին վաղ՝ Ք.ա. 3-րդ հազարամյակի սկզբից: Այդ ժամանակից մինչ օրերս հայերը հազարա-

մյակներով մշտադեմ աղբյուր են իրենց բնօրրանում: Այս մեկնաբանությամբ հաստատվում է հայկական ինքնընկալման թե՛ սկզբնական, թե՛ հարատևական բնութագրերը: Հայկական ծագումը արձանագրվում է մի քանի հազար տարի շուտ և այն նույն տարածքում, որտեղ նրանց գոյությունը ավելի ուշ բացահայտորեն հիշատակվում է Ք.ա. 6-րդ դարի վերջի գրավոր սկզբնաղբյուրներում: Ամուղակի կերովով նվազեցվում, եթե ոչ ամբողջովին բացառվում է այլ էթնիկ խմբերի մասնակցությունը արդի հայ ժողովրդի ազգածագման գործընթացում: Համաձայն այս մեկնաբանության՝ կարելի է ասել, որ հայերն առաջացան ինքնաբերաբար, երբ մյուսները լքեցին այն տարածքը, որը մի ժամանակ բոլոր հնդեվրոպացիների համար ընդհանուր հայրենիք էր: Այնուհետև, չնայած որոշ հայերի ծուլումն այլ էթնիկ խմբերի մեջ ընդունվում է, 2012 թ. դասագրքում շատ քիչ է քննարկվում (կամ առհասարակ չի քննարկվում) դատմական սկզբնաղբյուրներում նշվող այլ, հավանաբար ավելի փոքրաթիվ, էթնիկ խմբերի ծուլումը հայերի մեջ: Այս ամենն, ըստ էության, փաստարկ է հօգուտ ուղղագիծ (linear) ազգայնականության և շարունակական, հիմնականում՝ անփոփոխ հայ ազգային ինքնության:

2012 թ. դասագիրքը նաև շեշտում է, որ հայերը ղեկավարության շատ ավելի երկար ժամանակաշրջաններ են ունեցել, քան նշվում էր խորհրդային տարիներին: Ըստ այս նոր տեսակետի, հայկական առաջին ղեկավարությունը ծագել է Ք.ա. 28-26-րդ դարերում²¹ ու դրանից հետո հայ ղեկավարությունը Հայկական լեռնաշխարհում գրեթե առանց ընդմիջման դադարեցվել է մինչև մոնղոլական արշավանքները՝ Ք.հ. 13-րդ դար: Ուրարտուն, որն այժմ անվանվում է Արարատյան թագավորություն, այս դասագրքում դասակարգված է որդես հայ ժողովրդի ու ղեկավարության շարունակական շղթայի միայն մեկ օղակը, այսինքն՝ ընդամենը հերթական արքայատոհմը արքայատոհմերի երկար ցանկում, որոնք հաջորդել են միմյանց՝ Հայաստանը կառավարելով հազարավոր տարիներ:²²

Հայերի ծագման, հազարամյակներ շարունակ Հայկական լեռնաշխարհի միակ բնակիչները լինելու և հայկական ղեկավարության հազարամյակներով գոյատևելու մասին նույն տեսակետները ներկայացվում են նաև վերջին շրջանում հրատարակված դատմության դոկտրինային այն բոլոր դասագրքերի մեջ, որոնց կարողացել է ծանոթանալ այս հոդվածի հեղինակը:²³ Ներկայումս ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի կողմից հրատարակվող քառահատոր Հայոց դատմություն շարքի առաջին հատորը, որի մեջ ամփոփվելու են հայերի ծագման և Հայկական լեռնաշխարհի առաջին ղեկավարությունների թեմաները, դեռ լույս չի տեսել, սակայն քառահատորյակի խմբագիրները հայտարարում են, որ ղեկավարության հղացքը «կարմիր թելի նման անցնում է» բոլոր հատորներով:

Այս ծրագրի իրականացման հոլովություն մենք արմատադեմ վերանայել ենք թյուր և քաղաքականադեմ վտանգավոր այն դատարարացու-

մը, որ իբր դարեր շարունակ հայ ժողովուրդը զուրկ է եղել լեռնային տարածություններից: Իրականությունն այն է, որ Հայոց լեռնային տարածությունը, որ 5 հազար տարվա ժամանակում ունի, գրեթե չի ընդհատվել, այլ զանազան դրսևորումներով՝ թագավորությունների, իշխանությունների, ինքնավարությունների, լեռնային կիսանկախ համայնքների, սղնախների, մելիքությունների, ինչու է՝ հոգևոր իշխանության, և, վերջապես անկախ լեռնային տարածության տեսքով հասել է մինչև XXI դար, այսինքն՝ լեռնային տարածության հարատև շղթան մշտապես եղել է:²⁴

Այսուհանդերձ, Հայաստանում սկզբնական ազգայնականության ջատագովների վերջին տարիներին առերեսված մեծագույն մարտահրավերն այն է, որ ի տարբերություն նախախորհրդային տարիների, այս մոտեցումը միջազգային ակադեմիական շրջանակներում այլևս չունի այն գրեթե հանրահանուր ընդունելությունը, որը վայելում էր մի ժամանակ: Խորհրդային յոթամասնամյա ընդմիջման ընթացքում և հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ խորհրդահայ ժամանակակիցությունը շարունակում էր հարկադրաբար մեկուսացված մնալ «երկաթե վարագույրից» այնպիսի տեղի ունեցող մտավորական բազմաթիսի զարգացումներից, քաղաքականության ու ժողովրդավարության բնագավառներում համաշխարհային խոշոր փոփոխությունները Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի ժամանակակից մոտեցումներին մոտեցնելու աստիճանաբար կասկածի տակ առնել արդի ազգերի ծագման ու զարգացման մեծապես ուղղագիծ այս մեծ ժամանակը (grand récit կամ metanarrative): Այս է դատաճառը, որ, ինչպես լեռնային բացատրենք ստորև, Հայաստանից դուրս գտնվող ժամանակակիցները, ներառյալ հայագիտության մեջ մասնագիտացածները, խանդավառությամբ չեն ընդունում հետխորհրդային Հայաստանի իրենց գործընկերների նշյալ մոտեցումները: Սակայն հայաստանյան ժամանակակիցների շրջանում իշխող սկզբնական ազգայնական խումբը, որի հայացքները գերակշռում են Գիտությունների ակադեմիայի և Երևանի լեռնային համալսարանի ժամանակակից հրատարակություններում, ինչպես նաև միջին և ավագ դպրոցների դասագրքերում, կատարելապես բացառելով որևէ այլ մեկնաբանություն, ընդունել է այս մարտահրավերը՝ հաճախ քաղաքականացնելով խնդիրը և ժամանակակիցությունն առհասարակ²⁵ և իր նախընտրած եզրակացությունները ներկայացնելով իբրև «ազգային անվտանգության խնդիր»:²⁶

Պատմագրությունն արդեն բավականին քաղաքականացված էր խորհրդային շրջանում՝ հաճախ չափազանց մեծ անհանգստություն ժամանակակից այդ տարիներին կոմունիստական կուսակցության թելադրանքների ներքո աշխատող ժամանակակիցներին: Խորհրդային ժամանակակիցության օտարերկրյա հետազոտողները շեշտում են, որ «ժամանակակից ճշմարտությունը» թելադրելու գործում կոմունիստական կուսակցության ղեկավարության դերը ժամանակակից

կանացվել է *Պրոլետարական հեղափոխություն (Пролетарская революция)* անսագրի խմբագրական խորհրդին ուղղված և 1931 թ. հոկտեմբերին հրատարակված Իոսիֆ Ստալինի «Բուլշևիզմի լուսավորության մի քանի հարցերի մասին» («О некоторых вопросах истории большевизма») մամակի միջոցով: Այս մամակում Ստալինը հայտարարում էր, որ իշխող կոմունիստական գաղափարախոսությանը և դրա քաղաքական նշանակներին ծառայող որոշ լուսավորչական մեկնաբանություններ լիարժեք են ընդունվել իբրև աքսիոմներ, իսկ այն տեսակետները, որոնք կհակասեն այդ աքսիոմներին, լիարժեք են համարվել զրոյացված ու լիարժեք են չդառնալով քննարկման առարկա:²⁷ Չնայած Ստալինին մեջբերելը 1953 թ. նրա մահից կարճ ժամանակ անց խորհրդային Սիությունում դարձել էր տաբու, իշխող կուսակցության գաղափարախոսության և լուսավորչության միջև հարաբերության հանդեպ Կրեմլի վերաբերմունքը շատ չփոխվեց: Առաջատար մտածողները հետո սկսեցին հաճախակի կրկնել խորհրդային լուսավորչության հիմնադիր Վ. Ի. Լենինի մեջբերումները՝ «կուսակցականության» սկզբունք կոչվածն արդարացնելու նպատակով:²⁸ Այս սկզբունքը խորհրդային քաղաքական և լուսավորչական հիմնարկների ներկայացուցիչներին հաճախ թույլ էր տալիս իրենց համար անընդունելի լուսավորչական մեկնաբանությունների կողմնակիցներին լուսավորվել իբրև «լուսավորչության կեղծարարներ»:

Այդուհանդերձ, անգամ խորհրդային համակարգի փլուզումից հետո և հակառակ ժամանակակից հայ լուսավորչության այն հաստատումներին, թե այժմ իրենք ազատ են կոմունիստական կառավարության կողմից գործադրվող կառավարչության, «դասակարգի» փոխարեն այժմ «ազգային» բառադաշարով սահմանված քաղաքական նկատառումները կարծես թե շարունակում են ծանրակշիռ մնալ, երբ լուսավորչության մեծ մասը տարբեր կնճոռոտ խնդիրների վերաբերյալ իր տեսակետներն է ներկայացնում: Մինչև 2018 թ. աղբյուրը ընկած ժամանակահատվածը, երբ Հանրապետական կուսակցությունը քաղաքական լիակատար վերահսկողություն ուներ, կառավարությունը լուսավորչական ներկայացում էր հայագիտությունը, ներառյալ լուսավորչությունը՝ իբրև «հայության ազգային ու մշակութային անվտանգության ապահովման» հզոր գործիք, ինչպես նաև անկախ լուսավորչության ամրապնդման և ազգային ինքնագիտակցության ուժեղացման գործոն:²⁹ լուսավորչությունն ու մամակավարժներին հաճախ հորդորում էին հայոց անցյալին վերաբերող վերոնշյալ մեկնաբանություններն ուսանողներին և հանրությանը փոխանցել որպես անհերքելի ճշմարտություններ:

Ավելին, գերակշռող հարատևական մոտեցման մյուս երեսն էլ այն էր, որ, լուսավորչության դասագրքերում և բազմաթիվ երկրորդային ուսումնասիրություններում հայերը սովորաբար լուսավորվում էին իբրև հետևողականորեն միաձույլ հավաքականություն, հոյարտ՝ իրենց հնամյա ժառանգությամբ, ինչպես նաև հա-

Ճախ՝ իբրև հարևանների կամ մեծ կայսրությունների ճնշման զոհ: Հաճախակի շեշտվում էր, որ ուսանողների շրջանում հայկական ինքնության սկզբնականության, հարատևականության և էստաբլիշմենտային (essentialism) սկզբունքների վրա հիմնված համոզմունքների սերմանումը լիարժեք ստեղծել մի հասարակություն, որը կգփտակցեր իր անզուգականությունն ու նույնիսկ բացառիկությունը: Միաժամանակ, այդպիսի կրթությունը վճռական կլիներ ներկայիս հայրենիքը ազդեցիկ հարևաններից թաշտոյանելու և թաղաքային, ամեն մի թատեն թախի, այն կրկին ընդլայնելու համար, որոշեցի այն վերադառնա իր անցյալի ավելի ընդարձակ սահմաններին: Հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերելու թատրաստ զինվորներով ազգ ձևավորելու անհրաժեշտությունը շեշտադրվեց հատկապես 2016 թ. ադրբեյջանյան քառօրյա թատերազմից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ նորագույն սղառագինությունների տիրապետող Ադրբեյջանի հետ զինված ընդհարումները կարող են կրկնվել ցանկացած թախի: Սակայն թեպե՛ր ընդգծել, որ թատնագրության նկատմամբ այսպիսի մոտեցումը զրոյից չէր ստեղծվել հանրաթետականների ժամանակաշրջանում. հանրաթետականներն այս մոտեցումը ժառանգել էին և աշխատում էին դրա հաստատութնականացման ուղղությամբ, իսկ հանրային խոսույթի (discourse) հղանցիկ գննությունը հուշում է, որ շատ հայեր այս մոտեցմանը շարունակում են կաղված մնալ անգամ 2018 թ. մայիսին կառավարության փոփոխությունից հետո:

Հայկական թատնագրության այս նոր, հետխորհրդային միտումը թվում է հանընկնում է հետկոնունիստական աշխարհում և, մասնավորապես, Հարավային Կովկասում ազգայնական զգացմունքների ընդհանուր ուժգնացման հետ: Հայաստանի դեթթում, Լեոնային Ղարաբաղի (Արցախ) համար ադրբեյջանցիների դեմ շարունակվող թատերազմը, դրան գումարած Թուրքիայի՝ Առաջին համաշխարհային թատերազմի ընթացքում իրականացրած Հայոց ցեղասղառության ճանաչման մերժումը, նրա լիակատար աշակցությունը Ադրբեյջանին, ինչդես նաև Թուրքիայի կողմից Հայաստանի սահմանների շրջափակումը նղաստեցին այդ զգացմունքների փարթամացմանը: Հետխորհրդային Հայաստանի դորոցական դասագրքերի մեջ կրկնվող այն շեշտադրումը, թե հայկական մշակույթն ուրույն է, նույնդես հանգեցնում է Հայաստանի հարևանությամբ միջէթնիկական սահմանների՝ իբրև թատնականորեն հստակ սահմանագծված և անթափանց լինելու թատկերմանը: Հայ թատնագրության մեջ հայերի ինքնաթատկերումը կանխատեսելիորեն դրական է: Սրան ուղիղ հակադրության մեջ է, ընդհանուր առմամբ ուսումնասիրություններում և ավելի հետևողականորեն՝ դասագրքերում, թուրքերին ու ադրբեյջանցիներին մոայլ գույներով ներկայացնելը: Հայերի մյուս հարևանները՝ վրացիները, ռուսները և քրդերը, սովորաբար արժանանում են տարատեսակ գնահատականների՝ կախված մասնավոր համատեքստից: Չմայած որ վրացիները երբեմն թատկերվում են իբրև հայերի բարեկամներ, թատնագրական վեճեր

են բռնկվում ոչ միայն ադրբեջանցիների, այլ երբեմն նաև վրացիների հետ: Այս վեճերի մի մասը առաջացել է նույն ազգերի ներկայացուցիչների հրատարակած Պատմական քարտեզներում կամ ուսումնասիրություններում իրենց հայրենիքների վաղեմի սահմանների իրարամերձ ներկայացումից: Ավելին, ուշ խորհրդային ժամանակներից սկսած, հայ Պատմաբաններն այսօրեւ կոչված «թղթյա Պատերազմներ» («paper wars») են մղել վրացիների և ադրբեջանցիների դեմ, իսկ նման բանավեճերի մեջ ուղղակիորեն ներգրավված անձինք շարունակաբար գովաբանվել են իրենց հայրենակիցների շրջանակում իբրև ազգային ժառանգությունը՝ Պատմությունն ու եզակի մշակույթը Հայաստանից խլելու հարևանների փորձերին արհաբար դիմակայած հայրենասերներ:³⁰

Այսուհանդերձ, ինչդեռ արդեն նշեցինք, հայոց ազգածագման, հնագույն Պատմության վերաբերյալ հայաստանյան Պատմաբանների առաջ քաշած արմատական հաստատումներից շատերը, այդ թվում երբեմն նաև հայ-ադրբեջանական և հայ-վրացական Պատմագիտական բանավեճերի համատեքստում ասվածները, արտասահմանում ընկալվել են որոշակի թերահավատությամբ: Նման կասկածների Պատճառն այն է, որ ներկայացված փաստարկները շատ անգամ դժվար Պաշտպանելի են աղացույցների գնահատման արդի, միջազգային չափանիշների տեսակետից, հատկապես՝ համաշխարհային Պատմագրության՝ սկզբնական ազգայնականության մոտեցումից հրաժարվելուց հետո: 1998 թ. Արմեն Այվազյանը Հայաստանում և ԱՄՆ-ում բնակվող հայագետների հայացքների միջև առկա տարբերությունները փորձեց բացատրել մի վարկածով, թե որոշ մեկնաբանություններ, որոնք անընդունելի են Այվազյանի տեսակետից, ԱՄՆ-ում հաստատված գիտնականների կողմից առաջ են մղվում որդես ՆԱՏՕ-ի և ԱՄՆ կողմից համակարգվող քաղաքականության մի մասը. դրանք մոտակա ունեն թուլացնել Հայաստանը ՆԱՏՕ-ում Ամերիկայի դաշնակից Թուրքիայի նկատմամբ: Այվազյանը ղեկավար էր, որ Ամերիկայում շատ հայագետներ միացել են այս դավադրությանը՝ սեփական շահերից ելնելով:³¹ Հետագայում Այվազյանի աշխատությունը հավանության արժանացավ Երևանի Պատմական համալսարանի Հայոց Պատմության ամբիոնի 2001 թ. դեկտեմբերի 19-ին թողարկած մի հայտարարության մեջ: Դրանից ի վեր, Հայոց Պատմության արտասահմանաբնակ մասնագետների դավաճաններ լինելու մասին ղեկավարը Հայաստանում շրջանառվել է բազմիցս:³² Արժե ավելացնել, որ եթե մոտ երկու տասնամյակ առաջ մեղադրանքների թիրախը միայն Հայաստանից դուրս գտնվող գիտնականներն էին, այժմ Հայաստանում գտնվող որոշ անհատներ և խմբեր ևս հաճախ ընդգրկվում են այն անձանց շրջանակում, ովքեր մեղադրվում են օտարերկրյա ազդեցության կենտրոնների վերահսկողության տակ գտնվելու մեջ: Իհարկե, հայ Պատմագրության մեջ արևմտյան կործանարար ազդեցություն տեսնելը կարելի է դիտարկել արդի հայաստանյան հասարակության մի զգալի հատվածում տարածված ավելի լայն կաս-

կածների համատեքստում. դա այն հատվածն է, որը շատ կասկածամտորեն է տրամադրված երկրում ամենատարբեր բնագավառներում արևմտյան կամ եվրոպական ազդեցությունների հանդեմ: Հայաստանյան հասարակության այս խմբերը վախենում են, թե գոյություն ունի արևմտյան, իսկ ավելի ստույգ՝ եվրոպական ազատականների կողմից մշակված ավելի ընդարձակ, կամխամտածված մի ծրագիր, որ նույնպես ունի առհասարակ քայքայել հայ հասարակության ավանդական հյուսվածքն ու ճամփա հարթել հայ ժողովրդի ամբողջական և վերջնական ոչնչացման համար:

ՀԵՏԻՈՐՅՐԴԱՅԻՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՓՈԽՎԻ ԻՐԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերադառնալով ժառանգության ավելի մեղ շրջանակներին՝ հարկ է առանձնահատուկ շեշտել, որ արտասահմանաբնակ հայագետները (իսկ բոլորովին վերջերս նաև որոշ, մինչ այժմ նկարագրված գերակայող միտման մասը չկազմող երևանաբնակ ժառանգամներ) սովորաբար քննադատության են ենթարկվում հետխորհրդային Հայաստանի սկզբնական ազգայնական (primordial nationalist) ժառանգության եզրակացությունները անվերադաս կրկնելու իրենց դժկամության համար: Այնուամենայնիվ, երկրում վերջինիս գերակշռությունը անշուշտ միակ հանգամանքը չէ, որով Հայաստանի արդի ժառանգությունը տարբերվում է նույն գիտակարգի համաշխարհային վերջին միտումներից:

Հայոց ժառանգության այժմյան դորոցական և բուհական դասագրքերի, ինչպես նաև Պատմության ինստիտուտի հրատարակած Հայոց ժառանգության բազմահատորյակի այն չորս գրքերում, որոնք դեռևս հնարավորություն են ունեցել տեսնել, թերևս ամենաառանցքային այդպիսի տարամիտությունը քաղաքական ժառանգության վերընդլայնումն է սոցիալական ժառանգության (social history) հաշվին. վերջինս բավականին տարածված էր խորհրդային տարիներին:³³ Միգուցե սոցիալական ժառանգությունը ներկայումս անտեսվում է, որովհետև Հայաստանում շատերի մտքում այն կարող է կադակցվել խորհրդային մարքսիզմի հետ, որից այժմ խուսափում են: Ի վերջո խորհրդային իշխանության տարիներին էր, որ երկրի քաղաքական ղեկավարությունը հայ ժառանգամներին հրահանգեց ավելի ուշադիր լինել ժառանգության սոցիալ-տնտեսական կողմերին: Սակայն, անկախությունից ի վեր մշակված միտումը հակասում է միջազգային աստիճանում առկա զարգացումներին: Սա, ինչպես ասում են գերմաներենում և նրա հետևողությամբ արևմտաեվրոպական մի շարք լեզուներում, երեխային կեղտաշրի հետ լողատաշտից դուրս գցելու տիպական օրինակ է: Վերջին տասնամյակներում ժառանգությունն ամբողջ աշխարհում սկսել է ավելի ու ավելի մեծ ուշադրություն դարձնել սոցիալական ժառ-

մությանը, և որոշեազի Հայաստանն ու հայերը ներկա լինեն ղատմագրական ընթացիկ բանավեճերում, խորհրդային շրջանի այս ժառանգությունը նվազեցնելու կամ մերժելու փոխարեն ղետք է որոշակի ղատշաճեցումներով ընդարձակել, որոշեազի դրանք արտացոլեն ներկայիս միջազգային միտումները:

Սոցիալական ղատմության նկատմամբ հետաքրքրության նվազումը, թերևս կամխատեսելիորեն, հանգեցրեց քաղաքական, ղազմական ու կրոնական վերնախավերի հանրային խոսույթի և գործողությունների վրա նորացված սևեռումի, որ տեղի ունեցավ հասարակության ստորին խավերի ղատմության, ինչղես նաև սոցիալական ղայքարի միջնաղարյան և արղի օրինակների ուսումնասիրության հաշվին: Վերնախավերի գործողություններն ու քաղաքական հայացքները սովորաքար նույնականացվում են ազգի գործողությունների ու քաղաքական հայացքների հետ: Նման մոտեցումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցնում է հայկական ազգային միասնության հղացքի տարածմանը, որն ակնկալվում է թե կհաղթահարի տեղական, դասակարգային և կրոնական բաժանվածությունները և, որղես կանոն, սահմանվում է այլ էթնիկ խմբերին հակաղղվելու միջոցով: 2012 թ. բուհական դասագրքում, օրինակ, ներհայկական սոցիալական հակամարտության բոլոր դրսևորումներն ամբողջությամբ մոռացության են մատնված: Այս մոտեցման ջատագովները հաճախ շեշտում են, որ նման ազգային միությունն անհրաժեշտ, և գուցե բավարար է՝ հայ ժողովղղին հաջողություններ բերելու համար:

Ազգային միասնության անհրաժեշտություն քարոզելու այս համատեքստում՝ Հայ աղաքելական եկեղեցին ևս, 1991 թ. ի վեր, սովորաքար ղատկերվել է իբրև հայկական ինքնության գլխավղղր սյուներից մեկը, և հաճախ՝ իբրև հիմնական սյունը: Նույնիսկ Հոռմեական կաթղղիկե և Ավետարանական եկեղեցիների հետևողղ հայերը, եղթե չնչեմք մյուս քրիստոնեական դավանանքների կամ վերջին շրջանում ուրիշ կրոնների հետևողղ դարձած էթնիկ հայերին, ժամանակակից հայաստանյան ղատմագրության մեջ շատ հազվաղեղ են հիշատակվում: Այս դեղղում, աղկա միտումը շարունակում է խորհրդային սովողղոյթը: Կոմունիստական վարչակարգի տարիներին ևս հայաստանյան ղատմագրությունը բացաղղաղես կենտրոնացած էր Հայ աղաքելական եկեղեցու վրա: Նույնիսկ կրոնի նկատմամբ կոմունիստների ընղհանրաղղես ժխտական վերաքերմոնքի համատեքստում խորհրդահայ ղատմագրությունը ևս Հայ աղաքելական եկեղեցու համեմատ ավելի բացասական վերաքերմոնք ուներ հայ կաթղղիկե և ավետարանական համայնքների հանղեղ. գուցե այն ղատճաղղով, որ խորհրդային վարչակարգն ավելի քիչ էր վախենում աղաջիմից, քանի որ նրա կենտրոնատեղին գտնվում էր իղ խիստ վերահսկողության ներքո: Միաժամանակ, հակաղակ խորհրդային ժամանակների մոտեցման, նախկինում շեշտվող բոլղր միջնաղարյան աղանղավղղ կրոնական շարժումները, հատկաղղես՝

դավլիկյաններն ու թոնդրակյաններն այժմ համարյա մի հարվածով դուրս են գետնից 2012 թ. բուհական դասագրքից: Թոնդրակյանների մասին ինչ-որ հիշատակում կա Պատմության ինստիտուտի վերջին քառասուն տարյակում, բայց այն շատ ավելի հակիրճ է, քան խորհրդային տարիներին հրատարակված ութ-հատորյակի մեջ, և այն քննադատում է շարժումը հայ ժողովրդի հոգևոր միասնությանը հարվածելու համար:³⁴

Պատմության մեջ գեոդերային հարաբերությունների (այսինքն՝ կանանց հասարակական դերի և ընտանեկան կառուցման) ուսումնասիրությունը խորհրդային ժամանակաշրջանի հետազոտությունների և դասագրքերի մասը չէր կազմում, նույնիսկ սոցիալական դատմության հարաբերական բարգավաճման տարիներին: Ինչպես և կարելի է կանխատեսել, այս իրավիճակը չփոխվեց նաև անկախության քսանյոթ տարիների ընթացքում, երբ այժմ, սոցիալական դատմության հանդեպ հետաքրքրությունն առհասարակ շատ ավելի քիչ է: Այս միտումը ևս չեղվում է գեոդերային դատմության նկատմամբ վերջին տասնամյակների աճող միջազգային հետաքրքրությունից, և այն երևույթից, որ գեոդերային հարաբերություններն այժմ կանոնավոր կերպով ներառվում են Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում գործածվող դասագրքերում: Կարծում են՝ այս տարբերությունը ևս լավագույնս է շտկվի Հայաստանում դատմության դասավանդման մեջ, առաջին իսկ հնարավորությամբ:

Ի հավելումն սոցիալական դատմության նկատմամբ նվազած հետաքրքրությանը, նույնքան, եթե ոչ ավելի անհանգստացնող է հայաստանյան ժամանակակից դատմաբանների անտարբերությունը դատմական մոր տեսությունների, ենթաբաժինների և մեթոդաբանությունների նկատմամբ, որոնք օտարերկրյա դատմաբանները որդեգրել և կիրառում են վերջին տասնամյակներին: Սակայն Հայաստանում, մարքսիզմի վերացումից հետո, այն ատենախոսությունների մեծ մասը, որոնք ընթերցելու հնարավորություն են ունեցել, հայտնում են, որ իրենց մեթոդաբանական ուղեցույցն է եղել «դատմականությունը» (historicism), մեծադեպ անտեսելով վերջին տարիների տեսական ու մեթոդաբանական այն մոր մոտեցումները, որոնք քննադատության են ենթարկել 19-րդ դարի այդ դոկտրինայի թերությունները և փորձել են առաջարկել առկա սկզբնաղբյուրների ավելի լավ և վստահելի օգտագործման մոր ուղիներ ու հետևել դրանց: Հայաստանյան ժամանակակից դատմաբանների մեծամասնության աշխատանքներում մոր մեթոդների բացակայությունը նաև նրանց կողմից տրված հարցերը սահմանափակվում է հիմնականում ուշ 19-րդ դարի դատմական դոկտրինայի բարձրացրած հարցերի շրջանակով: Բազմաթիվ մոր հարցեր, որ հաճախակի տրվում են ողջ աշխարհի ժամանակակից դատմաբանների կողմից, ցավոք բացակայում են Հայաստանում լույս տեսնող դատմագիտական վերջին աշխատանքներից:

Նոր տեսությունների ու մեթոդաբանությունների փորձարկման և հետևաբար հայ անցյալի մասին մոր որակի հարցադրումներ անելուն ուղղված փոփոխու-

«արեղյանական» ուղղագրության առաջին բարեփոխումով, ինչն իր վերջնական հանգրվանին է հասնում 1940 թ. օգոստոսի 15-ին, երբ Հայկական ՍՍՀ Սինիստրների սովետը հաստատում է հայերենի ուղղագրության մեջ մասնակի փոփոխություններ մտցնելու վերաբերյալ լուսժողկոմի առաջարկը:¹³ Տեքստի ուղղագրությունը, ուստի, հուշում է, որ այն մեքենագրվել է 1940 թ. օգոստոսի 15-ից հետո: Ենթադրությունը, թե փաստաթղթի տեքստը կարող էր մեքենագրվել 1920-ականների բնագրից 1940 թ. հետո հաստատված նոր ուղղագրությամբ, քիչ հավանական է թվում, քանի որ նման արտատրության մասին վկայող որևէ մշում, ստորագրություն կամ կնիք չկա ո՛չ փաստաթղթի թերթի վրա, ո՛չ էլ նյութին վերաբերող մեր ձեռքի տակ եղած արխիվային որևէ այլ նյութում:

Կասկածի տեղիք է տալիս նաև փաստաթղթի տեքստի տակ հիշատակված կուսակցական մարմնի հետևյալ կազմը՝ Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ Սարգիս Կասյան, Ալբանազ Մուսլյան, Ավիս Նուրիջանյան, Շավարշ Ամիրխանյան, Իսահակ Դովլաթյան և Աշոտ Հովհաննիսյան:¹⁴ Այս կազմը չի համադատասխանում Կենտկոմի իրական կազմին հիշյալ շրջանում: Ըստ արխիվային և դատնագիտական հավաստի աղբյուրների՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմը առաջին անգամ հաստատվել է 1920 թ. սեդտեմբերի 10-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի միստին հետևյալ կազմով՝ Ի. Դովլաթյան, Ա. Նուրիջանյան, Յ. Կոստանյան, Ա. Խանջյան, Ս. Տեր-Գաբրիելյան, միստին հաստատվել են նաև հետևյալ թեկնածուները՝ Շ. Ամիրխանյան ու Վ. Շահգեղյան:¹⁵ 1920 թ. հոկտեմբերի 1-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի կազմբյուրոն հաստատել է Կենտկոմի Կովկասյան բյուրոյի առաջարկած կազմը բացառությամբ Տեր-Գաբրիելյանի:¹⁶ Կասյանի, Բեկզադյանի և Տեր-Գաբրիելյանի թեկնածությունը ավելացվել է 1920 թ. նոյեմբերի 11-ին,¹⁷ և Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն վերջնականապես հաստատվել է հետևյալ կազմով՝ Նուրիջանյան, Կոստանյան,¹⁸ Դովլաթով, Տեր-Գաբրիելյան, Բեկզադյան, Կասյան, Աղասի: Փաստորեն, ո՛չ սեդտեմբերի 10-ին, ո՛չ հոկտեմբերի 1-ին, ոչ էլ նոյեմբերի 11-ին հաստատված կոմիտեի կազմը չի համադատասխանում փաստաթղթում մշված կազմին: Ավելին, Կասյանի թեկնածությունը Կենտրոնական կոմիտեի կազմում հաստատվել է ընդամենը նոյեմբերին:¹⁹ Հատկանշական է նաև, որ Բաքվում փաստաթղթի տակ ենթադրաբար ստորագրած Աշոտ Հովհաննիսյանը 1920 թ. սեդտեմբերի 20-ին եղել է Հայաստանում,²⁰ իսկ Կենտկոմի կազմում ընդգրկվել է շատ ավելի ուշ՝ 1920-ի դեկտեմբերին:²¹

Հիմք ընդունելով վերոնշյալ խնդիրներն ու ամօշտությունները՝ կարելի է եզրակացնել, որ արխիվում դաժվոր այս դատձենը չի կարող համարվել վավեր փաստաթուղթ գիտական կամ որևէ այլ, մասնավորապես՝ քաղաքական նդատակներով գործածության համար:²² Դրա վավերականությունն առնվազն կասկածելի է: Այժմ փորձեմք հասկանալ, թե երբ, ինչ հանգամանքներում և ինչ նդատակով կարող էր կեղծարարվել այս փաստաթուղթը:

Ինչդեռ նշվեց, փաստաթղթի ուղղագրությունը հուշում է, որ այն մեքենագրվել է 1940 թվականի օգոստոսի 15-ից հետո: Փաստաթղթի հրատարակումը հիշատակող մեր ձեռքի տակ եղած ամենավաղ աղբյուրը վկայում է, որ տեքստը տղագրվել է շրջանառվել է 1988 թ. ինքնահրատ տպրեքականներում:²³ Հաշվի առնելով, որ փաստաթղթի տեքստը առնչվում է Կարսի խնդրին²⁴ հայերի համար այնուհետ մի ցավոտ ու կնճռոտ շրջանում, ինչդեռ 1920-ի թուրք-հայկական դատարանում է, հավանական է, որ նման փաստաթղթի կեղծարարումը կարող էր հետադարձորոշող թաղաքական մոտայնակ: Եթե շարժվենք այս տրամաբանությամբ, ադա դատահական չէր կարող լինել այն ամձանց կազմը, որոնց անունները հայտնվել են տեքստի տակ: Ուրեմն հարց է առաջանում, թե այս գործիչների թիրախավորումը 1940-1988 թթ. ընթացքում ի՞նչ թաղաքական մոտայնակներ կարող էր հետադարձել և ո՞ւմ կարող էր ձեռնադրվել:

Թերևս այս հարցի մասին մտածելու առաջին հնարավոր ուղղությունը կարող է լինել ստալինյան բռնաճնշումների տարիներին նշված գործիչների դատարարումն գործերը «փաստական վկայություններով» ադա հովելու թաղաքական խնդիրը: Փաստաթղթի վեց հեղինակից չորսը՝ Սարգիս Կասյանը, Ասքանազ Սոակյանը, Ավիս Նուրիջանյանը և Իսահակ Դովաթյանը, 1940-ին այլևս կենդանի չէին: Շավարշ Ամիրխանյանը, որքանով մեզ հաջողվեց դարձել, չի ենթարկվել ստալինյան բռնաճնշումներին: Վեց ստորագրյալներից մեկի՝ Աշոտ Հովհաննիսյանի դատական գործը մեկնարկել է 1937 թվականին, վերջնական դատավճիռը կայացվել է 1941 թվականի հունիսի 9-ին:²⁵ Ուրեմն փաստաթուղթը կարող էր կեղծարարվել որդես «իրեղեն ադա ցույց» Հովհաննիսյանի դատական գործին կցվելու մոտայնակով: Քանի որ մեր ուսումնասիրությունը չհայտնաբերեց փաստաթուղթը կամ դրանից որևէ մեքերում Հովհաննիսյանի դատարարումն գործի կազմում, փաստաթղթի կեղծարարումն այս շրջանում և այս մոտայնակով համարում ենք թիչ հավանական: Հովհաննիսյանի դատարարումն արխիվային գործի ուսումնասիրությունը թիչ հավանական է դարձնում փաստաթղթի կեղծարարումն հնարավորությունը ստալինյան բռնաճնշումների շրջանում մեկ այլ մոտաձառով ևս: Հովհաննիսյանը մեղադրվում էր ազգայնական թաղաքականություն վարելու մեք՝ «սդեցիֆիզմի»²⁶ և «Հայաստանը ԽՍՀՄ-ից դուրսելու» ու «դաշնակցական բուրժուական դեմություն ստեղծելու» ուղղությամբ վարած գործունեության համար:²⁷ Հարցաքննության ժամանակ նրան տրված հարցերից մեկի դատասխանից ակնհայտ է, որ Հովհաննիսյանին, որդես «սդեցիֆիկի», մեղադրում էին Հայաստանի տարածքային սահմաններն ընդարձակելու մտադրություն ունենալու մեք, մասնավորադես՝ Կարսի հարցում:²⁸ Կարում դալքարող հայկական բանակի կազմալուծման մոտայնակ հետադարձող փաստաթուղթն այս առումով ոչ միայն չէր կարող օգտագործվել Հովհաննիսյանին վերոնշյալ մեղադրանքն առաջադրելու համար, այլև՝ ձիշտ հակառակը, կարող էր դաշտոդանել նրան այդ մեղադրանքից: Ուրեմն փաստաթղթի հնարավոր կեղծարարումը ստալինյան շրջանում թվում է թիչ հավանական:

Ստալինիզմին հաջորդած տարիներին Կարսի ճակատագրի հարցում նշյալ գործիչների ուղղակի մասնակցությունը երևան հանող փաստաթուղթը թերևս որոշակի իմաստ և քաղաքական առաքելություն կարող էր ունենալ հակախորհրդային դիմադրության և ազգային տրամադրությունների ձևավորման համատեքստում: Փաստաթղթի կեղծարարման ավելի հավանական թվացող շրջանը, ուրեմն, կարող էր լինել հատկապես 1965-ին ցեղասպանության 50-ամյակին սկիզբ առած և 1980-ականների կեսից նոր թափ ստացած ազգային զարթոնքը, երբ խորհրդային կարգերի հաստատման մեջ իրենց գործուն մասնակցությունը բերած խոհրդահայ հեղափոխական գործիչների հակազգային քաղաքականությունների մերկացումը հակախորհրդային դիմադրության մի կարևոր եղանակ էր:²⁹

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Մեր ձեռքի տակ եղած տղազիր աղբյուրներում փաստաթղթի հրատարակման մասին վկայող ամենավաղ հիշատակությունը վերաբերում է 1988 թվականին: Այդ աղբյուրը 1989 թվականի Տիգրան Պասկևիչյանի հարցազրույցն է Կենտրոնի Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրենի տեղակալ Համբարձում Կարադետյանի հետ:³⁰ Պասկևիչյանի հարցազրույցին նախորդում է Գեղամ Գրիգորյանի նախաբանը: Այստեղ հեղինակը նշում է, որ 1988 թ. ինքնահրատ ղարբերականներում հրատարակվել է մի փաստաթուղթ, որի իսկությունը կասկածի տակ է: Պասկևիչյանի հարցազրույցը Կարադետյանի հետ, փաստորեն, նդատակ ունի լույս սփռել ինքնահրատ ղարբերականներում հրատարակված այս փաստաթղթի կասկածելի իսկության, դրա թեզերի և առհասարակ 1920-ի թուրք-հայկական դատերազմում բռնկված քաղաքականությունների վրա: Պասկևիչյանի առաջին հարցին, թե արդյո՞ք նման փաստաթուղթ գոյություն ունի, Կարադետյանը տալիս է դրական դատասխան առանց որևէ փաստական հիմնավորման: Կարադետյանը, հավանաբար, նկատի է ունեցել արխիվում դաժնորեն և մեր ձեռքի տակ գտնվող փաստաթղթի դատժենը, իսկ եթե, այնուամենայնիվ, նկատի է ունեցել 1920 թ. բնօրինակը, ադա դրա գոյությունը հաստատող որևէ փաստական հիմք չի ներկայացրել:³¹ Այս հարցազրույցը փաստաթղթի վավերականությունը գնահատելու տեսակետից ընթերցելիս կարևոր է հաշվի առնել, որ այն փաստաթղթի իսկությունը գնահատող հետազոտություն չէ, այլ հարցազրույց, որտեղ իսկության մասին հնչող դատողությունները հիմնված են հեղինակի ընթացիկ գնահատականների վրա:

Հիմք ընդունելով Գրիգորյանի վկայությունն այն մասին, որ փաստաթուղթը լույս է ընծայվել 1988 թ. ինքնահրատ ղարբերականներում, փորձեցինք գտնել այդ հրատարակումները: Ուսումնասիրեցինք Հայաստանի Ազգային գրադարանում դաժնորեն *Մաշտոց*, *Հայրենիք*, *Ձանգակատուն*, *Հայ դատ* և *Անկախություն* ինքնահրատ ղարբերականների 1988 և 1989 թթ. համարները, ինչդե

նաև Հայաստանի Ազգային արխիվում պահվող Ղարաբաղյան շարժման 1159 ֆոնդն ամբողջությամբ: Այս որոնումը, ցավոք, որևէ տական արդյունք չտվեց:³²

Փաստաթղթի տեքստն ամբողջությամբ ևս մեկ անգամ լույս է տեսնում *Հայր* թերթի 1990 թ. մայիսի 27-ի համարում «Հույժ գաղտնի փաստաթուղթ. Հայաստանը՝ բոլշևիկյան զոհասեղանի վրա» վերնագրով, այս անգամ առանց որևէ նախաբանի, հարցազրույցի կամ մեկնաբանության:³³ Հաջորդ աղբյուրը, որտեղ ամբողջությամբ հրատարակվում է փաստաթղթի տեքստն ու ներկայացվում դրա իսկությունը կասկածի տակ առնող արխիվային փաստական տվյալներ, *Голос Армении* թերթի 1991 թ. փետրվարի 9-ի թիվ 28-ում լույս տեսած «История и так искажена» հոդվածն է: Նյութի հեղինակը Կոմունիստական կուսակցության Կենտրոնի Հասարակական-քաղաքական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող Ռեմ Ղազանջյանն է:³⁴ Հոդվածի առաջին մասում տեղ է գտել փաստաթղթի ամբողջական տեքստն ու դրա իսկությունը գնահատող փոքրիկ հետազոտական աշխատանք, որի հիման վրա Ղազանջյանը եզրակացնում է, որ խնդրո առարկա լուրջաբան կեղծ փաստաթուղթ է, բառացի՝ «фальшивка»: Հեղինակը փաստաթղթի մասին խոսելիս օգտագործում է շրջաբերական բառը՝ «Лжрекуля», ինչը ըստ լուրջաբանի արտացոլում է փաստաթղթի մշանակությունը:

Շրջաբերականի իսկության դեմ խոսող փաստական տվյալներ ներկայացնելուց զատ Ղազանջյանն իր հոդվածում սուր քննադատության է արժանացնում փաստաթղթի գոյությունը հաստատող Կարադեղյանի վերը ներկայացված գնահատականը՝ նշելով, որ այն գուրկ է որևէ փաստական հիմքից: Ի տարբերություն Կարադեղյանի չփաստարկված գնահատականի, Ղազանջյանի հոդվածում փաստաթղթի վավերականությունը գնահատող լուրջաբաններն ու եզրակացությունները խարսխված են արխիվային և լուրջաբանական նյութերի վրա: Այս առումով, թերթում հրատարակված լինելու հանգամանքն ամենևին չի ստվերում հոդվածի գիտական արժեքը: Հավանաբար սա է լուրջաբանը, որ լուրջաբանի արձագանքն իրեն երկար սղասեցնել չի տալիս:

Նորանկախ Հայաստանի լուրջաբանության *Հայաստանի Հանրապետությունում* 1991 թ. մարտի 19-ին՝ Ղազանջյանի հոդվածից մոտ մեկ ամիս անց, լույս է տեսնում մի հրատարակում, որտեղ տղադրվում է Տիգրան Ֆարմանյանի հարցազրույցը լուրջաբան Հրաչիկ Սիմոնյանի հետ «Հայ ժողովրդի, Հայաստանի լուրջաբանական ճակատագիրը, ներկան և աղագան» թեմայով: Զրույցին կից տղվում է նաև փաստաթղթի ամբողջական տեքստը: Սիմոնյանը, խոսելով Ղազանջյանի հոդվածի մասին, նշում է, որ փաստաթուղթն ունի «որոշակի թույլ կողմեր, որոնք կասկածի տեղիք են տալիս. իսկադե՞ս դա Հայաստանի բոլշևիկ ղեկավարների ձեռքի գործն է»: Սակայն, նա ավելացնում է, որ նման հարցադրումը սկզբունքային մշանակություն չունի, քանի որ եթե անգամ կոնկրետ փաստաթուղթը կեղծված է, ամենար է ժխտել հայ բոլշևիկների «մեղքը» 1920 թ. թուրք-հայկական լուրջաբանի նախօրեին և ընթացքում: Սիմոնյանն ընդհանուր առմամբ կարծում է, որ փաստաթուղթը «նման էր և

սազական» թուրք-հայկական ղատերազմում հայ բուլշևիկների վարած քաղաքականությամբ: Սակայն նա առարկայականորեն չի բննարկում Ղազան-ջյանի փաստարկները, այլ կեղծարարման հարցը, ըստ եռօրյան, դիտարկում է որոշեալ անեական հարց:

1995 թ. Սերգեյ Վարդանյանը իր *Յայաստանի մայրաքաղաքները* գրքում, նկարագրելով թուրք-հայկական ղատերազմի օրոք Կարսի աղետալի վիճակը, հարց է բարձրացնում, թե ովքե՞ր էին ստեղծված իրադրության մեղավորները:³⁵ Վարդանյանը նշում է, որ Խորհրդային Ռուսաստանը և հայ բուլշևիկները Կարսի վրա հարձակվող թուրքական բանակի բարեկամներն էին, և մեջբերում փաստաթղթից մի հատված՝ հղելով *Յայաստանի Յանրադետության* 1991 թվականի և *Յայքի* 1990 թ. համարներին: Չնայած այն հանգամանքին, որ *Յայաստանի Յանրադետության* 1991 թվականի հրատարակման մեջ նշվել էր, որ կան փաստաթղթի իսկությունը կասկածի տակ դնող «թույլ կողմեր», Վարդանյանի մեջբերման մեջ այս մասին ոչ մի հիշատակություն չկա: Այդուհանդերձ, կարևոր է, որ հղումների համակարգը ընթերցողին դեռևս հնարավորություն է տալիս առաջին սկզբնաղբյուրին դիմելու ղարազայում հասու դառնալ փաստաթղթի կասկածելի ինքնության շուրջ իննսունականների սկզբին ծավալված քննարկումներին: Ուստի, չնայած որ գիտական այս հրատարակությամբ ականատես ենք դառնում, թե ինչո՞ւ է առաջին անգամ կասկածելի փաստաթուղթը լրատվական ձևաչափից անցնում գիտական ձևաչափ և մեկնարկում վիճարկված իր իսկությունը թոթափելու և հավաստի փաստաթուղթ դառնալու երկար և խրթին ճանաղարհը, կասկածելի ինքնության մասին քննարկումների հետ կաղը դեռևս անուղղակիորոն ղախողանված է:

Փաստաթղթի տեքստը *Յայաստանի Յանրադետություն* թերթում վերատոմվում է 1996 թ. մարտի 7-ի թիվ 44 համարում «Կոմունիստական սրիկայություն. ամոթալի փաստաթուղթ» վերնագրով: Յրաղարակման վերնագրից իսկ ղարգ է, որ այն հետաղմողում է քաղաքական մղատակ և գուրկ է փաստաթղթի իսկությունը գնահատող որևէ գիտական հավակնությունից:³⁶ Բուն տեքստին նախորդում է *իրավաբան* Գ. Նազարյանի նախաբանը, որում բուլշևիկ գործիչների կողմից արձակված այս «հույժ գաղտնի» կոչը բնութագրվում է «իրենց սև գործի իմաստն ու հետևանքները գիտակցող» «Բաքվում աղաստանած ջոջերի» «խիստ նողկալի» «դավաճանություն»: Այս հրաղարակման մեջ փաստաթուղթը տրված է որոշեալ հավաստի վավերագիր, իսկ վերջինիս իսկության վերաբերյալ ղատմաբանների մասնագիտական մտահոգություններն ամբողջովին լուրջան են մատնված: Դրա ղատճաղը թերևս այն է, որ հրաղարակումն արված է հրաղարակախոսական (ոչ գիտական) ձևաչափով և մեկի կողմից, ով ղատմաբան չէ: Բուլշևիկ գործիչների դավաճանություններն աներկբայորեն մերկացնող այսղիսի մի վավերագիր տղելու Նազարյանի քաղաքական գայթակղությունն այսղիսով կաշկանղված չէ ղատմագիտության մասնագիտական մեթողներով ու չափանիշներով:

Փաստաթղթի տեքստի հաջորղ հրաղարակումը տեղ է գտնում ղատմաբան

Լեւոնորուշ Խուրշուդյանի *Հայաստանի բաժանումը 1920 թվականին* գրքում:³⁷ Այստեղ փաստաթղթի տեքստի սկզբնաղբյուր է նշվում *Հայաստանի Հանրապետություն* թերթի 1991 թ. մարտի 19-ի հրատարակումը: Այստիսով 1990-ականների մամուլի էջերում հայտնված և հավաստիության տեսակետից վիճարկված այս փաստաթուղթը Խուրշուդյանի թեթև ձեռքով 2000-ականների սկզբին հանրամատչելի լրատվական-տեղեկատվական ձևաչափից դարձյալ անցնում է գիտական ձևաչափ: Այս գրքում այն տղվում է ամբողջական տեքստով՝ վկայակոչվելով որոշ բուլշևիկների դավաճանական գործողությունները բացահայտող վավեր աղացույց: Խուրշուդյանը մի կարճ դարբերությամբ նշում է, որ «վերջին շրջանում որոշ կոմունիստ դատմաբաններ» փորձել են կասկածի տակ առնել փաստաթղթի վավերականությունը:³⁸ Այդուհանդերձ, նա առարկայականորեն չի անդրադառնում վավերականությունը վիճարկող փաստարկներին: Փոխարենը փաստաթղթի իսկությունը հիմնավորում է նմանատիպ բովանդակություններ ունեցող այլ փաստաթղթերի գոյությամբ:³⁹ Փաստորեն կասկածելի դատմական փաստաթղթի վավերականությունը հիմնավորվում է հենց փաստաթղթի թեզերի հավանական վավերականությամբ: Փաստաթղթի բովանդակությունը, տարօրինակորեն, դառնում է նույն այդ դատմանի վավերական իսկությունը հաստատող և լեգիտիմացնող հիմք:

Ավելի քան տաս տարի անց փաստաթուղթը դարձյալ հրատարակ է ելնում արդեն գլխավորապես էլեկտրոնային մամուլի դայանմերում: *Iragir.am* առցանց լրատվական հարթակում հրատարակվում է Վլադիմիր Հարությունյանի 2013 թ. օգոստոսի 6-ի հոդվածը «Կասկածելի թոուցիկը, հայ բուլշևիկները, Ռուսաստանն ու հայկական դեմությունը» վերնագրով: Այստեղ փաստաթղթի սկզբնաղբյուր է նշված բուն արխիվը, որտեղ Հարությունյանի աչքից հավանաբար չէր կարող վրիդած լինել փաստաթղթի գործում ներառված Ղազանջյանի հոդվածը: Հարությունյանը ներկայացնում է փաստաթղթի իսկությունը կասկածի տակ առնող մի շարք հիմնավորումներ և ավելացնում, որ որոշ հրատարակումների «հեղինակներ չեն ընդունում այս փաստաթղթի իսկությունն ու հավաստիությունը, համարում են այն կեղծիք, фальшивка»: Թեև հղում տրված չէ, ռուսերեն այս բառի գործածությունը վկայում է, որ Հարությունյանը ծանոթ է եղել Ղազանջյանի հոդվածին և, ամենայն հավանականությամբ, Ղազանջյանի փաստարկները նրան համոզիչ են թվացել: Փաստաթղթի իսկության դեմ փաստարկներ բերելուց հետո Հարությունյանն առաջարկում է՝ «եկեք «ծալենք և կողքի դնենք» չարաբաստիկ այդ թոուցիկը»: Այնուհետև Հարությունյանը ներկայացնում է որևէ կասկածի տեղիք չտվող այնտիսի վավերագրեր, որոնք աղացուցում են այդ շրջանում «սեփական դեմականության կործանումն աղախովող» բուլշևիկյան քաղաքականությունների գոյությունը: Հատկանշական է, որ Հարությունյանը փաստաթղթի մասին խոսելիս օգտագործում է «թոուցիկ» բառը՝ փաստաթղթին վերագրելով զանգվածային քարոզչություն իրականացնելու նպատակ, մի բան, որով գերազանցվում է փաստաթղթի շրջաբերական նշանակությունը:

Հաջորդը ժամանակագրորեն փաստաթղթին անդրադառնում է ազգագրագետ Յրանուշ Խառատյանը 2014 թ. նույն կայքում տղված իր հոդվածով:⁴⁰ Այստեղ քսանակամներին բուշկիկների թուրքամետ քաղաքականությունների քննարկման համատեքստում, ի թիվս բազում այլ նյութերի, ամփոփ ներկայացված է նաև մեզ հետաքրքրող փաստաթղթի բովանդակությունը: Սակայն, ի տարբերություն մյուս մեջբերումների, որոնց դեղքում հանգամանորեն տրված են գիտական հղումները, փաստաթղթի տեքստի սկզբնաղբյուրը տրված չէ: Պարզ չէ՝ հեղինակն ինչ աղբյուրից է օգտվել փաստաթղթի տեքստին ծանոթանալու համար և, ըստ այդմ, տեղյակ եղե՞լ է արդյոք փաստաթղթի իսկության շուրջ գոյություն ունեցող բանավեճերին: Պարզ է միայն, որ սա առաջին գիտական հրատարակումն է, որտեղ փաստաթղթի կասկածելի իսկության վերաբերյալ որևէ հիշատակություն չկա, ինչդեռ նաև չկա որևէ հղում, որի շնորհիվ հնարավոր կլիներ, թեկուզև անուղղակիորեն, հասու լինել փաստաթղթի հնարավոր կեղծման խնդրին: Խառատյանի հրատարակմամբ փաստաթուղթը դառնում է հղման կարիք չունեցող, ինքնակնհայտորեն վավեր լուսնական վավերագիր:

Չանսալով փաստաթուղթը «ծալելու և կողքի դնելու» սեփական հորդորին՝ Վլադիմիր Հարությունյանը փաստաթղթի իսկությունը հարցականի տակ դնող իր նախկին հոդվածը հրատարակելուց երեք տարի անց՝ 2016 թ., վերահրատարակում է փաստաթղթի տեքստն ամբողջությամբ փաստաթղթերի մի ժողովածուում՝ հղելով Ազգային արխիվում դառնվող փաստաթղթին:⁴¹ Ոչ մի բացատրության չի տրվում զարմանալի այն հանգամանքը, որ տեքստը հրատարակվում է առանց հիշատակելու 2013 թ. այդ նույն փաստաթղթի կեղծարարված լինելու մասին նույն հեղինակի եզրակացությունը կամ առանց ներկայացնելու այն նոր փաստերն ու հանգամանքները, որոնք գուցե ստիպել են հեղինակին վերանայել իր եզրակացությունը և, այդդիմով, վերահրատարակել փաստաթուղթը: Հատկանշական է նաև, որ փաստաթուղթը տեղ է գտել ոչ թե ժողովածուում հրատարակված բուն փաստաթղթերի շարքում, այլ հեղինակի կողմից գրված «Առաջաբանի փոխարեն» հատվածում: Այստեղ, նախկին հոդվածի նման, հեղինակը փաստաթղթի համար գործածում է «թուղթիկ» բառը՝ փաստաթղթին վերստին վերագրելով նախատեսվածից ավելի մեծ նշանակություն: Փաստաթուղթը, փաստորեն, արդեն տղագիր գիտական հրատարակության ձևաչափով առաջին անգամ հանդես է գալիս ամբողջական տեքստով, որդես հավաստի վավերագիր:

Հարությունյանի վերոնշյալ գրքից է օգտվում հրատարակման հաջորդ աղբյուրը՝ Հայկական ուսումնասիրությունների Աճի կենտրոնը,⁴² որի կայքում փոքրիկ քննադատական նախաբանով վերատղվում է վավերականության տեսակետից արդեն որևէ կասկածի տեղիք չտվող փաստաթղթի գիտական հրատարակությունը՝ հղելով Հարությունյանի վերոնշյալ ժողովածուին: Նախաբանի մեջ տեղ է գտնում հետևյալ հետաքրքրական ձևակերպումը. «Ուշագրավ է, որ այս հակահայ կոչի տակ ստորագրած Սարգիս Կասյանի անունով Երևանում կա փողոց»: Փաստորեն, այս վերահրատարակությունը կրում է տեղեկատվա

2675 ЖУ



| Лица (свои или чужие) | | Лица (свои или чужие) | |
|-----------------------|-----------------------|--------------------------|---------|
| 1. Имя | Иванов, Иван Иванович | 2. Возраст | 35 лет |
| 3. Родина | Тифлис | 4. Рост | 1,75 м |
| 5. Цвет волос | Черные | 6. Цвет глаз | Синие |
| 7. Цвет кожи | Средняя | 8. Цвет ногтей | Средняя |
| 9. Цвет губ | Средняя | 10. Цвет зубов | Средняя |
| 11. Цвет бровей | Средняя | 12. Цвет ресниц | Средняя |
| 13. Цвет усов | Средняя | 14. Цвет волос на голове | Средняя |

Սարգիս Կասյանի կալանավորման ժամանակ վրացական ժանդարմերիայում արված լուսանկարներ և այլ կից տվյալներ, 1914

կան, ինչ-որ առումով նախազգուշական նոտատակ, որին էլ, ըստ էության, որոշ ժամանակ անց արձագանքում է ավագանու Ելք խմբակցությունը: Կասյան փողոցի անվանափոխության Ելքի առաջարկը Աճի կենտրոնի կայքում վերահրատարակված փաստաթղթից մեջբերումներով և այլ կից հիմնավորումներով շուտով ներկայացվում է համադատասխան լիազոր մարմնի դատին:⁴³

ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչդեռ ցույց է տալիս այս փաստաթղթի հրատարակման և վիճարկման դատությունը, 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին հակախորհրդային ազգային տրամադրությունների վերելքի շրջանում կասկածելի իսկությամբ փաստաթուղթը հիշատակվում կան ամբողջությամբ հրատարակվում է ոչ թաշտոնական մամուլում և շատ չանցած մուտք գործում խորհրդային

¹ Հողվածը գրվել է Կոմունա հարթակի ֆինանսական աջակցությամբ: Արժեքավոր դիտարկումների և խորհուրդների, ինչդեռ նաև կարևոր տեղեկությունների և աղբյուրների համար շնորհակալ ենք Վարդան Ազատյանին, Ամատունի Վիրաբյանին, Գայանե Այվազյանին, Չառա Հարությունյանին, Լուսինե Չերգեշտյանին, Արփի Մանուսյանին, Թամարա Թամանյանին, Տիգրան Պասկևիչյանին, Արսեն Հակոբյանին, Արայիկ Հարությունյանին, Հրաչ Գալստյանին, Հրանուշ Խատատյանին, Սերգեյ Վարդանյանին, Վահան Իշխանյանին, Վահե Թորոսյանին, Վահրամ Աղայանին, Աննա Նիկողոսյանին, Իրինա Շախնազարյանին և Սերուժան Հարությունյանին: Հողվածն առաջին անգամ հրատարակվել է www.arteria.am մշակութային-քննադատական հանդեսում 26.08.2018, տե՛ս <http://www.arteria.am/hy/1534413914>, այց՝ 22.07.2019: Ներկա հրատարակությունը մախկնի լրամշակված տարբերակն է:

² Փողոցների անվանափոխության հարցը ավագանու միատի օրակարգում ներառելու մասին 2017 թ. օգոստոսի 28-ի առաջարկը տե՛ս ավագանու Ելք խմբակցության ղաշտոնական ֆեյսբուքյան էջում, <https://www.facebook.com/117528495533449/photos/a.119132318706400.1073741829.117528495533449/119132305373068/?type=3&theater>, այց՝ 6.06.2018:

Հայաստանի Հանրապետության հիմնադրման առաջին տարում՝ 1991 թ., Երևանի առաջին քաղաքապետ Համբարձում Գալստյանը Կասյան փողոցը վերանվանեց Սիամանթո փողոց: Հաջորդ քաղաքապետ Վանո Սիրադեղյանը 1998 թ. փողոցը կրկին կոչեց իր հին անունով (տե՛ս գրույց Ամատունի Վիրաբյանի հետ, «Նմանվում ենք ոչ թե մերձբալթյան կամ Արևելյան Եվրոպայի երկրներին, այլ Սիջին Ասիային», 15 հուլիսի 2014, *Իրատես.am*, <http://www.irates.am/hy/1405431382>, այց՝ 28.06.2018): Լրագրող, սցենարիստ Տիգրան Պասկևիչյանի ենթադրությամբ Վանո Սիրադեղյանի այս որոշման վրա կարող էր ազդեցություն ունեցած լինել գրող Հրանտ Մաթևոսյանի դրական վերաբերմունքը խորհրդային Հայաստանի վաղ շրջանի դեկավարների նկատմամբ (մասնավոր գրույց հեղինակի հետ, 9 հունիսի 2018, Երևան): Ելք խմբակցության նախագծում հավանաբար նկատի էին առնվում 1990-ականների հենց այս իրադարձությունները, երբ մասնավորապես ասվում էր, որ անկախություն ձեռք բերելուց հետո հակադեմոկրատիկ բոլշևիկ գործիչների անուններից ազատվելու գործընթացը կիսատ էր մնացել, և որ անհրաժեշտ էր հասցնել այն իր տրամաբանական ավարտին:

³ Ելք խմբակցությունն իր առաջարկ-նախագծում, մեջբերելով փաստաթղթից մի հատված, հղում էր Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոնին, տե՛ս ««Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը՝ արագացնել Հայաստանի դարձումը»․ 1920 թ., սեղտեմբեր», Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոնի ղաշտոնական կայք, 18 դեկտեմբերի 2016, <http://www.aniarc.am/2016/12/18/armenian-bolsheviks-baku-1920-turkey/>, այց՝ 17.07.2018: Կայքում փաստաթուղթը քննադատական փոքրիկ նախաբանով հրատարակվել էր ըստ հետևյալ աղբյուրի՝ Վլադիմիր Հարությունյան, *Կարսի մարզը Հայաստանի Առաջին Հանրապետության կազմում (աղբյուր 1919 թ.-հոկտեմբեր 1920 թ.): Նյութեր և փաստաթղթեր* (Երևան: Ասողիկ հրատարակչություն, 2016), էջ 21-22: Հարությունյանն այս գրքում տեքստը հրատարակել էր ամբողջությամբ՝ հղելով ազգային արխիվում դասակարգված փաստաթղթին՝ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ 1022, ցուցակ 3, գործ 275, թերթ 1:

⁴ «Կազգեն Առաջին Վեհափառի անվամբ փողոց անվանակոչելու վերաբերյալ «Ելք» խմբակցության նախագիծ», էջ 5: Շնորհակալ են ժամանակին Ելք խմբակցության ավագանու անդամ Արայիկ Հարությունյանին՝ քաղաքապետարանին

ներկայացված վեց փողոցի անվանափոխության նախագծերի էլեկտրոնային տարբերակները խնդրանքիս ընդառաջ ուղարկելու համար:

- ⁵ Կասյան փողոցի անվանափոխության թեմայով հանրային քննարկումներն ու խոսակցությունները հետագայում ծավալվեցին հենց այս մեղադրական մոտեցման առաջադրած շրջանակի ներսում, որի հիմքում, ըստ ելույթի, ընկած էր մեղադրյալին մերկացնելու և Պատասխանատվության ենթարկելու ընդհանուր տրամաբանությունը: Օրինակ՝ ազգագրագետ Յրանուշ Խատատյանը, անդրադառնալով Կասյան փողոցի անվանափոխության հարցին, Ֆեյսբուքյան իր էջում մի գրառում արեց խորհրդային բռնությունների իրականացման մեջ Կասյանի ունեցած դերի մասին: Այն սկսվում էր հետևյալ հարցով. «Կարևոր չէ, որ Երևանում կա Կասյան փողոց, կարևոր է, թե մենք Կասյանին *դատասխանատու ճանաչո՞ւմ ենք* խորհրդային Կարմիր տետրի հարցում» (ընդգծումը՝ Ռ. Գ.), տե՛ս https://www.facebook.com/hranush.kharatyan/posts/885873671564910?hc_location=ufi, այց՝ 28.07.2018: Տե՛ս նաև «Կասյանից՝ արտագաղթ. գրույց Յրանուշ Խատատյանի հետ ՍիվիլԷնթի տաղավարում», Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոնի թաշտոնական կայք, 18 օգոստոսի 2017, <http://www.aniarc.am/2017/08/18/civilnet-tatul-hakobyan-interview-hranush-kharatyan-august-18-2017/>, այց՝ 28.06.2018; «Բոլշևիկյան ռեմեսանս Հայաստանում. գրույց Վլադիմիր Հարությունյանի հետ», *ՍիվիլԷնթ* լրատվական կայքի յուրօրյան ալիք, 14 սեպտեմբերի 2017, https://www.youtube.com/watch?time_continue=416&v=NoyaX8peQl0, այց՝ 28.06.2018; Վահրամ Թոքմաջյան, «Ա. Միկոյանի և Ս. Կասյանի հակամարդկային ու հակահայկական էջերը, ԻՔՄ», *Առաջին լրատվական*, 4 սեպտեմբերի 2017, <http://www.1in.am/2202799.html#undefined.gbp1>, այց՝ 28.06.2018; տե՛ս նաև գրող Սարիմե Պետրոսյանի Ֆեյսբուքյան գրառումն ու դրա տակ ծավալված քննարկումը, https://www.facebook.com/marine.petrossian/posts/10154912256973494?hc_location=ufi, այց՝ 28.06.2018; երեք հարցազրույց Ելք խմբակցության ավագանու անդամ Դավիթ Խաժակյանի հետ՝ «Երևանում բուլշևիկների ամուններով դողոցները, փողոցները լի ենք տ անվանափոխվեն, դա լի ենք է լինի մեն փոփոխությունների մի մասը. Դ. Խաժակյան», *Թերթ.am*, 5 օգոստոսի 2017, <http://www.tert.am/news/2017/08/05/khajakyan/2450323>, այց՝ 28.06.2018, «Հայաստանի սուվերենության նկատմամբ որևէ ոտնձգություն լի ենք տ դատադարտվի և կանխվի», *Iragir.am*, 16 օգոստոսի 2017, <https://www.Iragir.am/2017/08/16/158710/>, այց՝ 28.06.2018, «ՀՀԿ-ի՝ փողոցների անվանափոխման դեմ հանդես գալը ռուսական ճնշման արդյունք է. Խաժակյան», *Ազատություն TV* յուրօրյան ալիք, 6 սեպտեմբերի 2017, <https://www.youtube.com/watch?v=Sqh4QrjveXM>, այց՝ 28.06.2018; հարցազրույց Ելք խմբակցության ավագանու անդամ Անի Սամսոնյանի հետ, ««Կասյանը հրամայել է սղանել, վերացնել հայ սղաներին, աղաբարոյականացնել հայկական բանակը». Անի Սամսոնյան», *Առավոտ*, 14 օգոստոսի 2017, <https://www.aravot.am/2017/08/14/902355/>, այց՝ 28.06.2018; հարցազրույց Ելք խմբակցության ավագանու անդամ Տիգրան Ավինյանի հետ, ««Թե Կասյանն ինչ ներդրում է ունեցել հայ սղաների գնդակահարության հարցում՝ սա անքննելի է եւ միանշանակ». Տիգրան Ավինյան», *Առավոտ*, 14 օգոստոսի 2017, <https://www.aravot.am/2017/08/14/902415/>, այց՝ 28.06.2018: Ազգագրագետ Արսեն Հակոբյանը իր «խորհրդայինը հետխորհրդային Հայաստանում» ելույթում խնդրականացրեց «հերոսների և դավաճանների մոդելով» թատնությունը հասկանալու փորձերը, տե՛ս «խորհրդայինը հետխորհրդային Հայաստանում. քարոզչություն, թատնություն և իրականություն: Արսեն Հակոբյան», *Բուն TV*, 25 սեպտեմբերի 2017, <http://boon.am/post-soviet-armenia/>, այց՝ 28.06.2018: Լույնաբովանդակ

քննադատական գրությամբ հանդես եկավ նաև դատաբան Արա Սանջյանն իր ֆեյսբուքյան էջում, տե՛ս
<https://www.facebook.com/ara.sanjian/posts/10155674516114083>, այց՝ 6.06.2018:
 Այս թեմային քննադատական հոդվածով անդրադարձավ նաև լրագրող Վահան Իշխանյանը, տե՛ս Վահան Իշխանյան, «Նկուղային դատախազության զուգահեռները», *Ինքնագիր գրական հանդես*, 4 սեպտեմբերի 2017, <https://inknagir.org/?p=7438>, այց՝ 28.06.2018:

- ⁶ Տե՛ս ««Կասյանը ոչ մի բան էլ չի հրամայել, դա իրականացրել է Գետրոզ Աթաբեկյանը, այդ հրամանը եղել է կեղծիք»։ Ամատունի Վիրաբյան», *Սոսկոտ*, 14 օգոստոսի 2017, <https://www.aravot.am/2017/08/14/902386/>, այց՝ 28.06.2018: Տե՛ս նաև Մարինե Պետրոսյանի ֆեյսբուքյան գրառման տակ Արսեն Հակոբյանի դիտարկումները,
https://www.facebook.com/marine.petrosian/posts/10154912256973494?hc_location=ufi, այց՝ 28.06.2018: Ուշագրավ է, որ փաստաթղթի իսկության վերաբերյալ կասկածներն ունեն ավելի հին ծագում, տե՛ս, օրինակ՝ Рем Казанджян, «История и так искажена», *Голос Армении*, 9 փետրվարի 1991, ինչպես նաև՝ Վլադիմիր Հարությունյան, «Կասկածելի թուղցիկը, հայ բուլշևիկները, Ռուսաստանն ու հայկական դատությունը», *Iragir.am*, 6 օգոստոսի 2013, <https://www.iragir.am/2013/08/06/86502/>, այց՝ 28.06.2018:
- ⁷ Տե՛ս Ելք խմբակցության դաշտոնական ֆեյսբուքյան էջը, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=120635451889420&id=117528495533449, այց՝ 6.07.2018:
- ⁸ Տե՛ս փաստաթղթի լուսանկարը, էջ 193:
- ⁹ Ֆոնդի և ցուցակի ամունների թարգմանությունը ոռուսերենից հայերեն՝ Ռուզաննա Գրիգորյանի:
- ¹⁰ Սեզ հետ մասնավոր գրույցում Վիրաբյանը հիշեց, որ այս փաստաթուղթը տեսել է 1980-ականների կեսին արխիվի «խուլ», այսինքն՝ ընդհանուր վերնագրեր («թուղցիկներ», «շրջաբերականներ» և այլն) ունեցող գործերում, իսկ 1989-ին ինքն է առանձնացրել այն որդեյ առանձին գործ: Նրա վկայությամբ 1980-ականների վերջին այդ փաստաթուղթը արխիվում դեռևս անհասանելի էր հանրության համար, ինչը նշանակում է, որ այն հնարավոր չէր լինի վերցնել արխիվից, առնվազն՝ դաշտոնադատ (մասնավոր գրույց հեղինակի հետ, 19 հունիս 2018, Երևան): Փաստաթղթի վերին աջ անկյունում գետեղված թվերը՝ 8, 13 և 1, ևս խոսում են այն մասին, որ փաստաթուղթը արխիվացված է եղել նախքան 1989 թվականի նոյեմբերը: Առհասարակ գործերի վերին աջ անկյունում գրված թվերը ցույց են տալիս արխիվային գործում տվյալ թերթի թիվը կամ, այլ կերպ ասած, էջը: Այս երեք թվերը, որոնցից երկուսը ջնջված են, վկայում են, որ մինչև մեզ հայտնի ֆոնդային գործի մեջ հանգրվանելը, փաստաթուղթը երկու անգամ ֆոնդային գործ է փոխել: Փաստաթղթի վրա գետեղված թվերից 8-ը գրված է կաղոյտ մատիտով, իսկ մյուս երկուսը՝ 13-ն ու 1-ը՝ սև: Քամի որ 8 թիվը ջնջված է սև մատիտով, կարելի է ենթադրել, որ սկզբում կաղոյտ մատիտով գրված է եղել 8-ը: Երբ փաստաթուղթը մտել է նոր գործի մեջ, 8-ը սև մատիտով ջնջվել է, և ավելացվել է գործի նոր թերթի թիվը՝ 13-ը: Երկրորդ անգամ գործը փոխելիս դարձյալ սև մատիտով ջնջվել է 13-ը և ավելացվել փաստաթղթի այժմյան թերթի թիվը՝ 1-ը: Հետևաբար, առաջին գործի մեջ փաստաթուղթը եղել է գործի 8-րդ, երկրորդում՝ 13-րդ թերթը: Այժմ այն գործի 1-ին թերթն է:
- ¹¹ Թամարա Թամանյանի կարծիքով փաստաթուղթը ոչ թե մեքենագրի առաջին, այլ երկրորդ օրինակն է, այսինքն՝ դատաճեմահամ թղթի միջոցով դատաճեմված օրինակը: Փաստաթուղթը հավանաբար մեքենագրվել է երկու օրինակով, և երկրորդ

օրինակը տեղ է գտել արխիվային գործում (մասնավոր զրույց, 12 հունիսի 2018, Երևան): Թամանյանը 1973-2017 թթ. եղել է արխիվի աշխատակից՝ մի որոշ ժամանակ զբաղեցնելով Հասարակական-քաղաքական փաստաթղթերի բաժնի վարիչի դերերը:

- ¹² Այս անհամադասախառնության մասին տե՛ս նաև Հարությունյան, «Կասկածելի թուղթեր»:
- ¹³ Սիրակ Գյուլբուդադյան, *Հայերենի ուղղագրության դասագրքեր* (Երևան: Երևանի համալսարանի հրատ., 1973), էջ 324-374: Գրքի էլեկտրոնային տարբերակը տե՛ս <http://x.1128831.n5.nabble.com/-td299.html#a302>, այց՝ 28.07.2018:
- ¹⁴ Այս խնդրի մասին տե՛ս նաև՝ Казанджян, «История и так искажена», ինչպես նաև՝ Հարությունյան, «Կասկածելի թուղթեր»:
- ¹⁵ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 258, թթ. 1-2: Տե՛ս նաև՝ *Հայաստանի կոմունիստական կուսակցության դասագրքեր*, Օ. Աղայան և այլոք (խմբ.) (Երևան: Հայաստան, 1967), էջ 299:
- ¹⁶ *Հայաստանի կոմունիստական կուսակցության դասագրքեր*, էջ 299:
- ¹⁷ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 258, թթ. 10-11: Նաև՝ *Հայաստանի կոմունիստական կուսակցության դասագրքեր*, էջ 299:
- ¹⁸ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 258, թ. 11-ում Կոստանյանի անունը գրված է դ-ով՝ Կոստանյան, իսկ թ. 1-ում և 2-ում առանց դ-ի՝ Կոստանյան:
- ¹⁹ 1920 թվականին Հայաստանի կոմունիստական կուսակցության մեկ այլ դաստիարակման մարմին էր Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների Արտասահմանյան բյուրոն, որը հիմնվել էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախաձեռնությամբ 1920 թ. մայիսին: Բյուրոյի կազմում էին Ս. Կասյանը, Ա. Բեկզադյանը, Ա. Մոսկվանը, Դ. Շահվերդյանը, Զ. Պողոսյանը, Ա. Նուրիջանյանը, Զ. Կոստանյանը, Գ. Տեր-Սիմոնյանը, Շ. Ամիրխանյանը և Լ. Ուլիբեկյանը: Արտասահմանյան բյուրոն լուծարվել է 1920-ի հոկտեմբերի 1-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոյի կողմից Հայաստանի Կոմկոսի Կենտկոմի կազմը հաստատելուց հետո, տե՛ս *Հայկական Սովետական Հանրապետության*, հ. 10 (Երևան: [ՀՍՍՀ ԳԱ], 1984), էջ 142: Ինչպես տեսնում ենք բյուրոյի կազմը ևս չի համադասախառնում փաստաթղթի կազմին:
- ²⁰ ՀԱԱ, ֆ. 1021, ց. 22, գ. 670. թթ. 39, 46:
- ²¹ ՀԱԱ, ֆ. 1021, ց. 22, գ. 670. թ. 10:
- ²² Այս հետազոտության ընթացքում քսանականների տեքստերի և արխիվային նյութերի հետ աշխատելու փորձ ունեցող բանասեր Սիրանուշ Դվոյանը, ծանոթանալով փաստաթղթին, կասկածներ հայտնեց նաև հայերենի ոճի և բառամթերքի օգտագործման, ինչպես նաև փաստաթղթի վերին աջ անկյունում գետեղված «Հույժ գաղտնի» գրառման կադակցությամբ՝ մշելով, որ լեզուն, ոճն ու վերոնշյալ արտահայտությունը հատուկ չեն 20-ականների տեքստերին (մասնավոր զրույց հեղինակի հետ, 23 հունիս 2018, Երևան): Փաստաթղթում օգտագործված լեզուն խնդիր է համարել նաև Ղազարյանն իր հոդվածում: Նա մասնավորապես մշել է, որ տեքստում օգտագործված «Հայաստանի կոմունիստների /բոլշևիկների/ կենտրոնական կոմիտե», «հայ բոլշևիկ կոմունիստներ», «հանրապետական Հայաստան» անուններն ու արտահայտությունները չեն հանդիպում ո՛չ արտասահմանյան բյուրոյի, ո՛չ էլ Կենտրոնական կոմիտեի քսանականների փաստաթղթերում: Այս ուղղությամբ լրացուցիչ բանասիրական աշխատանքը կարող է ի հայտ բերել մոր փաստական տվյալներ փաստաթղթի վավերականությունն ավելի լիարժեք կերպով գնահատելու համար:
- ²³ Այս մասին ավելի մանրամասն ստորև:

- ²⁴ Տե՛ս փաստաթղթի տեքստը:
- ²⁵ ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2297: ՀԱԱ, ֆ. 1191, ց. 4, գգ. 867, 868, 869, 870. 871, 872, 872ա:
- ²⁶ 1903-1904 թթ. Պատանի Հովհաննիսյանը Շուշիում անդամակցել է ՀՅԴ ազդեցության տակ գործող Կովկասյան հայ աշակերտական միությանը, ինչից հետո 1904-1906 թթ.՝ Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանը (ՍԴԲՀԿ): Այդ կազմակերպության կորիզը կազում էին նախկին դաշնակցական կամ դաշնակցական հարումներ ունեցող գործիչներ, որոնք ազգային ինքնորոշման հարցում սկսեցին կարևորել նաև սոցիալական խնդիրներն ու դասակարգային շերտավորումները: Պրոլետարիատի միջազգային դասակարգային դայբարը հասկանալու և կազմակերպելու հարցում նրանք առանցքային նշանակություն էին տալիս առանձնահատուկ՝ «սոցեցիֆիկ», ազգային բնորոշիչներին ու դայնամներին այն ժողովուրդների որոլետարիատի դեմքում, որոնց դարազայում ազգային հարցերի սրությունն անշրջանցելի էր դասակարգային դայբարի ըմբռնման և կազմակերպման համար: Արդյունքում քննադատները (նախևառաջ բուլշևիկ գործիչները) նրանց հեզմականորեն սկսեցին որակել «սոցեցիֆիկ» ածականով. այստեղից էլ ՍԴԲՀԿ անդամներին ուղղված «սոցեցիֆիզմի» մեղադրանքները: Տե՛ս Վարդան Ազատյան, «Ոչ եղիցի չեղեալ, գոր ինչ եղևն»: Աշոտ Հովհաննիսյանի ավարտաճառը և նրա գործում դասակարգայինությունը», ըստ՝ Աշոտ Հովհաննիսյան, *Իսրայել Օրիմ և հայ ազատագրական գաղափարը / Israel Ory und die armenische Befreiungsidee* (Երևան: Հովհաննիսյան ինստիտուտ, 2016), էջ 567-709:
- ²⁷ Ըստ՝ Հանլետ Սիրոզյան, *Հայաստանի խորհրդային տիրակալները* (Երևան: ՎՄՎ-Պրինտ, 2013), էջ 25: Թարգմանությունը ճշտված է ըստ գրքի ռուսերեն առցանց հրատարակության մեջ տեղ գտած բնագրի, տե՛ս <http://noev-kovcheg.ru/mag/2008-10/1394.html>, այց՝ 13.08.2018:
- ²⁸ ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2297, թ. 106:
- ²⁹ Արվեստաբան Վարդան Ազատյանը, դատելով մեքենագրի տառատեսակից, նշեց, որ փաստաթուղթը հիշեցնում է 1960-1970 թթ. մեքենագիր: Մեզ հաջողվեց դարձել, որ խորհրդային շրջանում ազգային անվտանգության ծառայությունը գրանցում էր բոլոր տղազրական մեքենաների տառատեսակները, հետևաբար հետագա հետազոտությունն այս ուղղությամբ կարող է նոր փաստական տվյալներ վեր հանել: Օգտակար կլինի նաև թղթի և տառատեսակի լաբորատոր ամալիզը, ինչը, որքանով մեզ հաջողվեց դարձել, Հայաստանում հնարավոր չէ իրականացնել:
- ³⁰ «Չայրված փաստաթուղթ», *Ավանգարդ*, 15 սեպտեմբեր 1989:
- ³¹ Բնօրինակի գոյությունը գնահատելու առումով հետաքրքիր է նաև Գեղամ Գրիգորյանի նախաբանի հետևյալ ձևակերպումը. «1918-20 թթ. հայկական ղեկավարությունը ճանաչելուց հետո մամուլում մեր դաստիարակների տղազրած հողվածներում ևս երևացին այս փաստաթղթի որոշ թեզեր: Այնուամենայնիվ, գաղտնիք մնաց փաստաթղթի ճշմարտացիությունը»: Ուշագրավ է, որ այստեղ հեղինակը հիշատակում է ոչ թե բուն փաստաթուղթը, այլ դրա թեզերը: Այստեղ ևս մեկ անգամ տեղին է շեշտել, որ մեր հետազոտության բուն առարկան փաստաթուղթն է, այլ ոչ թե դրա թեզերը: Վերջիններս քսանականների սկզբին իրոք արծարծվում էին բուլշևիկյան քաղաքականության ծիրում՝ դառնալով թե՛ բանավեճերի առիթ հենց բուլշևիկյան շրջանակների ներսում: Այս առումով հետաքրքրական է վերոհիշյալ հարցազրույցից մի դրվագ: Կարաղետյանը դատում է, որ հիսուսականների կեսին, երբ աշխատում էր *Հայաստանի կոմերիտմիության ծնունդը* (Երևան: Հայաստանի ղեկավարական հրատ., 1956) աշխատության վրա, առիթ էր ունեցել հանդիպելու նախկին Սոցիալական երիտասարդական կազմակերպության անդամ, կոմերիտական Լազիկ

Ահարոնյանին: Վերջինս ղատմել է, որ 1920-ի աշնանը հեռացվել է կոմերիտմիության շարքերից, քանի որ կարծում էր, որ հարկավոր էր զենքին զենքով ղատասախանել: Այս դիրքորոշումը դեմ էր «փաստաթղթի հիմնադրույթներին», ասում է Կարաղետյանը: Վերջինիս խոսքից կարող է ղավալ, ղե 1920-ին նման փաստաթուղթ իրաղես գոյություն է ունեցել: Սակայն ուշին ընթերցումը ակնհայտ է դարձնում, որ խոսքը «փաստաթղթի հիմնադրույթներին», այլ ոչ ղե բուն փաստաթղթի մասին է: Հաշվի առնելով, որ նման «հիմնադրույթներ» 1920-ին շրջանավում էին, այս ողնումը բավարար ղենք կարող համարել փաստաթղթի բնօրինակի գոյությունը հաստատելու համար: Այս եզրակացույթան օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ Կարաղետյանն այս հատվածը ղի բերում որղես փաստաթղթի գոյությունը հաստատող աղացույց, ղնայած որ հենց դրան էր վերաբերում Պասկևիչանի առաջին հարցը: Ահարոնյանի մասին նա խոսում է մեկ այլ հարցի աղիղով: Փաստաթղթի բնօրինակի և Ահարոնյանի հեռացման մասին լրացուցիչ հանգամանքներ ողարզելու նղատակով ուսումնասիրել ենք Կարաղետյանի վերոհիղյալ *Հայաստանի կոմերիտմիության ծնունդը*, ինղղես նաև նույն հեղինակի ավելի ուշ գրված *Հայաստանի լենինյան կոմերիտմիության ողատմություն* (Երևան: Հայաստան հրատ., 1968) աղխատությունները: Երկու գրղում էլ նշված է, որ Ահարոնյանը եղել է կոմերիտմիության անղան, սակայն բնօրինակի գոյության, դրա վիճարկված «հիմնադրույթներին» և Ահարոնյանին կոմերիտականների շարքերից հեռացնելու մասին որևէ հիղատակում ղկա:

³² Պասկևիչանի հետ մասնավոր գրույցից ևս ղհաղղվեց ողարզել հավելյալ տվյալներ փաստաթղթի, Կարաղետյանի հետ նրա գրույցի և Գրիգորյանի ինքնույթան մասին (մասնավոր գրույց հեղինակի հետ, 9 հունիսի 2018, Երևան):

³³ «Հույժ գաղտնի փաստաթուղթ. Հայաստանը` բուղկհիկյան զոհասեղանի վրա», *Հայք*, 27 մայիսի 1990:

³⁴ Ուղագրավ է, որ 1022 Ֆոնղի ցուցակում և փաստաթղթի գործի ողանակի վրա նշված է, որ գործում կա միայն մեկ ղերթ` փաստաթղթի ղերթը, այնինղ գործի ողանակի ուսումնասիրությունից ողարզ է դառնում, որ կա նաև երկրորդ ղերթը: Դա Ղազանցյանի վերոնղյալ հողվածի կտրածոն է: Ամատունի Վիրաբյանը մասնավոր գրույցում տեղեկացրեց, որ տարիներ առաղ այղ նյուքն ինքն է ավելացրել փաստաթղթի գործին, քանի որ հանղված էր, որ փաստաթուղթը կեղծ է (մասնավոր գրույց, հունիսի 18, 2018, Երևան):

³⁵ Սերգեղ Վարղանյան, *Հայաստանի մայրաքաղաքները* (Երևան: Աղուղոն, 1995), էղ 154-155:

³⁶ Այն հավանաբար տղվել է Հայաստանի Հանրաղետության երկրորղ նախագահական ընտրությունների աղիղով իրականացղող հակակոմունիստական քարղզղության համատեքստում:

³⁷ Լենղղուղ խուղղույթան, *Հայաստանի բաժանումը 1920 ղվականին* (Երևան: Երևանի համալսարանի հրատ., 2002), էղ 164-165:

³⁸ խուղղույթան, *Հայաստանի բաժանումը 1920 ղվականին*, էղ 165:

³⁹ խուղղույթան, *Հայաստանի բաժանումը 1920 ղվականին*, էղ 166-171:

⁴⁰ Հրանուղ Խառատյան, «Քենաղղ ողունների օգնությանը ավարտին էր հասցնում հայերի կոտորածները», *Iragir.am*, 15 հոկտեմբերի 2014, <https://www.Iragir.am/2014/10/15/105353/#sthash.yE3NmQHM.dpuf>, այղղ 17.07.2018:

⁴¹ *Կարսի մարղը Հայաստանի առաղին Հանրաղետության կազմում (աղղիղ 1919-հոկտեմբեր 1920)*, Վլաղիմիր Հարուղույթան (աղխ.) (Երևան: Սողղիկ, 2016), էղ 21-22:

- ⁴² «Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը՝ արագացնել Հայաստանի դարտությունը. 1920 թ. սեպտեմբեր», Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոն, <http://www.aniarc.am/2016/12/18/armenian-bolsheviks-baku-1920-turkey/>, այց՝ 17.07.2018:
- ⁴³ Փաստաթղթի վիճարկման դատությունը լիարժեք դարձնելու համար հարկ ենք համարում մերկայացնել լրագրող Վահան Իշխանյանի հետ զրույցից մի դրվագ (մասնավոր զրույց հեղինակի հետ, 4 հուլիսի 2018, Երևան): Մոտավորապես 2009 թ. Վահան Իշխանյանը առիթ է ունենում հանդիպել դատմաբան Վլադիմիր Ղազախեցյանին և ծանոթանալ նրա թղթադանակում դասվող փաստաթղթի դատձեմին: Ղազախեցյանը ցույց է տալիս փաստաթուղթը և ասում, որ դրա բնօրինակը չկա, արխիվում դասվում է դատձեմը, բայց հավանական է, որ բնօրինակը ժամանակին գոյություն ունեցել է: Ղազախեցյանը, ըստ ամենայնի, տեղյակ է եղել, որ փաստաթղթի իսկությունը վիճարկված է, և հավանաբար դա է դատձառը, որ ո՛չ փաստաթուղթը, ոչ էլ դրա հետ կապված որևէ հղում չի ներառել իր *Հայաստանը 1920-1940 թթ.* (Երևան: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2006) արժեքավոր աշխատության մեջ:
- ⁴⁴ Հայոց դատմության ըմբռնման հարցում այսօրիսի բարդ մոտեցման անհրաժեշտությունը առաջ է քաշել և իր գործերով ի ցույց դրել Աշոտ Հովհաննիսյանը: Տե՛ս, օրինակ, Աշոտ Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի դատմության*, հ. 1 (Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1955); Աշոտ Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի դատմության*, հ. 2 (Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1957):

Սարգիս Կասյանի կյանքի և գործունեության համառոտ մատենագիտություն


Վլադիմիր Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.* (Երևան: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2006):

Սարգիս Կասյան, *Ընտիր երկեր: [Գողթններ; Նամակներ; Ճանաչում]*, Ծառուր Աղայան և այլոք (խմբ.) (Երևան: Հայաստան հրատարակչություն, 1967):

Կասյանի ինքնակենսագրականը, նամակներն ու լուսամկարները՝ ՀԱԱ, ֆ. 1445, ց. 1, գ. 19; ՀԱԱ, ֆ. 1445, ց. 1, գ. 13; ՀԱԱ, ֆ. 1445, ց. 1, գ. 11; ՀԱԱ, ֆ. 1445, ց. 1, գ. 8; ՀԱԱ, ֆ. 1445, ց. 1, գ. 5:

Համբարձում Կարապետյան, *Մեծ թայքարի մարդիկ: Սարգիս Կասյան, Սահակ Տեր-Պարրիեյան, Գեորգ Աթաբեկյան* (Երևան: Հայրենասիրատ, 1963):

Վաչագան Հարությունյան, *Սարգիս Կասյան* (Երևան: Միտք, 1965):



ԱՇՈՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻՍԱՔ ԽՈՍՏԻԿՅԱՆԸ
ՅԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԱՅ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ
ԿԱՅԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ.
ԴԱՎԻԹ ԱՆՅԱՂԹԻ ԽՆԴԻՐԸ

Խոստիկյանը Դավթին համարում է Ալեքսանդրիայի դոկտորի ցերեկայացուցիչ: Հիմք ընդունելով սա՝ հեղինակը փորձում է երկու փուլով գնահատել Դավթի փիլիսոփայությունը՝ նախ անդրադառնալով Ալեքսանդրյան դոկտորի փիլիսոփայական արժեքին, ապա որոշելով դոկտորի շրջանակում Դավթի կարևորությունը:

Հարկ է նշել, որ երկու դեղքում էլ Խոստիկյանն իր գնահատականը կառուցում է հիմնվելով գիտական, մասնավորապես՝ բանասիրական բնույթ ունեցող փաստարկների վրա: Առաջին փուլում Ալեքսանդրիական դոկտորի նշանակությունն անտիկ փիլիսոփայության մեջ ղարգելու համար Խոստիկյանը լիովին առավիճում է անտիկ փիլիսոփայության գերմանական դատմագրական ավանդույթին՝ վկայաբերելով ի թիվս այլոց Եղուարդ Ցելլերի, Քարլ Ֆոն Փրանթլի և Ադոլֆ Բուսեի դիրքորոշումները: Իսկ համաձայն այս ավանդույթի՝ Ալեքսանդրիական դոկտորը Արիստոտելի, Պլատոնի և Պյութագորասի մի շարք երկերի շուրջ կառուցված և հիմնականում դրանց վրա ծանրացած փիլիսոփայական մի մեծ ուղղության վերջին այն հանգրվանն էր, որտեղ կենսաբան եղած փիլիսոփայական միտքը այլևս առաջարկելու գրեթե ոչինչ չուներ: Հավատարիմ մնալով Ալեքսանդրիական դոկտորի գերմանական դատմագրության այս դատկերացմանը՝ Խոստիկյանը լմնում է, որ. «Այդ դոկտորը ներքուստ փտել էր և նոր բան այլևս չէր կարող ստեղծել»:³

Արդեն երկրորդ փուլով Խոստիկյանը փորձում է տեսնել, թե հենց Ալեքսանդրիական դոկտորում ինչ տեղ է բռնում Դավիթը՝ որդես փիլիսոփա: Խոստիկյանն իր դատողությունները հիմնում է նույն դոկտորին դատկանող Ամմոնիոսի ու Էլիասի և Դավթի երկերի, ըստ էության, բանասիրական համեմատության վրա: Առաջինի հետ համեմատությունից նա ղարգում է, որ Դավթի յուրահատկություններն, իր բառերով՝ «շաղակրատությունը, Ֆորմալիզմը և թվերի տեսությունը» են:⁴ Իսկ Էլիասի հետ համեմատությունը Դավթի *Սահմանքին* զրկում է անգամ վերջին երկու առանձնահատկություններից՝ թողնելով միայն «շաղակրատությունն ու ճաղաղությունը»: Ելնելով իր հետազոտության այս արդյունքներից՝ Խոստիկյանը հնչեցնում է իր վերջնական եզրակացությունը. «Դավիթը դոկտորի ամենամիճնատիմ ուսուցիչն է: Սա նրա մասին միակ հնարավոր կարծիքն է»:⁵

Բայց այստեղ ղետք է հստակ գիտակցել, թե իրականում ում է ուղղված այս դաժան գնահատականը: Ինքնին Դավիթ փիլիսոփան չէ Խոստիկյանի թիրախը: Խոստիկյանի գրոհը, իսկաղես, ուղղված է ընդդեմ Դավթի երկերը փառաբանող և դրա հեղինակին «գրեթե Պլատոնից և Արիստոտելից վեր կամ առնվազն նրանց կողքին որդես հավասարազորի» դասող *հայկական ավանդության «մոլոր ըմբռնումը» շարունակողների*:⁶ Ըստ Խոստիկյանի՝ սա մի ավանդություն է, որը, փաստորեն, հոգևարք աղորդ հին աշխարհի ամնշան փիլիսոփաներից մեկին երկինք է բարձրացրել և ավելի քան մեկ ամբողջ հազարամյակ ներքողել նրա փառքը: Խոստիկյանը նաև գնում է մեկ քայլ ավելի հեռուն և փորձում բացատրել այս ավանդության առաջացման դատճառները: Մեկուսացած, հունա-հռոմեական մտքից միայն մի քանի դատաղիկների

հասու հայ հոգևոր իրականությունը, որը «Պլատոնից և Արիստոտելից գատ, անգամ անվանադեմ հազիվ թե ծանոթ» էր այլ փիլիսոփաներին, Դավթին «աստարեզ» էր բերել, «որոշես հույների դեմ հայ եկեղեցու համար ղայքարող նախամարտիկ», ով «կարողացել է երախտադարտ հետագա սերունդների աչքում ղատվավոր տեղ զբաղեցնել Պլատոնի և Արիստոտելի կողքին»՝ ստանձնելով «փիլիսոփայության ու նրա մեծագույն գլուխների (Արիստոտելի և Պլատոնի) ղատիվը փրկողի դերը»:⁷ Այստիսով, ըստ Խոստիկյանի՝ հայկական իրականության մեջ հնարավոր չի՝ եղել «ղատկերացնել տրամաբանական» այն «երկերի մեկնությունների ընթացքը», որոնց շարքին էլ ղատկանում են Դավթի գրվածքները, հնարավոր չի՝ եղել տեսնել, «թե ինչ էր արված նախքան Դավիթը և թե ինչ է արել Դավիթն ինքը»: Ուստի, շարունակում է Խոստիկյանը, «ղետք է վերջ դնել նման շափազանցություններին» և «ցույց տալ փիլիսոփային իրեն ղատշաճող տեղը փիլիսոփայության ղատմության մեջ»:⁸

Ինչղես մշեցինք վերևում, մեր նղատակն է քննարկման առարկա դարձնել Խոստիկյանի աշխատության փիլիսոփայական կողմը և խոսել դրա յուրահատկությունների մասին: Բայց ավարտաճան այս հայեցակետից քննելիս առաջինն, ինչ աչքի է զարնում, այն է, որ աշխատության լեզուն ամենկին փիլիսոփայական չէ: Այստեղ բացակայում է Դավթի փիլիսոփայության կենտրոնական հասկացությունների փիլիսոփայական ծավալումը: Դավթի փիլիսոփայության՝ Խոստիկյանի քննարկումներն ու քննադատությունը հիմնված չեն Դավթի աշխատությունների ներքին տրամաբանության հետևողական բացաղարզման վրա: Իր քննադատությունը հիմնավորելու համար Խոստիկյանը փոխարենը դիմում է «արտաքին» աշխարին՝ կամ Դավթին և նրան ընդգրկող Ալեքսանդրիական դղորոցին անդրադարձած այլ հեղինակների աշխատություններին, կամ Դավթի և իր դղորոցի այլ ուսուցիչների ոչ-փիլիսոփայական տեքստաքննական վերլուծության մեթոդաբանությանը: Չենք սխալվի, եթե ասենք, որ ավարտաճանը, բաղիս բուն իմաստով, տեքստի մակարդակում փիլիսոփայական երկ չէ: Սակայն Խոստիկյանի աշխատության ընդհանուր ծրագիրը և դրա յուրահատուկ մարտական ոգին, այնուամենայնիվ, ղարունակում են փիլիսոփայական մտածողության սաղմեր: Շատ կարևոր է շեշտել, որ երբ Խոստիկյանը դիմում է այլ հեղինակներին կամ տեքստաքննական մեթոդաբանությանը, այս երկուն էլ ծաղայում են բացաղաղես մեկ նղատակի՝ Դավթի մասին հայ եկեղեցական անվանդության հիմնահատակ քննադատությանը: Եվ միաժամանակ չղետք է անգիտանանք, որ Խոստիկյանն ինքը այն ավանդույթի կենդանի շարունակողներից էր, որն այղքան անողղոքաղար քննադատում էր: Նրա վաղ շրջանի գրական արտաղղանքները ցույց են տալիս, որ նրան վաղ հասակում իսկ օտար չէին հայ եկեղեցական ավանդության վկայություններն ու դիրքորոշումները ինքնակնհայտ համարելը: Ուստի, Խոստիկյանի երկասիրությունների ուշաղղր ընթերցման դեղղուն կտեսնենք, որ նրա

ավարտաճառի հարձակողական մոտեցումը իրադրությունում ուղղված է դեմի ներս: Ըստ էության այդ աշխատությունը մի մեծ ինքնաքննադատական փորձ է՝ ուղղված սեփական ավանդության ինքնակնհայտության դեմ:

Ավարտաճառի մեր այսօրվա ըմբռնումը և դրանում աշխատության փիլիսոփայական նշանակությունը տեսնելն ավելի հասկանալի է դառնում հայ իրականության մեջ դրա ընդունելության դատմությամբ հայացք գցելիս: Խոստիկյանի ավարտաճառից հետո Դավիթ Անհաղթի խնդրին անդրադարձել են շատ հայագետներ, այդ թվում՝ Յակոբ Մանանդյանը, Էջմիածնի միբանության անդամ Գալուստ Տեր-Մկրտչյանը և աղազա կաթողիկոս Գարեգին Յովսեփյանը, որոնք բոլորն էլ կիսում էին Դավթի մասին հայ ավանդության խոստիկյանի քննադատությունը, թեև առանձին կետերում խոստիկյանի որոշ թեզերի հետ ունեին անհամաձայնություններ: Սակայն Անհաղթի *փիլիսոփայությանը* խոստիկյանից հետո առաջին անգամ հայ իրականության մեջ անդրադարձան միայն ստալինյան բռնաճնշումներից, Երկրորդ աշխարհամարտի ավարտից և Սառը դատերազմի մեկնարկից հետո: Ստալինյան շրջանի հայ փիլիսոփայության դատմագրության այն ուղղությունը, որը հետագայում իշխող էր դառնալու, այլևս Դավթին և նրա մասին հայկական ավանդությամբ չէր մոտենում խիստ քննադատորեն, այլ հակառակը՝ մերժում և մոռացության էր մատնում սեփական փիլիսոփայական ավանդության հանդեպ խոստիկյանի և այլոց քննադատական արժեքավոր դիրքորոշումը: Փոխարենը Դավթի փիլիսոփայությունը մի կողմից՝ արժևորվում էր որդես ազգային տեսական մտքին ծառայող զենք՝ ընդդեմ օտար աշխարհայեցությունների, մյուս կողմից՝ Դավթը կարևորվում էր որդես մատերիալիստ փիլիսոփա, որը համարվելով մարքսիզմ-լենինիզմի ստալինյան ընթերցմանը մոտ կանգնած հեղինակ, փիլիսոփայության որոշ դատմագիրների գործերում ավելի բարձր էր դասվում, քան ինքը՝ Արիստոտելը: Այսպես հետդատերազմյան շրջանի հայ փիլիսոփայության դատմագրության մեջ Դավթը հանդես է գալիս ազգային հոգևոր արժեքների և միաժամանակ մատերիալիստական մտածողության կրողի և դաշտդաշտողի դերում: Սրա հետևանքներից մեկն էլ այն էր, որ այս շրջանում ձևավորված դատմագրության մեջ Դավթը կարող էր դատկերավորվել որդես գրեթե մատերիալիստական մտածող, ինչը անհնարին էր դարձնելու Դավթին իրեն հարազատ դատմա-փիլիսոփայական համատեքստում ճանաչելը: Ավելին, այս իրավիճակում տուժում և վարկաբեկվում էր նաև այն փիլիսոփայական ուղղությունը, որի հետևորդները հավակնում էին լինել խոստիկյանի թեզը դատարարողները և մատերիալիզմի ջատագովները: Նոր ժամանակներում Ֆրենսիս Բեքմից սկսվող և մինչև խորհրդային ժամանակներից հիմքերում կանգնած մտածողները ձգվող այս փիլիսոփայական ուղղությունը Դավթի ստալինյան շրջանի ընթերցումներում փաստորեն հանդես է գալիս որդես մի բան, որն անհրաժեշտ է դաշտդաշտել և հաստատել, այլ ոչ թե ըմբռնել և հասկանալ: Այն դիտվում է որդես կայուն, անփոփոխ, անկենդան մի համակարգ, որի դաշտդաշտությունն ու հաստատումը դառնում են դրա հետ կապված *միակ* զբաղմունքը: Այդպիսով՝ ոչ միայն Դավթի փիլիսոփայական ավանդույթը, այլ

նաև այն փիլիսոփայական մտածողությունը, որին ժամանակի փիլիսոփայության ղատմագիրները մատերիալիզմ էին անվանում, գրկվում է մտքի շարժումից, որը ցանկացած կենդանի փիլիսոփայության առանցքն ու սիրտն է: Սա է, փաստորեն, այն գիճը, որ փիլիսոփայության ստալիճյան շրջանի ղատմագրությունը վճարել է Դավթի խճրի շրջանակում քաղաքական օրակարգն առաջ մղելու, ազգային արժանաղատությունը փրկելու և այրղիսով ազգային փիլիսոփայություն ճեռք բերելու դիմաց:

Այս լույսի ներքո, թեն Խոստիկյանի ավարտաճառը փիլիսոփայական մտքի հետևողական ծավալում չէ, այն իր իճքնաքննաղատական մոտեցմամբ փիլիսոփայական խճիրները չի ղարտակում տարբեր շղարշներով: Խոստիկյանի թեզը իր ընթերցողների համար փիլիսոփայության հետ հարաբերվելու բաց տեղ է թողնում և վճականաղես հրաժարվում այր բացը ազգային կան կուսակցական շահախճրություններից ելնելով ամեն գնով լրացնելուց: Այս համարձակ մոտեցումը ղետք է համարել մոր ժամանակներում փիլիսոփայության հետ հարաբերվելիս հայերի կարևոր ճեռքբերումներից մեկը, որի իճքնաքննաղատական սրությունն, անկասկած, միճն օրս էլ չի կորցրել իր արղիականությունն ու ստեղծարար ներուճը:

¹ Մինչև հոդվածի հրատարակությունը գիրքն արդեն լույս տեսավ, տե՛ս Միսաք Խոստիկյան, *Դավիթ փիլիսոփան*, Ներքին գրոց մատենաշար (Երևան: Գովհանճիսյան ինստիտուտ, 2020):

² Խոստիկյան, *Դավիթ փիլիսոփան*, էջ 33:

³ Խոստիկյան, *Դավիթ փիլիսոփան*, էջ 183:

⁴ Խոստիկյան, *Դավիթ փիլիսոփան*, էջ 181:

⁵ Խոստիկյան, *Դավիթ փիլիսոփան*, էջ 183:

⁶ Խոստիկյան, *Դավիթ փիլիսոփան*, էջ 173:

⁷ Խոստիկյան, *Դավիթ փիլիսոփան*, էջ 175:


⁸ Խոստիկյան, *Դավիթ փիլիսոփան*, էջ 175:



ՀԱՅԿԱՏԱԿԱՆ 2018
ARMENIA

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
REALITIES AND PERSPECTIVES

**ՄՇԿՎՈՒՅԹ
ԵՎ ԱՐԿԵՍՏ**



ԻՐԻՆԱ
ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՈՃԻ»
ՆՈՐ ՀԱՆԳՐԿԱՆԸ.
ԽՈՐՀՐԴԱՅԱՅ ԱՐՎԵՍՏԻ
ՍԿՁԲՆԱՎՈՐՈՒՄԸ

թվականի հուլիսի 19-ին Երևանի Ստեփան Շահումյանի անվան բանվորական ակումբում բացվում է Խորհրդային Հայաստանում կազմակերպված առաջին ցուցահանդեսը: Ուշագրավ է, որ սա միաժամանակ դեռևս 1916 թվականին Թիֆլիսում հիմնադրված Հայ արվեստագետների միության թվով հինգերորդ ցուցահանդեսն էր: Խորհրդային Հայաստանում առաջին այս տատկերահանդեսի բացումը հետաքրքրական, նաև աներկբայորեն կարևոր իրադարձությունն էր և դառնար խորհրդահայ արվեստի զարգացումների համատեքստում: Մինչև իրադարձության փաստական այս երկակիությունը դիտույն կերպով վեր է հանում 1920-ականների առաջին տարիներին խորհրդահայ արվեստի կայացման առանձնահատկությունները:

